

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.99(2) 92  
Հ 854

**Հովհաննիսյան Վ.Վ.**

***Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ իրավաբանական  
ֆակուլտետի խորհրդի կողմից***

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՁԵՎԸ**

***Հովհաննիսյան Վահե Վաղինակի***  
Հ 854 Իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը:  
Երևանի պետ. համալսարան– Եր.: ԵՊՀ հրատ., 2008, 336  
էջ:

Մենագրությունում սուբյեկտիվ իրաքվունքների պաշտպանության արբիտրաժային ձևը կարգավորող հայրենական, այլ երկրների օրենսդրության, միջազգային իրավական ակտերի համեմատական վերլուծության, ինչպես նաև պրակտիկ և տեսական նյութերի ուսումնասիրման հիման վրա բացահայտվում են առևտրային արբիտրաժի ինստիտուտի ձևավորման և զարգացման օրինաչափությունները, ինստիտուցիոնալ-կառուցվածքային հիմնական առանձնահատկությունները և գործնական նշանակություն ունեցող այլ հիմնահարցեր:

Մենագրությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, դատական մարմինների աշխատողների համար:

ԳՄԴ 67.99(2) 92

**ԵՊՀ հրատարակչություն  
Երևան - 2008**

ISBN 978-5-8084-1029-9

© Հովհաննիսյան Վ.Վ., 2008

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ .....5

ԳԼՈՒԽ ԱՈԱԶԻՆ. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.....8

    §1. Միջազգային առևտրային արբիտրաժնի անտիկ ժամանակաշրջանում.....8

    §2. Առևտրային արբիտրաժը միջնադարում .....16

    §3. Առևտրային արբիտրաժի գործառնությունը վաղ, միջնադարյան, նոր և նորագույն շրջանի Հայաստանում.....25

    §4. Առևտրային արբիտրաժնի արդի ժամանակաշրջանում.....41

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....45

    §1. Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի հասկացությունն ու հիմնական առանձնահատկությունները .....45

    §2. Առևտրային արբիտրաժի հասկացությունը.....60

    §3. Առևտրային արբիտրաժի իրավական բնութագիրը .....78

    §4. Առևտրային արբիտրաժը և առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային եղանակները.....91

    §5. Միջազգային և ներքին (ներպետական) արբիտրաժները ..105

    §6. Միջազգային առևտրային և հանրային արբիտրաժները ...126

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ....139

    §1. Առևտրային արբիտրաժի սկզբունքների հասկացությունը և դասակարգումը .....139

    §2. Արբիտրաժի կազմակերպական և գործառնության սկզբունքները .....155

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....193

    §1. Արբիտրաժային իրավահարաբերությունների հասկացությունը և ծագման նախադրյալները.....193

§2. Արբիտրաժային իրավահարաբերությունների տարրերը...212

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԶԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ .....227

    §1. Արբիտրաժային համաձայնության հասկացությունը և տեսակները .....227

    §2. Կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը առևտրային արբիտրաժում.....257

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....279

    §1. Արբիտրաժային որոշումների հասկացությունը, արբիտրաժի վերջնական և միջանկյալ ակտերը.....279

    §2. Արբիտրաժային վճռին ներկայացվող պահանջները .....304

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....323

## ՆԱԽԱԲԱՆ

Վերջին ժամանակաշրջանում ողջ աշխարհում նկատվող սոցիալ-տնտեսական փոփոխությունները, համաշխարհային գլոբալիզացիան, միասնացման (ինտեգրացիոն) գործընթացները ոչ միայն պայմանավորեցին առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման բնագավառում տարբեր պետությունների համագործակցությունը, այլև վերջիններիս լուծման համար անհրաժեշտ համընդհանուր կանոնների մշակումը, և նույնիսկ՝ այս ոլորտում տարբեր իրավական համակարգերի մերձեցումը: Արտաքին առևտրատնտեսական կապերի բուռն զարգացումը, և, դրա հետ կապված՝ նոր կապերի իրավական կարգավորման անհրաժեշտությունը պարտադրում են լուրջ աշխատանքներ կատարել ինչպես միջազգային և ներպետական առևտրատնտեսական հարաբերությունների, այնպես էլ այդ հարաբերություններից բխող վեճերի լուծման կառուցակարգերի ուսումնասիրության ուղղությամբ: Շուկայական տնտեսության, արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում քաղաքացիական շրջանառության մասնակիցների շահերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ իրավական կառուցակարգերի մշակումը կարևոր է ոչ միայն տնտեսական, այլև իրավական համակարգի բնականոն զարգացման համար: Մինչդեռ գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետության դատական համակարգը և բացառապես քաղաքացիական դատավարության կարգով այս հարաբերություններից բխող վեճերի քննությունը և լուծումը բավարար չեն քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Նման պարագայում բավական գործուն է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը:

Աշխարհի քաղաքակիրթ գրեթե բոլոր պետությունները մշակել են զարգացած և առաջադեմ արբիտրաժային օրենսդրություն, որի ուսումնասիրությունը կենսական է նաև հայրենական իրավագիտության համար: Հարկ է նշել, որ ԱՊՀ երկրներից մի քանիսն (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Բելարուս և այլն)<sup>1</sup> արդեն ըն-

դունել են արբիտրաժը կարգավորող օրենքներ, որոնց համար հիմք է ծառայել ՄԱԿՄԱԻՀ (Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով) 1985 թվականի հունիսի 25-ի «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» նմուշային օրենքը: Չնայած այն հանգամանքին, որ ԱՊՀ որոշ երկրներում դատական իշխանության շրջանակում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն) դեռևս գործում է արբիտրաժային դատարանների ինքնուրույն համակարգ, այն չի կարող ստվեր զցել առևտրային արբիտրաժի գործունեության վրա, որի հիմնական առաքելությունն է թե՛ միջազգային, թե՛ ներպետական առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի արդյունավետ լուծումը:

Հաշվի առնելով ներկայումս աշխարհում ընթացող գործընթացները՝ մասնավորապես համաշխարհային գլոբալիզացիան, տարբեր միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ինտեգրումը, Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցելու փաստը, ՀՀ իրավական համակարգի, այդ թվում՝ արբիտրաժային օրենսդրության կատարելագործումը դարձել են անհրաժեշտ և ժամանակի հրամայական: Պետք է նշել, որ վերջին ժամանակաշրջանում այս առումով կատարվել են որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝ փոփոխությունների է ենթարկվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը<sup>1</sup>, որտեղ «Քաղաքացիական գործերով իրավական օգնությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան» վերտառությամբ բաժնում կարգավորման են ենթարկվել նաև միջազգային արբիտրաժների վճիռների և որոշումների ճանաչման քաղաքացիադատավարական հարցերը<sup>2</sup>, ինչպես նաև 05.05.1998թ. «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի փոխարեն 25.12.2006թ.-ին ընդունվեց ՀՀ օրենքը, «Առևտրային արբիտրաժի մասին», որի համար հիմք է ծառայել ՄԱԿՄԱԻՀ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» նմուշային օրենքը: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել

<sup>1</sup> ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247<sup>6</sup> և 247<sup>7</sup> հոդվածները: Փոփ. ՀՕ-61-Ն, 22.01.07, ՀՀՊՏ 8 (532), 31.01.07 և Լր. ՀՕ-39-Ն, 15.03.04, ՀՀՊՏ 16 (315), 24.03.04:

<sup>1</sup> Առևտրային արբիտրաժների գործունեությունը կարգավորող օրենքներ համապատասխանաբար ընդունվել են՝ Ռուսաստանի Դաշնությունում՝ 07.07.1993թ.-ին, Բելարուսում՝ 09.07.1999թ.-ին, Ուկրաինայում՝ 24.02.1994թ.-ին:

նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում<sup>1</sup>, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում<sup>2</sup> և այլն: Իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի գոյության անհրաժեշտությունը ակնհայտորեն երևում է վերջինիս գործունեության, պատմական զարգացման, միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման դատական կարգի համեմատ ունեցած առավելությունների, կիրառության տարածվածության պատճառների ու պայմանների խոր ուսումնասիրության արդյունքում:

Պետք է նշել, որ միջազգային առևտրային արբիտրաժի կայացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը թելադրված է նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով, մասնավորապես՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրահամայնքի միջև 1996թ. ապրիլի 22-ին կնքված և 1999թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի հոդված 86-ի, կողմերը պետք է խրախուսեն արբիտրաժային կարգով առևտրային և համագործակցային գործարքներից բխող վեճերի կարգավորումը, ինչպես նաև Միավորված Ազգերի Կազմակերպության Միջազգային Առևտրի Իրավունքի Հանձնաժողովի (ՄԱԿՄԱԻՅ) և 1958 թ. Նյու-Յորքում ստորագրված «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին» համաձայնագրի անդամ հանդիսացող երկրների արբիտրաժային կանոնակարգերի կիրառումը: Ուստի, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի, առևտրային արբիտրաժների էության, իրավական բնութագրի, գործունեության սկզբունքների բացահայտումը, պատմական զարգացման տարբեր փուլերում վերջինիս հիմնական ինստիտուտների ուսումնասիրությունը դարձել են այս ամենի անհրաժեշտ նախապայման:

<sup>1</sup> ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 05.05.1998թ.-ի ն: ՀՀՊՏ 1998)12, ՀՕ-221:

<sup>2</sup> ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 27.12.1997թ.-ի ն: ՀՀՊՏ 1998)1, ՀՕ-186:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԱՌԵՎՏՐՈՒՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

#### ***§1. Միջազգային առևտրային արբիտրաժի անտիկ ժամանակաշրջանում***

Ժամանակակից իրավագիտության մեջ ձևավորվել է կարծիք, համաձայն որի իրավական համակարգերի կազմավորման, իրավունքի պատմական առաջընթացի գաղափարներն անքակտելիորեն կապված են մարդու՝ որպես հասարակության լիարժեք անդամի, հետևաբար և՛ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցի<sup>1</sup> ազատության զարգացման հետ<sup>2</sup>: Ներկայումս այս գաղափարն ընդունել են գրեթե բոլոր տեսաբանները: Ավելին, պրոֆեսոր Դ. Դոժոյովն այն դնում է հռոմեական իրավունքի, դրա առանձին ինստիտուտների, մասնավորապես՝ մասնավոր սեփականության, տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների տարբերակման, իրավունքների ինտեգրիկտ պաշտպանության դոկտրինաների զարգացման, ինչպես նաև պայմանագրերի դասակարգման հայեցակարգերի առաջացման հիմքում: Ընդ որում, այս գաղափարը հավասարապես վերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարության իրավունքներին, հետևաբար, կիրառելի է նաև արբիտրաժային վարույթի, դրա առանձին ինստիտուտների ուսումնասիրության համար:

<sup>1</sup> Մարդը, որպես հասարակության լիարժեք անդամ, անպայմանորեն որոշակի հարաբերությունների մեջ է մտնում հասարակության այլ անդամների հետ՝ կատարում է որոշակի գործողություններ, կնքում պայմանագրեր և այլն: Ժամանակակից իրավագիտությունն ապացուցել է, որ մարդկային հասարակության զարգացման բոլոր պատմական փուլերում մարդիկ միմյանց հետ գտնվել են առավելապես քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ: Ցանկացած պայմանագրի կնքումն էլ հիմք է քաղաքացիաիրավական հարաբերությունների առաջացման համար:

<sup>2</sup> St'e u Нерсесянц В.С. Право: многообразие определений и единство понятия. (Советское государство и право, 1983, 26-35 էջերը:

Արբիտրաժը համաշխարհային իրավաբանական պրակտիկայում ունի լայն կիրառություն, խորը ակունքներ և վաղ պատմություն: Կարելի է ասել, որ դատարանների պետական համակարգի բացակայության պայմաններում այն հանդիսացել է արդարադատության իրականացման առաջնային կառուցակարգ, որի միջոցով իրականացվում էր հասարակության առանձին անդամների միջև ծագած վեճերի քաղաքակիրթ լուծումը, (սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը): Պատմական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արբիտրաժն առաջացել է շատ ավելի վաղ, քան պետական դատարանները<sup>1</sup>: Այդ մասին են վկայում նաև Ռ. Ջոնի և Ռ. Իերինգի աշխատությունները, որոնք պնդում են, որ Հին Աշխարհում քաղաքացիական դատավարությունն առաջացել է արբիտրաժային վարույթից (միջնորդ վարույթից (arbitration))<sup>2</sup>: Այս անցումն առավել հստակորեն արտացոլվել է Հին հռոմեական իրավունքի պատմագրության էջերում:

Հռոմեական իրավունքում ոչ միայն տարանջատվեցին հանրային և մասնավոր իրավունքի ոլորտները, ձևակերպվեցին նյութական և դատավարության իրավունքի հասկացությունները, այլև լուրջ աշխատանքներ կատարվեցին արբիտրաժի առանձին ինստիտուտների ուսումնասիրության ուղղությամբ: Հռոմեական իրավունքը քաղաքացիական դատավարության, արբիտրաժային իրավունքի հիմքն է: Այն սահմանել է քաղաքացիական դատավարության գլխավոր սկզբունքները (տնօրինչականություն կամ դիսպոզիտիվություն, մրցակցություն, բանավորություն, հրապարակայնություն), մշակել է ենթակայության, ընդդատության, բողոքարկման, հայցի, ապացույցների, ներկայացուցչության քաղաքացիադատավարական ինստիտուտները:

Սակայն հռոմեական իրավունքում քաղաքացիական դատավարության և (ներքին, միջազգային) արբիտրաժի տարբերակումը որոշակի բարդությունների հետ է կապված: Այդ ժամանակաշրջանում քաղաքացիական դատավարությունը բաժանվում էր երկու

փուլի՝ in-jure-ի, երբ մագիստրատը (այն գլխավորում էր պրետորը (pretor)) որոշում էր գործը դատարանի քննությանը հանձնելու և տվյալ գործով քաղաքացիական դատավարության թույլատրելիության հարցը և in-judicio-ի, երբ պրետորի կողմից նշանակվող դատավորը քննում և լուծում էր իրեն հանձնված կոնկրետ գործը: In-jure-ից in-judicio-ին անցնելու պահը հռոմեական իրավունքում անվանվում էր վեճի առկայության փաստում (litis contetusio): Այսինքն՝ litis contetusio-ում պարզվում էր վիճելի նյութական իրավահարաբերությունների առկայության փաստը և այն in-jure-ի հետ դիտվում էր որպես քաղաքացիական դատավարության մեկ միասնական փուլ: Ի տարբերություն քաղաքացիական դատավարությունում ձևավորված կանոնի, արբիտրաժային վարույթի դեպքում գործի քննության համար հիմք էր հանդիսանում ծագած վեճը միջնորդի (արբիտրի) լուծմանը հանձնելու մասին կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը: Այս դեպքում միջնորդը միանգամից ձեռնամուխ էր լինում գործի փաստական հանգամանքների հետազոտմանը և առաջացած տարաձայնությունները հարթելու ուղիներ փնտրում: Հենց այս հանգամանքն էլ հանդիսանում էր Հին Հռոմում քաղաքացիական դատավարության և արբիտրաժի հիմնական տարբերություններից մեկը<sup>1</sup>: Եթե քաղաքացիական դատավարության առաջին փուլում պրետորը որոշում էր վիճելի նյութական իրավահարաբերությունների առկայության և վեճը դատավորի քննությանը հանձնելու հնարավորության հարցը, այլ կերպ ասած՝ իրավունքի հարցը, իսկ երկրորդ փուլում դատավորը, քննելով գործը, պարզում էր հայցվորի սուբյեկտիվ իրավունքների խախտված կամ վիճարկված լինելու փաստը (պարզում էր գործի փաստական կողմը), ապա արբիտրաժում այս սկզբունքը չէր գործում: Ասվածի մասին է վկայում մինչ մեր օրերը հասած մագիստրատի գրավոր ցուցումներից մեկը, որտեղ դատավորին պարտադրվում էր գործով վճիռ կայացնել միայն հետազոտված ապացույցների հիման վրա<sup>2</sup>: Այսինքն, այս պարագայում մենք գործ ունենք այսպես կոչված՝

<sup>1</sup>Տե՛ս Peter Stern: *Legal institutions, 1998, էջ 18*:

<sup>2</sup> Տե՛ս Յոմ. Ք. *Институции римского права, Сергиев-Посад, 1916, 121-122 էջերը, Иеринг Р. Дух римского права СПД, 1875, էջ 92*:

<sup>1</sup> Տե՛ս Сологубова Е.В. *Римский гражданский процесс. М., 1997, 35-73 էջերը*:

<sup>2</sup> Տե՛ս Иеринг Р. *Дух римского права СПД 1875, էջ 35*:

Ֆորմուլյար դատավարության հետ, երբ պետությունն իր վրա է վերցնում գործի նորմալ քննությունը, ինչպես նաև վճռի հարկադիր կատարումն ապահովելու հետ կապված բոլոր գործառույթները: Փաստորեն քաղաքացիական դատավարությունն իրականացվում էր պետության խստագույն հսկողության ներքո և կողմերի ինքնավարության սկզբունքն այստեղ այդչափ ազատ չէր կարող գործել, որքան գործում էր նյութական իրավահարաբերություններում: Իսկ արբիտրաժային դատավարությունն իրականացվում էր ըստ կողմերի հայեցողության: Հին Հռոմում մշակվել էին այնպիսի կառուցակարգեր, որոնք կողմերին հնարավորություն էին ընձեռում արագ և առանց պետական հսկողության լուծել առաջացած վեճը: Այս դեպքում գործը քննում և լուծում էր կողմերի ընտրած միջնորդ, հաշտարար դատավորը (լատիներեն՝ arbiter), որը մասնավոր անձ էր և պետության անունից արդարադատություն չէր իրականացնում: Քանի որ այդ ժամանակաշրջանում իշխանությունների տարանջատման սկզբունքը դեռևս հստակ ձևավորված չէր և իր դասական իմաստով չէր գործում, ապա դատական մարմինների անկախության և իշխանության մյուս թևերից անջատ գործառնության մասին խոսք չէր կարող լինել: Այսպես, Հին Հռոմում մագիստրատների (լատիներեն՝ magistratus) կառավարման լիազորությունների մեջ էին մտնում հետևյալ գործառույթները՝ գորաբանակի գլխավոր հրամանատարությունը և հաշտության կնքումը, սենատ և ժողովրդական ժողով հրավիրելու և նրանցում նախագահելու իրավունքը, դատելու և պատիժ սահմանելու իրավունքը, ընդհանուր կարգադրություններ՝ եղիկտներ հրապարակելու իրավունքը, որոշումները չկատարելու համար տուգանքներ նշանակելը: Ուստի պրետորների (pretor)<sup>1</sup>, կամ նրանց կողմից նշանակված դատավորների կողմից գույքային վեճեր քննելը և լուծելը արբիտրաժային (միջնորդ) դատավարություն չէր կարելի համարել, քանի որ կոնկրետ գործեր քննելիս նրանք հանդես էին գալիս պետության անունից:

<sup>1</sup> Վերջիններս սկզբնական շրջանում կոնսուլների տեղակալներն էին, իսկ հետագայում սկսեցին մշտապես իրականացնել դատական հսկողության հետ կապված բոլոր գործառույթները:

Հարկ է նշել, որ հռոմեական իրավունքը միջնորդ դատավորի (arbiter) որոշմանը որևէ իրավական նշանակություն չէր տալիս: Հետևաբար, արբիտրի վերջնական որոշումները ենթակա չեն հարկադիր կատարման: Սակայն հռոմեացիները ծագած վեճի լուծման, ինչպես նաև գործի քննության և արբիտրի կայացրած վճռի (որոշման) կատարման հետ կապված հարցերը լուծեցին փոխադարձ զիջումներ և պարտավորություններ սահմանելու միջոցով: Հետագայում այն ասպարեզ եկավ com-promissium անվանումով, համաձայն որի կողմերը նախապես պայմանավորվում էին վեճը հանձնել արբիտրի լուծմանը և նրա որոշումը չկատարելու դեպքում որոշակի տուգանք վճարել: Փաստորեն այս հանգամանքը հիմք դրեց արբիտրաժային համաձայնության ինստիտուտի ձևավորմանը և լուրջ խթան հանդիսացավ դրա հետագա զարգացման համար: Որոշ ժամանակ անց արդեն տասներկու տախտակներով (աղյուսակներով) հռոմեական իրավունքում հստակ տարբերություն էր դրվում դատավորների և արբիտրների իրավական կարգավիճակների միջև, սահմանվում էին վերջիններիս պարտականությունները, գործունեության հիմնական սկզբունքները, նշանակման և լիազորությունները դադարեցնելու կարգը: Տասներկու տախտակներում նախատեսվում էին նաև այն դեպքերը, որոնց առկայության պարագայում էր միայն թույլատրվում արբիտր ընտրել և գործն արբիտրաժային կարգով լուծել: Մ.թ.ա. I դարում Հռոմում ձևավորված կարգի համաձայն հայցվորն ինքն էր առաջադրում արբիտրի թեկնածուին և պատասխանողի համաձայնության առկայության դեպքում պրետորը հաստատում էր կողմերի ընտրությունը: Արբիտրի թեկնածուներ կարող էին առաջադրել նաև պատասխանողը և պրետորը: Սակայն այս փաստը չպետք է շփոթմունք առաջացնի: Եթե պրետորի առաջարկած թեկնածուին կողմերը հավանության չէին արժանացնում, ապա վերջինս տվյալ գործով որպես արբիտր չէր կարող հանդես գալ: Իսկ այն հանգամանքը, որ պրետորը հաստատում էր արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված արբիտրի ընտրությունը, դեռևս չի նշանակում, որ վերջինս կարող է հանդես գալ պետության անունից: Հռոմեական իրավունքում արբիտրի որոշումը կամ վճիռը միայն վերջինիս դիրքորոշումն արտահայտող ակտ էր՝

կարծիք (sententia), որն իրավական հետևանքներ չէր առաջացնում: Կանավորապես չկատարելու դեպքում այն չէր կարող կատարվել հարկադրաբար: Արբիտրաժային վճիռն ապահովված չէր պետական հարկադրանքով:

Բացի այդ, հռոմեական իրավունքում նախատեսված էր նաև դատարանի վճիռների բողոքարկման ինստիտուտ: Եթե դատարանի վճիռները կարող էին բողոքարկվել մագիստրատ, ապա միջնորդ վճիռների պարագայում այդպիսի հնարավորություն նախատեսված չէր: Մի խոսքով, Հին հռոմեական իրավունքն առանձնանում էր նրանով, որ արբիտրաժային (միջնորդ) վճիռները իրավական հետևանքներ չէին առաջացնում, իսկ դրանց կատարումը թողնված էր կողմերի հայեցողությանը և բարի կամքին:

Պետք է նշել, որ արբիտրաժային դատավարությանը վերաբերող որոշ դրույթներ Հռոմեական իրավունքից փոխառնվել, պահպանվել և զարգացվել են տարբեր իրավական համակարգ ունեցող երկրներում:

Հին աշխարհում արբիտրաժային վարույթը տարբեր քաղաքների և պետությունների առևտրականների միջև գույքային վեճերի լուծման ամենատարածված եղանակն էր: Այն լայն կիրառում ստացավ հատկապես միջպետական ծովային առևտրի զարգացման արդյունքում: Այդ ժամանակաշրջանում ծովային ճանապարհները տարբեր պետությունները միմյանց կապող առևտրային հաղորդակցման լուրջ միջոցներ էին: Ծովափնյա պետությունների միջև խոշոր բեռնափոխադրումներն իրականացվում էին հենց բաց ծովով, որի հետևանքով նավահանգիստները դարձան առևտրատնտեսական ամենախոշոր գոտիները: Այդ բանը հանգեցրեց միջազգային արբիտրաժի դերի, հեղինակության բարձրացմանը, իսկ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերը լուծող արբիտրների դերում, որպես կանոն, հանդես էին գալիս խոշոր նավատերերը, միջազգային առևտրի ոլորտում հեղինակություն վայելող այլ անձինք, նավահանգստի տերը և այլն:

Առևտրային արբիտրաժը մ.թ.ա. 5-րդ դարում լայնորեն կիրառվել է Հին Հունաստանում: Լինելով ծովափնյա երկիր՝ Հունաստանը դարձել էր միջազգային առևտրի ամենախոշոր կենտրոններից մե-

կը, սակայն այստեղ աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության տակ իրավական զարգացումներն այլ կերպ ընթացան: Մ.թ.ա. 5-4-րդ դարերում Աթենական Հանրապետության կառուցվածքում տեսանելի էին իշխանությունների ապագա տարանջատման տարրերը<sup>1</sup>: Հանրապետական կառավարումը Հին Հունաստանում խարսխվում էր ժողովրդավարական մի շարք սկզբունքների վրա, որոնք շատ բանով որոշում են նաև ժամանակակից պետականության հատկանիշները (ընտրովիությունը, կոլեգիալությունը, պաշտոնակարգային ենթակայությունը և այլն)<sup>2</sup>: Մշակվել էին գույքային վեճերի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ կառուցակարգեր: Օրինակ՝ Աթենքում խոշոր դրամական գումարների կապակցությամբ ծագած բոլոր վեճերը սկզբում հանձնվում էին արբիտրի լուծմանը: Եթե վերջինս չէր կարողանում կողմերին փոխադարձ համաձայնության բերել և հաշտեցնել, ապա նրանցից իրենց փաստարկները հաստատող ապացույցներ էր պահանջում, կանչում վկաներ, գործով հավաքված ապացույցների հիման վրա քննում և լուծում էր վեճը: Ըստ որում, Հունաստանը անտիկ աշխարհի այն եզակի պետություններից էր, որտեղ արբիտրի բոլոր որոշումներն ու վճիռները կարող էին վիճարկվել: Մասնավորապես՝ Աթենքում արբիտրի որոշումները վիճարկվում էին ժողովրդական ժողով<sup>3</sup>: Դա վկայում է այն մասին, որ Հին Հունաստանում արբիտրաժային վճիռներն իրավական ուժ ունեին և ենթակա էին պարտադիր կատարման: Այն փոփոխելու կամ վերացնելու համար սահմանված էր հատուկ ընթացակարգ: Ընդ որում, դրա բողոքարկումը ժողովրդական ժողով թույլատրելի էր միայն դատավարական լուրջ խախտումների դեպքում: Օրինակ՝ եթե արբիտրը անտեսել էր կողմերից մեկի ներկայացրած ապացույցը, չէր քննել վկաներին և

<sup>1</sup> Ժողովրդական ժողովը՝ օրենսդիր մարմին, 500-ի խորհուրդը՝ գործադիր իշխանություն, արեոպագո՝ բարձրագույն դատական իշխանություն:

<sup>2</sup> Տե՛ս *Àðeñòí ðàèü. Àðeíñeäý ííèeðeý, I* ., 1936, էջ 72:

<sup>3</sup> Աթենքում պետական իշխանության բարձրագույն մարմինը ժողովրդական ժողովն էր, որի գլխավոր գործառույթն օրենքների ընդունումն էր: Սակայն այն իրականացնում էր նաև տարբեր վարչական և դատական գործառույթներ: Վերջինիս աշխատանքներին մասնակցում էին 20 տարին լրացած լիիրավ աթենական քաղաքացիները:

այլն: Ժողովրդական ժողովուն արգելվում էր նոր ապացույցներ ներկայացնելը: Այսինքն՝ այստեղ հնարավոր չէր գործն ըստ էության քննել և լուծել: Այն դեպքերում, երբ ժողովրդական ժողովը արբիտրաժային վճիռը չէր փոփոխում կամ վերացնում, այն ենթակա էր պարտադիր կատարման:

Իրավաբանական գրականության մեջ շփոթմունք է առաջացրել այն հանգամանքը, որ որոշ հեղինակներ Հին Հունաստանում արբիտրաժային վարույթը նույնացնում են քաղաքացիական դատավարության հետ<sup>1</sup>: Վերջիններս իրենց տեսակետը հիմնավորում էին նրանով, որ Հին Հունաստանում արբիտրին թեև ընտրում էին կողմերը, սակայն վերջինս գործը քննում էր Աթենքում ձևավորված դատավարական կանոններին համապատասխան, որի վճիռները բողոքարկվում էին միանգամից ժողովրդական ժողով, և ոչ թե դատարան: Այսինքն, նրանք արբիտրին նույնացնում են դատարանների պետական համակարգի ստորին օղակի (առաջին ատյանի) հետ և պնդում էին, որ վեճ ծագելու դեպքում կողմերը դիմում էին հասարակությունում հեղինակություն վայելող որևէ անձի (օրինակ՝ մտավորականի), որը շատ դեպքերում զբաղվում էր միայն աթենացիների միջև գույքային վեճեր լուծելով, մասնավոր կարգով արդարադատություն էին իրականացնում: Սակայն, մեր կարծիքով, այս ավելի շատ նման էր ինստիտուցիոնալ արբիտրաժին, քան առաջին ատյանի դատարանում քաղաքացիական դատավարության կարգով գույքային վեճերի լուծմանը: Վերջապես չպետք է մոռանալ, որ Հին Հունաստանում գործում էր արդարադատություն իրականացնող հատուկ մարմին՝ արեոպագը, որն էֆիալտայի բարեփոխումների արդյունքում (մ.թ.ա. 462 թ.-ին) զրկվեց բարձրագույն քաղաքական գործառնությունից և դարձավ զուտ դատական մարմին: Պետք է նշել, որ այս ժամանակաշրջանում առևտրատնտեսական վեճեր լուծելիս կիրառվում էր սովորութային իրավունքը և արբիտրաժային կարգով վեճեր քննելիս արբիտրները առավելապես ղեկավարվում էին այս ոլորտում ձևավորված սովորույթներով:

<sup>1</sup> St'u Peter Stern, Legal Institutions, The Development of Despute Settlement (1984, էջ17:

Այսպիսով, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության՝ գոյություն ունեցող հնագույն կառուցակարգը, ձևը արբիտրաժային վարույթն է: Արբիտրաժային կարգով վեճերի լուծումը մարդկությանը հայտնի է եղել դեռևս պետականության բացակայության պայմաններում: Ըստ որում, պետության և դատարանների պետական համակարգերի ստեղծումը ստվեր չզցեց արբիտրաժի վրա: Այն լայնորոն կիրառվում էր տարբեր պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման համար: Իսկ միջպետական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը լուրջ խթան հանդիսացավ միջազգային առևտրային արբիտրաժի առաջընթացի և հեղինակության բարձրացման համար: Արբիտրաժային վարույթը հիմք է հանդիսացել հետագայում քաղաքացիական դատավարության կազմավորման համար: Այս հատկապես ցայտուն կերպով երևում է Հին Հռոմեական իրավունքի ուսումնասիրության ընթացքում:

## **§2. Առևտրային արբիտրաժը միջնադարում**

Առևտրային արբիտրաժը միջին դարերում զարգանալով այլ ուրակ ձեռք բերեց: Այն Եվրոպայի տարբեր քաղաքների (պետությունների) առևտրականների միջև առաջացած առևտրատնտեսական վեճերի լուծման հիմնական միջոցներից մեկն էր<sup>1</sup>: Այդ ժամանակաշրջանում դատավարական ընթացակարգերը դեռևս գտնվում էին ձևավորման փուլում, բավարար չէին դատավարական հարաբերությունների համապարփակ կարգավորման համար, և դատավորները առևտրային բարդ վեճեր լուծելու գործում այդքան էլ մասնագիտացած չէին, իսկ շատ երկրներում առևտրային իրավունքը ընդհանրապես բացակայում էր: Նման պայմաններում առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվողները գերադասում էին առաջացած տարաձայնությունները կարգավորել սեփական ուժերով և սեփական միջոցների հաշվին, և ոչ թե դիմել աշխարհիկ (ֆեոդալական) կամ եկեղեցական դատարաններ: Որպես հաշտարար դատա-

<sup>1</sup> St'u B.P. Hunt & Co. Exploration, 1976, էջ 79:



վորներ՝ arbiter-ներ, հանդես էին գալիս գիլդիաների ավագները կամ հեղինակություն վայելող այլ անձինք, որոնք վեճերը լուծելիս օգտագործում էին ոչ թե աշխարհիկ (ֆեոդալական) կամ եկեղեցական իրավունքը, այլ վերոհիշյալ ոլորտում ձևավորված առևտրային սովորույթները: Վերջիններս առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման գործում հսկայական դեր ունեին: Հենց միջին դարերում էլ ձևավորվեց այսպես կոչված սովորույթային առևտրային իրավունքը, որն իր վերածնունդը գտավ 20-րդ դարի 2-րդ կեսին Lex Mercatoria անվանումով:

XVI-XVII դդ. բացարձակ միապետությունների երևան գալու հետ մեկտեղ, Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր պետություններում միջնորդ դատավարությունն անկում ապրեց՝ իր տեղն աստիճանաբար զիջելով պետական արդարադատությանը: Սակայն XVIII-XIX դդ. առևտրի և արդյունաբերության բուռն զարգացումը հանգեցրեց դրա աստիճանական վերածնմանը: Այդ ժամանակաշրջանում առևտրային և ծովային արբիտրաժները զարգանում էին առևտրաարդյունաբերական պալատների, կոմերցիոն ասոցիացիաների, ֆոնդային բորսաների հովանու ներքո: Այս ամենի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 19-րդ դարի վերջում միջազգային առևտրային արբիտրաժային դատավարության խոշոր կենտրոնների առաջացումը (օրինակ՝ 1923 թ. հիմնադրված Առևտրի միջազգային պալատին առընթեր արբիտրաժային դատարանը, որը ներկայումս կոչվում է Միջազգային առևտրային արբիտրաժային դատարան):

Դեռ վաղ ժամանակներից եվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, Շվեդիան, Շվեյցարիան արտաքին առևտրատնտեսական գործարքներից բխող վեճերի լուծման համար լայնորեն կիրառվում էր միջազգային առևտրային արբիտրաժային դատավարության ինստիտուտը: Որպեսզի ավելի լավ պատկերացնենք միջազգային առևտրային արբիտրաժի զարգացման միտումները ողջ աշխարհում, անհրաժեշտ է ուսումնասիրել դրա բնաշրջական զարգացումը (էվոլյուցիան) տարբեր իրավական համակարգեր ունեցող երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ, Գերմանիա):

**Անգլիան**, պահպանելով և զարգացնելով շոնմեական իրավունքից փոխառված ինստիտուտները, արբիտրաժային դատավարության նկատմամբ առանձնանում էր ուրույն վերաբերմունքով: Այստեղ, ծագած վեճի մասին դատարանից դուրս կնքված արբիտրաժային համաձայնության իրացումն (voluntary submission out of court) ապահովված էր միայն կողմերի քաղաքացիաիրավական պարտավորությամբ (հանձնառությամբ) և չէր բացառում հետագայում տվյալ գործի դատական քննության հնարավորությունը: Ընդ որում, այդ պարտավորության կատարման համար որևէ երաշխիքներ սկզբնական շրջանում չէին գործում: Արբիտրի լիազորությունները (մինչև վճիռ կայացնելը) դատավարության ընթացում ցանկացած պահի կարող էր կողմերից մեկի պահանջով դադարեցվել: Նման պարագայում հաշտարարը հարկադրաբար վայր էր դնում լիազորությունները: Արբիտրաժային համաձայնության առկայությունը հիմք չէր տվյալ գործով դատարան չդիմելու կամ սկսված (քաղաքացիական) դատավարությունը դադարեցնելու համար: Անգլիական իրավունքը հնարավորություն էր ընձեռում միայն արբիտրաժից խուսափող կողմին արբիտրաժային համաձայնությունը չկատարելու հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման պահանջով գումարի բռնագանձման հայց ներկայացնել:

Այդ էր պատճառը, որ իրավաբանորեն ճանաչվող և կատարման առումով երաշխավորված արբիտրաժային համաձայնության առաջին ձև ճանաչվեց ծագած վեճը միջնորդի (արբիտրի) լուծմանը հանձնելու մասին՝ դատարանում ձեռք բերված կողմերի համաձայնությունը: Դատարանն իր որոշմամբ (rule of court) հաստատում էր նմանօրինակ համաձայնությունը, որով հայցում տեղ գտած բոլոր պահանջների կամ դրանց մի մասի լուծումը հանձնվում էր արբիտրի լուծմանը: Կարելի է ասել, որ այս պարագայում արբիտրը երդվյալ ատենակալների ինստիտուտի արդյունավետ փոխարինողն էր միայն, քանի որ վերջիններս ի վիճակի չէին ձեռնարկչական ոլորտի առանձնահատուկ կողմերի, ինչպես նաև այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ գործի փաստական հանգամանաքներին, օրինակ՝ հաշվապահական հաշվառման հետ

կապված խախտումներին և այլն, ճիշտ և օբյեկտիվ գնահատական տալ<sup>1</sup>:

Ուշ ֆեոդալիզմի շրջանում Անգլիայում արբիտրաժից խուսափող կողմին օրենսդրությամբ տուգանելու հնարավորություն էր ընծեմվում<sup>2</sup>: Իսկ «Տուգանքների և պատիժների մասին» 1687 թվականի օրենքի ընդունմամբ, թեև դատարանից դուրս կնքված արբիտրաժային համաձայնությունները օրինական և դատական պաշտպանության ենթակա էին համարվում, սակայն արբիտրաժից խուսափող կողմին սպառնացող խորհրդանշական տուգանքն այն գործնականում ձևականության վերածեց: 1690 թվականի արբիտրաժային ստատուտով առավելապես դատավարական բնույթ կրող և դատարանի որոշմամբ հաստատվող արբիտրաժային համաձայնությանը համարժեք իրավական ճանաչման արժանացան և ռեալ պաշտպանություն գտան նաև դատարանից դուրս կնքված միջնորդ համաձայնությունները: Իսկ ժամանակի ընթացքում էլ ավելի ամրապնդվեց դատարանից (կոնսենսուալ) արբիտրաժի անկախության և ինքնավարության սկզբունքը: Արբիտրաժային համաձայնության կողմի կանքով միջնորդ դատավարությունն էլ չէր կարող դադարեցվել: Արբիտրը քննում էր իր լուծմանը հանձնված վեճը և գործնականում էր վճռահատությամբ: Այսինքն՝ արբիտրաժային համաձայնություններն Անգլիայում ոչ միայն ճանաչվում էին, այլ նաև ենթակա էին անվերապահ կատարման:

Մեծ Բրիտանիայում արբիտրաժի զարգացման պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է կենտրոնանալ նաև դատարանի կողմից իրականացվող երկու գործառնությունների վրա, որով և պայմանավորված էր արբիտրաժային (միջնորդ) դատավարության ողջ ընթացքը: Այն է՝ ճանաչել և երաշխավորել արբիտրաժային համաձայնության կատարումը, վերահսկել արբիտրաժային դատավարությունը: Դատարանի մյուս գործառնությունը՝ արբիտրաժային վճռի իրավական բովանդակության ստուգումը, առավելապես պայմանավորված էր անգլիական արբիտրաժային իրավունքում ընդունված՝ գոր-

ծի հարուցման special case կարգով: Վերջինիս էությունը կայանում էր արբիտրի կողմից քննվող վեճի՝ մեկ կամ մի քանի հարցերը դատարանի լուծմանը հանձնելու (փոխանցելու) մեջ, ինչից հետո արբիտրն այլընտրանքային վճիռ էր կայացնում, որը պարունակում էր գործի լուծման բոլոր հնարավոր տարբերակները՝ պայմանավորված դատարանի դիրքորոշմամբ: Այս ամենի հետևանքով, 1855 թվականներից սկսած, Միջազգային առևտրային արբիտրաժն Անգլիայում աստիճանաբար ճանաչում և լայն տարածում գտավ, սակայն միայն դատական վերահսկողության ներքո: 1889թ. ընդունված «Արբիտրաժի մասին» նոր օրենքի (ստատուտի) համաձայն, արբիտրաժային վճիռները կարող էին բողոքարկվել դատարանի հիմք ընդունելով ինչպես դատավարական (ընթացակարգային) նորմերի խախտումները, այնպես էլ նյութական իրավունքի ոչ ճիշտ ընտրությունը և կիրառումը: Ընդ որում, վերոգրյալը հավասարապես վերաբերում էր թե՛ ներքին և թե՛ միջազգային առևտրային արբիտրաժային դատավարությանը:

1979 թվականից special case-ի ինստիտուտն Անգլիայում վերացվեց: Այն փոխարինվեց արբիտրաժային վճռի դատական վիճարկման ինստիտուտով:<sup>1</sup>

Անգլիայում արբիտրաժի զարգացումը պայմանավորվեց երկու անխախտելի սկզբունքներով՝

ա) արբիտրաժային վարույթի իրավական կարգավորման անհրաժեշտության ու ինքնավարության ընդունումով և

բ) արբիտրաժային ինստիտուտներում ձևավորված դատավարական և նյութական (առևտրային) իրավունքի ինքնուրույն համակարգի գոյության անժխտելիությամբ, որն անպայմանորեն մրցելու էր երկրի ներպետական իրավունքի հետ և նպաստելու էր տնտեսական և առևտրային համակարգերի առողջացմանը:

Անգլիայի օրենսդիրների նման դիրքորոշմամբ պայմանավորված արբիտրաժային դատավարության առաջընթացը մեզ հնարա-

<sup>1</sup> Տե՛ս M. J. Mustill S. C. Boyd. Commercial Arbitration. London. 1982, 382-384 էջերը:

<sup>2</sup> Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Kluwer, 1990, էջ 58:

<sup>1</sup> Վերջինիս իրականացման կարգը սահմանված է թե՛ Անգլիական ներպետական իրավունքով և թե՛ միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից բխող պարտավորություններով, ինչպես օրինակ՝ 1958թ. Նյու Յորքի Չամաձայնագրով:

վորություն է ընձեռում զուգահեռներ անցկացնել Հռոմեական իրավունքի որոշ ինստիտուտների և արբիտրաժային իրավունքի միջև: Ինչպես Հին Հռոմի լեգիսակցիոն և ֆորմուլյար դատավարություններում pretor-ները, այնպես էլ միջնադարյան Անգլիայի արբիտրաժային դատավարությունում արբիտրները որոշում (վճռում) էին փաստի, այլ ոչ թե իրավունքի հարցը: Վեճի լուծման ընթացքում վերջիններս գործունեության տարբերությունը կայանում էր իրավունքի և գործի փաստական հանգամանքների բացահայտման հետ կապված հարցերի լուծման (սահմանման) հաջորդականությունում: Եթե Հին Հռոմում pretor-ը հայցվորի պահանջներին իրավական գնահատական էր տալիս՝ այսինքն՝ որոշում հայցվորի իրավունքների առկայության կամ բացակայության հարցը, իսկ հետո վեճը հանձնում էր դատավորի լուծմանը՝ գործով ձեռք բերված և հետագոտված ապացույցներով հաստատված հանգամանքները և կողմերի ներկայացրած բոլոր փաստարկները համադրելով, ապա միջնադարյան Անգլիայի արբիտրաժային իրավունքում արբիտրը նախ և առաջ պարզում էր գործի փաստական հանգամանքները և հետո միայն դիմում դատարան՝ իրավունքի հարցի լուծման ակնկալիքով:

Այսպիսով, եթե համեմատելու լինենք հռոմեական քաղաքացիական դատավարության և Անգլիայում դատարանների կողմից արբիտրաժային դատավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ինստիտուտների տարրերը, կարող ենք հաստատել միայն այս իրավական երևույթների էական կողմերի նմանությունը: Դատարանի որոշմամբ հաստատված արբիտրաժային համաձայնությունը (submission) մեզ հիշեցնում է հռոմեական litis contestatio-ն, որը հաստատում (ֆիքսում) էր քաղաքացիական դատավարության in jure-ից in-judicio փուլին անցնելու պահը:

Արբիտրի կողմից special case-ի կարգով այլընտրանքային արբիտրաժային վճռի կայացումը պարունակում է pretor-ի կողմից դատավորին ներկայացվող բանաձևի այն բոլոր տարրերը, որով նա հանձնարարում էր վերջինիս պարզել գործի փաստական հանգամանքները և լուծել կողմերի միջև առաջացած վեճը: Իսկ «Արբիտրաժային դատարանների և արբիտրաժային դատավարության մա-

սին» 1996թ.-ի նոր օրենքի ընդունումով Մեծ Բրիտանիան դարձավ միջազգային առևտրային արբիտրաժի համաշխարհային կենտրոններից մեկը: Ներկայումս Լոնդոնի միջազգային արբիտրաժում իրենց լուծումն են գտնում եվրոպական և լատինաամերիկյան երկրների միջև միջպետական առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի զգալի մասը:

**Ֆրանսիա:** Դեռևս 1790 թ. Ֆրանսիայի Օրենսդիր ժողովը արբիտրաժը հայտարարեց քաղաքացիների միջև վեճերի լուծման առավել ընդունելի և նախընտրելի միջոց<sup>1</sup>: Դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացավ միջնորդ վճիռների կատարումը հարկադիր դարձնելը: 1793 թ. Սահմանադրությունը նախատեսում էր հասարակական միջնորդ դատարանների ինստիտուտ, որոնց իրավասությանը վերապահված էին բոլոր այն վեճերը, որոնք չէին լուծվել մասնավոր կարգով կամ աշխարհիկ դատավորների կողմից: Սակայն արբիտրաժային դատավարության ընթացքում բազմաթիվ չարաշահումների, այլ սուբյեկտիվ հանգամանքների պատճառով միջնորդ դատավարության կիրառումը սահմանափակվեց: 1806 թ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, հաշվի առնելով վերը նշվածը, շրջանցեց պայմանագրերում պարունակվող միջնորդ վերապահումների և միջնորդ համաձայնությունների կարգավորման հարցը և դրա փոխարեն հանգամանալից կարգավորման ենթարկեց փոխգիշումների ու արդեն իսկ գոյություն ունեցող վեճերը արբիտրաժ հանձնելու հետ կապված հարցերը: Մասնավորապես, Ֆրանսիայի ԶԴՕ 1003 և 1006 հոդվածները սահմանում էին, որ արբիտրաժային համաձայնությունները պարտադիր կարգով պետք է բովանդակեն արբիտրների անվանացանկը և դրանցում պետք է մատնանշվի նաև հնարավոր վեճի առարկան: Այս պայմաններից թեկուզև մեկի բացակայության դեպքում միջնորդ համաձայնությունն առոչինչ էր: Քանի որ պայմանագրի կնքման պահին զրեթե անհնար էր նախատեսել, թե կողմերի միջև ինչ վեճ կառաջանա, միջնորդ դատավարության կիրառումն հասցվեց նվազագույնի: Ըստ որում, այդ ժամանակաշրջանում Ֆրան-

<sup>1</sup> St'u Arthur von Mehren , General view of contract , 7 international Encyclopedia of comparative law, 1982, էջ 52:

սիայում դեռևս տարբերություն չէր դրվում միջազգային առևտրային արբիտրաժի և միջնորդ դատավարության (ներքին արբիտրաժ) միջև:

1880-ականներին «Առևտրային Միությունների» և «Արհեստակցական Սինդիկատների» մասին օրենքների ընդունումով Ֆրանսիայում արբիտրաժը վերածնունդ ապրեց, քանի որ այնտեղ գործող զանազան առևտրաարդյունաբերական պալատներն ունեին առևտրատնտեսական վեճերի լուծման իրենց կանոնները: Բայց, այնուամենայնիվ, երկար ժամանակ պահանջվեց որպեսզի միջազգային առևտրատնտեսական գործունեությանը զբաղվողներին իրավունք վերապահվեր արտաքին առևտրատնտեսական գործարքներից բխող վեճերի լուծման համար դիմել միջազգային առևտրային արբիտրաժ:

1981 թ. ուժի մեջ մտած Ֆրանսիայի նոր Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) «Արբիտրաժ» վերտառությամբ IV գլուխն էլ ավելի ամրապնդեց արբիտրաժի դիրքերը: Մասնավորապես այն սահմանում էր, որ Ֆրանսիայում հարկադիր կատարման ենթակա արտասահմանում կայացված արբիտրաժային (միջնորդ) վճիռների դատական ստուգումը պետք է լինի ոչ ավելի խիստ, քան վճիռը կայացրած երկրում: Ներկայումս, 1958 թ. Նյու Յորքի կոնվենցիայի համաձայն, Ֆրանսիայում արբիտրաժային վճիռները համապատասխան դատական ստուգում անցնելուց հետո, ենթակա են հարկադիր կատարման, իսկ Ֆրանսիական դատարանները միջազգային առևտրային արբիտրաժի նկատմամբ իրականացնում են վերջինիս գործունեությանը չմիջամտելու քաղաքականություն:

**Գերմանիա:** Գերմանիայում երկար ժամանակ արբիտրաժային (միջնորդ) համաձայնությունները ենթարկվում էին խստագույն դատական ստուգման<sup>1</sup>: Սակայն 1898 թ. Գերմանիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) ընդունումով վերջ դրվեց արբիտրաժի շուրջ ձևավորված տարակարծությանը, որի 10-րդ գլխով սահմանվեց, որ դատական պաշտպանության են-

թակա են ոչ միայն փոխզիջումները, այլև, համապատասխան պայմանների առկայության դեպքում՝ արբիտրաժային համաձայնությունները: Կողմերին հնարավորություն էր տրվում արբիտրաժային (միջնորդ) համաձայնության առկայության դեպքում վիճարկել գործը դատարան հանձնելու հետ կապված ցանկացած գործողություն: ՔԴՕ-ն կողմերին ազատություն էր տալիս արբիտրաժի ընտրության հարցում, նշելով, որ վերջիններս իրավունք ունեն ինքնուրույն կազմակերպել գործի քննությունը՝ ելնելով անհրաժեշտությունից և նպատակահարմարությունից: Արբիտրաժում պարտադիր կարգով պետք է ուսումնասիրվեին կողմերի բոլոր փաստարկները: Արբիտրաժային (միջնորդ) վճիռը պարտադիր էր կողմերի համար և, օրենքին համապատասխանության դեպքում, ենթակա էր պարտադիր կատարման: Գերմանիայի 1898 թ. ՔԴՕ-ն կողմերին հնարավորություն էր ընձեռում արբիտրաժային վճիռը, համապատասխան հիմքերի առկայության դեպքում վիճարկել դատարանում՝ այն անվավեր ճանաչելու նպատակով: Ներկայումս Գերմանիայում գործում է «Միջազգային Արբիտրաժի մասին» 1998 թ. նոր օրենք, որի ընդունման համար հիմք է ծառայել «Միջազգային Առևտրային Արբիտրաժի մասին» ՅՈՒՆԻՏՐՈՒԼ-ի 1985թ. մուլտային (մոդելային) օրենքը:

**Ամերիկայի Միացյալ Նահանգներ (այսուհետ՝ ԱՄՆ):** Ի տարբերություն Անգլիայի, ԱՄՆ-ին ավելի քիչ ժամանակ պահանջվեց արբիտրաժային (միջնորդ) դատարանների և արբիտրաժային վարույթի հետ կապված բոլոր հարցերը հանգամանալից կարգավորելու և հնարավոր տարաձայնություններից խուսափելու համար: 19-րդ - դարի վերջերին ԱՄՆ-ում մի շարք օրենսդրական ակտեր ընդունվեցին, որոնք, մասնավորապես, կարգավորում էին առանձին կատեգորիայի գործերը արբիտրաժի լուծմանը հանձնելու, միջնորդ դատավարությանը դատարանների անտեղի միջամտությունը բացառելու հետ կապված հարցերը: Նման առաջին նորմատիվ ակտ հանդիսացավ 1898թ. «Սնանկության մասին» օրենքը, որն արգելում էր սնանկության հետ կապված գործերը քննել և լուծել արբիտրաժային կարգով: ԱՄՆ արբիտրաժային օրենսդրության զարգացման հաջորդ քայլը 1925 թ. «Արբիտրաժային դատարանների և արբիտրաժային դատավարության մասին» դաշնային օրենքի ընդունումն

<sup>1</sup> Տե՛ս W.Michael Reisman, W. Laurence. Foundation Press, 1997, էջ 45:

էր, որը գործում է մինչ օրս: Բացի այդ, ԱՄՆ –ում 1955թ. ընդունվել է մի օրենք, որը հիմք է հանդիսանում առանձին նահանգներում ընդունվելիք միջնորդ դատավարության մասին օրենքների համար: Ներկայումս ԱՄՆ նահանգներից մեծամասնությունում ընդունվել են միջնորդ դատավարությունը և միջազգային առևտրային արբիտրաժը կարգավորող օրենսդրություն: Ըստ որում, Կալիֆորնիա, Կոննեկտիկուտ, Օրեգոն և Տեխաս նահանգներում Միջազգային առևտրային արբիտրաժի մասին օրենքի ընդունման համար հիմք է հանդիսացել ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի «Միջազգային Առևտրային Արբիտրաժի մասին» նմուշային օրենքը :

**§3. Առևտրային արբիտրաժի գործառնությունը վաղ, միջնադարյան, նոր և նորագույն շրջանի Հայաստանում**

Հայ պետականությունը և իրավունքը բազմադարյա (ավելի քան 4500 (տարվա) պատմական զարգացումների արդյունք են:

Ընդ որում, Հայ իրավունքը համաշխարհային իրավական համակարգի փոքրիկ մասնիկն է միայն: Հետևաբար՝ վերջինիս հատուկ են ինչպես իրավունքի զարգացման համընդհանուր օրինաչափությունները (հասարակական-տնտեսական ֆորմացիաների փոփոխությունն ու իրավունքի առաջընացը և այլն), այնպես էլ միայն իրեն բնորոշ որակական առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքով, սոցիալ-տնտեսական կացութաձևով, ազգագրական հատկանիշներով, արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Գտնվելով օտար պետությունների լծի տակ՝ հայ ժողովուրդը շատ դեպքերում զուրկ է եղել ազատորեն ստեղծագործելու, իրավունքի ու իրավական համակարգի զարգացման ուղղություններն ինքնուրույն նախանշելու հնարավորությունից: Սակայն ասվածը չի նշանակում, որ հայ իրավունքը և իրավական միտքը իրենց զարգացումը չեն ունեցել: Այդ զարգացման վառ ապացույցն են ստեղծված բազմաթիվ կանոնագրքերը, դատաստանագրքերը և մինչ այժմ պահպանված այլ իրավական ակտերը (Աշտիշատի ժողովի կանոնները՝ 354թ., Շահապիվանի կանոնները՝ 443թ., Տեր Հովհան Իմաստասեր Օծնեցու «Կանոնագիրք Հայոց»-ը՝ 330թ., Դավիթ Ավակա Որդու «Կանոնական օրենսդրություն»-ը կամ «Կանոնները»՝ 1130թ. և այլն, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը»՝ 1184թ., Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը»՝ 1265թ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոցը՝ 18-րդ դար, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառացը»՝ 1773թ. և այլն:

տասեր Օծնեցու «Կանոնագիրք Հայոց»-ը՝ 330թ., Դավիթ Ավակա Որդու «Կանոնական օրենսդրություն»-ը կամ «Կանոնները»՝ 1130թ. և այլն, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը»՝ 1184թ., Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը»՝ 1265թ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոցը՝ 18-րդ դար, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառացը»՝ 1773թ. և այլն:

Եիշտ է, անտիկ ժամանակաշրջանում հայ իրավունքի (այդ թվում՝ արբիտրաժի) զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ են եղել, սակայն այդ ժամանակաշրջանից մեզ հասած իրավական ժառանգությունը շատ քիչ է, եթե համեմատելու լինենք հռոմեական Corpus juris-ի կամ բաբելոնական օրենքների Համնուրաբիի ժողովածուի հետ: Պետք է նշել սակայն, որ իրավունքի բովանդակությունն ու ծավալը չեն սահմանափակվում գրավոր օրենքների ժողովածուներով: Հին Հայաստանում գործել են բազմաթիվ իրավաբանական նորմեր, որոնք գրավոր ձևակերպում չեն ստացել և ժամանակին իրավաբանական հուշարձաններում չեն արձանագրվել: Ստրկատիրության ժամանակաշրջանում մեզ մոտ զարգացել է սովորութային իրավունքը, որն այդ շրջանակում հասարակական հարաբերությունների բավական գործուն կարգավորիչ է հանդիսացել:

Անտիկ աշխարհում քաղաքների առաջացմանն ու զարգացմանը, արհեստները քաղաքներում կենտրոնանալուն զուգընթաց Հայաստանում աճում և ընդլայնվում են ներքին ու արտաքին շուկաները: Դա անխուսափելիորեն հանգեցնում է միջազգային արբիտրաժի կազմավորմանը, իսկ վերջինս էլ պայմանավորում է ձևավորվող առևտրային հարաբերությունների, ինչպես նաև դրանցից բխող վեճերի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ բազմաթիվ կանոնների ու դատավարական կառուցակարգերի մշակումը:

Դեռևս երվանդունիների օրոք ընդգրկվելով հելլենիստական երկրների առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտ՝ Հայաստանի իրավական համակարգ են ներմուծվում հռոմեական և հունական իրավունքի բազմաթիվ ինստիտուտներ, որոնք կատարելագործվել և համապատասխանեցվել են տեղի պայմաններին: Որպես այդպիսին կարող ենք մատնանշել նաև արբիտրաժը:

Միջնորդի միջոցով վեճերի լուծման կառուցակարգը Հայաստանում կիրառվում էր վաղուց: Միջնորդ վարույթը դեռևս մինչպետական ժամանակաշրջանում տարածված է եղել նաև Հայակական լեռնաշխարհում: Եթե մարդկային հասարակության զարգացման այդ փուլում արդարադատություն էին իրականացնում տոհմերի ավագները և հեղինակավոր այլ անձինք, ապա հայկական պետության կազմավորումից և պատմական այդ ժամանակաշրջանում գործող միջազգային առևտրի համակարգին միանալուց հետո Հայաստանի հասարակական և տնտեսական կյանքը սրընթաց զարգացում ապրեց, որը հանգեցրեց առանձին իրավական ինստիտուտների, դատավարական կառուցակարգերի կատարելագործմանը, պետական և մասնավոր արդարադատության տարբերակմանը:

Հռոմեական իրավունքի և այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործող սովորութեան արբիտրաժային իրավունքի միջև շատ ընդհանրություններ կային: Հին աշխարհի երկրներում ամենաընդհանրականն այն էր, որ սովորութեան իրավունքի գործառնության ժամանակաշրջանում մասնավոր արդարադատությունը (արբիտրաժային կարգով վեճերի քննությունը և լուծումը) ոչ միայն նախորդել է պետական արդարադատությանը, այլև սկզբնական շրջանում վերջինիցս առավել տարածված է եղել<sup>1</sup>: Պետական արդարադատություն ասելով ի նկատի ունենք հանրային իշխանությունների կողմից իրականացվող դատական գործառնություն, որի գլխավերևում կանգնած էր թագավորը<sup>2</sup>: Իսկ տեղերում, հարկային-ֆինանսական, արքունի տնտեսական կառավարումից, պետական-հասարակական աշխատանքների կազմակերպումից զատ՝ դատական գործառնություն էր իրականացնում ստրկատիրական ավագանին: Վերջիններս արդարադատություն էին իրականացնում թագավորի անունից, որը մարմնավորում էր պետությունը: Հետևաբար՝ նրանց որոշումները և վճիռները ապահովված էին պետական հարկադրանքով, այսինքն՝ կատարվում էին հարկադրաբար: Սակայն,

<sup>1</sup> Տե՛ս **Волков А.Ф.** Торговые третейские суды в древнем мире // Третейский суд, 1999. 2-3, 65-85 էջերը:

<sup>2</sup> Վերջինս Հայաստանի գլխավոր կառավարողն էր, զորքերի գլխավոր հրամանատարը և գլխավոր դատավորը:

պետք է նշել նաև, որ ոչ բոլոր գործերն էին հանձնվում ստրկատիրական ավագանու (թագավորի ներկայացուցիչների) լուծմանը: Մանր գույքային վեճերը, որպես կանոն, քննվում և լուծվում էին միջնորդական կարգով, հասարակությունում հեղինակություն վայելող անձանցից որևէ մեկի կամ էլ ավագ սերնդի ներկայացուցիչների կողմից: Այդ ժամանակաշրջանում ձևավորված սովորույթի համաձայն, քրեական գործերը չէին հանձնվում միջնորդի (արբիտրի) լուծմանը: Քրեական գործերով արդարադատության իրականացումը բացառապես պետության (թագավորի իշխանության) մեծանորին էր:

Ձուտ իրավաբանական տեսանկյունից դիտարկելիս պարզ է դառնում, որ Հին Հայաստանում արբիտրաժային դատավարությունը առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոց է հանդիսացել: Այն չէր կարող լիովին փոխարինել պետական արդարադատությանը, քանի որ վերջինս չէր ապահովում գործի քննության արդյունքում կայացված վճռի հարկադիր կատարումը: Արբիտրաժային որոշումը (վճիռը) իրեն հանձնված գործի արդարացի լուծման վերաբերյալ միջնորդի կարծիքն էր միայն: Արբիտրաժային վճռի (որոշման) կատարումը թողնված էր կողմերի հայեցողությանը և բարի կամքին: Սակայն չպետք է մոռանալ, որ սովորութեան իրավունքի գործառնության շրջանում հասարակությունում բարոյական նորմերին որքան մեծ նշանակություն էր տրվում: Միջնորդ (արբիտրաժային) վճիռն ապահովված էր հենց բարոյական նորմերի համակարգով, որն արբիտրաժային որոշումների կատարման համար ամենագործունե երաշխիքն էր: Կողմը շատ դեպքերում չէր կարող խուսափել միջնորդ վճռի կատարումից, քանի որ հակառակ դեպքում կարժանանար հասարակության պարսավանքին:

Հին Հայաստանում արբիտրաժի զարգացմանը հատկապես օժանդակել է թե՛ այլ երկրների հետ տնտեսական կապերի ստեղծումը և թե՛ արտաքին առևտրի խթանումը, որի հիմքը միջազգային տարանցիկ առևտուրն էր: Անտիկ աշխարհի երկու հիմնական առևտրային մարտուղիներն անցնում էին Հայկական լեռնաշխարհով<sup>1</sup>: Օտարերկրյա առևտրականների միջև գույքային վեճերը, որ-

<sup>1</sup> Տե՛ս **Плутарх.,** Страбон Арм. История, 1912.25-28, 48-56 էջերը:

պես կանոն, լուծում էին քարավանապետերը և այլ հեղինակավոր անձինք: Շատ դեպքերում նման գործերով դիմում էին նաև խոշոր ստրկատերերին, սակայն այս պարագայում վերջիններս վեճի լուծման ընթացքում թագավորի անունից հանդես չէին գալիս, այսինքն՝ այս վեճերը քննվում էին մասնավոր, արբիտրաժային կարգով: Միջնորդ (արբիտրաժային) վճիռներն ապահովված էին արբիտրների ազդեցիկությամբ, հեղինակությամբ: Իսկ կողմերն էլ չէին խուսափում դրանք կատարելուց, քանի որ դրանից կտուժեր իրենց բարի անունն ու գործարար համբավը: Նրանք կարող էին ուղղակիորեն զրկվել միջպետական առևտրում վերապահվող արտոնություններից և տեղի առևտրականների բարյացակամությունից: Իսկ վերջինս միջազգային առևտրում շատ կարևոր էր և անփոխարինելի: Հին Հայաստանում միջազգային տարանցիկ առևտրում օտարերկրյա, ինչպես նաև տեղի առևտրականների միջև գույքային վեճերի լուծման կառուցակարգը, կարելի է ասել, որ համապատասխանում էր առևտրային արբիտրաժի մասին ժամանակակից պատկերացումներին: Ճիշտ է, այդ ժամանակաշրջանում դատավարական կանոններն ու կառուցակարգերն այդքան էլ հղկված և մշակված չէին, սակայն բավարար էին անտիկ աշխարհում միջազգային առևտրային հարաբերություններից ծագող վեճերի համապարփակ կարգավորման համար: Հին Հայաստանյան դատավարական կանոնները գործերի քննության լուծման արդյունքում ձևավորված սովորույթներ էին: Սովորույթական իրավունքը հիմնական նշանակություն է ունեցել հին հայերի իրավունկալման բնագավառում: Հին Հայաստանում գրեթե խտրականություն չէր դրվում գրավոր օրենքների և սովորույթ-իրավաբանական նորմերի միջև<sup>1</sup>:

Հին հայ իրականությունն մուտք գործած օտար օրենսդրական ժողովածուները, այն է՝ Մովսիսական, ասորա-հռոմեական ժողովածուները, որոնք մասնավոր ռեցեպցիայի կարգով կիրառվել են Հայաստանում: Ժողովրդի իրավունկալմամբ սովորույթները իրավունքի աղբյուրն էին:

<sup>1</sup> Տե՛ս Խ Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան 1939, 36-37 էջերը:

Ինչպես վկայում են անտիկ ժամանակաշրջանի պատմիչներ Ստրաբոնը, Պլուտարքոսը՝ Հին Հայաստանը միջազգային տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն էր: Հետևաբար՝ արտաքին առևտրատնտեսական կապերը միջազգային արբիտրաժի զարգացման հենասյունն էր:

Միջնադարում հայ իրավունքի հետագա զարգացումներն այլ կերպ ընթացան: Եթե մյուս երկրներում ֆեոդալիզմի ժամանակաշրջանում իրավունքի բնականոն զարգացման արդյունքում աստիճանաբար ձևավորվեցին ազգային-իրավական համակարգեր, ապա Հայաստանը երկու անգամ (387 և 428թթ.) բաժանվելով Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, զրկված էր նման հնարավորությունից: Մասնատված Հայաստանում քաղաքական և իրավական զարգացումները տարբեր ուղղություններով էին ընթանում: Արևմտյան մասում Հուստինիանոսի «ռեֆորմների» արդյունքում կայսրերի կողմից նշանակվում են հատուկ զինվորական և քաղաքացիական իշխանություններ և բյուզանդահպատակ Հայաստանում միակ գործող իրավունք է ճանաչվում հռոմեականը: Հայ իրավունքի գործողությունն ուղղակիորեն կասեցվում է: Սակայն, եթե հայ իրավունքի համընդհանուր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ չկային, ապա արբիտրաժի պարագայում վիճակն այլ էր: Ներքին առևտրային հարաբերություններում կողմերը ոչ միայն խուսափում էին գույքային վեճերով հռոմեական (բյուզանդական) իշխանություններին դիմելուց, այլև սեփական միջոցներով կարգավորում էին առաջացած տարածայնությունները: Միջազգային առևտրի պարագայում ևս, պարզ է դառնում, որ օտարերկրյա առևտրականները նույնպես չէին ցանկանում դիմել տեղական իշխանություններին, քանի որ Բյուզանդիան շատ երկրների հետ գտնվում էր ոչ բարիդրացիական հարաբերությունների մեջ: Հետևաբար, այդ երկրի հպատակները շահագրգռված էին տարածայնությունները հարթել և ծագող վեճերը լուծել սեփական միջոցներով՝ առանց բյուզանդական իշխանությունների միջամտության:

Հարկ է նշել, որ Հայաստանում ինստիտուցիոնալ արբիտրաժներ չեն գործել: Դա պարզ է դառնում պատմական աղբյուրների ուսումնասիրությունից: Առևտրային գործարքներից բխող գրեթե բո-

լոր գործերը լուծվում էին (ad hoc) միանգամայն արբիտրաժներում (իհարկե, ժամանակակից պատկերացմամբ), քանի որ կողմերը նախապես չէին պայմանավորվում պայմանագրից ծագող բոլոր հնարավոր վեճերը հանձնել որևէ արբիտրի լուծմանը, որը զբաղվում էր այդպիսի վեճերի քննությամբ, այսինքն՝ մասնավոր կարգով արդարադատություն էր իրականացնում: Այդպիսի գործերով որպես միջնորդ սովորաբար հանդես էր գալիս պայմանագրի (հետևաբար նաև՝ վեճի) կողմերի մոտ հեղինակություն վայելող որևէ անձ, որն առևտրատնտեսական հարաբերությունների հետ կարող է ընդհանրապես առնչություն չունենալ:

Հռոմեական իրավունքը, տարածվելով Արևմտյան Հայաստանում դուրս չի գալիս նրա սահմաններից, չի թափանցում և փոխադրվում Արևելյան, այսինքն՝ պարսկահպատակ Հայաստան, որը շարունակում էր ղեկավարվել սովորութեան, տեղական նախարարական իրավունքի նորմերով<sup>1</sup>:

Իրավաքաղաքական զարգացումների նույն տեմպերը պահպանվեցին նաև ֆեոդալիզմի այլ փուլերում, երբ Հայաստանը գտնվում էր արաբների տիրապետության տակ: Սակայն, շնորհիվ զարգացող առևտրատնտեսական հարբերությունների և հարակից տարանցիկ առևտրի, Բագրատունյաց թագավորության շրջանում արբիտրաժը (միջնորդ վարույթը) Հայաստանում աստիճանական տարածում գտավ: Հարկ է նշել նաև, որ վերջինիս առաջընթացի համար նպաստավոր պայմաններ և նախադրյալներ չկային: Միջնադարյան Հայաստանում գործում էին պետական (աշխարհիկ), հոգևոր և զուտ ավատական (դասային և տերունական) դատարաններ, որոնք ունեին իրենց աստիճանակարգությունը: Գյուղացիների միջև մանր գույքային վեճերը շատ հաճախ լուծում էին կամ ավարտերը կամ էլ հոգևորականները: Իսկ վերջիններիս վճիռներն ու որոշումները ապահովված էին պետական հարկադրանքի ուժով:

Այս ժամանակաշրջանում ձևավորվեց և հետագայում արագ տեմպերով զարգացավ հայ կանոնական իրավունքը: Ստեղծվեցին բազմաթիվ կանոնագրքեր, դատաստանագրքեր և այլ նորմատիվ

<sup>1</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, 63-65 էջերը:

ակտեր: Սկսվում է հայ հոգևորական դատարանների գոռժառնության ժամանակաշրջանը, որոնք իրենց ընդդատությանը հանձնված գործերը քննում էին հայ կանոնական իրավունքի նորմերին համապատասխան:

Ուշ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի խանությունները մտնում էին պարսկական պետության կազմի մեջ: Ուստի այստեղ տարածվում էր շահի գերագույն իշխանությունը, որի ներկայացուցիչները դատաստանական վճիռներ և որոշումներ էին կայացնում ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով: Այս ժամանակաշրջանի քաղաքացիական դատավարության իրավունքը հետագոտող Ռ.Գ. Պետրոսյանի աշխատություններն ուսումնասիրելով կարելի է որոշակի եզրահանգումներ կատարել նաև առևտրային արբիտրաժի գոռժառնության վերաբերյալ<sup>1</sup>: Մասնավորապես, եթե Հայաստանում միջնորդական քննության (ներքին արբիտրաժի) զարգացման համար քիչ թե շատ նպաստավոր պայմաններ էին գործում, ապա նույնը չի կարելի ասել միջազգային առևտրային արբիտրաժի մասին: Այսպես՝ սահմանված ընդդատության համաձայն քաղաքացիական գործերով դատական գործառույթ իրականացնում էին թե մահմեդական դատարանները՝ մահմեդական հոգևորականությունը, սարդարը (փոխարքա և գլխավոր հրամանատար), խանությունների վարչական միավորների՝ մահալների կառավարիչ միրբուլուքները և թե հայ հոգևորականությունը, հայկական շրջանների մելիքները, գյուղական մելիքները և տանուտերերը<sup>2</sup>: Մահմեդականների և քրիստոնեաների միջև եղած քաղաքացիական և արտասահմանյան երկրների հետ կատարվող առևտրից բխող գործերի քննությունը ամբողջովին հանձնված էր մահմեդական դատարաններին՝ պարսիկ միրբուլուքներին, իսկ հատկապես կարևոր գործերը՝ սարդարին<sup>3</sup>:

Հետևաբար, եթե այս շրջանում առկա էր առևտրային արբիտրաժի զարգացման համար անհրաժեշտ օբյեկտիվ գործոնը, այն է՝

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Երևան, 2001, 40-43 էջերը:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 35:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, 36-37 էջերը:



արտաքին ամետուրը և միջպետական ամետրատնտեսական կապերի հաստատումը, ապա բացակայում էր արբիտրաժային կարգով միջազգային ամետրային հարաբերություններից բխող վեճերի լուծման հնարավորությունը: Վերջինս պայմանավորված էր սուբյեկտիվ հանգամանքներով, քանի որ արտաքին ամետրից բխող գործերի լուծումը հսկայական եկամուտներ էին խոստանում պարսիկ իշխանավորներին:

Ինչ վերաբերում է ներքին արբիտրաժին, ապա վերջինս կիրառվում էր մանր գույքային վեճերի լուծման համար: Ըստ որում, այստեղ մենք գործ ունենք ad hoc արբիտրաժների հետ: Այս ժամանակաշրջանում Հայաստանում մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժներ դեռևս չկային:

20-րդ դարում քաղաքացիական հարաբերություններից բխող գործերով արդարադատություն իրականացնող մեխիզմներից և տանուտերերից բացի, մենք այս շրջանում հանդիպում ենք նաև գյուղական համայնքների և համքարական դատարաններին, որոնք, ըստ էության, մշտապես գործող միջնորդ դատարաններ էին (ինստիտուցիոնալ արբիտրաժներ): Հարկ է նշել, որ վերջիններս լուծում էին միայն հստակորեն իրենց իրավասությանը վերապահված գործերը: Մասնավորապես, գյուղական համայնքի միջնորդ դատարանը (արբիտրաժը) կոչված էր խաղաղ ճանապարհով լուծել ոռոգման ջրի հերթի խախտման, ցանքերի փչացման, հողերի միջնակների շուրջը եղած և տեղական բնույթի այլ վեճեր: Համքարական դատարանը քննում և լուծում էր վարպետների և վարպետացուների ու նրանց աշակերտների միջև ծագած աշխատանքային վեճերը, ընտանեկան հարաբերությունների, կրոնական պարտականությունների խախտման, հասարակական հանգիստը խանգարելու, պատվերների կատարման անորակության և այլ կապակցությամբ ծագած գործերը<sup>1</sup>: Արհեստագործական համքարություններում ընկերային (կորպորատիվ) դատարանների գործառույթ իրականացնում էր գլխավոր վարպետից, նրա օգնականից, գանձապահից (խագնադար) կազմված ղեկավարությունը: Համքարության ղեկավար

<sup>1</sup> Տե՛ս Егизаров С.А. Исследования по истории учреждений в Закавказье. Т.1. Казань, 1889, 87-86, 292-293 էջերը:

րության մեջ մտնում էր նաև իգիթբաշին, որը համքարներին ներկայացնում էր դատի, այսինքն՝ կազմում էր քաղաքացիական գործը և հանձնում դատարանին, ինչպես նաև ի կատար էր ածում դատարանի (արբիտրաժի) վճիռները<sup>1</sup>: Պետք է նշել նաև, որ գյուղական համայնքների և արհեստագործական համքարությունների արբիտրաժները կոլեգիալ դատարաններ էին, որոնք, կաշառատվությունից խուսափելու և իրենց հեղինակությունն ու ինքնուրույնությունը պահպանելու համար աշխատում էին ինքնուրույն լուծել բոլոր վեճերը և խուսափել ոստիկանապետի միջնորդությանը դիմելուց: Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում դեռևս չէին գործում միջնորդական քննության՝ գրավոր ձևով մշակված և կողիֆիկացված կանոններ: Գյուղական համայնքների և համքարական դատարաններում վեճերը լուծվում էին համայնքներում և արհեստագործական համքարություններում ձևավորված սովորույթային կանոնների հիման վրա:

Այսպիսով, 19-րդ դարի սկզբում քաղաքացիական գործերով դատական գործառույթ էին իրացնում մահմեդական դատարանները, մահալների կառավարիչ հայ մեխիքները, գյուղական մեխիքներն ու տանուտերերը և գյուղական համայնքների ու համքարությունների (միջնորդ, ընկերային) դատարանները: Եթե հայ հոգևորական դատարաններն իրենց ընդդատությանը հանձնված գործերը քննում էին հայ կանոնական իրավունքի կանոններով, ապա հայ մեխիքները, տանուտերերն ու միջնորդ (արբիտրաժային) դատարանները՝ սովորույթական իրավունքի և Մխիթար Գոշի Դատաստանագրքով սահմանված կանոններով: Ըստ որում, վերջիններիս կայացրած վճիռները, վիճարկելի դեպքերում, կարող էին բողոքարկվել Էջմիածնի Կաթողիկոսարան: Ինչպես նշում է պրոֆեսոր Ռ. Գ. Պետրոսյանը, «Կաթողիկոսարանն աշխարհիկ դատարանի գործառույթը, կաթողիկոսի, եպիսկոպոսի, վարդապետի և քահանայի դատարանների աստիճանակարգությամբ վերցրել էր իր վրա»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 290:

<sup>2</sup> Համքարությունների կազմակերպման և նրանց համար սահմանադրություն ստեղծելու գործով զբաղվել է հենց Էջմիածնի կաթողիկոսությունը՝ Եփրեմ կաթողիկոսը:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, երբ Արևելյան Հայաստանը մտավ ցարական Ռուսաստանի կազմի մեջ, հայ իրավունքի զարգացումն այլ հունով ընթացավ: Կապիտալիզմի ուղին բռնած Ռուսաստանի իրավաքաղաքական ազդեցությունը և իրացվող բարեփոխումները պայմանավորեցին ոչ միայն իրավական, այլև հասարակական կյանքի մյուս ոլորտների աստիճանական առաջընթացն ու կատարելագործումը: 1864 թ. ընդունված Դատական հաստատությունների կանոնադրությունը, Քրեական դատավարության կանոնագիրքը, Քաղաքացիական դատավարության կանոնագիրքը և Հաշտարար դատարանների կողմից նշանակված պատիժների մասին կանոնագիրքն ուղղված էին կոնկրետ դատաիրավական ոլորտի բարեփոխմանը: Ստեղծվեցին երկու տեսակի ոչ դասային դատական հիմնարկներ՝ տեղական դատարաններ և ընդհանուր դատարաններ: Տեղական էին հաշտարար դատարանը և հաշտարար դատարանների գավառական համագումարները, որոնք գործում էին կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Հարկ է նշել, որ հաշտարար դատարանները թեև գործում էին հաշտեցնելու սկզբունքով, սակայն միջնորդ դատարանների կամ առևտրային արբիտրաժների հետ ոչ մի ընդհանրություն չունեին: Հաշտարար դատարանը դատական ողջ համակարգում առաջին օղակն էր, որը հիմնադրվում էր մանր քաղաքացիական գործերը միանձնյա կարգով քննելու համար: Սակայն սրանք լրիվ անկախ էին ընդհանուր դատարաններից: Սրանց համար վերաքննիչ աստանը հաշտարար դատարանների գավառական համագումարն էր, որը փաստորեն հասարակական մարմին էր: Ի տարբերություն արբիտրաժի, հաշտարար դատարանները արդարադատություն էին իրականացնում պետության անունից և ունեին իրենց աստիճանակարգությունը:

Առևտրային արբիտրաժը նման պայմաններում չէր կարող լայն կիրառություն ստանալ: Արբիտրաժային դատավարությունը (ներքին արբիտրաժը) կիրառվում էր միայն մանր գույքային վեճերի լուծման նպատակով և չէր բացառում հետագայում գործի դատական քննության հնարավորությունը: Արբիտրաժային վճիռը արբիտրի կարծիքն էր տվյալ գործի վերաբերյալ, որի հետ կողմերը կարող

էին և չհամաձայնվել: Իրավական հետևանքների առաջացման առումով արբիտրաժային վճիռը որևէ ուժ չուներ: Այն ապահովված էր միայն բարոյական նորմերի համակարգով, որն այդ ժամանակամիջոցում միջնորդ վճռի կատարման համար գործում էրաշխիք չէր կարող լինել: Օրինակ, եթե Չինաստանում, բոլոր ժամանակներում, դատարան դիմելն անպատվաբեր էր համարվում, և անձանց միջև վեճերը (այդ թվում՝ գույքային) լուծվում էին կամ բանակցությունների, կամ էլ միջնորդական (արբիտրաժային) կարգով, ապա Հայաստանում վիճակն այլ էր: Այստեղ դատարան դիմողն անարգանքի չէր ենթարկվում և իր խախտված կամ վիճարկվող իրավունքի վերականգնման կամ պաշտպանության նպատակով կարող էր ցանկացած պահի դիմել դատարան: Արբիտրաժի վիճակը չփոխվեց նաև Հայաստանի Առաջին Հանրապետության գոյատևման շրջանում, քանի որ 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայկական պառլամենտն ընդունել էր օրենք, որի համաձայն ուժի մեջ էին մտնում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության, նրա անդրկովկասյան մարմինների նախկին օրենքները: Փաստորեն ՀՀ իշխանություններն՝ առանձին փոփոխություններով պահպանեցին նախկինում գործող իրավական համակարգը:

Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից (1920 թ. նոյեմբերի 29) հետո նոր՝ սոցիալիստական տիպի պետության ստեղծումը պայմանավորեց նաև մարքսիստական գաղափարախոսության հիման վրա կառուցվող իրավական համակարգերի գոյությունը: Վերացնելով նախկին դատական և դատավարական կառուցակարգերը, խորհրդային իշխանություններն իրավունքի հիմնական աղբյուր հռչակեցին «Պրոլետարիատի հեղափոխական իրավագիտակցությունը»: Հայաստանի խորհրդայնացմամբ մարքս-լենինյան համամիասնության գաղափարի գերիշխանությունը արտացոլվեց երկրի ողջ իրավական համակարգում:

ՀՀ օրենսդրությունն անմիջականորեն արտացոլում էր նախկին ՍՍՀՄ օրենսդրության զարգացման բոլոր օրինաչափությունները՝ պայմանավորված միասնական տնտեսական և իրավական համակարգի գոյությամբ: Հարկ է նշել, որ խորհրդայնացումը դրական ազդեցություն ունեցավ արբիտրաժային դատավարության

(այդ թվում՝ միջազգային) զարգացման համար: Չնայած դրան, մինչև 90-ական թթ. արբիտրաժի վերաբերյալ ՍՍՀՄ-ում ոչ մի հանրապետություն մշակված օրենսդրություն չունեի: Բացառություն էր կազմում միայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հավելվածը, որը վերաբերում էր միջնորդ դատավարության կարգով քաղաքացիների (ֆիզիկական անձանց) միջև վեճերի լուծմանը: Այսինքն՝ հարաբերությունների կարգավորման առանցքից դուրս էին մնացել իրավաբանական անձինք: Այս թերևս լուրջ թերություն էր, սակայն չի կարելի անտեսել 1932 թ. խորհրդային տարիների այն դրական տեղաշարժերը, որ տեղի ունեցան արբիտրաժային դատավարության ոլորտում: Այդպիսին էր մասնավորապես ՍՍՀՄ առևտրաարդյունաբերական պալատին առընթեր հիմնադրված Արբիտրաժային դատարանը, որն, ըստ էության, միջազգային առևտրային արբիտրաժ էր: 1964 թ. ընդունված ՀՀ ՔՂՕ-ն արդեն հնարավորություն էր ընձեռում իրավաբանական անձանց միջև ծագած վեճերը հանձնել միջնորդ դատարանի (արբիտրաժի) լուծմանը: Այդ էր վկայում ՔՂՕ 6-րդ հոդվածը, համաձայն որի քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը սահմանված կարգով իրականացվում էր դատարանի, արբիտրաժի (պետական տնտեսական դատարանի) և միջնորդ դատարանի կողմից, իսկ օրենսգրքի 27-րդ հոդվածը սահմանում էր, որ «օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում քաղաքացիական հարաբերություններից ծագած վեճը կողմերի համաձայնությամբ կարող էր հանձնվել միջնորդ դատարանի (որոշ խորհրդային հանրապետությունների օրենսգրքերով՝ նաև Ծովային արբիտրաժային հանձնաժողովի), ՍՍՀՄ առևտրաարդյունաբերական պալատին առընթեր արտաքին առևտրային արբիտրաժային հանձնաժողովի լուծմանը: Այդ նորմերը բավական լուրջ խթան էին միջազգային առևտրային արբիտրաժի զարգացման համար, սակայն ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում վերջիններս գործնականում լայն կիրառություն չգտան:

ՀՀ անկախացումից հետո, երբ Հայաստանն ընդգրկվեց համաշխարհային տնտեսական, առևտրային համակարգ, առևտրային արբիտրաժի (միջազգային և ներքին) զարգացումն անխուսափելի

էր և անհրաժեշտ: Պետք է նշել սակայն, որ 1998 թ. մայիսի 5-ին ընդունված «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» օրենքը բավարար չէր միջազգային առևտրային հարաբերություններից ծագող վեճերի լուծման հետ կապված հարցերի համապարփակ կարգավորման համար: Այսինքն, կարգավորման առանցքից որոշ հարցեր դուրս էին մնացել, ինչը միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման ընթացակարգի իրավական կարգավորման իրողությունից հայրենական օրենքի կտրվածության հետևանք էր: Այս ամենի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 2006թ. դեկտեմբերի 25-ին «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի ընդունումը որը հիմնված էր ՄԱԿՄԱԻ-Հ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» նմուշային օրենքի վրա:

Ներկայումս ՀՀ-ում ևս գործում են ինստիտուցիոնալ արբիտրաժներ, մասնավորապես ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին և ՀՀ բանկերի միությանն առընթեր գործող արբիտրաժները: Պատրաստվում են բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ, որոնք կնպաստեն արտաքին առևտրական հարաբերություններից բխող վեճերի լուծման կառուցակարգերի կատարելագործմանը:

*Ամփոփելով շարադրվածը, կարող ենք ասել, որ առևտրային արբիտրաժն անցել է զարգացման որոշակի փուլեր, որոնց պատմական պարբերացման հիմքում դրվում են ինչպես պետության և իրավունքի պարբերացման՝ ավանդականորեն ընդունված չափանիշները, այն է՝ հասարակական-տնտեսական ֆորմացիաների փոփոխությունը, հասարակարգը և այլն, այնպես էլ, ելնելով կոնկրետ երկրի օրինակից, վերջինիս պատմական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր- մշակութային, ազգագրական և այլ առանձնահատկությունները, այդ թվում՝ միջազգային իրավական կարգավիճակը: Բացի այդ, արբիտրաժի ինստիտուտի զարգացումն առավելապես պայմանավորված է նաև տարբեր (ռոմանագերմանական և անգլոսաքսոնական) իրավական համակարգերի յուրահատկություններով: Ինչևէ, արբիտրաժի ինստիտուտի ձևավորման և զարգացման պատմական պարբերացման առաջին փուլի հիմքում պետք է դնել մինչպետական ողջ ժամանակաշրջանը, քանի որ այդ շրջանի հետ է կապվում արբիտրաժի ծագումնաբա-*

նությունը, երբ պետականության բացակայության պայմաններում հասարակության տարբեր անդամների միջև վեճերը լուծում էին տոհմերի ավագները և հեղինակություն վայելող այլ անձինք: Հետագայում, պետության կազմավորումից և ստրկատիրական հարաբերությունների ձևավորումից հետո, երբ արդեն տարբերակում էր դրվում պետական և մասնավոր արդարադատությունների (միջնորդ վարույթի) միջև, սկսվում է արբիտրաժի պատմական պարբերացման երկրորդ փուլը: Հարկ է նշել, որ արբիտրաժի ինստիտուտի իրավական անդադրման առաջին փորձերը կատարվեցին Հին Չոնոնում, սակայն ստրկատիրական հասարակարգում գործող անկատար դատական համակարգը, դատական իշխանության լղոզվածությունն ավելորդ բարդություններ ստեղծեցին արբիտրաժի և քաղաքացիական դատավարության ոլորտները սահմանազատելու, ինչպես նաև դրանք միմյանցից զատ ուսումնասիրելու համար: Քանի որ այդ շրջանում իշխանությունների տարանջատման սկզբունքը դեռ չէր գործում, ուստի դատական գործառույթը, պետության գլխից բացի, տեղերում իրականացնում էին հռոմեական իշխանության ներկայացուցիչները (օրինակ՝ դիկատորները, կոնսուլները, պրետորները և այլն) և ստրկատիրական ավագանին: Ըստ որում, շատ դեպքերում վեճեր լուծելիս նրանք կարող էին հանդես գալ և՛ որպես մասնավոր անձինք, և՛ որպես պետության ներկայացուցիչներ: Ինչևէ, հռոմեական իրավունքը որոշակի կարգավորման էր ենթարկել այդ ինստիտուտը և այն տարանջատել քաղաքացիական դատավարությունից: Արբիտրաժը ստրկատիրական ժամանակաշրջանում բավական զարգացած էր Հին Չոնոնաստանում, որտեղ արդեն նշմարվում էին իշխանությունների ապագա տարանջատման առաջին տարրերը: Այստեղ արբիտրաժը հատկապես կիրառվում էր միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման դեպքում և իրավական տեսանկյունից առավել կատարյալ էր, եթե համեմատելու լինենք հռոմեականի հետ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այդ շրջանում արբիտրաժն այստեղ առավելապես կարգավորվում էր սովորութային իրավունքի նորմերով, որոնք հասարակական հարաբերությունների բավական գործուն կարգավորիչ են հանդիսացել:

Արբիտրաժի զարգացման երրորդ փուլը կապվում է ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հետ, որը հատկապես առանցքային նշանակություն ունի **միջազգային արբիտրաժի** ինստիտուտի կայացման և հետագա առաջընթացի համար: Միջնադարում միջազգային առևտրային արբիտրաժը լայն կիրառություն ուներ հատկապես եվրոպայում, որտեղ այն տարբեր քաղաքների (պետությունների) առևտրականների միջև առևտրատնտեսական վեճերի լուծման հիմնական միջոցներից էր: Միջազգային արբիտրաժային կենտրոններն էլ, որպես կանոն, գործում էին առևտրականների միություններին և համքարություններին առընթեր:

Առևտրային արբիտրաժի պատմական պարբերացման չորրորդ փուլի հիմքը կապիտալիստական հարաբերությունների ձևավորումն էր: Տնտեսվարման նոր կացութաձևը լուրջ խթան էր հատկապես միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար, ինչը միջազգային արբիտրաժի առաջընթացի հիմնական նախապայմանն էր: Այս շրջանում միջազգային արբիտրաժն այլ որակ ձեռք բերեց: Արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում այն առավելապես գերազանցում էր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատավարական ձևին և հանդիսանում էր միջազգային առևտրատնտեսական վեճերի լուծման հիմնական միջոց:

Արբիտրաժի զարգացման պատմությունն ուսումնասիրելիս հաշվի են առնվել նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի բաժանման դեպքերը, մասնավորապես՝ 387թ.՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի, 591թ.՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի, 1555թ.՝ Թուրքիայի և Պարսկաստանի բաժանվելու, 1828թ.՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու և 1918-20թթ. անկախանալու հանգամանքները:

Ինչևէ, առևտրային արբիտրաժը պատմական զարգացման տարբեր փուլերում դիտարկելիս հստակորեն երևում են նաև վերջինիս որակական փոփոխությունները: Սակայն անվիճելի է, որ պետության և իրավունքի պատմական պարբերացման բոլոր փուլերում այն ծառայել է մեկ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում կայունություն հաստատելու և այդ հարաբերությունների մասնակիցների միջև առաջացած վեճերը արագ և արդյունավետ լուծելու նպատակին:

#### **§4. Առևտրային արբիտրաժն արդի ժամանակաշրջանում**

Ներկայումս աշխարհում գործում են բազմաթիվ հեղինակավոր արբիտրաժային կենտրոններ, որոնցից կարելի է առանձնացնել Առևտրի միջազգային պալատին առընթեր միջազգային արբիտրաժային դատարանը (կրճատ՝ ԱՄՊ-ին առընթեր ՄԱԴ),<sup>1</sup> Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանը (կրճատ՝ ԼՄԱԴ),<sup>2</sup> Ամերիկյան արբիտրաժային սոցիալացիան (կրճատ՝ ԱԱԱ),<sup>3</sup> Ստոկհոլմի առևտրի պալատի արբիտրաժային ինստիտուտը,<sup>4</sup> Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնը (կրճատ՝ ՆՎԼՍԿ, ICSID),<sup>5</sup> և վերջապես, Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության արբիտրաժային և մեդիացիոն կենտրոնը (WIPO)<sup>6</sup>:

Պետք է նշել, որ ԱՊՅ երկրներից մեծ մասի մոտ միջազգային առևտրային արբիտրաժը գտնվում է դեռևս ձևավորման փուլում: ԱՊՅ մի շարք երկրներում ընդունվել են համապատասխան օրենք-

<sup>1</sup> Հիմնադրվել է 1929թ. Փարիզում, Առևտրի Միջազգային Պալատին առընթեր, որին անդամակցում են ավելի քան 120 երկրներից 8000 կազմակերպություններ: 2000թ. տվյալներով այստեղ քննվել է 11000 խոշոր դրամական վեճեր:

<sup>2</sup> Կազմավորվել է 1892թ. Լոնդոնի մունիցիպալ խորհրդի նախաձեռնությամբ՝ Լոնդոնյան Արբիտրաժային Պալատ անվանումով, 1903թ.-ին վերանվանվել է «Լոնդոնի Արբիտրաժային Դատարան», իսկ 1981թ.՝ Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարան: 1986 թվականին վերակազմակերպվել է ՍՊԸ-ի: Այստեղ, որպես կանոն, քննվում են ծովային փոխադրումների հետ կապված վեճերը (տարեկան մոտավորապես 500 գործ):

<sup>3</sup> ԱԱԱ-ն ոչ առևտրային կազմակերպություն է, որը մատուցում է արբիտրաժային, այդ թվում՝ մեդիացիոն, կոնսիլիացիոն, մինի-պրոցեսների և հաշտեցման այլ ծառայություններ: Ստեղծվել է 1926թ. ԱՄՆ-ում:

<sup>4</sup> Հիմնադրվել է 1917թ.-ին Ստոկհոլմում: Տարեկան քննում է շուրջ 200 վեճ (Արևելյան Եվրոպայի տարածաշրջանից բխող):

<sup>5</sup> ՆՎԼՍԿ-ն հանդիսանում է Համաշխարհային բանկի կառույցներից մեկը և դասվում է հանրային իրավունքի կազմակերպությունների շարքին:

<sup>6</sup> WIPO-ն հանդիսանում է ՄԱԿ-ի ստորաբաժանումներից մեկը: 1994թ.-ին ստեղծվեց վերջինիս արբիտրաժային կենտրոնը: WIPO-ի մեդիացիոն կենտրոնը տեղակայված է Ժնևում: Արբիտրաժային այս կենտրոնը հիմնականում քննում է առևտրային նշանների, արտոնագրային և հեղինակային իրավունքի խախտումների հետ կապված վեճերը:

ներ և գործում են արբիտրաժային դատավարության կենտրոններ<sup>1</sup> (Ուկրաինա): Մյուս երկրներում դրանք գործում են առևտրաարդյունաբերական պալատներին առընթեր: Սակայն միջազգային առևտրային արբիտրաժը կարգավորող օրենսդրությունը ԱՊՅ երկրներից մեծ մասի մոտ բացակայում է (Բելառուս, Ղազախստան, Թուրքմենիա, Դրոլդստան, Ադրբեջան): Ուկրաինայում 1994թ. փետրվարի 24-ին ընդունվել է «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» օրենք, որին կցվել են նաև Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին առընթեր Միջազգային Առևտրային Միջնորդ Դատարանի և Ծովային Արբիտրաժի կանոնադրությունները: Ուկրաինայի Միջազգային Արբիտրաժային Դատարանի կանոնադրությունը հաստատվել է 1994 թ. օգոստոսի 25-ին:

Ըստ 2000 թ. տվյալների, «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման ու կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի համաձայնագրին ԱՊՅ երկրներից միացել են Ռուսաստանը, Հայաստանը, Բելառուսը, Վրաստանը, Դրոլդստանը, Ղազախստանը, Մոլդովան, Ուկրաինան և Ուզբեկստանը: Հետևաբար այս երկրներում, նույնիսկ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» օրենքի բացակայության պայմաններում, արտասահմանում կայացրած բոլոր արբիտրաժային վճիռները ենթակա են հարկադիր կատարման:

1965 թվականի Վաշինգտոնի կոնվենցիային միացել են Հայաստանի Հանրապետությունը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Թուրքմենիան և Ուկրաինան: Դրոլդստանը, Մոլդովան և Ռուսաստանի Դաշնությունը այս կոնվենցիան դեռևս չեն վավերացրել:

Վերջին տարիներին իրավաբանական պրակտիկայում միջազգային արբիտրաժային կարգով վեճերի լուծման հետ կապված խնդիրներին ավելի ու ավելի շատ տեղ է հատկացվում<sup>2</sup>: Դա պայմանավորված է հիմնականում միջազգային արբիտրաժի՝ որպես միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճեր լուծող մարմնի, դերի ու հեղինակության աճով: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում ժամանակի ընթացքում մշակվել է

<sup>1</sup> Տե՛ս Брунцева И.В. Международный коммерческий арбитраж. 2001, էջ 35:

<sup>2</sup> Տե՛ս Yearbook of International Commercial Arbitration, 1999, էջ 55:

հայեցակարգ, որի համաձայն արբիտրաժում հանրային բնույթի իրավահարաբերություններից բխող վեճերի լուծումը զգալիորեն սահմանափակվում կամ արգելվում է: Ըստ որում, յուրաքանչյուր պետություն ինքն է սահմանում այն իրավահարաբերություններից բխող վեճերի ցանկը, որոնք կարող են լուծվել արբիտրաժային կարգով: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» 2006թ. ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն սույն օրենքով: Եթե արբիտրաժային համաձայնագրով արբիտրաժի լուծմանն է հանձնված այնպիսի վեճ, որն արբիտրաժի վայրի իրավունքին համապատասխան վերջինիս ենթակայությանը վերապահված չէ, ապա նման համաձայնությունը որևէ իրավական ուժ չունի և ենթակա չէ հարկադիր կատարման: Միջազգային արբիտրաժային կարգով առանձին վեճերի լուծման հետ կապված սահմանփակումները հիմնականում պայմանավորված են հանրային կարգով, այսինքն՝ սահմանված իմպերատիվ այնպիսի նորմերի առկայությամբ, որոնց պահպանումը պարտադիր է նաև միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների իրացման պարագայում: Պետք է նշել, որ «հանրային կարգ» հասկացությունը եվրոպական շատ երկրներում օրենսդրորեն ձևակերպված չէ կամ ձևակերպված է անորոշ, ուստի այստեղ հնարավոր չէ բացառել առանձին բարդությունների առաջացումը: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված է, որ արբիտրաժային կարգով չեն կարող լուծվել արժեթղթերի, մրցակցային, հակամոնոպոլ, շրջակա միջավայրի պահպանության, սնանկության, մարդու իրավունքների, արտարժույթային կարգավորման, էմբարգոյի, վարչական և իշխանական ենթակայության վրա հիմնված այլ իրավահարաբերություններից բխող վեճերը: Յուրաքանչյուր պետություն արբիտրաժային կարգով լուծվող գործերի ենթակայության շրջանակը որոշելու հարցում ունի տարբերակված մոտեցում: Մի շարք պետություններ գնում են բացառման ճանապարհով, իսկ մյուսները սահմանում են արբիտրաժային կարգով լուծման ենթակա վեճերի սպառիչ ցանկ: Կան այնպիսի պետություններ, որոնք այս հարցում գրավում են միջանկյալ դիրք: Որպես օրի-

նակ կարելի է բերել Ֆրանսիան, որտեղ սահմանվել է հանրային կարգի հասկացությունը և Քաղաքացիական դատավարության օրենսգրքով (2060 հոդված) արգելվել է արբիտրաժում հանրային կարգին այս կամ այն չափով առնչվող գործերի լուծումը: «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» Շվեյցարիայի 1987 թվականի օրենքով սահմանված է, որ սեփականատիրական իրավահարաբերություններից բխող ցանկացած իրավական վեճ կարող է հանձնվել արբիտրաժի լուծմանը: Բացի այդ, ըստ շվեյցարական օրենսդրության, ցանկացած վեճ, որը կարող է արտահայտվել դրամական պահանջի ձևով (ենթակա է դրամական գնահատման), կարող է լուծվել արբիտրաժային կարգով: Հենց այս մոտեցումն է, որ Շվեյցարիան տարբերվում է եվրոպական մյուս երկրներից, որտեղ արբիտրաժին ենթակա վեճերը ենթարկված են զգալի սահմանափակումների:

Ռուսաստանի Դաշնության «Միջազգային Առևտրային Արբիտրաժի մասին» 1993 թվականի օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն, վեճը արբիտրաժի լուծմանը հանձնելու համար հիմք է հանդիսանում վերջինիս քաղաքացիաիրավական բնույթի լինելը: Ընդ որում, այս օրենքի համաձայն արբիտրաժի լուծմանը կարող են հանձնվել արտաքին առևտրատնտեսական հարաբերություններից բխող ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային բնույթի բոլոր այն վեճերը, որոնց դեպքում կողմերից թեկուզև մեկը գտնվում է արտասահմանում (օրինակ՝ վնասի փոխհատուցման գործերը): Մի խոսքով, եթե իմի բերենք վերոգրյալը, կարող ենք ասել, որ գրեթե բոլոր եվրոպական երկրներում դատական պրակտիկան զարգանալով մոտեցել է այն սահմանագծին, որտեղ ամենատարբեր իրավահարաբերություններից բխող շատ քիչ թվով վեճեր են մնացել, որ չեն կարող լուծվել արբիտրաժային կարգով: Եվ այս միտման պահպանման դեպքում, եթե զարգացումն ընթանա նույն ճանապարհով, ապա ապագայում շատ հնարավոր է, որ արբիտրաժում հանրային և իշխանական ենթակայության վրա հիմնված վեճերի քննության հարցը այսքան խնդրահարույց չի լինի և վերջիվերջո կվերանա:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **§1. Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի հասկացությունն ու հիմնական առանձնահատկությունները**

Յուրաքանչյուր քաղաքակիրթ պետության մեջ քաղաքացիների և իրավաբանական անձանց (քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների և իրավաբանական անձանց) իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը առաջնային նշանակություն ունի: Ընդ որում, քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների համապարփակ պաշտպանության համար անհրաժեշտ կառուցակարգերի առկայությունն առաջին հերթին պայմանավորում է իրավական համակարգի գործառնության արդյունավետությունը և ժողովրդավարական բնույթը: ՀՀ սահմանադրության<sup>1</sup> 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքներն ու ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանվելու իրավունք: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>2</sup> 13-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում՝ մինչև դատարան դիմելը: Վարչական կարգով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

<sup>1</sup> Ընդունվել է 2005թ.-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեով:

<sup>2</sup> Ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին:

Հայրենական օրենսդրության ընդհանրական վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառնությամբ իրականացնում են դատարանները, պետական (վարչական) մարմինները (նոտարական, սոցիալական ապահովության և այլն), հասարակական կազմակերպությունները (արհմիություններ, ստեղծագործական միություններ և այլն), ինչպես նաև առևտրային արբիտրաժը: Վերոգրյալից հետևում է, որ գործող օրենսդրությունը նախատեսում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տարբեր ձևեր՝ դատական, վարչական, հասարակական, ամրագրելով նաև իրավունքների դատական պաշտպանության գերակայություն: Ելնելով գործերի ենթակայությունից, իրավունքների պաշտպանության գործառնությամբ իրականացնող մարմինների իրավասությունից, վիճելի իրավահարաբերության, խախտված կամ վիճարկվող իրավունքի, ինչպես նաև նյութաիրավական պահանջի բնույթից՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենք են ընտրում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության թե՛ ձևը, թե՛ եղանակը: Հարկ է նշել, որ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքն ունի լուրջ բացթողումներ, որի «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ III գլխի 13-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Հոդվածի շարադրանքից հստակ երևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության գործում ուղղակիորեն անտեսվել են առևտրային արբիտրաժները: Մինչդեռ, առևտրային արբիտրաժը նույնպես իրականացնում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառնությամբ և արբիտրաժային կարգով գործերի քննումն ու լուծումը հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերից մեկը<sup>1</sup>: Հոդվածի 2-րդ մաս-

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, Քաղաքացիական դատավարության: Դասագիրք բուհերի համար, Երևան, 1999թ., էջ 8:

սը սահմանում է, որ պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում՝ մինչ դատարան դիմելը, ինչը բովանդակային առումով չի կարող լրացնել օրենսգրքի բացը և շտկել թույլ տրված սխալը: Նշված ձևակերպումն այնքան անորոշ է, որ պարզ չէ՝ խոսքը վերաբերում է նախադատական (պրետենզիոն) կարգը պահպանելուն, թե այլ բանի: Վերջինիս վերլուծությունից լավագույն դեպքում կարելի է ենթադրել միայն իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի գոյությունը, որը, պետք է նշել, որ ուղղակի հակասության մեջ է գտնվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի հետ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վեճի հանձնումը արբիտրաժային տրիբունալի լուծմանը» վերտառությամբ 18-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող և դատարանի իրավասությանը ենթակա վեճը՝ մինչև վճիռ կայացնելը, կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Այսինքն, կողմերը արբիտրաժային համաձայնություն կարող են կնքել նաև դատավարության ցանկացած փուլում, մինչ դատարանի կողմից վճիռ՝ գործն ըստ ելքային լուծող դատական ակտ կայացնելը: Հարկ է նշել, որ վերը նշվածի առումով առավել շահեկան էր ՀՍՍՀ 1964թ. Քաղաքացիական օրենսգրքը, որի «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 6-րդ հոդվածում ամրագրված էր, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը սահմանված կարգով իրականացնում է դատարանը, արբիտրաժը կամ միջնորդ դատարանը, որտեղ հաջորդաբար նշվում էին նաև իրավունքների պաշտպանության եղանակները:

Իրավունքների պաշտպանության ձևը, ի տարբերություն իրավունքների պաշտպանության եղանակի, մեծամասամբ դատավարական կատեգորիա է, որն առաջին հերթին ենթադրում է *սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառույթ իրականացնող մարմնի (հաստատության) կողմից օրենքով սահմանված կարգով և ենթակայությանը համապատասխան իր իրավասության սահմաններում նյութական իրավահարաբերություններից բխող գործերով*

*փաստական հանգամանքները պարզելը, իրավունքի նորմերը կիրառելը և համապատասխան որոշում (վճիռ) կայացնելը:*

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության **արբիտրաժային ձևը** օրենքով սահմանված կարգով և ենթակայությանը, ինչպես նաև արբիտրաժային համաձայնությանը համապատասխան իր իրավասության սահմաններում նյութական իրավահարաբերություններից բխող գործերի փաստական հանգամանքները պարզելուն, իրավունքի նորմերը կիրառելուն և համապատասխան վճիռ (որոշում) կայացնելուն ուղղված՝ առևտրային արբիտրաժների (արբիտրաժային դատարանների) գործունեությունն է:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ, որպես կանոն, առանձնացնում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական, վարչական և հասարակական ձևերը<sup>1</sup>:

Նման պարագայում իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը ուսումնասիրությունից միանշանակ դուրս է մնում, քանի որ այն չի կարելի դիտարկել հասարակական ձևի շրջանակներում: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այս երկու ձևերը պետք չէ նույնացնել: Նման մոտեցումը, թերևս, արդարացված կլիներ խորհրդային ժամանակաշրջանում, բայց ոչ ներկայիս սոցիալ-տնտեսական և իրավական համակարգի զարգացման պայմաններում: Այն ոչ մի ընդհանրություն չունի գործող օրենսդրության հետ: Մասնավորապես, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի<sup>2</sup> 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ ՀՀ-ում ստեղծվում են մշտապես գործող և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) միջնորդ դատարաններ: Մշտապես գործող միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրաարդյունաբերական պալատների, բորսաների, հրապարակային սակարկություններ իրականացնող կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության բանկերի միության-

<sup>1</sup> Տե՛ս Гражданский процесс. Учебник. Под ред. М.К. Треушниковой. М., 2006, 23-26 էջերը: Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, (երրորդ հրատարակություն): Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 30:

<sup>2</sup> Ուժը կորցրել է 2006թ. դեկտեմբերի 25-ի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահից:



նը և այլ կազմակերպություններին առընթեր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով: Վերը թվարկված իրավաբանական անձինք ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են իրավաբանական անձանց միության ձևով: Դրանք հասարակական կազմակերպություններ չեն, հետևաբար առևտրային արբիտրաժային կարգով գույքային վեճերի բնույթումը և լուծումը չի կարելի նույնացնել սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հասարակական ձևի հետ: Ավելին, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում կրոնական կազմակերպությունների, կուսակցությունների, արհեստակցական միությունների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների՝ օրենքով նախատեսված այլ ձևերի ու տեսակների վրա: Այսինքն, օրենքի բովանդակությունից բխում է, որ իրավաբանական անձանց միությունները ոչ առևտրային կազմակերպությունների առանձին տեսակ են, որոնց գործունեությունը չի կարգավորվում հասարակական կազմակերպությունների մասին օրենքով: Արբիտրաժային կարգով քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների պաշտպանության իրականացումը տեղի է ունենում բացառապես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի շրջանակներում:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում ընդհանրապես չի խոսվում արբիտրաժային դատարանների

տեսակների, կարգավիճակի և կազմակերպատիրական ձևերի մասին, ինչն այս առումով հակասական մեկնաբանությունների և տարակարծությունների տեղիք կարող է տալ: Մասնավորապես, հարց է առաջանում, թե Հայաստանի Հանրապետությունում ի՞նչ կարգով է թույլատրվում կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) և մշտապես գործող արբիտրաժային դատարանների ստեղծումը: Ի՞նչ կարգավիճակ պետք է ունենան մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժները և ի՞նչ հիմունքներով պետք է գործեն դրանք: Այս՝ բովանդակային առումով կարևոր հարցերը դուրս են մնացել օրենքի կարգավորման առանցքից: Մնում է միայն ուժը կորցրած «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի նորմերի, առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման ոլորտում ձևավորված միջազգային փորձի, արտասահմանյան երկրների արբիտրաժային օրենսդրության և արբիտրաժային կենտրոնների կանոնակարգերի ուսումնասիրության վրա հիմնաված եզրակացությունների արդյունքում զուտ տեսական բնույթի ենթադրություններ անել, որոնց պրակտիկ-կիրառական նշանակությունը նվազագույնի է հասնում այս ոլորտը կարգավորող օրենսդրական ակտում համապատասխան նորմերի բացակայության պայմաններում:

Ընդհանրացնելով աշխարհում գործող արբիտրաժային կենտրոնների ինստիտուցիոնալ-կառուցվածքային, կազմակերպատիրական և գործառնական առանձնահատկությունները, կարելի է ասել, որ դրանք կարող են ունենալ տարբեր իրավական վիճակ՝ ստեղծվեն իրավաբանական անձի կարգավիճակով, ստեղծվեն այլ իրավաբանական անձանց և կազմակերպություններին առընթեր, ինչպես նաև պետք է առանձնացնել կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժային դատարանները, որոնց գործունեությունը դադարում է վճռահատությամբ: Իրավաբանական անձի կարգավիճակ ունի Լոնդոնի Միջազգային արբիտրաժային դատարանը, որը 1986 թվականին վերակազմակերպվել է սահմանափակ պատասխանատվության ընկերության: Առևտրի Միջազգային Պալատին առընթեր է գործում Փարիզի Միջազգային արբիտրաժային դատարանը, որի կանոնակարգի 1-ին հոդվածի հա-

<sup>1</sup> Ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին:

մաձայն՝ ԱՄՊ Միջազգային արբիտրաժային դատարանը հանդիսանում է Առևտրի Միջազգային Պալատի արբիտրաժային մարմինը:

Այսպիսով, կարող ենք վստահորեն նշել, որ առևտրային արբիտրաժային կարգով իրավունքների պաշտպանությունը դատական, վարչական և հասարակական ձևերից տարբերվող **սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինքնուրույն ձև է:**

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը, որպես իրավունքների պաշտպանության առանձին տեսակ, ունի նաև իրեն բնորոշ հատկանիշներ: Մասնավորապես՝

1. արբիտրաժային դատարանների իրավասությանն օրենքով հանձնված գործերը քննվում և լուծվում են միայն արբիտրաժային դատարանի (տրիբունալի) կողմից, եթե առկա է այդ մասին կողմերի համաձայնությունը: Դատական կամ այլ կարգով արբիտրաժի իրավասությանը հանձնված գործերի քննությունը և լուծումը բացառվում է, եթե առկա է վավեր արբիտրաժային համաձայնություն և արբիտրաժային դատարան (տրիբունալին) դիմելու հնարավորությունը չի վերացել,

2. առևտրային արբիտրաժում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը շոշափող գործերը արբիտրաժային կարգով քննելու և լուծելու միջոցով<sup>1</sup>,

3. արբիտրաժային քննությունն իրականացվում է օրենքի, արբիտրաժային համաձայնության, ինչպես նաև արբիտրաժային կանոնակարգերին համապատասխան՝ սահմանված հատուկ կարգով,

4. առևտրային արբիտրաժում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն արբիտրաժային

<sup>1</sup> ՀՀ-ում քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ինչպես վիճելի իրավահարաբերություններից բխող վեճերը քննելու և լուծելու միջոցով, այնպես էլ որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, քաղաքացու իրավական վիճակ կամ էլ անվիճելի իրավունք հաստատելով:

քննությամբ, այլև արբիտրաժային մարմնի կողմից մատուցվող այլ ծառայությունների միջոցով՝ մեդիացիոն, կոնսիլիացիոն (հաշտեցնող ընթացակարգ) և մինի-պրոցեսների կանոնակարգերին համապատասխան:

Տեսական և գործնական առումով իրենից մեծ կարևորություն է ներկայացնում նաև իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի առավելություններն ու թերի կողմերը բացահայտելը, քանի որ անհնար է որևէ երևույթի, այդ թվում՝ արբիտրաժի էության բացահայտումը, առանց վերջինիս որակական հատկանիշների և առանձնահատկությունների ուսումնասիրության: Տարբեր տեսաբաններ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի առավելություններն ու թերի կողմերը տարբեր կերպ են պատկերացնում: Սակայն, եթե փորձենք ընդհանրացնել վերջիններիս տեսակետները և դրանց օգտին բերվող փաստարկները, ապա կհանգենք հետևյալին՝ առևտրային արբիտրաժի զարգացման, դերի ու հեղինակության աճը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից:

**Առաջին** առաջացած վեճն այլ պետության դատարանի լուծմանը հանձնելու՝ կողմերի ցանկության բացակայությունն է:

Վեճը որևէ պետության դատարանի լուծմանը հանձնելու մասին կողմերի միջև համաձայնության բացակայության դեպքում (պայմանագրային ընդդատության կիրառում) հայցվորն իր հայեցողությամբ հայցը կարող է հարուցել պատասխանողի գտնվելու վայրի, նրա գույքի գտնվելու վայրի կամ այլ դատարան, որտեղ գործունեություն է ծավալել պատասխանողը: Նման պարագայում ընտրված դատարանը կլինի օտարերկրյա և այդ իսկ պատճառով հայցվորի համար անցանկալի: Ուստի լեզուն, դատավարական կանոնները չիմանալու կամ վատ իմանալու, դատարանի անկողմնակալության մեջ վստահ չլինելու պատճառով հայցվորները սովորաբար խուսափում են այլ պետության դատարան դիմելուց: Բացի այդ, շատ հաճախ դատարանները վեճը լուծում են հօգուտ իրենց երկրի քաղաքացու(ռեզիդենտի): Պետք է նշել նաև, որ շատ դեպքերում դատավորները լավատեղյակ չեն միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման միտումներին: Նմա-

ճանաչել իրավիճակներում կողմերի համար առավել նախընտրելի է դիմել արբիտրաժային որևէ հեղինակավոր կենտրոն կամ վեճը հանձնել իրենց իսկ կողմից ստեղծված (ad hoc) արբիտրաժային դատարանի լուծմանը:

**Երկրորդ** վեճի լուծման վայրի ընտրության հնարավորությունն է: Կողմերը հնարավորություն ունեն ինքնուրույն որոշելու արբիտրաժի անցկացման վայրը: Ընդ որում, կողմերի ընտրությունը հաճախ կանգ է առնում երրորդ՝ չեզոք պետության արբիտրաժային մարմնի վրա: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերաբերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային տրիբունալը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ՝ կողմերի համար հարմարությունը: Արբիտրաժային տրիբունալը կարող է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում, արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու, կամ ապրանքներ, կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով:

**Երրորդ** փաստարկը արբիտրներին ընտրելու և արբիտրաժի կազմը (արբիտրաժային տրիբունալը) ձևավորելու հնարավորությունն է: Ի տարբերություն պետական դատարանների, որտեղ կողմերը զրկված են գործը քննող դատավոր ընտրելու հնարավորությունից (կարող են միայն օրենքով սահմանված հիմքերով բացարկ հայտնել նրան), արբիտրաժի դեպքում կողմերն իրենք են նշանակում արբիտրներին՝ եթե արբիտրաժը ad hoc է կամ էլ ընտրում համապատասխան թեկնածուներից՝ եթե խոսքը վերաբերում է ինստիտուցիոնալ արբիտրաժին: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերն ազատ են համաձայնեցնելու արբիտրի կամ արբիտրների նշանակման ընթացակարգը: Արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային տրիբունալի

ձևավորում զույգ կազմով, ապա արբիտրների թիվը պետք է մեկով ավելացվի: Այս դեպքում ավելացվող արբիտրն ընտրվում է նշանակված արբիտրների կողմից, որը հանդես է գալիս որպես տրիբունալի նախագահող: Փոխադարձ համաձայնությամբ վեճը որևէ ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու դեպքում արբիտրաժի կազմը ձևավորվում է վերջինիս կանոնակարգին համապատասխան:

**Չորրորդ** արբիտրների անկողմնակալության ապահովումն է: Անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է նշանակվել արբիտրը՝ նա պետք է պահպանի անկողմնակալությունը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն առանձին հոդվածով ուղղակիորեն դրույթ չի նախատեսել արբիտրների անկողմնակալության և անկախության վերաբերյալ, սակայն 12-րդ հոդվածով սահմանել է, որ որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած անձը պարտավոր է հայտնել ցանկացած այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Ինչպես նաև օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում:

Այս պահանջը պարտադիր է բոլոր երկրների օրենսդրություններում և իր արտացոլումն է գտել նաև Հայաստանում գործող և բազմաթիվ հեղինակավոր միջազգային արբիտրաժային կենտրոններում, մասնավորապես ԱՄՊ արբիտրաժային կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր արբիտր պետք է անկախ և անկողմնակալ լինի: Մինչև նշանակվելը կամ հաստատվելը վերջինս անկախության և անկողմնակալության մասին հայտարարագիր է ստորագրում և պարտավոր է արբիտրաժային մարմնի քարտուղարությանը հայտնել բոլոր այն փաստերի և հանգամանքների մասին, որոնք իրենց անկախության և անկողմնակալության մասին կողմերի մոտ կարող են կասկած առաջացնել:

**Հինգերորդ**՝ արբիտրաժային վարույթի պարագայում գործի քննությունն իրականացվում է տվյալ ոլորտում խոր մասնագիտա-

կան գիտելիքների տիրապետող անձանց կողմից, որովհետև կողմերը սովորաբար այդպիսի արբիտրներ են ընտրում: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ: Հետևում է, որ արբիտրը կարող է ընդհանրապես իրավաբան չլինել, այլ ելնելով վիճելի իրավահարաբերության բնույթից, վեճի առարկայից և գործի արագ ու ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներից՝ կողմերը կարող են նեղ մասնագիտական որևէ ոլորտում համապատասխան գիտելիքների տիրապետող անձի ընտրել:

**Վեցերորդ՝** կողմերն իրենք են սահմանում արբիտրաժային քննության ընթացակարգը (lex arbitri): Ի տարբերություն պետական դատարանների, որտեղ դատավարության ընթացակարգը խստորեն կարգավորված է օրենսդրորեն, արբիտրաժի դեպքում կողմերն իրավունք ունեն սահմանել կանոններ, որոնց համապատասխան էլ քննվում է գործը, կամ էլ ընտրել արբիտրաժային որևէ միջազգային կենտրոնի կանոնակարգ: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը կարող են իրենց հայեցողությամբ համաձայնվել արբիտրաժային տրիբունալի կողմից վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ:

**Յոթերորդը** կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրության հնարավորությունն է, այսինքն՝ կողմերը կարող են ընտրել վեճի էության նկատմամբ կիրառելի նորմերը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

**Ութերորդը** արբիտրաժի գաղտնիությունն է: Որպես կանոն, արբիտրաժային կարգով գործերը քննվում են դժնփակ դատական նիստում: Ուստի կողմերը կարող են վստահ լինել, որ իրենց առևտրային, բանկային, արտադրական կամ այլ գաղտնիքը չի

հրապարակվի: Արբիտրաժային վարույթում գործերի քննության հրապարակայնության սկզբունքը չի գործում, եթե այլ բան նախատեսված չէ արբիտրաժային համաձայնությամբ: Հարկ է նշել նաև, որ արբիտրաժի մասին հայրենական օրենքը գործերի քննության հրապարակայնության կամ գաղտնիության մասին համապատասխան դրույթ չի պարունակում, այդ հարցի կարգավորումը թողնելով կողմերի հայեցողությանը, քանի որ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, որը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների:

**Իններորդ՝** արբիտրաժային վճիռը վերջնական է: Արբիտրաժային վճիռը վերջնական է և կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Արբիտրաժային վճիռների և որոշումների բողոքարկում հնարավոր չէ: Արբիտրաժային դատարանները չունեն այն աստիճանակարգությունը, որին մենք հանդիպում ենք պետական դատական համակարգերն ուսումնասիրելիս: Ավելին, արբիտրաժի դեպքում դատարանների հետ ցանկացած առնչությունը հասցվում է նվազագույնի: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է որևէ դատական միջամտություն արբիտրաժին վերաբերող հարցերին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Արբիտրաժի ցանկացած որոշում կամ վճիռ համարվում է վերջնական և դրանց վիճարկումը դատարան հնարավոր է միայն առանձին դեպքերում, որոնք թվարկված են, օրինակ, Նյու Յորքի համաձայնագրի 5-րդ հոդվածում, ինչպես նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխում: Դրանք հիմնականում վերաբերվում են նյութական և դատավարական իրավունքների լուրջ խախտումներին:

**Տասներորդ՝** արբիտրաժային վճիռները ենթակա են ճանաչման և կատարման գրեթե ողջ աշխարհում: Օտարերկրյա դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին համընդհանուր ճանաչում գտած որևէ միջազգային համաձայնագրի բացակայության պայմաններում կողմը, նույնիսկ օրինական ուժի մեջ մտած վճիռ ունենալով, չի կարող ա-

ռանց պատասխանողի պետության դատարանում կրկնակի քննության այն հարկադիր կատարման ներկայացնել: Ինչպես գիտենք, դատական ակտերի ճանաչման և հարկադիր կատարման մասին դեռևս որևէ միջազգային այնպիսի համաձայնագիր չի ընդունվել, որը վավերացված լիներ աշխարհի բոլոր պետությունների կողմից, իսկ երկրորդ պայմանագրերը բավական չեն այս ոլորտի համապարփակ կարգավորման համար: Մինչդեռ «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների (որոշումների) ճանաչման և հարկադիր կատարման մասին» 1958 թվականի Նյու Յորքի համաձայնագրով այս խնդիրը լուծվել է: Նյու Յորքյան համաձայնագիրը վավերացրել են ավելի քան 135 պետություն<sup>1</sup>:

Հաջորդ առավելությունը քննության արագությունն է և գործի դատական քննության համեմատ՝ առավել քիչ ծախսատար լինելը: Այս դրույթը, թերևս, համարվում է կարևորագույններից մեկը, քանի որ հենց այս նկատառումներից ելնելով են քաղաքացիական շրջանառության մասնակիցները առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերը հանձնում արբիտրաժային դատարանի լուծմանը: Նրանց հիմնական նպատակն է գումար և ժամանակ տնտեսել, որը հատկապես կարևորվում է գործարարության բնագավառում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում: Այսինքն այստեղ դատավարական ժամկետների ինստիտուտն իր դասական իմաստով չի գործում: Եթե քաղաքացիական դատավարությունում ժամկետը օրենքով կամ դատարանի կողմից սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում դատավարական իրավահարաբերությունների մասնակիցները իրավունք ունեն կամ պարտավոր են որոշակի գործողություններ կատարել, ապա արբիտրաժի պարագայում ժամկետների հարցը լուծվում է արբիտրաժային համաձայնությամբ՝ այսինքն ըստ կողմերի հայեցողության, կամ էլ այն իրավունքի նորմերին կամ ար-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կողմից այն վավերացվել է 1997թ. դեկտեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 1998թ. մարտի 29-ից:

բիտրաժային կանոնակարգերին համապատասխան, որոնց վրա հղում է արվել:

Վեճը մշտապես գործող արբիտրաժային մարմնի լուծմանը հանձնելու դեպքում արբիտրաժային տուրքի և այլ ծախսերի հարցը լուծվում է արբիտրաժային կանոնակարգին համապատասխան: Իսկ կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժի պարագայում՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ այն կանոնակարգին համապատասխան, որն արբիտրաժային համաձայնությամբ որոշել են կիրարկել կողմերը վեճը լուծելիս:

Առավելությունների շարքում կարելի է առանձնացնել նաև արբիտրաժային վարույթի ընթացքում կիրառվող լեզվի ընտրության հնարավորությունը: Ի տարբերություն քաղաքացիական դատավարությունում գործող՝ դատավարությունը պետական լեզվով իրականացնելու սկզբունքի, արբիտրաժում «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվել է կիրառվող լեզվի ազատ ընտրության հնարավորությունը:

Հարկ է նշել, որ իր բոլոր առավելություններով հանդերձ, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը զուրկ չէ նաև որոշակի թերություններից: Այս պարագայում թերությունների տակ ի նկատի ունենք ՀՀ օրենսդրության մեջ առևտրային արբիտրաժին վերաբերող նորմերի գոյությամբ պայմանավորված այն հանգամանքների ամբողջությունը, որոնք նվազեցնում են արբիտրաժային կարգով իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Սեր կարծիքով թերությունների շարքում կարելի է առանձնացնել.

1. Արբիտրաժային դատարանի (տրիբունալի) սահմանափակ իրավասությունը (լիազորությունները): Արբիտրաժային տրիբունալի իրավասությունը զգալիորեն սահմանփակ են, եթե դրանք համեմատելու լինենք պետական դատարանների իրավասության հետ: Օրինակ՝ արբիտրաժային տրիբունալի իրավասությունը սահմանափակ է որոշակի խումբ իրավահարաբերություններից ծագող վեճերի լուծման կամ հարկադրանքի միջոցների կիրառման (օր.՝ ապացույցների ապահովման կամ վկային բերման ենթարկելու) հարցում: Արբիտրաժի իրավասությունը պայմանավորված է հանրային

կարգի սահմանափակումներով, այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինպերատիվ նորմերի համակարգի գոյությամբ, որով այս պարագայում կանխորոշվում է արբիտրաժային կարգով քննության ենթակա գործերի շրջանակը, արբիտրաժի իրավասությունը և այլն:

Հանրային կարգի սահմանափակումներն իրենց արտացոլումն են գտել նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետում, որը սահմանում է, որ արբիտրաժի մասին օրենքի գործողությունը չի բացառում ՀՀ մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն այս օրենքով:

2. Արբիտրաժում գրեթե անհնար է արբիտրաժային համաձայնության առարկայից դուրս վիճելի իրավահարաբերություններից բխող հայցերի միացումը՝ հայցերի սուբյեկտիվ միացում, օրինակ՝ եթե վեճն առաջացել է կապալի պայմանագրով նախատեսված պայմանների խախտման դեպքում և պատվիրատուն կապալառուից որոշակի գումար գանձելու հայցով դիմում է դատարան: Եթե կապալառուն իր հերթին հայց է հարուցում ընդդեմ ենթակապալառուի կամ մատակարարի, ապա անհրաժեշտության դեպքում դատարանը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդության հիման վրա կարող է բոլոր պահանջները միացնել և գործը լուծել միևնույն վարույթի շրջանակում: Արբիտրաժի դեպքում, առանց շահագրգիռ անձանց համաձայնության, հայցերի սուբյեկտիվ միացումն անհնար է: Ավելին, որոշ դեպքերում էլ հնարավոր չէ հայցերի օբյեկտիվ միացումը, երբ կողմերն արբիտրաժային համաձայնությամբ նույն իրավահարաբերությունից բխող միայն որոշակի վեճերն են հանձնում արբիտրաժի լուծմանը: Արբիտրաժային համաձայնության առարկայից դուրս վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու համար այդ մասին լրացուցիչ համաձայնություն է պահանջվում:

3. Արբիտրաժային կարգով իրավունքների պաշտպանությունը ոչ միշտ է բացառում գործով դատական միջամտությունը կամ դատարանի հետ այլ առնչակցությունը: Օրինակ, եթե կողմերից մեկը

խուսափում է արբիտրաժից, սահմանված կարգով չի նշանակում արբիտր, եթե անհրաժեշտ է հայցի ապահովման միջոցներ կիրառել կամ եթե գործը տանուլ տված կողմը ձգտում է արբիտրաժային վճռի վերանայման կամ վերացման, գործի դատական քննությունը դառնում է անխուսափելի<sup>1</sup>:

Հետևում է, որ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևն ունի ինչպես թերություններ, այնպես էլ առավելություններ: Սակայն անվիճելի է այն փաստը, որ վերջինիս առավելություններն ակնհայտորեն գերազանցում են թերությունները: Գիշտ է, արբիտրաժային կարգով առևտրատնտեսական հարաբերություններից բխող գույքային վեճերի լուծման պրակտիկան ՀՀ-ում դեռևս լայն տարածում և կիրառություն չունի, սակայն ներկայումս միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի զգալի մասն իրենց լուծումն են գտնում առևտրային արբիտրաժի հեղինակավոր կենտրոններում<sup>2</sup>: Հենց դա էլ հանդիսանում է վերջինիս արդյունավետության ամենավառ ապացույցը:

## **§2. Առևտրային արբիտրաժի հասկացությունը**

Իրավաբանական գրականության մեջ «առևտրային արբիտրաժ» եզրույթն իմաստային առումով տարբեր կերպ է ընկալվում:

Նախևառաջ, առևտրային արբիտրաժ ասելով հասկանում ենք հատուկ ստեղծված մարմին, որի հիմնական գործառնություն է առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճեր քննելը և լուծելը: Ընդ որում, այդ մարմինները կարող են կազմակերպարարական տարբեր տեսակների լինել և տարբեր կարգավիճակ ունենալ: Մասնավորապես, առևտրային արբիտրաժները կարող են լինել ինչպես մշտապես գործող (ինստիտուցիոնալ), այնպես էլ կոնկրետ վեճը լուծելու համար (ad hoc) նախատեսված:

<sup>1</sup> Տե՛ս «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 9-11-րդ և 34-րդ հոդվածները:

<sup>2</sup> Տե՛ս Օրինակ՝ Stephan R. Bond, How to Draft an Arbitration Clause (1989 journal), էջ 66:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չի տարբերակել ինստիտուցիոնալ և ad hoc արբիտրաժները, մինչդեռ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ.ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր, որ ՀՀ –ում ստեղծվում են մշտապես գործող և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) միջնորդ դատարաններ: Նման մոտեցումն արդարացված համարել չի կարելի, քանի որ արբիտրաժների այս տեսակների իրավական ռեժիմներն ունեն իրենց առանձնահատկությունները և տարբերվում են միմյանցից: Ինստիտուցիոնալ արբիտրաժի պարագայում մենք գործ ունենք իր իրավասությանը հանձնված՝ առևտրատնտեսական հարաբերություններից բխող գույքային վեճեր լուծող մարմնի հետ, որը գործում է մշտապես: Ընդ որում, մշտապես գործող արբիտրաժային դատարանների գործունեությունը կանոնակարգվում է օրենքին համապատասխան հաստատված կանոնադրությամբ, որտեղ նշվում են արբիտրների անվանացանկը, արբիտրաժի կազմի ձևավորման կարգը, արբիտրների բացարկի, ինքնաբացարկի լուծման հետ կապված հարցերը, գործերի քննության և արբիտրաժային տուրքեր գանձելու կարգը: Կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժները ստեղծում են կողմերը և գործերի քննության ընթացակարգային կանոնները սահմանում են ինքնուրույն կամ էլ հղում են կատարում որևէ արբիտրաժային կանոնակարգի վրա:

Առևտրային արբիտրաժի մասին ՀՀ օրենքն անուշադրության է մատնել և առանց իրավական կարգավորման է թողել այս հարցերը: Մինչդեռ, արբիտրաժային հարաբերությունների համապարփակ կարգավորումն առավել կնպաստեր առևտրային արբիտրաժների արդյունավետ գործառնությանը: Այս առումով ՀՀ օրենսդիրը, կարելի է ասել, որ հետընթաց քայլ է կատարել, քանի որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ.ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում էր, որ մշտապես գործող միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրաարդյունաբերական պալատներին, բորսաներին, հրապարակային սակարկություններ իրականացնող կազմակերպություններին, ՀՀ բանկերի միությանը և այլ կազմակերպություններին առընթեր: Մշտապես գործող միջնորդ դատարանի գործունեության կարգը սահմանվում է նման

դատարան ստեղծած կազմակերպության կողմից հաստատված կանոնադրությամբ:

Նման ձևակերպումը թեև չէր համապատասխանում առևտրային արբիտրաժների գործառնության միջազգային պրակտիկայի ընդհանուր սկզբունքներին, բայց փոխարենը որոշակիություն էր մտցնում ինստիտուցիոնալ և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժների տարբերակման հարցում: Միևնույն ժամանակ օրենքը հաշվի չէր առել միջազգային հեղինակավոր արբիտրաժային կենտրոնների ինստիտուցիոնալ-կառուցվածքային առանձնահատկությունները և անհարկի սահմանափակել էր մշտապես գործող արբիտրաժների ստեղծումը: Մասնավորապես, նշելով, որ մշտապես գործող միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրաարդյունաբերական պալատներին, բորսաներին, հրապարակային սակարկություններ իրականացնող կազմակերպություններին, ՀՀ բանկերի միությանը և այլ կազմակերպություններին առընթեր, օրենսդիրը բացառել էր ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակով ինստիտուցիոնալ արբիտրաժների գործառնությունը: Մինչդեռ գոյություն ունեն հեղինակավոր արբիտրաժային այնպիսի հաստատություններ, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Ավելին, 1892թ. Լոնդոնի մունիցիպալ խորհրդի նախաձեռնությամբ հիմնադրված Լոնդոնի արբիտրաժային դատարանը 1986 թվականին վերակազմակերպվել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ «Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարան» անվանումով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը թեև չի կարգավորում վերը նշված հարցերը, սակայն չի էլ սահմանափակում առևտրային արբիտրաժների գործառնությունը՝ մատնանշելով դրանք որոշ կազմակերպություններին առընթեր ստեղծելու հանգամանքը:

Արբիտրաժի մասին հայրենական օրենքի 2-րդ հոդվածի առաջին կետով տրված մեկնաբանության համաձայն՝ «արբիտրաժ»<sup>1</sup>

<sup>1</sup> Պետք է նշել նաև, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքում միջնորդ դատարան կամ միջնորդ դատավարություն եզրույթների օգտագործումն իմաստային առումով այդքան էլ ճիշտ չէր: Նման ձևակերպումով Հայաստանում արբիտրաժի գործունեութե-

նշանակում է ցանկացած արբիտրաժ, անկախ դրա՝ մշտապես գոր-

յունը նույնացվում է արբիտրաժային մարմինների կողմից մատուցվող ծառայություններից մեկի՝ մեդիացիայի հետ: Արբիտրաժները մատուցում են վճարովի տարբեր ծառայություններ, որոնցից են առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը: Այդ նպատակով հեղինակավոր արբիտրաժային կենտրոնները նույնիսկ ընդունել են հատուկ՝ մեդիացիոն, կոնսիլիացիոն կամ մինի-պրոցեսները կարգավորող կանոնակարգեր: Իսկ ՀՀ օրենքում տեղ գտած ձևակերպումով՝ օրենսդիրն արբիտրաժը նույնացրել է առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման միջոցներից մեկի, իսկ ավելի ստույգ՝ մեդիացիայի հետ, որն արբիտրաժների կողմից մատուցվող ծառայություններից մեկն է:

«Արբիտրաժ» եզրույթն իմաստային առումով ավելի ճիշտ է գործածել տնտեսավարող սուբյեկտների միջև առևտրատնտեսական վեճերը լուծելու պարագայում, հատկապես, երբ խոսքը գնում է միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերը լուծելու մասին: Առևտրային արբիտրաժներում լուծվում են հենց միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում տնտեսավարող սուբյեկտների միջև ձեռնարկատիրական գործունեությունից ծագող վեճերը, մինչդեռ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքով՝ միջնորդ դատարանը լուծում էր նաև ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող գույքային վեճերը, բացառությամբ ավիանտային իրավահարաբերություններից բխող վեճերի: Նման դեպքերում այս եզրույթի գործածումը ճիշտ էր, քանի որ առնվազն զարմանալի կլիներ, եթե առևտրաարդյունաբերական պալատին կամ բանկային միությանն առընթեր մշտապես գործող արբիտրաժային դատարանն ամուսնաընտանեկան իրավահարաբերություններից բխող վեճեր լուծեր: «Միջնորդ դատարան» կամ «միջնորդ դատավարություն» եզրույթների օգտագործումը ճիշտ չէ ձեռնարկատիրական իրավահարաբերություններից ծագող վեճերի լուծման պարագայում, հատկապես, երբ խոսքը գնում է միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների մասին, քանի որ այս հարաբերությունների մասնակիցները, որպես կանոն, տնտեսավարող սուբյեկտներ են և ձեռնարկչական գործունեությամբ զբաղվողներ: Բացի այդ, արբիտրաժային կենտրոնները մատուցում են բազմաթիվ ծառայություններ, որոնցից են միջազգային առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոցների (մեդիացիա, կոնսիլիացիա, մինի պրոցեսներ, բանակցություններ) կիրառումը: «Միջնորդ դատավարություն» եզրույթն իմաստային առումով ավելի շատ համընկնում է արբիտրաժային դատարանների կողմից մատուցվող ծառայություններից՝ մեդիացիայի և կոնսիլիացիայի (բառացի թարգմանությամբ՝ միջնորդական վարույթ) հետ: Հետևաբար, նշված դեպքում այս բառակապակցության գործածումը սխալ է, քանզի այն անհարկի սահմանափակում է միջազգային արբիտրաժի ինստիտուցիոնալ-գործառնության կողմը: Հաշվի առնելով բերված փաստարկները՝ ՀՀ օրենսդիրն արբիտրաժային օրենսդրության մեջ տեղ գտած «միջնորդ» բառն իրավացիորեն փոխարինեց «արբիտրաժային» բառով:

ծող հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքի: Բովանդակային առումով նման անորոշ և կրկնաբանություն պարունակող ձևակերպումից լավագույն դեպքում կարելի է ենթադրել ինստիտուցիոնալ և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժների տարբերակումը:

Հաշվի առնելով այս նկատառումները, ավելի ճիշտ կլիներ, որպեսզի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն առանձին հոդվածով սահմաներ.

*«1. Հայաստանի Հանրապետությունում կարող են ստեղծվել մշտապես գործող (ինստիտուցիոնալ) և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժային դատարաններ:*

*2. Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժային դատարանները կարող են ստեղծվել ինքնուրույն իրավաբանական անձանց կարգավիճակով կամ էլ այլ կազմակերպությունների անուններ:*

*3. Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժային դատարանի գործունեության կարգը սահմանվում է հիմնադրի կամ նման դատարան ստեղծած կազմակերպության կողմից հաստատված կանոնադրությամբ, որտեղ պետք է նշվեն՝*

*– արբիտրների անվանացուցակը,*

*– արբիտրաժային դատարանի կազմավորման կարգը,*

*– արբիտրի ինքնաբացարկի և նրան հայտնված բացարկի լուծման կարգը,*

*– գործերի քննության և լուծման կարգը,*

*– արբիտրաժային տուրքերի չափը և զանձման կարգը»:*

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այս եզրույթի տակ կարելի է հասկանալ առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման միջոց՝ կառուցակարգ, որի նպատակն է առևտրատնտեսական գործարքներից ծագող վեճերի կարգավորումը: Այս պարագայում քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացվում է արբիտրաժային քննության



միջոցով: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը իրացվում է հիմնականում արբիտրաժային քննության միջոցով: Այսինքն, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևն ընթանում է օրենքով սահմանված կարգով և արբիտրաժային համաձայնությամբ պայմանագրային կամ ոչ պայմանագրային բնույթի իրավահարաբերություններից բխող գույքային վեճը արբիտրաժային կարգով քննելու և լուծելու ճանապարհով:

Արբիտրաժային քննությունը, որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի հիմնական դրսևորում, ունի որոշակի առանձնահատկություններ: Ընդ որում, այդ առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի հիմնական հատկանիշներով, այնպես այլ հանգամանքներով:

Արբիտրաժային քննությունն առևտրատնտեսական հարաբերությունների մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանության արբիտրաժային ձևն է, դրա իրացման հիմնական միջոցը, որը ենթադրում է, որ՝

1. արբիտրաժային քննության առարկա կարող են հանդիսանալ միայն օրենքով և արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժի իրավասությանը վերապահված գործերը: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ գործում է դատական պաշտպանության անսահմանափակ իրավունք, արբիտրաժային կարգով կարող են քննվել և լուծվել միայն որոշակի իրավահարաբերություններից բխող վեճերը: Եթե քաղաքացիական դատավարությունում հիմնական պահանջ է համարվում վեճի դատական ենթակայությունը և կողմի ներկայացրած պահանջի իրավաչափությունը, ապա առևտրային արբիտրաժում վերը նշվածի դրսևորումը խիստ սահմանափակված է: Առևտրային արբիտրաժի իրավասությանը վերապահված գործերի շրջանակը նախևառաջ պայմանավորված է հանրային կարգի սահմանափակումներով: Հարկ է նշել, որ հանրային կարգի սահմանափակումների սահմանումը ՀՀ օրենսդրությամբ հստակ տրված չէ, այլ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վերոնշ-

յալ օրենքի գործողությունը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն նշված օրենքով: Հետևում է, որ արբիտրաժային կարգով չեն կարող լուծվել որոշակի խումբ իրավահարաբերություններից բխող գործեր, որոնք վերապահված են դատարանի բացառիկ իրավասությանը: Իսկ այդ իրավահարաբերությունների ցանկը և գործերի շրջանակն արբիտրաժի մասին օրենքով չի սահմանվում: Դրանց մասին մենք կարող ենք դատողություններ անել միայն համադրելով ՀՀ օրենսդրական տարբեր ակտերի դրույթները: Արբիտրաժային քննության առարկա հանդիսացող գործերի շրջանակը որոշելու հարցում առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետին, որի համաձայն «առևտրային» հասկացությունը ներառում է առևտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային: Առևտրային բնույթի հարաբերությունները մասնավորապես, ներառում են հետևյալ գործարքները՝ բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման և փոխանակման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալման, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների: Այսինքն՝ առևտրային արբիտրաժային կարգով լուծվում են վերը նշված իրավահարաբերություններից բխող վեճերը: Սակայն ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի՝ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող և դատարանի իրավասությանը ենթակա գույքային վեճը՝ մինչև վճիռ կայացնելը, կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել ար-

բիտրաժային տրիբունալի լուծմանը: Հետևում է, որ այս պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը արբիտրաժի իրավասությանն է վերապահել քաղաքացիական իրավահարաբերություններից բխող գույքային վեճերը: Քաղաքացիական իրավունքով են կարգավորվում նաև ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում ծագող և քաղաքացիաիրավական կարգավորման առանձնահատկություններ պարունակող գույքային հարաբերությունների, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպանական և այլ հատուկ օրենսդրությամբ (Քաղ. օր. 1-ին հոդվ. 4-րդ կետ): Հետևաբար՝ քաղաքացիական իրավունքով կարգավորվող գույքային, այդ թվում՝ իրավունքի սուբյեկտների միջև նյութական բարիքների ստեղծման, ձեռքբերման, տիրապետման, օգտագործման, տնօրինման, կառավարման և փոխանցման կապակցությամբ առաջացող և ապրանքադրամական բնույթ ունեցող հասարակական հարաբերություններից բխող վեճերը կարող են լուծվել արբիտրաժային կարգով, եթե այդ հարաբերությունները հիմնված չեն մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա<sup>1</sup>: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի միջև որոշակի անհամապատասխանություններ կան: Ընդ որում, եթե արբիտրաժի մասին օրենքով անհարկի սահմանափակվել է այն իրավահարաբերությունների ցանկը, որոնցից բխող վեճերը կարելի է հանձնել արբիտրաժային դատարանի լուծմանը, ապա քաղաքացիական դատավարության օրենսգրքով նեղացվել է արբիտրաժային քննության առարկա հանդիսացող գործերի շրջանակը:

Առևտրային արբիտրաժային կարգով կարող են լուծվել առևտրային իրավահարաբերություններից բխող վեճերը, իսկ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող, այդ թվում՝ ընտա-

<sup>1</sup> Քաղաքացիական օրենսդրությամբ չեն կարգավորվում մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային, այդ թվում՝ հարկային, ֆինանսական, և վարկային հարաբերությունները, եթե օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված (Քաղ. օր. 1-ին հոդվ. 6-րդ կետ):

նեկան, աշխատանքային և այլ հարաբերություններից ծագող գույքային վեճերի լուծման հարցն անտեսվել է: Այս առումով օրենսդիրը թույլ է տվել էական բացթողում՝ օրենքի վերտառությունը որոշելու հարցում: Ավելի ճիշտ կլիներ, որ ՀՀ օրենսդիրն օրենքի վերտառությունից հաներ «առևտրային» բառը, որը կկարգավորեր ինչպես առևտրային, այնպես էլ քաղաքացիաիրավական բնույթի այլ իրավահարաբերություններից բխող վեճերն արբիտրաժային կարգով լուծելու հարցը: Այլապես, նման ձևակերպումից հետևում է, որ միայն առևտրային հարաբերություններից բխող վեճերը կարող են լուծվել արբիտրաժային կարգով: Նման մոտեցումն արդարացի համարել չի կարելի: Հակառակ դեպքում, բացը լրացնելու համար ՀՀ օրենսդիրը պետք է առանձին, այսպես կոչված, «ոչ առևտրային» արբիտրաժի մասին օրենք ընդունի: Նման պարագայում էլ այս երկու օրենքների նորմերն ամխուսափելիորեն նույնությամբ կրկնելու են միմյանց: Հարկ է նշել, որ արբիտրաժի մասին օրենքից այս առումով շահեկանորեն տարբերվում էր «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքը, որի՝ «Միջնորդ դատարանի իրավասությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածով սահմանվում էր միջնորդ դատարանի ենթակայությանը վերապահված գործերի շրջանակը<sup>1</sup>:

<sup>1</sup> Այդ հոդվածի համաձայն՝ միջնորդ դատարանը լուծում էր ՀՀ քաղ. դատ. օրենսգրքին համապատասխան Հայաստանի Հանրապետության դատարանների իրավասությանը ենթակա գույքային վեճերը, բացառությամբ պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև ալիմենտային իրավահարաբերություններից ծագող վեճերի և իրավաբանական անձանց ու քաղաքացիների սնանկության գործերի: Հետևում է, որ օրենքն ուղղակիորեն նախատեսում էր ամուսնաընտանեկան իրավահարաբերություններից բխող գույքային վեճերը կարող էին լուծվել արբիտրաժային կարգով: Սակայն «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում էր, որ մշտապես գործող միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրաարդյունաբերական պալատներին, բորսաներին, հրապարակային սակարկություններ իրականացնող կազմակերպություններին, ՀՀ բանկերի միությանը և այլ կազմակերպություններին առընթեր: Նման մոտեցումը ևս ճիշտ չէր, քանի որ առնվազն զարմանալի կլիներ, որ առևտրաարդյունաբերական պալատներին, բորսաներին կամ ՀՀ բանկերի միությանն առընթեր միջնորդ դատարանն ամուսնաընտանեկան հարաբերություններից բխող գույքային վեճ քններ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում օգտագործելով «գույքային վեճեր» բառակապակցությունը, ՀՀ օրենսդիրն անհարկի սահմանափակել է արբիտրաժային դատարանի ենթակայությանը հանձնված գործերի շրջանակը, ուղղակի հակասության մեջ մտնելով «Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարաբերություններից բխող քաղաքացիաիրավական վեճերն արբիտրաժային կարգով լուծելու մասին» 1972թ. Մոսկվայի համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետի հետ, համաձայն որի համաձայնագրի անդամ երկրների տնտեսվարող կազմակերպությունների տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության ոլորտում պայմանագրային կամ այլ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող բոլոր վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային կարգով: Այսինքն, այս համաձայնագրով պարտադիր չէ, որ արբիտրաժի իրավասությանը վերապահված վեճը բացառապես գույքային բնույթ ունենա: Մինչդեռ, արբիտրաժային դատարանի լուծմանը կարող են հանձնվել նաև նախապայմանագրային վեճեր, որոնք ծագում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև օրենքով նախատեսված պայմանագրեր կնքելիս տարածայնություններ առաջանալու կապակցությամբ: Օրինակ՝ մտադրությունների մասին համաձայնությամբ սահմանված ժամկետում պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելուց պայմանավորվող կողմի խուսափելու դեպքում: Ելնելով օրենսգրքի ձևակերպումից՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջով արբիտրաժային դատարան դիմել հնարավոր չէ: Կամ նախնական պայմանագրով, եթե կողմերը պարտավորվել են դրանում նախատեսված պայմաններով ապագայում կնքել հիմնական պայմանագիր և հետագայում կողմերից մեկը խուսափում է նշված պայմաններով հիմնական պայմանագիր կնքելուց, ապա առաջացած վեճն արբիտրաժային կարգով լուծել ևս հնարավոր չէ: Հետևաբար, անհրաժեշտ է «գույքային վեճեր» հասկացության փոխարեն օգտագործել ուղղակի «վեճեր» եզրույթը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական նա-

խաձեռնության մեջ առաջարկվել է 18-րդ հոդվածը վերաձևակերպել հետևյալ կերպ.

«Դատարանին ընդդատյա վեճը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը»:

Նման ձևակերպումը ևս ճիշտ չէ: Ընդդատությունը դատավարական այնպիսի ինստիտուտ է, որը կարգավորում է դատարանին ենթակա քաղաքացիական գործերի բաշխումը ՀՀ դատական համակարգի միևնույն օղակի կոնկրետ դատարանների միջև<sup>1</sup>: Նման պարագայում առավել նպատակահարմար է «իրավասություն» կամ «ենթակայություն» եզրույթների օգտագործումը:

Արբիտրաժային դատարանի ենթակայությանը վերապահված գործերի շրջանակը չսահմանելու հետևանքով հակասություններ կարող են առաջանալ ՀՀ քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության օրենսգրքերի, արբիտրաժի մասին օրենքի և այլ իրավական ակտերի միջև: Սնանկության գործերն իրենց բնույթով գույքային են և այստեղից հարց է ծագում, թե դրանք կարո՞ղ են արբիտրաժային կարգով լուծվել, թե՞ ոչ<sup>2</sup>: Արբիտրաժային կարգով չեն կարող լուծվել նաև հանրային-իրավական հարա-

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն: Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007թ. 264-276 էջերը:

<sup>2</sup> ՀՀ դատական օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատարաններն ըստ էության քննում են նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող հայցագին ունեցող քաղաքացիական գործեր և դատավարական օրենքով նախատեսված ոչ գույքային բնույթի այլ գործեր, վարում են սնանկության գործեր: Սնանկության գործերը, որպես կանոն, բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից և իրենց բնույթով գույքային են: Քանի որ դատավարության օրենքում խոսքը գնում է քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող և դատարանի իրավասությանը հանձնված գույքային վեճերի մասին և 2006թ. դեկտեմբերի 25-ի սնանկության օրենքն իր մեջ նման արգելք չի պարունակում, ապա օրենսդրական նման ձևակերպումների պայմաններում դա բացառված չէ: Մինչդեռ, սնանկացման բարդ և բազմաբովանդակ վարույթը՝ որտեղ խոսք է գնում նաև կազմակերպությունների առողջացման կամ լուծարման մասին, ինչը բավական լուրջ և ժամանակատար գործընթաց է, չի կարելի հանձնել արբիտրաժի իրավասությանը: Պետք է նշել, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ.ՀՀ օրենքը 5-րդ հոդվածով նման արգելք սահմանել էր:

բերություններից բխող գործերը, ինչի վերաբերյալ արբիտրաժի մասին օրենքում ևս նշում չկա: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանվել է ՀՀ վարչական դատավարության մասին օրենսգրքով<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ բոլոր թերություններով հանդերձ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ.ՀՀ օրենքը 5-րդ հոդվածով սահմանել էր, որ միջնորդ դատարանի իրավասությանը ենթակա գործերի շրջանակը և այս ոլորտում որոշակիություն էր մտցրել:

Այս ամենի փոխարեն, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 4-րդ՝ «Արբիտրաժային տրիբունալի իրավասությունը» գլխում խոսք է գնում միայն արբիտրաժային տրիբունալի կողմից իր իրավասության, արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության, ինչպես նաև հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնելու մասին, այն էլ բավական անորոշ ձևակերպումներով: Այդ իսկ պատճառով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով պետք է սահմանվի:

*«Կողմերի համաձայնությամբ արբիտրաժային դատարանի լուծմանը կարող են հանձնվել առևտրային և այլ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող պայմանագրային կամ ոչ պայմանագրային բնույթի վեճերը, բացառությամբ պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև ալիմենտային իրավահարաբերություններից ծագող վեճերի և քաղաքացիների ու իրավաբանական անձանց սնանկության գործերի»:*

Մեր կարծիքով, ալիմենտային իրավահարաբերություններից ծագող վեճերի կողքին կարելի է ավելացնել նաև կտակային իրավահարաբերություններից ծագող վեճերը, քանզի արբիտրաժային

կարգով վերջիններիս լուծումը նույնպես ենթակա է սահմանափակումների, ինչը գործող օրենքում նույնպես տեղ չի գտել:

2. Արբիտրաժային քննությունն իրականացվում է սահմանված հատուկ կարգով: Ընդ որում, արբիտրաժային քննության ընթացակարգը սահմանելու հարցում որոշիչ դեր ունի կողմերի կամարտահայտությունը: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են ազատորեն որոշել ինչպես վիճելի իրավահարաբերության կամ վեճի էության նկատմամբ կիրառվող իրավունքը, այնպես էլ սահմանել արբիտրաժային քննության ընթացակարգը (lex arbitri): Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն օրենքի դրույթների պահպանմամբ կարող են իրենց հայեցողությամբ համաձայնվել արբիտրաժային տրիբունալի կողմից վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ: Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն օրենքի դրույթների պահպանմամբ կարող է արբիտրաժային վարույթն իրականացնել այն ձևով, որը նպատակահարմար կհամարի: Արբիտրաժային տրիբունալին տրված լիազորությունները ներառում են ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, էականության և նշանակալիության որոշման լիազորությունը: Հետևում է, որ արբիտրաժային վարույթում չեն գործում քաղաքացիական դատավարությունում դատավարական ձևին վերաբերող հիմնական կանոնները: Եթե քաղաքացիական դատավարությունում գործերի քննության և լուծման կարգը ճշգրտորեն սահմանված է դատավարության իրավունքի նորմերով, իսկ դատավարությունում թույլատրելի են միայն օրենքով սահմանված դատավարական ձևի շրջանակներից դուրս չեկող գործողություններ, ապա արբիտրաժային քննության պարագայում վիճակն այլ է: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ իրենք են սահմանում «դատավարական ձևը»: Արբիտրաժային քննության կարգը որոշվում է կողմերի համաձայնությամբ, սակայն այդ համաձայնությունը պետք է համապատասխանի օրենքի պահանջներին: Հետևում է, որ արբիտրաժային քննության կարգը սահմանելու հարցում որոշիչ նշանակություն ունեն

1. կողմերի կամարտահայտությունը,

<sup>1</sup> Ընդունվել է 2007թ. դեկտեմբերի 4-ին:

2. արբիտրաժային վարույթը կարգավորող նորմերը,

3. արբիտրաժային տրիբունալի որոշումները, որոնք եզրահանգումներ են պարունակում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Սակայն, պետք է նշել նաև, որ արբիտրաժային քննության կարգը որոշելու հարցում առաջնայնությունը տրվում է կողմերի կամարտահայտությանը: Այն իմպերատիվ բնույթ ունի արբիտրաժային վարույթում և պարտադիր է արբիտրաժային տրիբունալի համար, եթե իհարկե համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին: Արբիտրաժային քննության ձևի հիմնական առանձնահատկությունը կայանում է հենց նրանում, որ այստեղ կողմերն ունեն բավական լայն, այդ թվում՝ դատավարական իրավունքներ, ինչը պայմանավորված է կամքի ինքնավարության սկզբունքի դրսևորումներով: Կողմերն ազատ են վիճելի նյութական իրավահարաբերության նկատմամբ կիրառվող նորմերի ընտրության և արբիտրաժային քննության կարգը որոշելու հարցում: Նրանք՝ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով կարող են իրացնել իրենց դատավարական իրավունքներն ու պարտականությունները, ազդել վարույթի շարժի վրա: Արբիտրաժային վճիռը պետք է լինի ոչ միայն օրինական և հիմնավորված, այլև համապատասխանի ինչպես ՀՀ օրենսդրության պահանջներին, այնպես էլ արբիտրաժային համաձայնությանը և կողմերի այլ պայմանավորվածություններին, որոնք ձեռք են բերվել արբիտրաժային քննության ընթացքում:

3. Արբիտրաժային քննությունը բացառապես հայցային ձև ունի: Քաղաքացիական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել ինչպես հայցային վարույթի, այնպես էլ հատուկ վարույթների ձևով, երբ բացակայում է իրավունքի մասին վեճը և դատարանը շահագրգռված անձանց դիմումով հաստատում է անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստեր, քաղաքացու իրավական վիճակ կամ անվիճելի իրավունքներ: Արբիտրաժի պարագայում վիճակն այլ է: Եթե քաղաքացիական դատավարության օբյեկտ կարող է լինել նաև հատուկ վարույթներում իրավաբանական փաստի կամ այլ հանգամանքի հաստատման պահանջը, ապա արբիտրաժային

քննության օբյեկտ է հանդիսանում միայն իրավունքի մասին վեճը, քանի որ, ըստ ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի, կողմերի համաձայնությամբ արբիտրաժային տրիբունալի լուծմանը կարող է հանձնվել քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող գույքային վեճը: Արբիտրաժային վարույթի հարուցման հիմք է հանդիսանում հայցը և կողմը իր խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանության նպատակով արբիտրաժային դատարան կարող է դիմել միայն հայցադիմում ներկայացնելով: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, ապահովման կամ հատուցման մասին պահանջները, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ: Հոդվածի վերլուծությունից հստակ երևում է, որ արբիտրաժային քննությունում առկա են

– սուբյեկտիվ իրավունքների մասին վեճ,

– հակադիր շահերով օժտված կողմեր (հայցվոր և պատասխանող),

– պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջ,

– կողմերի համաձայնությունը՝ վեճն արբիտրաժային կարգով քննելու և լուծելու մասին:

4. Արբիտրաժային քննությունն ընթանում է կողմերի մրցակցության հիման վրա: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հայցվորը պարտավոր է ներկայացնել հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը: Կողմերը կարող են իրենց հաղորդումներին կից ներկայացնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք, ըստ իրենց, առնչվում են գործին, կամ հղում կատարել ապագայում իրենց կողմից ներկայացվելիք փաստաթղթերին կամ այլ ապացույցներին: Բացի այդ, նույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ արբիտրաժային տրիբունալին տրված լիազորությունները ներառում են ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, էականության և նշանակալիության որոշման լիազորությունը:

- Չետևում է, որ արբիտրաժային քննության ընթացքում
- կողմերն իրենք են ապացուցում իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,
  - կողմերն օգտվում են ապացույցներ ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ կատարելու հավասար իրավունքից,
  - գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները որոշում է դատարանը կողմերի պահանջների ու առարկությունների հիման վրա՝ կիրառման ենթակա նյութական և դատավարական իրավունքների նորմերին համապատասխան,
  - ապացուցման գործընթացում արբիտրաժային դատարանը միայն թույլատրելիության և վերաբերելիության կանոններին համապատասխան գնահատում է կողմերի ներկայացրած ապացույցները:

*Ամփոփելով շարադրվածը, կարող ենք ասել, որ **արբիտրաժային քննությունը** արբիտրաժային վարույթն իրականացնող մարմնի (արբիտրաժային դատարանի կամ տրիբունալի, արբիտրաժային հաստատության) և կողմերի՝ ՀՀ օրենսդրությանը և արբիտրաժային համաձայնությանը համապատասխան՝ արբիտրաժի ենթակայությանը վերապահված վեճի քննությանն ու լուծմանն ուղղված գործունեությունն է և այդ գործունեության հետևանքով առաջացած իրավահարաբերությունների ամբողջությունն է:*

Մեկ այլ դեպքում արբիտրաժ ասելով ի նկատի ենք ունենում արբիտրաժային դատարանի կազմը՝ գործի քննությունը միանձնյա վարող արբիտրի կամ արբիտրների կոլեգիայի, երբ գործի քննությունը իրականացվում է կոլեգիալ: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն այս առումով եզրութաբանական և բովանդակային լուրջ թերություններ ունի: Մասնավորապես՝ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետում օգտագործվել է «արբիտրաժային տրիբունալ» բառակապակցությունը, սահմանելով, որ այն նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ: Այսինքն, արբիտրաժի կազմի փոխարեն օգտագործվել է «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը, ինչն արդարացված համարել չի կարելի: Նախևառաջ, արբիտրաժային կարգով վեճերի կարգավորմանը

նվիրված միջազգային ոչ մի համաձայնագիր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և հարկադիր կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի, «Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարաբերություններից բխող քաղաքացիաիրավական վեճերն արբիտրաժային կարգով լուծելու մասին» 1972թ. Մոսկվայի, «Տնտեսական գործունեության հետ կապված վեճերի լուծման» 1992թ. Կիևի, «Պետությունների և այլ երկրների ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» 1965թ. Վաշինգտոնի և այլ համաձայնագրերը, ինչպես նաև ՄԱԿՄԱԻՀ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» մոդելային օրենքը «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը չեն օգտագործում: Իսկ ներկայումս տարբեր երկրների իրավական համակարգերի միասնացման և օրենսդրության ունիֆիկացման պայմաններում եզրութաբանական հակասությունների մեջ մտնելը տեղին չէ: Այս եզրույթի օգտագործումը ճիշտ չէ նաև բովանդակային տեսանկյունից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածում խոսվում է գույքային վեճն արբիտրաժային տրիբունալին հանձնելու մասին, իսկ արբիտրաժի մասին օրենքի իմաստով տրիբունալ նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ, այսինքն՝ արբիտրաժային դատարանի կազմը: Մեկ այլ՝ հայցը կամ դիմումը առանց քննության թողնելու հիմքերը սահմանող 103-րդ հոդվածում օգտագործվում է և «արբիտրաժային տրիբունալ», և «արբիտրաժային դատարան» եզրույթները: Այսպես, 103-րդ հոդվածի 2-րդ կետը հայցը առանց քննության թողնելու հիմք է համարում, եթե այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, իսկ 3-րդ կետը որպես հայցը առանց քննության թողնելու հիմք նախատեսում է, եթե կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել: Իրավաբանական տեսանկյունից ավելի ճիշտ է վեճը որևէ մարմնի՝ այս պարագայում արբիտրաժա-

յին դատարանի լուծմանը հանձնելը, այլ ոչ թե վեճը հանձնել արբիտրաժի կազմին: Նման մոտեցումն ընդունված է ժամանակակից դատավարագիտությունում և իր արտացոլումն է գտել նաև ՀՀ օրենսդրության մեջ: Մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 22, 27, 31 և 35-րդ հոդվածներով սահմանվել է ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական դատարանների իրավասությունը, որտեղից պարզ երևում է, որ գործերը հանձնվում են դատարանների, այլ ոչ թե դատարանի կազմի իրավասությանը: Հարցը նույն կերպ է լուծում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, որի 81, 82, 86, 87-րդ և այլ հոդվածներից հստակ երևում է, որ գործը քննում և լուծում է դատարանը և իզուր չէ, որ օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվի այն դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում այս բոլոր հանգամանքներն անտեսվել են<sup>1</sup>: Բացի այդ, օգտագործելով «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը օրենսդիրն անհարկի ընկել է կրկնաբանական հակասությունների մեջ: Եթե «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի հիմաստով «արբիտրաժային տրիբունալ» նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ, ապա ավելորդ է օրենքի 3-րդ գլխի՝ «Արբիտրաժային տրիբունալի կազմը» վերտառությունը: Հա-

<sup>1</sup> Հարկ է նշել, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքում այս հարցն առավել ճիշտ էր լուծված: Նախ օրենքի 5-րդ հոդվածում խոսվում էր որոշակի խումբ իրավահարաբերություններից բխող գույքային վեճը միջնորդ դատարանի կողմից լուծելու մասին: Նման ձևակերպումից պարզ երևում էր, որ եզրույթաբանական առումով տարբերակվում էին երկու ինստիտուտներ՝ միջնորդ դատարանը որպես վեճը լուծող մարմին և միջնորդ դատարանի կազմը՝ որպես միջնորդական քննությունը միանձնյա իրականացնող միջնորդ դատավոր, իսկ կոլեգիալ քննության պարագայում՝ մի քանի միջնորդ դատավորների: Իզուր չէ, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանվում էր, որ միջնորդ դատավորների թիվը որոշվում է կողմերի միջնորդ համաձայնությամբ, սակայն բոլոր դեպքերում այն պետք է լինի կենտ: Եթե կողմերի միջև համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, միջնորդ դատարանը ստեղծվում է երեք դատավորի կազմով: Վեճերը միանձնյա լուծելիս միջնորդ դատավորը հանդես է գալիս որպես միջնորդ դատարան:

կառակ պարագայում նման ձևակերպումով ստացվում է վեճը լուծող միանձնյա արբիտրի կամ արբիտրների կազմի կազմ, ինչն առնվազն իրավաբանական անհեթեթություն է: Հաշվի առնելով բերված փաստարկները, *անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում և «արբիտրաժային տրիբունալ»-ի փոխարեն օգտագործել «արբիտրաժային դատարան» և «արբիտրաժային դատարանի կազմ» եզրույթները, որոնցից առաջինը կնշանակի արբիտրաժային վարույթն իրականացնող մարմին կամ հաստատություն, իսկ երկրորդը՝ գործը միանձնյա քննող արբիտր կամ արբիտրների կոլեգիա (կազմ):*

Առևտրային արբիտրաժի գործունեությունը առևտրատնտեսական հարաբերություններից կամ օտարերկրյա անձանց (տարրի) մասնակցությամբ առևտրատնտեսական գործարքներից բխող վեճերի լուծման համար նախատեսված կառուցակարգ է, որի միջոցով իրականացվում է այդ հարաբերությունների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված կիրառման ենթակա իրավունքին համապատասխան գործեր քննելով և լուծելով:

### **§3. Առևտրային արբիտրաժի իրավական բնութագիրը**

Առևտրային արբիտրաժի՝ որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինքնուրույն ձևի, իրավաբանական բնութագրության հետ կապված խնդրահարույց հարցերը, որ գոյություն ունեն մինչ այսօր, սկիզբ են առնում XIX դարասկզբին մոնոպոլիստական կապիտալիզմի ձևավորման շրջանում արտաքին առևտրային արբիտրաժների առաջացման պահից, երբ քաղաքացիական դատավարությունը չէր կարող համապատասխանել արտաքին և ներքին առևտրային շրջանառության զարգացման ժամանակակից միտումներին<sup>1</sup>: Առևտրային արբիտրաժի կազմավորման և զարգաց-

<sup>1</sup> Տե՛ս Дубр.А. Диссертация Международный Коммерческий Арбитраж. М., 1998, էջ 42:

ման գործընթացի վրա տարբեր երկրների իրավական համակարգերի ցուցաբերած ազդեցությունը, ինչպես նաև այդ ազդեցությամբ պայմանավորված իրավական հետևանքների առաջացումը հանդիսանում են արբիտրաժի իրավաբանական էության բացահայտման արդիականության պատճառներից մեկը, քանի որ տարբեր պետությունների արբիտրաժային օրենսդրությունները ունեն իրենց առանձնահատկությունները՝ ելնելով ազգային ավանդույթներից, հասարակական կյանքում նյութական պայմանների և գործոնների զարգացածության աստիճանից: Այդ իսկ պատճառով, ներկայումս, տարբեր պետությունների արբիտրաժային օրենսդրությունները չեն համընկնում և հանդես չեն գալիս նույնականությամբ:

Առևտրային արբիտրաժին նվիրված մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է արբիտրաժի իրավական բնույթի, նրա հատկանիշների վերաբերյալ չորս հիմնական տեսություն՝ պայմանագրային (կոնսենսուալ), դատավարական (պրոցեսուալ), խառը (հիբրիդային) և ինքնավարության (ավտոնոմ) տեսությունները:

Հարկ է նշել, որ հայրենական իրավաբաններից ոչ մեկն այս ուղղությամբ լուրջ աշխատանքներ չի կատարել: Արբիտրաժի ինստիտուտի իրավաբանական վերլուծությունների շարքում գերիշխում են արտասահմանյան հեղինակների աշխատությունները<sup>1</sup>:

Ռուս տեսաբաններից արբիտրաժի իրավաբանական էության, նրա բնութագրիչ հատկանիշների բացահայտման ուղղությամբ 20-րդ դարասկզբին որոշակի ինքնուրույն հետազոտություններ է կատարել Ա.Ֆ.Վոլկովը<sup>2</sup>: Ռուս գիտնականների հետագա աշխատությունները միայն արբիտրաժի վերաբերյալ այս կամ այն տեսության մեխանիկական շարադրանքից բացի, ոչ մի նոր բան չէին բացա-

<sup>1</sup> Արտասահմանյան գրականության մեջ միջազգային առևտրային արբիտրաժի իրավաբանական էության վերաբերյալ ամենատարբեր տեսություններում վերաբերող աշխատությունները տեղ են գտել.

Adam S. Jurisdiction Problems in International Commercial Arbitration, A Study of Belgian Dutch, Sweden, Swiss, US, West German Law. Zurich. 1989 և Julian D.M. Applicable Law in Int. Com. Arb. New York. 1979. 51-61 էջ:

<sup>2</sup> Տե՛ս Վոլկով Ա.Փ. Торговые третейские суды. Историко-догматические исследования. Сп 1913.

հայտում<sup>1</sup>: Դրանցում միջազգային արբիտրաժի էությունը բացահայտող հայեցակարգերը կառուցված էին արբիտրաժի վերաբերյալ այս կամ այն տեսության կողմնակիցների առաջ քաշած փաստերի համեմատության վրա, որոնք օգտագործվում էին արբիտրաժի և իրավունքի այլ ինստիտուտների նույնականությունը հաստատելու համար: Ընդ որում, այդ աշխատությունները առևտրային արբիտրաժի ինստիտուտի համակողմանի վերլուծություններ չէին պարունակում, այլ ուղղված էին զուտ փաստերի մեխանիկական շարադրմանը: Հիշատակված հետազոտությունների գիտական արժեքավորումը հիմնականում կայանում է տարբեր երկրներում արբիտրաժային պրակտիկայի ուսումնասիրության և կոնկրետ դատական գործերի վերլուծության մեջ, ինչը, իհարկե չի կարելի թերագնահատել:

Առևտրային արբիտրաժի **պայմանագրային տեսության** կողմնակիցներն այն դիտարկում են որպես պայմանագրային – իրավական ինստիտուտ, որի խնդիրն է արբիտրաժային քննությունը հավուր պատշաճի կազմակերպելը, իսկ վերջնական նպատակը՝ գործն ըստ էության լուծելը<sup>2</sup>: Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պարտավորվում են անվերապահորեն կատարել արբիտրաժային դատարանի վճիռները (արբիտրաժային որոշումները), ինչը, նույնպես, արբիտրաժային վճռի պայմանագրային բնույթի հավաստիքն է: Այս պատճառով էլ, արբիտրաժային վճիռը, որ կողմերի միջև նոր իրավահարաբերություններ է հաստատում (ստեղծում), վերջ է դնում արբիտրաժային համաձայնությամբ կողմերի միջև առաջացած հարաբերություններին: Այսինքն, պայմանագրային մեկ ինստիտուտից՝ արբիտրաժային համաձայնությունից, ածանցվում է մեկ այլ ինստիտուտ՝ արբիտրաժային վճիռը: Արբիտրաժային վճռի

<sup>1</sup> Տե՛ս Кейлин А.Д. Судостроительство и гражданский процесс капиталистических государств. Арбитраж 1961, Лебедев М. Торговый арбитраж. М. 1965, Лунц Л.А. Международный гражданский процесс М. 1966, Минаков А.И. Арбитражные соглашения и практика рассмотрения внешнеэкономических споров. М., 1985. Хлестова Н.О. Арбитраж в стран-членов СЭВ. М. 1980.

<sup>2</sup> Տե՛ս Лебедев С.Н. Международный торговый арбитраж. М., 1965, 45-55 էջերը:



օրինականությունը հնարավոր է միայն օրինական արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում: Ըստ որում, արբիտրաժային համաձայնության կնքման պահին արբիտրաժային վճռի կայացման հնարավորությունն անորոշ է, կրում է վերացական (ապստրակտ) բնույթ և կարող է որոշակի դառնալ միայն արբիտրաժային իրավահարաբերությունների առաջացման համար հիմք հանդիսացող փաստերի առկայության պարագայում: Այսինքն, արբիտրաժային համաձայնությունն արբիտրաժային իրավահարաբերությունների առաջացման նախադրյալ է, որը հնարավորություն է ընձեռում խախտված կամ վիճարկվող իրավունքների ենթադրյալ կրողներին ձեռնամուխ լինել արբիտրաժային կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը: Պայմանագրային տեսության կողմնակիցների կարծիքով, արբիտրաժային համաձայնությունը, ըստ էության, քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը կողմերի միջև որոշակի իրավահարաբերություններ է առաջացնում, որոնք համաձայնությունը կնքելու պահին զուտ քաղաքացիաիրավական բնույթի են: Արբիտրաժային համաձայնությունը կողմերի համար առաջացնում է երկկողմ կամ բազմակողմ գործարքի բոլոր իրավական հետևանքները, որոնք առևտրային արբիտրաժի ոլորտում արտահայտվում են նյութական և դատավարական իրավունքներից օգտվելու, ինչպես նաև նյութական և դատավարական պարտականություններ կրելու մեջ: Ըստ որում, իրավունքներն ու պարտականությունները կարող են արտացոլվել նաև արբիտրաժային վճռում, որը ենթակա է պարտադիր կատարման:

Արբիտրաժային համաձայնությունը կողմերի ազատ կամարտահայտության դրսևորումն է: Իսկ արբիտրաժային վճիռը կողմերի կամարտահայտման արդյունք հանդիսացող վերջնական ակտն է, եզրափակիչ փուլը, որ սկիզբ է առնում արբիտրաժային համաձայնությունից: Այսինքն, արբիտրաժային համաձայնությունը և արբիտրաժային որոշումը միևնույն գործընթացի երկու տարբեր մասն են կազմում՝ տարբեր փուլերը, որոնք պայմանականորեն կարող ենք անվանակոչել արբիտրաժային համաձայնության՝ այսինքն պայմանագրի կնքման և արբիտրաժային վճռի՝ պայմանագրից բխող պարտավորությունների վերջնական կատարման փուլեր:

Յետևում է, որ ըստ այս տեսության կողմնակիցների, արբիտրաժը պայմանագրային իրավահարաբերությունների արդյունք է հանդիսանում, որը ենթադրում է արբիտրաժի կազմակերպման և արդյունքում կայացված արբիտրաժային վճռով պայմանավորված պարտավորությունների կատարում: Արբիտրաժային որոշումը (վճիռը) ածանցվում է արբիտրաժային համաձայնությունից, և, առանց վերջինիս հնարավոր չէ պատկերացնել արբիտրաժային որոշման գոյությունն այնպես, ինչպես ածանցյալի գոյությունն առանց ածանցող երևույթի: Յետևաբար, արբիտրաժային վճիռը նույնպես կրում է պայմանագրային բնույթ: Վերջապես չպետք է մոռանալ, որ կողմերը, արբիտրաժային համաձայնությամբ, պարտավորվում են ճանաչել և կատարել արբիտրաժի արդյունքում ընդունված ակտը, ինչը վերջինիս պայմանագրայնության ամենավառ ապացույցն է:

Պայմանագրային տեսության շրջանակներում առևտրային արբիտրաժի ուսումնասիրությունը հանգեցնում է արբիտրաժի և քաղաքացիաիրավական պայմանագրի նույնացման, որտեղ մենք գործ ունենք մեկ կամ մի քանի երկկողմ կամ բազմակողմ գործարքներից բխող իրավահարաբերությունների համակցության հետ՝ ուղղված կողմերի միջև առաջացած վեճը քննելուն և լուծելուն:

**Դատավարական** (պրոցեսուալ) տեսության համաձայն առևտրային արբիտրաժը դիտարկվում է որպես արդարադատության իրականացման հատուկ (յուրօրինակ) ձև կամ եղանակ<sup>1</sup>: Արբիտրաժային համաձայնությանն այստեղ բացարձակապես դատավարական բնույթ է հաղորդվում, և դիտարկվում է որպես արբիտրաժային կարգով վեճերի լուծման ողջ ինստիտուտի շարժիչ ուժ: Նման հետևությունն ամփոփափելիորեն արբիտրաժային համաձայնության և արբիտրաժային վճռի ինստիտուտների մեկնաբանման շուրջ տարակարծությունների տեղիք է տալիս, քանի որ, ըստ այս տեսության կողմնակիցների, արբիտրաժային համաձայնությունում արտահայտված է վեճն արբիտրաժային կարգով լուծելու

<sup>1</sup> St'e Bernard A.L'arbitrage volontarre en droit prive. Brussel, 1937, էջ 283, Weiss A.De l'exeeution dez sentences en France- Revue «Lapradelle», 1906 N 4, էջ41-43 և Comu et Foyer Procedure civile. Paris, 1958, էջ 47-49:

(արբիտրաժի լուծմանը հանձնելու) մասին կողմերի կամքը, իսկ արբիտրաժային վճիռն արտացոլվում է միայն արբիտրների կամքը, որոնք գործում են կողմերից անկախ: Յետևաբար, եթե արբիտրներն իրականացնում են պետական դատարաններին բնորոշ գործառնություն, այն է՝ քաղաքացիաիրավական վեճերի լուծումը, նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառումը և այլն, ուստի պրոցեսուալիստ-դատավարագետները գտնում են, որ արբիտրները, ինչպես և դատավորները, իրականացնում են հանրային-իրավական գործառնություն (արդարադատություն): Ինչպես նշում է հայտնի դատավարագետ Ա.Պիլլեն. «Мотивы вынесения арбитражного решения не зависят от мотивов заключения арбитражного соглашения»<sup>1</sup>: Խնդիրը նրանում է, որ արդարադատություն իրականացնելու հանրային-իրավական գործառնությամբ պետության բացառիկ մենաշնորհն է: Այս հարցի լուծումը դատավարական տեսության կողմնակիցները տեսնում են հետևյալում. նրանք գտնում են, որ պետությունը հանրային-իրավական գործառնության որոշ լիազորություններ կարող է պատվիրակել արբիտրաժին, պայմանով, որպեսզի վերջինիս գործունեությունն անվերապահորեն համապատասխանի ազգային իրավունքում արտացոլված պետության սուվերեն կամքին: Դատավորների և արբիտրների կարգավիճակների միջև միակ տարբերությունը, որ ընդունում են գիտնականները, նրանց նշանակման կարգի մեջ է: Դատավորները նշանակվում են պետության կողմից, իսկ արբիտրներին ընտրում (նշանակում) են կողմերը՝ պայմանգրի (արբիտրաժային համաձայնության) դրույթներին համապատասխան: Յարկ է նշել, որ արբիտրաժի դատավարական տեսությունը քննադատության չի դիմանում: Մեր կարծիքով, այս դեպքում անտեսվում կամ անուշադրության է մատնվում այն հանգամանքը, որ պետության անունից արդարադատություն իրականացնելու և վճիռ կայացնելու իրավազորությունը բացարձակապես դատարանների մենաշնորհն է: Արբիտրաժային (միջնորդ) դատարանները պետության անունից վճիռ չեն կա-

<sup>1</sup> St'u Pillet A. Traite de droit in international prive. Paris, 1924, էջ 534: Մեջբերումը Кейлин А.Д. М.К.А, էջ 43:

յացնում, ուստի այստեղ պետության կողմից առանձին գործառնությունների պատվիրակման մասին խոսք լինել չի կարող:

**Խառը** (հիբրիդային) տեսությունը արբիտրաժի պայմանագրային և դատավարական տեսությունների խառնուրդն է: Այս տեսության առավելությունը կայանում է նրանում, որ այն իր ընկալունակությամբ համապատասխանում է միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման կառուցակարգերի զարգացման ժամանակակից միտումներին: Այստեղ շեշտը դրվում է առևտրային արբիտրաժի այն իրավաբանական առանձնահատկությունների վրա, որոնք հանդիսանում են միջազգային և ներքին արբիտրաժների տարբերակիչներ:

Խառը տեսության շրջանակներում պայմանագրային և դատավարական տարրերի համակցումը պայմանավորված էր միջազգային առևտրատնտեսական վեճերի լուծման պրակտիկայում ձևավորված իրավիճակով, որը այս տեսության ստեղծման օբյեկտիվ հիմքն էր կազմում: Խառը տեսության ստեղծումը թելադրված էր առևտրային վեճերի լուծման միջազգային պրակտիկայով, այլ ոչ թե ներպետական սուբյեկտիվ-իրավական գործոնների ազդեցությամբ: Բանը նրանում է, որ արբիտրաժի պայմանագրային և դատավարական տեսությունները առանձին-առանձին չէին կարող արտացոլել առևտրային արբիտրաժի իրավաբանական բնութագիրը, նրա իրական էությունը և զուրկ չէին նաև խոցելի տեղերից: Այդ իսկ պատճառով, եթե պայմանագրային և պրոցեսուալ տեսություններում հիմնական հետևություններն ու եզրահանգումները ածանցվում էին մեկ կամ մի քանի երկրների օրենսդրության և ազգային իրավունքի զարգացման առանձնահատկություններից, ապա խառը տեսությունն արտացոլում էր միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում տարբեր իրավական համակարգերի համընդհանուր փոխգործակցությունը: Քանի որ արբիտրաժի խառը տեսությունը ներառում է ինչպես զուտ դատավարական, այնպես էլ պայմանագրային իրավահարաբերությունների հետ կապված հիմնական ինստիտուտները, ապա առավել նպատակահարմար է այն դիտարկելիս սահմանափակվել այս տեսության անկյունաքարային, պայմանագրային և դատավարական տարրերի միավորման հիմնարար

դրույթների վերլուծությամբ: Արբիտրաժի խառը տեսությունում պայմանագրային և դատավարական տարրերի միավորումը մեզ իրավունք է վերապահում առևտրային արբիտրաժը դիտարկել որպես հիբրիդային (sui generis) ինստիտուտ: Խառը տեսության անշեղորեն հետևելու դեպքում արբիտրաժային վարույթի մասնակիցների համար առաջացող իրավական հետևանքների վերլուծությունները նույնպես փոխառնված են պայմանագրային և դատավարական տեսություններից: Ըստ որում, այս տեսության շրջանակներում այդ հետևանքների հակասության պարագայում առավելությունը տրվում է խառը տեսության անկյունաքարը հանդիսացող կամքի ինքնավարության սկզբունքին ամբողջությամբ համապատասխանող իրավական հետևանքների առաջացմանը:

Իրավաբանական գրականության մեջ արբիտրաժի խառը տեսության առաջացումը կապում են շվեյցարացի պրոֆեսոր Ջ.Սեսսի-Յոլլի՝ ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի ինստիտուտի 44-րդ նստաշրջանում (1952թ. ապրիլ) արված զեկույցի հետ, որտեղ նա նշել էր, որ չնայած արբիտրաժի գործառնությունը հիմնված է արբիտրաժային համաձայնությունում արտացոլված՝ կողմերի համընկնող կամարտահայտության վրա, սակայն, ելնելով sui generis ինստիտուտի իրավաբանական էությունից, այն չի կարող բացարձակապես կարգավորվել միայն օրենքով: Այս ինստիտուտի իրավական կարգավորման հարցի հանգուցալուծման համար անհրաժեշտ է կիրառել թե՛ նյութական (պայմանագրային) իրավունքի և թե՛ դատավարական իրավունքի նորմերը՝ չանտեսելով նաև միջազգային առևտրատնտեսական պրակտիկայում գործող սովորույթները, որոնք հասարակական հարաբերությունների գործում բավական կարգավորիչ են հանդիսանում:

**Ինքնավար** (ավտոնոմ) տեսության համաձայն, առևտրային արբիտրաժը դիտարկվում է, որպես ինքնավար երևույթ, որի իրավաբանական բնութագիրը նախևառաջ թելադրված է այս ինստիտուտի առջև դրված նպատակներով և գործառնության արդյունավետությամբ: Այս տեսության առաջացումը պայմանավորված էր խառը տեսությունում առկա անճշտություններով և անորոշություն-

ներով<sup>1</sup>: Ինքնավարության տեսության կողմնակիցները, առաջին տեղ մղելով արբիտրաժային քննության արագությունն ու ճկունությունը, անուշադրության են մատնում արբիտրաժային վճիռների իրագործելիության կամ, այլ կերպ ասած՝ հարկադիր կատարումն ապահովելու հետ կապված հարցերը: Այս տեսության կողմնակիցները գտնում են, որ արբիտրաժի գործառնության կատարելագործումն ուղղակիորեն կախված է ոչ թե ազգային կամ վերազգային իրավական համակարգերի զարգացումից, այլ միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների մասնակիցների (սուբյեկտների) կամքից և այս ոլորտում կատարվող պրագմատիկ փորձերից, դրանով իսկ նախանշելով միջազգային առևտրային արբիտրաժի հիմնական առաքելությունը (այն, ինչի համար էլ հենց ստեղծվել է միջազգային արբիտրաժը), այն է՝ միջազգային բնականոն գործառնությունը և անխափան զարգացմանը նպաստելը: Այդ իսկ պատճառով առևտրային արբիտրաժը չի կարող դիտարկվել պայմանագրային կամ դատավարական տեսությունների շրջանակներում, և նույնիսկ չի հանդիսանում հիբրիդային (sui generis) ինստիտուտ, այլ իրենից ներկայացնում է առևտրատնտեսական վեճերի լուծման մի յուրօրինակ համակարգ, որի ստեղծումը թելադրված է միջազգային և ներքին առևտրային շրջանառության պահանջներով և ծառայում է վերջինիս բնականոն զարգացմանն ու բարգավաճմանը: Այսինքն, այս տեսության կողմնակիցները առևտրային արբիտրաժի համար որոշիչ էին համարում կամքի ինքնավարությունը, իսկ արբիտրաժի գործառնությունն էլ պայմանավորում կողմերի կամարտահայտությամբ: Այսուհանդերձ, ինքնավարության տեսության հետևորդները առևտրային արբիտրաժը համարում են ազգային իրավական համակարգերից վեր կանգնած ինստիտուտ, որովհետև դատավարության կողմերն օժտված են կիրառման ենթակա նյութական և դատավարական նորմերի ազատ ընտրության իրավունքով: Չնայած այս տեսության արտաքին գրավչությանը, պետք է նշել, որ այն ևս քննադատության չի դիմանում: Ինքնավար-

<sup>1</sup> St'u Минаков А.И. Арбитражные соглашения и практика рассмотрения внешнеэкономических споров. М.,1985, 91-98 էջերը:

րության տեսությունը առևտրային արբիտրաժի զարգացումը դուրս է բերում իրավունքի սահմաններից, այն կապելով միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների սուբյեկտների կամ գործարարների կամքին ու կատարվող պրագմատիկ փորձերին: Ենթադրյալ է, գործնականում հնարավոր է արբիտրաժային կարգով առևտրատնտեսական վեճերի ex aequo et bono («ըստ արդարացիության և բարի խղճի») լուծում, երբ արբիտրաժային քննության մասնակիցները վեր են կանգնում պոզիտիվ իրավունքից, սակայն այս դեպքում խնդիրներ կարող են առաջանալ՝ կապված այլ երկրներում արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման հետ: Այս տեսության առաջացումը վաղաժամ է, քանի որ հասարակությունը դեռևս պատրաստ չէ հասարակական հարաբերությունները առանց իրավունքի կամ օրենսդրության կարգավորելուն: Եթե տեսականորեն ընդունենք պետության անհետացման փաստը, ապա իրավունքը երբեք չի կարող վերանալ, քանի որ վերջինս գոյություն ունի անկախ օրենսդրությունից, և օբյեկտիվորեն արտացոլում է հասարակության մեջ առկա հարաբերությունները<sup>1</sup>: Ինքնավարության հետ կապված՝ կարելի է նշել նաև արբիտրաժի իրավաբանական բնույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղ գտած ժխտողական հայացքները, որոնց վառ արտահայտողն է ֆրանսիացի իրավագետ Ռենե Դավիդը. «Արբիտրաժն իրավական երևույթ չէ: Այն հակադրվում է իրավունքին, այս պատճառով էլ իրավաբաններին չի հաջողվում հստակորեն լուսաբանել արբիտրաժի իրական բովանդակությունը»<sup>2</sup>:

Ներկայումս, արբիտրաժի էության վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունների, միջազգային առևտրային արբիտրաժային դատարանների որոշումներում պարունակվող եզրահանգումների, ինչպես նաև արտասահմանյան երկրների օրենսդրության և տարբեր իրավական համակարգերի վերլուծությունների համակցությունն անխուսափելիորեն անորոշություն է մտցնում իրավահարաբերությունների այս ոլորտում, դրանով իսկ խոչընդոտելով արբիտ-

րաժի՝ որպես առևտրատնտեսական վեճերի լուծման ինստիտուտի արդյունավետ զարգացմանը: Չի կարելի կուրորեն հետևել արբիտրաժի վերաբերյալ այս կամ այն տեսությանը, ինչը չպետք է կրի նաև առաջ քաշված հայեցակարգերը մերժող, բացառող բնույթ, այլ խարսխվի հիմնավորված տեսական վերլուծությունների վրա, որոնք մեկ կողմից կկազմեն արբիտրաժի գիտության մեթոդոլոգիական հիմքը, իսկ մյուս կողմից՝ կհանդիսանան այդ բոլոր հայեցակարգային մոտեցումներում պարունակվող գործնական եզրահանգումների և անքննադատելի փաստերի ընտրանի: Պայմանագրային և դատավարական տեսությունների միջև տեսական և գործնական հակասությունների առկայությունը այս խնդրի լուծման համար գիտական մեթոդոլոգիական հիմքի բացակայության ամենավառ ապացույցն է:

Առևտրային արբիտրաժը բացարձակապես պայմանագրային-իրավական ինստիտուտ, որում գերակշռում են ստատիկ տարրերը, դիտարկելը գրեթե ամբողջությամբ հակասում է արբիտրաժի՝ որպես առևտրատնտեսական վեճերի լուծման կառուցակարգի էությանը: Արբիտրաժը միայն այն ժամանակ է դառնում կողմերի միջև առկա առավել արդյունավետ և նպատակահարմար կառուցակարգ, երբ այն հիմնվում է ոչ թե իրավական կոշտ նորմերի ու ընթացակարգային կանոնների վրա, այլ աչքի է ընկնում առաջացած տարածայնությունների հարթմանն ուղղված անհատական մոտեցումներով: Արբիտրաժում առավելապես գերակշռում են հենց դինամիկ, և ոչ թե ստատիկ տարրերն ու գործոնները: Այդ իսկ պատճառով այս ինստիտուտի իրավական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ թե արբիտրաժային կարգով վեճերի լուծմանն ուղղված հստակ իրավական կանոններ, նորմեր սահմանելը, որոնք, թեկուզև կարող են դիսպոզիտիվ բնույթի լինել, այլ զուտ արբիտրաժի ընթացակարգային կանոնակարգումը, որի շրջանակներում ազատորեն կգործեն թե՛ դատավարության կողմերը և թե՛ արբիտրները, ինչը կնպաստի գործի օբյեկտիվ հանգուցալուծմանը:

Այսպիսով, իմաստազուրկ է արբիտրաժի ինստիտուտի հետազոտմանը մոտենալ զուտ պայմանագրային իրավունքի դիրքերից և արբիտրաժային համաձայնությունը նույնացնել քաղաքացիաիրա-

<sup>1</sup> Տե՛ս Нерсисянц, Государство и право... М., 1999, IX:

<sup>2</sup> Տե՛ս Rene David. Arbitration in international trade. Kluwer. 1985թ., էջ 56:

վական պայմանագրերի կամ դրանցում պարունակվող այլ պայմանների հետ: Արբիտրաժային համաձայնությունը անհրաժեշտ է դիտարկել արբիտրաժային քննության ընթացակարգային առանձնահատկությունների և արբիտրաժային վճռի համակցության մեջ: Իրավաբանորեն ճիշտ, օրինական արբիտրաժային համաձայնության կնքումը դեռևս չի նշանակում, որ պետական մարմինների ներգործության շնորհիվ այն ձեռք կբերի պարտադիրության հատկանիշ և կկատարվի հարկադրաբար (օրինակ՝ դատարանի կողմից արբիտրաժին հարկադրելը և այլն): Փաստորեն, վեճը արբիտրաժային կարգով լուծելու մասին կողմերի կամքը, ձևակերպվելով արբիտրաժային համաձայնությունում, իր վերջնական արտահայտությունն է գտնում հենց արբիտրաժային վարույթում, երբ նրանք ձեռնամուխ են լինում արբիտրաժի իրականացմանը:

Առևտրային արբիտրաժը զուտ դատավարական տեսության շրջանակներում դիտարկելը նույնպես դատապարտված է անհաջողության: Չնայած նրան, որ արբիտրաժային քննությունն ընթացակարգային-հմաստային առումով գրեթե համընկնում է քաղաքացիական դատավարությանը, կրում է անալոգիկ բնույթ, բայց հանդես է գալիս ոչ թե որպես նույնական երևույթ, այլ աչքի է ընկնում նմանատիպությամբ: Արբիտրաժային համաձայնությունը, հանդես գալով որպես քաղաքացիաիրավական գործարք, իրավաբանորեն արտահայտում է վեճն արբիտրաժային կարգով լուծելու մասին կողմերի կամքը, իսկ բուն արբիտրաժային քննությամբ վերջ է դրվում կողմերի միջև քաղաքացիաիրավական հարաբերություններին: Տարբեր երկրների օրենսդրություններում պարունակվող՝ արբիտրաժային կարգավորմանն ուղղված նորմերը, որոնք հաճախ կրկնօրինակում են քաղաքացիական դատավարության կանոնները, առևտրային արբիտրաժում հրամայական (ինպերատիվ) բնույթ չեն կրում, քանի որ այստեղ գերիշխում է կամքի ինքնավարության սկզբունքը: Արբիտրաժում կամքի ինքնավարության սկզբունքն արտահայտվում է թե՛ առանձին ընթացակարգային հարցերի լուծման, թե՛ կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրության հնարավորությամբ, ինչը սկզբունքորեն տարբերակում է քաղաքացիական դատավարությունում կողմերի ու դատավորների և արբիտրա-

ժային վարույթում կողմերի ու արբիտրների կարգավիճակները: Սակայն այս սկզբունքն էլ է ենթակա որոշակի սահմանափակումների՝ պայմանավորված հանրային կարգով, ինչպես նաև ելնելով գործի քննության արդարացիության և օբյեկտիվության նկատառումներից: Այս պատճառով էլ ինքնավարության տեսության շրջանակներում կողմերի կամքի ինքնավարության սկզբունքի մեկնաբանությունները և վերլուծությունները չեն կարող ամբողջությամբ դրվել արբիտրաժի ինստիտուտի իրավաբանական բնութագրության հիմքում:

Առևտրային արբիտրաժի իրավական բնութագրման հիմքում, որպես առավել տրամաբանական և ներքին հակասություններից զուրկ ուսմունքի, առավել նպատակահարմար է դնել արբիտրաժի խառը (հիբրիդային) տեսությունը: Սակայն, այն իր մեջ պետք է համադրի ոչ միայն պայմանագրային և դատավարական, այլև ինքնավար տեսության տարրերը: Միայն այս պարագայում է հնարավոր լուսաբանել առևտրային արբիտրաժի ինստիտուցիոնալ-կառուցվածքային բոլոր առանձնահատկությունները: Եթե արբիտրաժային իրավունքի գիտության մեջ խառը տեսության տակ, որպես կանոն, հասկանում են դատավարական և պայմանագրային տեսությունների առանձին տարրերի համակցությունը, ապա, մեր կարծիքով, սրանց պետք է գումարել նաև ավտոնոմ տեսության առանձին դրույթներ: Ելնելով ներկայացվող մոտեցումից, կարող ենք ասել, որ **առևտրային արբիտրաժը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինքնուրույն ձև է, որն ունի պայմանագրային որոշակի տարրեր և աչքի է ընկնում հարաբերական ինքնուրույնությամբ:**

Ժամանակակից գիտական մեկնաբանություններում այս գաղափարը չափազանց պարզ և մակերեսային է ներկայացվում, ինչի հետևանքով արբիտրաժի բարդ և բազմաբովանդակ էությունն ամբողջությամբ չի լուսաբանվում: Անհրաժեշտ է խոր վերլուծությունների ենթարկել արբիտրաժային քննության բոլոր տարրերը, բոլոր ինստիտուտները, այլ ոչ թե սահմանափակվել անկյունաքարային երկու ինստիտուտների, այն է արբիտրաժային համաձայնության և արբիտրաժային վճիռների ուսումնասիրությամբ:

#### **§4. Առևտրային արբիտրաժը և առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային եղանակները**

Հարկ է նշել, որ առևտրային արբիտրաժում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն արբիտրաժային քննության ձևով, այլև արբիտրաժային պրակտիկայում ներկայումս լայնորեն կիրառվող՝ առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառմամբ: Ընդհանրապես, արբիտրաժային քննությունը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլընտրանքային ձև է, որը հնարավորություն է տալիս կողմերին, ելնելով վիճելի իրավահարաբերությունների, խախտված կամ վիճարկվող իրավունքի բնույթից և այլ հանգամանքներից, շրջանցելով արդարադատություն իրականացնող պետական դատական համակարգը, արագ և արդյունավետ լուծել առաջացած վեճը: Այսինքն, արբիտրաժային կարգով գործերի քննությունը և լուծումը բավական գործուն այլընտրանք է, եթե համեմատելու լինենք սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևի հետ: Սակայն, չպետք է մոռանալ, որ ներկայումս միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող և արբիտրաժային կարգով լուծվող վեճերը զգալիորեն գերազանցում են դատական կարգով լուծվող վեճերին: Ուստի, հիմք ընդունելով միջազգային իրավաբանական պրակտիկայում վերջինիս լայն կիրառության հանգամանքը, կարող ենք ասել, որ առևտրային արբիտրաժը հանդիսանում է միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման հիմնական միջոց: Իսկ արբիտրաժային կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ճկունությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն իրավունքների պաշտպանության դատական ձևի, որտեղ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է քաղաքացիական և վարչական դատավարության կարգով, այստեղ արբիտրաժային քննությունից բացի հնարավոր է վեճը լուծել այլ կարգով՝ վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառմամբ:

Արբիտրաժային քննությունը պետք է տարբերել առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային եղանակներից, որոնք արբիտրաժային հաստատությունների կանոնակարգերով նախատեսված հատուկ ծառայություններ են՝ ուղղված մինչ արբիտրաժային քննությունն սկսելը ծագած վեճն այլ կարգով լուծելուն: Ուսումնասիրելով առաջատար արբիտրաժային հաստատությունների կանոնակարգերը՝ կարելի առանձնացնել հիմնականում վեճերի լուծման երեք եղանակ՝ մեդիացիա, կոնսիլիացիա (տառացի թարգմանությամբ՝ հաշտեցնող ընթացակարգ) և մինի-պրոցեսներ: Որոշ տեսաբաններ (օր.՝ Ե. Բ. Բրունցեվա<sup>1</sup>) վեճերի լուծման այլընտրանքային եղանակների շարքում են դասում նաև բանակցությունները, սակայն վերջինս սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի շրջանակներում դիտարկելն այդքան էլ ճիշտ չէ: Ծիշտ է, բանակցությունը ծագած վեճի լուծման այլընտրանքային եղանակ է, սակայն այստեղ կողմերը գործում են ինքնուրույն, արբիտրաժային հաստատությունից անկախ: Բանակցությունները հաճախ են կիրառվում առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման համար, սակայն այս հանգամանքը չպետք է շփոթնունք առաջացնի<sup>2</sup>: Առևտրային պայմանագրերում հաճախ

<sup>1</sup> Ст'я Брунцева Е.Б. Международный Коммерческий Арбитраж. СПб. 2001, էջ 20:

<sup>2</sup> Դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ ծագած վեճի լուծման նպատակով մինչև դատարան կամ արբիտրաժ դիմելը կողմերը չփորձեն առաջացած տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Բացի այդ, կան առևտրային կնքվող պայմանագրերում մինչև արբիտրաժ կամ դատարան դիմելը առաջացած տարաձայնությունները (ծագած վեճերը) բանակցությունների միջոցով կարգավորելու մասին պարտադիր դրույթ են նախատեսում: Դա տարաձայնությունների հարթման մինչարբիտրաժային կամ մինչդատական միջոց է: Այս պահանջը մի շարք պետություններում նույնիսկ օրենսդրական ձևակերպում է ստացել: Կամ, օրինակ՝ ճապոնիայում մինչ դատարան դիմելը առաջացած տարաձայնությունների հարթման նպատակով գործով չչահագրգռված անձի մասնակցությամբ բանակցություններ վարելու մասին օրենսդրորեն ձևակերպված պահանջ է գործում: Ընդ որում, վերջինս բանակցություններին մասնակցում է դիտորդի կարգավիճակով, այսինքն՝ չի ղեկավարում կամ անմիջական մասնակցություն չի ունենում բանակցությունների ընթացքին:

Բայց նույնիսկ այնպիսի երկրներում, որտեղ օրենսդրորեն ձևակերպված նման պահանջներ չեն գործում, դատարանները խրախուսում են բանակ-

վեճերի լուծման դատական կամ արբիտրաժային կարգերի նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման մասին նշումներ են պարունակվում: Պետք է նշել նաև, որ առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոցներից միայն բանակցություններն են լայն ճանաչում և կիրառում ստացել: Միջազգային և ներքին առևտրատնտեսական հարաբերություններում վեճերի կարգավորման նպատակով այլընտրանքային մյուս միջոցները հազվադեպ են կիրառվում: Առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոցները լայնորեն կիրառվում են ԱՄՆ-ում, որտեղ մեդիացիոն ծառայություններ մատուցող բազմաթիվ կազմակերպություններ են գործում, որտեղ միմի-պրոցեսների իրականացման նպատակով պաշտոնաթող դատավորներ տրամադրող կազմակերպություններ գոյություն ունեն, որտեղ դատարանները որոշ գործեր մինչ դատական կարգով քննելը պարտադիր կարգով ուղարկում են մեդիացիայի (հարկադիր մեդիացիա)<sup>1</sup>:

Ներկայումս ինչպես ԱՄՆ-ի արբիտրաժային ասոցիացիան (ABA), այնպես մի շարք հեղինակավոր արբիտրաժային կենտրոններ ընդունել են մեդիացիան, կոնսիլիացիան և միմի-պրոցեսները կարգավորող հատուկ կանոնակարգեր: 1996 թվականից սկսած այդպիսի կանոնակարգ է գործում Ինտելեկտուալ սեփականության

---

ցությունների միջոցով փոխհամաձայնություն ձեռք բերելը: Ընդ որում, կողմերը կարող են հաշտություն կնքել ինչպես մինչ դատավարությունն սկսելը, այնպես էլ դատավարությունը սկսելուց հետո ԶԶ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 7-րդ կետը գործի վարույթի կարճման հիմք է համարում դատարանի կողմից կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելը: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության կամ արբիտրաժի, բանակցությունները հատուկ դատավարական կամ ընթացակարգային նորմերով (կանոններով) չեն կարգավորվում: Դրանց իրականացման կարգն ու բովանդակությունը ամբողջովին կախված են կողմերի կամարտահայտությունից և վեճի բնույթից: Այն դեպքերում, երբ կողմերը պայմանագրում արբիտրաժային վերապահում կամ հնարավոր վեճը դատարանի լուծմանը հանձնելու բանաձևի մասին դրույթ չեն նախատեսում և սահմանափակվում են միայն հնարավոր տարածայնությունները բանակցությունների միջոցով կարգավորելու մասին նշում կատարելով, վեճ ծագելու դեպքում բարդությունների առաջացումն անխուսափելի է, քանի որ արբիտրաժային համաձայնության բացակայության պայմաններում արբիտրաժին հարկադրելը դառնում է անհնար:

<sup>1</sup> Տե՛ս. Alternative Dispute Resolutions, 1998, էջ 55:

համաշխարհային կազմակերպությունում (ԻՄՅԿ BOIC) : 1986թ. Ցյուրիխի Առևտրի Պալատն ընդունել է միմի-պրոցեսների կարգավորման ընթացակարգային կանոններ: 1988 թվականից սկսած Առևտրի Զամաշխարհային Պալատում գործում է «Չաշտեցման կանոնակարգ»: Ներկայումս ՌԴ-ում գործում են մի շարք մեդիացիոն կենտրոններ: Որպես օրինակ կարող ենք բերել «Կոնֆլիկտների լուծման Սանկտ-Պետերբուրգի կենտրոնը»: Որպեսզի հստակորեն ընդգծվի (առևտրային) արբիտրաժի և վեճերի լուծման այլընտրանքային եղանակների տարբերությունը, նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել վերջիններիս էությունը, ուսումնասիրել դրանց հիմնական սկզբունքներն ու իրականացման եղանակները:

*Մեդիացիայի* դեպքում գործով չչափազորված երրորդ անձի անմիջական մասնակցությամբ փորձ է կատարվում կողմերին փոխադարձ համաձայնության կամ փոխզիջումների (կոմպրոմիսի) բերել (հանգեցնել): Այսպիսով, մեդիացիայի դեպքում ծագած վեճը կարգավորելու և առաջացած տարածայնությունները հարթելու հիմնական առաքելությունն իր վրա է վերցնում գործով չչափազորված (չեզոք) անձ (մեդիատոր կամ միջնորդ), որը փորձում է կողմերին հաշտության բերել և փոխզիջումների հնարավոր տարբերակներ է առաջարկում նրանց: Շատ դեպքերում մեդիացիան բնորոշվում է որպես միջնորդի միջոցով բանակցությունների վարում<sup>1</sup>:

Մինչ վերջին ժամանակները մեդիացիան հիմնականում օգտագործվում էր որպես պետությունների մասնակցությամբ վեճերի (այդ թվում՝ առևտրատնտեսական) լուծման միջոց, հետևաբար կիրառվում էր միջազգային (հանրային) իրավունքում<sup>2</sup>: Սակայն միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգաց-

---

<sup>1</sup> Մեդիացիան ունի վաղ պատմություն: Այն հարյուրավոր տարիներ առաջ լայնորեն կիրառվել է Չինաստանի և Ասիայի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի բոլոր երկրներում: Ներկայումս այնպիսի հզորագույն երկրներում, ինչպիսիք են Չինաստանը և Ճապոնիան, որպես առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման միջոց օգտագործվում է մեդիացիան, որովհետև այս երկրներում դատարան դիմելը համարվում է անպատվաբեր և բարոյապես ոչ խրախուսելի:

<sup>2</sup> Տե՛ս Մեդիացիայի R. Bond, How to Draft an Arbitration Clause (1989 journal) էջ 66:

ման ժամանակակից միտումները պարտադրեցին, որպեսզի վերջինս կիրառվի նաև մասնավոր ոլորտում առևտրատնտեսական վեճեր լուծելիս: Ներկայումս այն տարածում է ստանում: Մասնավորապես, Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության (այսուհետև ԻՍՅԿ) առընթեր 1994թ. ստեղծվել է ինչպես արբիտրաժային քննության, այնպես էլ առանձին մեդիացիոն կենտրոն: ԻՍՅԿ կանոնադրությունը սահմանում է, որ վերջինս կարող է կիրառվել միայն կողմերի միջև կնքված համաձայնության հիման վրա: Ընդ որում, համաձայնությունը կարող է կնքվել ինչպես առանձին պայմանագրի, այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահում կատարելու ձևով: Պետք է նշել նաև, որ այդպիսի համաձայնություն կարող է ձեռք բերվել նաև վեճ ծագելուց հետո (վերջինս իրավաբանական պրակտիկայում հաճախ է հանդիպում)<sup>1</sup>: ԻՍՅԿ կանոնադրության համաձայն կողմերի միջև վեճ ծագելու դեպքում ԻՍՅԿ առընթեր Մեդիացիոն կենտրոն դիմում է ուղարկվում, որտեղ դիմողը պետք է նշի կողմերի, նրանց ներկայացուցիչների անունները, իրավաբանական հասցեն: Դիմումին կից պետք է ներկայացնել մեդիացիայի մասին կողմերի համաձայնության պատճենը, ինչպես նաև պարզաբանվի վեճի էությունը: Միաժամանակ դիմողը պատճեն է ուղարկում նաև պատասխանող կողմին: Մեդիացիայի մասին դիմումն ստանալուն պես մեդիացիոն կենտրոնն անցնում է մեդիատորի նշանակման հետ կապված հարցերի պարզաբանմանը և այդ նպատակով կապ է հաստատում կողմերի հետ: Պարզելով մեդիատորին ներկայացվող կողմերի պահանջները, կենտրոնն առաջարկում է մեդիատորի հավանական թեկնածուներ: Կողմերի դրական արձագանքի դեպքում կենտրոնը հաստատում է ներկայացված անձանցից մեկի թեկնածությունը և մեդիատոր նշանակելու մասին որոշում է կայացնում: Այս փուլում մեդիատորի նշանակման հետ կապված հարցերի լուծումից բացի, պետք է լուծվեն նաև մի շարք տեխնիկական հարցեր (մեդիացիայի վայրը, լեզուն, ժամկետը), ինչպես նաև ճշտվի մեդիատորի հոնորարի չափը: Ընդ որում, առաջացած վեճի կարգավորման գործում մեդիա-

տորն ունի բացառիկ դեր: Նրա արհեստավարժությունից, վեճի առարկայի իմացությունից, բանակցություն վարելու ունակությունից է կախված վեճի լուծման հետագա ընթացքը:

Պետք է նշել, որ մեդիատորի առաքելությունը ոչ թե մեղավորներ գտնելն է, կողմերին իրավաբանական օգնություն ցուցաբերելը կամ որպես արբիտր հանդես գալը, այլ վեճի լուծման ողջ գործընթացում կողմերին հաշտեցնելու, փոխզիջումային տարբերակներ առաջարկելու, տարաձայնությունների արդարացի կարգավորմանը նպաստելն է: Ինչպես արդեն նշվել է, մեդիատոր կարող է նշանակվել գործի ելքում շահագրգռվածություն չունեցող, համապատասխան գիտելիքների և մասնագիտական ունակությունների տիրապետող ցանկացած անձ (AAA, ԱԱԱ կանոնակարգի §5): Ուստի, այստեղից կարելի է հետևություն անել, որ մեդիատորին ներկայացվող հիմնական պահանջներից է վերջինիս անկողմնակալությունը: Պետք է նշել նաև, որ մեդիատորն իրավունք ունի մեդիացիոն լուծմանից առաջ կողմերի հետ խորհրդակցություն անցկացնել՝ մեդիացիայի իրականացման հետ կապված հարցերը պարզաբանելու նպատակով: Վերջինս իրավունք ունի նաև կողմերին վեճի լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու հետ կապված պարտադիր ցուցումներ տալ, ինչպես նաև սահմանել դրանց ներկայացման կարգն ու ժամկետները: Որպես կանոն, լուծմանից առաջին փուլում լուծվում են ընթացակարգային հարցեր. օրինակ՝ մեդիատորի և կողմերի միջև հանդիպումների իրականացման կարգը (կարող է պարզաբանվել, թե մեդիատորն իրավունք ունի<sup>2</sup>, արդյոք, կողմերի հետ առանձին հանդիպումներ ունենալ և բանակցություններ վարել): Բացի այդ, մեդիատորը կողմերին պետք է պարզաբանի ԻՍՅԿ (BOIC, WIPO) մեդիացիայի անցկացման կանոնները, ներկայացվող փաստաթղթերի ցանկ սահմանի, ինչպես նաև լուծի անհրաժեշտ փորձաքննությունների նշանակման հետ կապված խնդիրները (փորձագետների թեկնածուներ առաջադրել և այլն):

Որպես կանոն, մեդիացիայի իրականացման կարգը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սակայն նման համաձայնության բացակայության պայմաններում այն սահմանվում է մեդիատորի կողմից՝ ԻՍՅԿ մեդիացիոն կանոնակարգին համապա-

<sup>1</sup> Տե՛ս Year book Commercial Arbitration 572 (1992):



տասխան: Պետք է նշել, որ վեճը կարող է լուծվել առաջին իսկ լուծման ընթացքում, բայց այն կարող է նաև ձգձգվել: Վեճի լուծման անհարկի ձգձգումից խուսափելու նպատակով ԻՍՅԿ մեդիացիոն կանոնակարգը մեդիատորի վրա պարտականություն է դրել մինչ լուծմանը կողմերից՝ գործի բոլոր մանրամասները լուսաբանելու, վերջիններիս դիրքորոշումը ճշտելու, ինչպես նաև վեճի լուծման հնարավոր ճանապարհները գտնելու համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել:

Եթե մեդիացիայի արդյունքում հաջողվում է կողմերի համար ընդունելի՝ վեճի լուծման (փոխզիջումային) տարբերակ գտնել, ապա այն պետք է ձևակերպվի գրավոր՝ կողմերի և մեդիատորի կողմից ստորագրված միասնական փաստաթուղթ կազմելու ձևով: Ընդ որում, վերջինս մեդիացիայի արդյունքում կազմվող միակ փաստաթուղթն է: Մեդիացիայի ընթացքում արձանագրություն չի վարվում. իսկ կողմերի բոլոր գրառումներն ու ձայնագրությունները լուծման ավարտին ոչնչացվում են: Մեդիացիայի ընթացքում մեդիատորին հայտնի դարձած տեղեկությունները գաղտնի են և առանց կողմերի համաձայնության չեն կարող հրապարակվել: Հարկ է նշել նաև, որ գործը հետագայում դատական կամ արբիտրաժային կարգով քննելիս մեդիացիայի ընթացքում ներկայացված ապացույցները ենթակա են գնահատման՝ վերաբերելիության և թույլատրելիության կանոնների խստագույն պահպանմամբ: Դրանք չեն մտնում նախադատելի փաստերի մեջ և ապացուցումից ազատելու հիմք չեն կարող հանդիսանալ: Այն դեպքերում, երբ լուծման ընթացքում պարզ է դառնում, որ կողմերի միջև հաշտության համաձայնություն կնքելը կամ փոխհամաձայնության գալը դարձել է անհնար, մեդիատորը մեդիացիան դադարեցնելու մասին հիմնավորված որոշում է կայացնում: Լուծման ցանկացած պահին մեդիացիայից հրաժարվելու իրավունք ունեն նաև կողմերը:

*Կոնսիլիացիան* (հաշտեցնող ընթացակարգ) ևս հանդիսանում է առևտրատնտեսական վեճերի լուծման այլընտրանքային միջոց: Ներկայումս բազմաթիվ միջազգային արբիտրաժային կենտրոններում գործում են կոնսիլիացիոն (հաշտեցնող) կանոնակարգեր. օրինակ՝ Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնում

(ICSID), Առևտրի միջազգային պալատում: Հարկ է նշել, որ ՄՍԿՄԱԻԴ-ը 1980թ. հուլիսի 23-ին նույնպես ընդունել է կոնսիլիացիան կարգավորող ընթացակարգային կանոններ:

1988 թվականից գործող Առևտրի միջազգային պալատի կոնսիլիացիոն կանոնակարգը սահմանում է, որ «միջազգային գործարարական հարաբերություններից ծագող ցանկացած վեճ կարող է լուծվել պալատի կողմից նշանակված միջնորդի (կոնսիլիատորի) կողմից»: Ըստ որում, այստեղ կոնսիլիացիայի մասին կողմերի նախնական համաձայնությունը (կոնսիլիացիոն համաձայնություն) պարտադիր չէ: Այսպես, կոնսիլիացիայի ձգտող կողմը ԱՄՊ-ի քարտուղարություն դիմում է ներկայացնում, որին պարտադիր կարգով կոնսիլիացիոն տուրք է կցվում (500 ԱՄՆ դոլար): Քարտուղարությունը պատշաճ կարգով ծանուցում է մյուս կողմին ստացված դիմումի մասին: Ծանուցումն ստացած կողմը տասնհինգօրյա ժամկետում պարտավոր է ԱՄՊ-ի քարտուղարություն պատասխան ներկայացնել՝ մերժել կոնսիլիացիայի առաջարկը կամ ընդունել այն: Եթե սահմանված ժամկետում կողմից պատասխան չի ստացվում, ապա կոնսիլիացիայի առաջարկը համարվում է մերժված (Կանոնակարգի հոդվ. 9): Քարտուղարությունը պարտավոր է պատշաճ կարգով ծանուցել դիմողին կոնսիլիացիայի առաջարկի մասին: Կողմից դրական պատասխան ստանալու դեպքում Քարտուղարությունը միջնորդ (կոնսիլիատոր) է նշանակում, որի մասին ծանուցում է կողմերին: Ներկայանալով կողմերին, միջնորդը վեճի լուծման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու համար ժամկետներ է սահմանում, ինչպես նաև տրամադրում է ժամանակ, որպեսզի վերջիններս հայտնեն գործի վերաբերյալ իրենց դիրքորոշումը: Միաժամանակ համաձայնեցվում է լուծման անցկացման վայրը, լուծմանը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ մուծման ենթակա գումարի չափը, որն իր մեջ ներառում է միջնորդի հոնորարը, վարչական և այլ ծախսերը: Հարկ է նշել, որ ԱՄՊ-ի ԱԴ-ի (Արբիտրաժային Դատարան) կոնսիլիացիոն կանոնակարգը չի սահմանում, թե կոնսիլիացիան (հաշտեցման ընթացակարգը) իրենից ինչ է ներկայացնում, չի ձևակերպում վերջինիս հասկացությունը: Կանոնակարգում չեն սահմանվել նաև միջնորդի

պարտականությունները, այլ մեկ հողվածով նշվել է, որ միջնորդը կարող է (հետևաբար պարտավոր չէ) կողմերին փոխզիջումային տարբերակներ առաջարկել, որոնք կողմերը կարող են (իրավունք ունեն) մերժել կամ էլ ընդունել:

Կանոնակարգով միջնորդին ներկայացված միակ պահանջը վեճի լուծման ընթացքում անկողմնակալությունը պահպանելն է: Նա պարտավոր է կողմերի նկատմամբ միևնույն դիրքորոշումն ունենալ և վեճը լուծելիս լինել արդար:

Ըստ ԱՄՊ-ի արբիտրաժային դատարանի կոնսիլիացիոն կանոնակարգի՝ կոնսիլիացիան կարող է դադարեցվել, երբ

- կողմերը հաշտության համաձայնություն են կնքել (հաշտության համաձայնությունը կարող է վեճի լուծման ամենատարբեր պայմաններ նախատեսել),

- միջնորդի որոշմամբ, եթե վերջինս գտնում է, որ կողմերին հաշտեցնելու բոլոր փորձերն անհաջողության են մատնվել,

- կողմի գրավոր դիմումի համաձայն, որով նա հայտնում է կոնսիլիացիայից հրաժարվելու իր մտադրության մասին:

Ինչպես մեդիացիայի, այնպես էլ կոնսիլիացիայի դեպքում լսումների ընթացքում միջնորդին հայտնի դարձած տեղեկությունները չեն կարող հրապարակվել առանց կողմերի համաձայնության: Կոնսիլիացիայի արդյունքում ձեռք բերված ապացույցները չեն մտնում նախադատելի փաստերի մեջ, և հետագայում գործի դատական կամ արբիտրաժային կարգով քննման դեպքում ապացուցումից ազատելու հիմք չեն կարող հանդիսանալ: Միջնորդը չի կարող որպես վկա կանչվել դատարան կամ արբիտրաժ և հարցաքննվել կոնսիլիացիայի ընթացքում իրեն հայտնի դարձած փաստերի վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք, ըստ ԱՄՊ-ի ԱԴ-ի կոնսիլիացիոն կանոնակարգի՝ հաշտեցնող ընթացակարգերն այստեղ գործնականում կարող են այլ որակ ձեռք բերել, որտեղ գործով չչահագրգռված (երրորդ) անձի մասնակցությամբ փորձ է կատարվում հարթել առաջացած տարաձայնությունները և լուծել վեճը: Ըստ որում, ԱՄՊ-ի ԱԴ-ի կոնսիլիացիոն կանոնակարգը ընդհանուր կերպով է ձևակերպված: Կապված գործի հանգամանքներից և վեճի լուծման՝

կողմերի համար փոխընդունելի տարբերակ գտնելու հնարավորությունից, մի դեպքում միջնորդը կարող է հանդես գալ որպես մեդիատոր, մյուս դեպքում՝ որպես կոնսիլիատոր: Նման հանգամանքը կարող է թյուրիմացության տեղիք տալ, և այս պատճառով էլ միջազգային իրավաբանական պրակտիկայում շատ հաճախ «մեդիացիա» և «կոնսիլիացիա» եզրույթներն օգտագործվում են որպես հոմանիշներ: Ծիշտ է՝ երկու դեպքում էլ փորձ է կատարվում միջնորդի միջոցով հաշտեցնել կողմերին կամ փոխհամաձայնության բերել, սակայն մեդիացիայի և կոնսիլիացիայի իրականացման մեթոդներում էական տարբերություններ կան: Առաջին դեպքում միջնորդը (մեդիատոր) կողմերին միայն օգնում է հաշտության համաձայնություն կնքել, վեճի լուծմանն անմիջական (ակտիվ) մասնակցություն չի ունենում, այլ միայն նպաստում է փոխզիջումային տարբերակների որոնման գործընթացին և հաշտության կայացմանը: Այս պատճառով է, որ միջազգային իրավաբանական (արբիտրաժային) պրակտիկայում մեդիացիան հաճախ բնորոշվում է որպես միջնորդի ներկայությամբ բանակցություն: Կոնսիլիացիայի դեպքում միջնորդը (կոնսիլիատոր) վեճի լուծման գործընթացում ունենում է ակտիվ մասնակցություն, այսինքն՝ վեճի լուծումն իրականացվում է կոնսիլիատորի անմիջական մասնակցությամբ: Նա կարող է հանդիպել կողմերի հետ, նրանցից վեճի լուծման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալ, ճշտել նրանց դիրքորոշումը, փաստաթղթեր պահանջել, ուսումնասիրել գործի հանգամանքները և վերջապես՝ կողմերին փոխզիջումային տարբերակներ առաջարկել, որոնք, միասնական ակտի ձևով ստորագրվելուց հետո, ձեռք են բերում պարտադիրության հատկանիշ:

*Մինի-պրոցես*. վերջին ժամանակաշրջանում միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման նպատակով լայն կիրառություն են գտել և տարածում ստացել մինի-պրոցեսները<sup>1</sup>: Ներկայումս մինի-պրոցեսները (զանազան տարբերակներով) լայնորեն կիրառվում են ԱՄՆ-ում, որը հանդիսա-

<sup>1</sup> St'e Christian Buhring- Uhle, Arbitration And Mini- Processes in International Business, 1996, 41-42 էջերը:

նում է վերջիններիս հայրենիքը: Սակայն, մինի-պրոցեսը չի կարելի դիտել որպես զուտ ամերիկյան երևույթ, քանի որ դրանք իրենց տարածումն են գտել և ուրույն զարգացումն ապրել նաև Եվրոպայում: Միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում, ելնելով տնտեսական վեճերի արագ կարգավորման անհրաժեշտությունից, բազմաթիվ արբիտրաժային կենտրոններ ընդունել են մինի-պրոցեսները կարգավորող կանոնակարգեր: Ներկայումս մինի-պրոցեսների առավելապես ճանաչված և համակարգված կանոններ են գործում Ամերիկայի արբիտրաժային ասոցիացիայում և Ցյուրիխի առևտրի պալատում: Վերջիններիս էությունը բացահայտելու համար քննարկենք մինի-պրոցեսների անցկացման Ցյուրիխյան կանոնները, որոնք գործում են 1984 թվականից սկսած: Ցյուրիխյան կանոնների համաձայն տարածայնությունների առաջացման կամ վեճ ծագելու դեպքում Ցյուրիխի առևտրի պալատ մինի-պրոցես կազմակերպելու մասին դիմում է ուղարկվում, որում նկարագրվում է վեճի առարկան և կցվում է միջնորդ տուրք (500 շվեյցարական ֆրանկ): Եթե մինի-պրոցեսի վերաբերյալ կողմերի միջև նախնական համաձայնություն (միջնորդ համաձայնություն) չի կնքվել, ապա Պալատի քարտուղարությունը ստացված դիմումի մասին ժամուցում է մյուս կողմին և պատասխան ուղարկելու համար ժամանակ տրամադրում: Սահմանված ժամկետում պատասխանը չստացվելու դեպքում մինի-պրոցեսի առաջարկը համարվում է մերժված: Դրական պատասխանի դեպքում ՑԱՊ-ի (Ցյուրիխի առևտրի պալատ) քարտուղարությունը կողմերին առաջարկում է միջնորդ հանձնաժողովում (ժյուրի) իրենց շահերը պաշտպանող ներկայացուցիչներ նշանակել կամ անձանք ներկայացնել իրենց շահերը: Հաջորդ փուլում ընտրվում է հանձնաժողովում նախագահող, (նախագահող կարող է ընտրվել գործով չշահագրգռված, չեզոք անձ): Նախագահողը սահմանում է կողմերի պահանջների և դրանց դեմ արվող առարկությունների ներկայացման կարգն ու ժամկետները, ինչպես նաև ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Ընդ որում, դրանց ծավալը չպետք է գերազանցի 25 մեքենագիր էջը և պետք է ներկայացվեն 30 օրվա ընթացքում (ոչ ուշ քան 30 օրը): Լսումների ընթացքում յուրաքանչյուր կողմը

հակիրճ ձևով ներկայացնում է իր պահանջներն ու դիրքորոշումը, ինչպես նաև պահանջները հիմնավորող փաստերը: Մինի-պրոցեսի հաջորդ փուլում հանձնաժողովի անդամները մանրամասնորեն ուսումնասիրում են գործի բոլոր հանգամանքները, անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար հանդիպում կողմերի հետ և նրանց փոխզիջումների կամ վեճի լուծման հնարավոր տարբերակներ առաջարկում: Այստեղ առանձնակի կարևորվում է հանձնաժողովում նախագահողի դերը: Մասնավորապես, վերջինիս վրա է դրված փոխհամաձայնության հնարավոր տարբերակների մշակման գործում կողմերին օգնելու առաքելությունը, ինչպես նաև քննարկումների ընթացքում ծագող տարածայնությունների հարթման պարտականությունը: Եթե գործի քննության արդյունքում վեճի լուծման տարբերակների շուրջ համաձայնություն չի կայացվել, հանձնաժողովը կողմերին է ուղարկում վեճի լուծման իր առաջարկը (երաշխավորություն): Եթե հանձնաժողովի անդամներն առաջարկի շուրջ համաձայնության չեն գալիս և չի հաջողվում այն միաձայն ընդունել, ապա նախագահողն ինքն է առաջարկում վեճի լուծման հնարավոր տարբերակները և կողմերին դրանց ծանոթանալու համար ժամանակ տրամադրում: Սահմանված ժամկետում կողմերը պարտավոր են պալատին տեղեկացնել առաջարկվող փոխզիջման պայմաններն ընդունելու կամ մերժելու մասին: Հատկանշական է, որ մինի-պրոցեսի ընթացքում կողմերը փաստորեն հրաժարվում են դատարան դիմելու իրենց իրավունքից, իսկ սկսված դատավարությունը պարտադիր կարգով կասեցվում է կամ դադարեցվում («Միջազգային մասնավոր իրավունքի մասին» 1987թ. Շվեյց. օր.): Բոլոր լսումներն անց են կացվում փակ դռների ետևում, և լսումների արդյունքում կողմերին, հանձնաժողովի անդամներին և նախագահողին հայտնի դարձած տեղեկությունները չեն կարող հրապարակվել: Միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման այս միջոցի անառարկելի առավելությունն է հանդիսանում, ի համեմատ գործի դատական կամ արբիտրաժային քննության քիչ ծախսատար լինելը, գործի քննության արագությունը (3-4 օր): Այն կողմերին հնարավորություն է ընձեռում բանակ-

ցել և հարթել տարածայնությունները, ապահովել գործի քննության, գաղտնիությունը և այլն:

Մինի-պրոցեսի թերությունների շարքում կարող ենք առանձնացնել մինի-պրոցեսի ընթացքում ընդունված որոշումների հարկադիր կատարման անհնարիությունը կամ այստեղ չենք կարող բացառել նաև հետագայում գործի դատական քննությունը և այլն: Այս դեպքում մինի-պրոցեսն ինքնաբերաբար դառնում է ֆինանսական միջոցների և ժամանակի անհարկի վատնման պատճառ:

Վեճերի լուծման այլընտրանքային միջոցները կարող են շատ արդյունավետ լինել, քանի որ այդ դեպքում կողմերին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն (կամ էլ 3-րդ անձի մասնակցությամբ) հարթել առաջացած տարածայնությունները և լուծել վեճը՝ միաժամանակ պահպանելով գործնական հարաբերությունները:

Այս ամենի հետ միասին կարևոր է նշել, որ դրանց կիրառումը շատ դեպքերում ենթարկված է լուրջ սահմանափակումների: Բոլոր այս միջոցներն ուղղված են կողմերի միջև գործնական հարաբերությունները պահպանելուն և ամրապնդելուն, իսկ տարածայնությունների առաջացման դեպքում ենթադրվում է կողմերի ակտիվ համագործակցությունը վեճի հաղթահարման գործում:

Այն դեպքերում, երբ կողմերի միջև վեճն առաջանում է պայմանագրային պարտավորությունների կատարման, պայմանագրի առանձին պայմանների մեկնաբանման կապակցությամբ, որտեղ կողմերի հիմնական նպատակն է պարզել, թե ով է ճիշտ, իսկ ով՝ ոչ, որտեղ վեճն առաջանում է պայմանագրային պարտավորությունների կոպիտ խախտումների կապակցությամբ, երբ գործարար հարաբերությունները վերացել են և դրանք վերականգնելու հույսեր արդեն չկան, դատարան կամ արբիտրաժ դիմելը համարվում է առավել նպատակահարմար, քանի որ նման պարագայում անհնար է վեճերի լուծման այլընտրանքային միջոցների օգնությամբ հասնել ցանկալի արդյունքի: Մեղիացիայի, կոնսիլիացիայի և մինի-պրոցեսի արդյունքում փաստորեն ի հայտ է գալիս նոր պայմանագիր, և ինչպես ցանկացած պայմանագրի դեպքում, դրա կատարումն ուղղակիորեն կախված է կողմերի ցանկությունից (կամարտահայտությունից) և շահագրգռվածության աստիճանից: Որպեսզի կողմն ան-

կարող լինի խուսափել պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց, և վերջապես՝ որպեսզի պայմանագրի կատարումից չարամտորեն խուսափող կողմին հնարավոր լինի ստիպել կատարելու այն, անհրաժեշտ է դատարան կամ արբիտրաժ դիմել: Բացի այդ, դեռևս պարզ չէ՝ արդյոք տարբեր պետությունների դատարանները կողմերին կհարկադրե՞ն կատարել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների մասին համաձայնությունները: Իսկ հարկադիր մեղիացիան, կոնսիլիացիան կամ մինի-պրոցեսը ինքնըստինքյան հակասում են վերջիններիս բուն իմաստին և էությանը, քանի որ այս ընթացակարգերի կիրառումը հնարավոր է միայն կողմերի լիակատար համաձայնության դեպքում: Դժվար չէ կռահել նաև, որ նույնիսկ այն դեպքերում, երբ կողմն ստիպված է մասնակցել դրանց իրականացմանը, ապա առաջին իսկ հարմար պահին նա պարզապես կդադարեցնի իր մասնակցությունը ընթացակարգին, և գործի քննությունը մեխանիկորեն կտեղափոխվի արբիտրաժ կամ դատարան: Բացի այդ, չի կարելի անտեսել կոնսիլիացիայից, մեղիացիայից կամ մինի-պրոցեսից ցանկացած պահի հրաժարվելու կողմերի իրավունքը:

Ընդհանրացնելով շարադրվածը կարող են ասել, որ վեճերի լուծման այլընտրանքային եղանակները թեև արբիտրաժային հաստատությունների հատուկ կանոնակարգերով նախատեսված կանոնների ամբողջություն են, որոնք կարգավորում են առևտրային հարաբերությունների մասնակիցների միջև առաջացած վեճը փոխզիջումների կամ փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելու միջոցով լուծելու ընթացակարգը: Վերջիններս էականորեն տարբերվում են արբիտրաժային քննությունից՝

– կողմերը ցանկացած պահի կարող են հրաժարվել այլընտրանքային եղանակներով վեճը կարգավորելուց,

– դրանց կիրառման արդյունքում ստորագրված ակտը կրում է պայմանագրային բնույթ,

– այն կամավոր չկատարելու դեպքում ենթակա չէ հարկադիր կատարման,

– այս կարգով հետագոտված ապացույցները և հաստատված հանգամանքները հետագայում գործի դատական կամ արբիտրա-

ժային քննության ընթացքում ապացուցումից ազատելու հիմք չեն համարվում:

Այնուամենայնիվ, վեճերի լուծման այլընտրանքային եղանակները հատկապես կարող են արդյունավետ լինել, երբ դրանք կիրառվում են միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման նպատակով: Սակայն ինչպես նշվեց, այն իր արդյունավետությամբ չի կարող գերազանցել արբիտրաժային քննությանը, քանի որ վերջինիս դեպքում անխուսափելի է իրավական հետևանքների առաջացումը:

### **§5. Միջազգային և ներքին (ներպետական) արբիտրաժները**

Իրենց բոլոր նմանություններով հանդերձ, ներքին (ներպետական) և միջազգային արբիտրաժները տարբեր իրավական ինստիտուտներ են: Առաջինի գործառնությունը դուրս չի գալիս միևնույն իրավական համակարգի շրջանակներից, մինչդեռ միջազգային արբիտրաժը սկիզբ է առնում միջազգային (տրանսնացիոնալ) առևտրատնտեսական հարաբերություններից, բնորոշվում է կիրառման ենթակա իրավունքի պլուրալիզմով, որտեղ գրեթե անխուսափելի են տարբեր երկրների օրենքների (իրավունքների) և դատական իրավասությունների բախումը և դրանցով պայմանավորված բարդությունները:

Միջազգային առևտրային արբիտրաժը տարբեր պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց (պայմանագրի կողմերի) միջև առևտրատնտեսական վեճերը լուծող մարմին է: Այն կիրառում է օտարերկրյա տարրի մասնակցությամբ առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման մի կառուցակարգ, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, արբիտրաժային համաձայնությանը համապատասխան արբիտրաժային մարմնի կողմից գործը քննելով և լուծելով, և որի կայացրած վճիռը պարտադիր է կողմերի համար, ենթակա է կատարման:

Միջազգային առևտրային արբիտրաժը պետք է տարբերել ներքին արբիտրաժից, քանի որ վերջինս միևնույն պետությունից սերվող կողմերի (ֆիզիկական և իրավաբանական անձանց) միջև

առևտրատնտեսական վեճեր լուծող մարմին է: Այս պարագայում խոսքը գնում է ներքին առևտրատնտեսական հարաբերություններից (ներքին գործարքներից) ծագող վեճերի քննության և լուծման մասին<sup>1</sup>:

Միջազգային առևտրային արբիտրաժ ասելով հասկանում ենք նաև տարբեր պետություններից սերվող կողմերի միջև առևտրատնտեսական վեճերի լուծման միջոց կամ օտարերկրյա տարրի մասնակցությամբ առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման կառուցակարգ, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, արբիտրաժային համաձայնության հիման վրա գործը քննելով և լուծելով:

Միջազգային առևտրային արբիտրաժը պետք է տարբերել նաև քաղաքացիական դատավարությունից: Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակներ արբիտրաժային քննությունը նույնացնում են քաղաքացիական դատավարության հետ, պառճառաբանելով, որ երկուսում էլ գործում են նույն ինստիտուտները, որոնց փոխգործակցությունն անխուսափելիորեն հանգեցնում է նույնականության<sup>2</sup>: Այս հարցի շուրջ առանձնահատուկ մտտեցում ունի Բոգոսլավսկին, որի կարծիքով միջազգային քաղաքացիական դատավարությունը, ի թիվս այլոց, ներառում է նաև արբիտրաժային համաձայնությունների ճանաչման, արբիտրաժային կարգով վեճերի լուծման արդյունքում կայացված արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման հետ կապված

<sup>1</sup> ՌԴ-ում այս տարբերակումը կապված է լրացուցիչ բարդությունների հետ, քանի որ այնտեղ գործում է արբիտրաժային դատարանների պետական համակարգ, որը քննում և լուծում է նաև օտարերկրյա անձանց մասնակցությամբ տնտեսական վեճերը: Պետք է նշել, որ տնտեսական վեճեր քննող պետական դատարաններ են գործում եվրոպական շատ երկրներում, սակայն տարբեր անվանումներով (ՌԴ-ում՝ Արբիտրաժային պետական դատարան, Ֆրանսիայում՝ Տնտեսական դատարան և այլն): Այստեղ կարող են շփոթմունք առաջացնել և մոլորության մեջ գցել միայն անվանումները: Իսկ ինչ վերաբերում է միջազգային արբիտրաժին, ապա, նրանց միջև քննվող գործերի բնույթից և անվանումից բացի, ոչ մի ընդհանրություն չկա, քանի որ միջազգային առևտրային արբիտրաժային դատարանները չեն մտնում դատարանների պետական համակարգի մեջ:

<sup>2</sup> Տե՛ս Кордери Мосс Указ. Сочинений т. 6. Звеков В.М. Международное частное право. М., 1999, 31-32 էջերը:

ողջ գործընթացը<sup>1</sup>: Սակայն, այս ամենն առնվազն միջազգային առևտրային արբիտրաժի էության թյուրըմբռնման արդյունք է: Գրեթե բոլոր դատավարազետներն ընդունում են, որ քաղաքացիատավարական իրավահարաբերություններում, որպես պարտադիր սուբյեկտ, միշտ հանդես է գալիս դատարանը, որը պետության անունից արդարադատություն իրականացնող միակ իրավագոր մարմինն է: Յետևում է, որ.

- միջազգային առևտրային արբիտրաժը և միջազգային քաղաքացիական դատավարությունը նույնական չեն,
- միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում առաջացող իրավահարաբերությունները քաղաքացիատավարական իրավահարաբերություններ չեն:

Միջազգային (առևտրային) արբիտրաժը վեճերի լուծման այլընտրանքային միջոցներից էապես տարբերվող՝ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման մարմին է, որը հանդիսանում է ազգային-իրավական համակարգերից վեր կանգնած ինստիտուտ, իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ազգային կամ օտարերկրյա դատավարական իրավունքով, կամ կողմերի միջև կնքված համաձայնությամբ որոշված ընթացակարգային կանոններով կամ էլ կանոնադրությամբ (կանոնակարգով) և չի մտնում դատարանների պետական համակարգի մեջ:

Հարկ է նշել, որ աշխարհում գոյություն չունի առևտրատնտեսական վեճեր քննող որևէ վերազգային (միջազգային) դատարան: Հաազայում մշտապես գործող միջնորդ դատարանում քննվում են միայն պետությունների մասնակցությամբ առևտրատնտեսական վեճերը: Ընդ որում, այս դեպքում վեճը լուծելիս դատարանը ղեկավարվում է հանրային՝ այլ ոչ թե միջազգային մասնավոր իրավունքի նորմերով<sup>2</sup>: Արտաքին առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման նպատակով կողմերը ստիպված են

<sup>1</sup> Տե՛ս Богуславский М.М. Международное частное право. М., 1998, էջ 352:

<sup>2</sup> Տե՛ս Дмитриева Г.К. Международный коммерческий арбитраж. М., 1997, էջ 17:

դիմել կամ միջազգային առևտրային արբիտրաժ կամ որևէ երկրի դատարան (պայմանագրի կողմերի կամ էլ երրորդ՝ չեզոք պետության դատարան, որտեղ պետք է կատարվի գործարքը): Նմանատիպ գործերով պետական դատարան հայց հարուցելու հետ կապված հարցերը միջազգային իրավաբանական պրակտիկայում, որպես կանոն, կարգավորվում են պայմանագրային ընդդատության և ենթակայության ինստիտուտներով: Այս հարցի լուծման ամենատարածված ձևը պայմանագրերից բխող վեճ ծագելու դեպքում այն որևէ պետության դատարանի քննությանը հանձնելու մասին դրույթ նախատեսելն է: Այսպիսով, այս հարցի կարգավորման ամենաարդյունավետ լուծումը պայմանագրային ընդդատության ինստիտուտի կիրառումն է: Ընդ որում, ներկայումս շատ երկրներ ընդունել են օտարերկրյա անձանց միջև առաջացած առևտրատնտեսական վեճերն ազգային դատարանում քննելու հետ կապված բոլոր հարցերը կարգավորող օրենքներ, որոնք կողմերին հնարավորություն են ընձեռում ազատորեն տնօրինել դատարան դիմելու իրենց իրավունքը և ինքնուրույն սահմանելու դատական ընդդատությունը որոշող բանաձևը:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 5, 5<sup>1</sup>, 5<sup>2</sup> և 6, 6<sup>1</sup>-րդ բաժիններով հանգամանալից կարգավորված են միջազգային դատարան դիմելու, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռների ու որոշումների հիման վրա հայրենական դատարանների վճիռների և որոշումների վերանայման հետ կապված, ինչպես նաև միջազգային պայմանագրերին համապատասխան քաղաքացիական գործերով իրավական օգնության, այդ թվում միջազգային արբիտրաժի վճիռների և որոշումների ճանաչման և հարկադիր կատարման բոլոր հարցերը, օտարերկրյա տարրի մասնակցությամբ գործերի վարույթը:

Պայմանագրային ընդդատության ինստիտուտի բազմաթիվ դրույթներ են ամրագրված մի շարք միջազգային համաձայնագրերում, ինչպես օրինակ՝ 1993թ. հունվարի 22-ին ԱՊՀ երկրների միջև կնքված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» համաձայնագիրն է (հոդվ. 21):

Պայմանագրային ընդդատության մասին դրույթներ են պարունակում նաև Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև «Քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին» 1997թ. մարտի 17-ին վավերացված պայմանագիրը: Այսպիսով, պայմանագրային ընդդատության (ենթակայության) ինստիտուտը կողմերի միջև հարաբերություններում որոշակիություն և կայունություն է մտցնում<sup>1</sup>:

<sup>1</sup> Երբ մենք խոսում ենք միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման մասին, ապա այս ինստիտուտի կիրառումը բավական չէ առաջացած վեճերի լուծման նպատակով օտարերկրյա դատարան դիմելու, գործն այնտեղ քննելու, հետագայում վճռի հարկադիր կատարումն ապահովելու, վճռի կատարման անհնարինության հետևանքով առաջացող հնարավոր բացասական հետևանքները բացառելու և այլ բազմաթիվ հարցերի կարգավորման համար: Այս ինստիտուտի կիրառման արդյունավետությունն առավելապես կախված է մի շարք հարցերի բարեհաջող լուծումից, մասնավորապես՝

– դատարանն արդյոք կհամաձայնվի՞ կողմերի ընտրության հետ: Տարբեր պետությունների դատարաններ կարող են տարբեր կերպ մեկնաբանել պայմանագրի դրույթները: Բացի այդ, միջազգային համաձայնագրերով կամ ներպետական օրենսդրությամբ կարող է ուղղակիորեն արգելված լինել առանձին գործերը օտարերկրյա դատարանի լուծմանը հանձնելը: Այսպես՝ ԱՊՀ երկրների միջև 1993թ. հունվարի 22-ին կնքված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական փոխօգնության մասին համաձայնագրի» 3-րդ գլխի 20-րդ հոդվածը սահմանում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների կապակցությամբ առաջացած վեճերը կարող են լուծվել միայն անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում,

– վճռի հարկադիր կատարման հնարավորության հարցի լուծումից: Աշխարհում դեռևս չի ընդունվել համընդհանուր ճանաչման արժանացած այնպիսի միջազգային համաձայնագիր, որը կերաշխավորեր ողջ աշխարհում վճիռների փոխադարձ ճանաչումն ու հարկադիր կատարումը: Այդպիսի համաձայնագրեր են գործում միայն տարածաշրջանային (ռեգիոնալ) մակարդակով: Օրինակ՝ Եվրամիության 1968թ. սեպտեմբերի 27-ի «Քաղաքացիական, առևտրային և քրեական գործերով վճիռների և դատավճիռների կատարման մասին համաձայնագիրը» (Հայաստանի Հանրապետությունն այս համաձայնագրին չի միացել): Շատ հաճախ դատավճիռների փոխադարձ ճանաչման և կատարման մասին դրույթներն իրենց ամրագրում են գտնում երկկողմ պայմանագրերում (օրինակ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև «Քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին» 1997թ. մարտի 17-ին վավերացված պայմանագիրը): Վերը թվարկված հանգամանքները մեզ ցույց են տալիս պայմանագրային ընդդատության ինստիտուտի թերությունները և բացերը, որովհետև այն ի վի-

«Միջազգային» եզրույթը մեզ հնարավորություն է ընձեռում տարբերություն դնել միջազգային առևտրային արբիտրաժի և ներքին արբիտրաժի միջև:

Ելնելով իրավական համակարգերի տարբերությունից՝ «միջազգային» եզրույթը տարբեր պետություններում տարբեր կերպ է մեկնաբանվում<sup>1</sup>: Մի շարք երկրներում մեկնաբանությունն իրականացվում է ելնելով վեճի բնույթից, մասնավորապես, երբ վեճը բխում է միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից: Մի շարք երկրներում մեկնաբանության համար հիմք է ընդունվում կողմերի պատկանելությունը (օտարերկրյա անձինք են, թե ոչ): Այս առումով հատկանշական է Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային Առևտրի Իրավունքի Հանձնաժողովի (ՄԱԿՄԱԻՀ կամ ՅՈՒՆՍԻՏՐՈՒԼ) 1985թ. նոյեմբերի 1-ին հոդ-

ճակի չէ համապարփակ կարգավորման ենթարկել միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծման նպատակով օտարերկրյա դատարան դիմելու, իսկ հետագայում՝ կայացված վճռի կատարման հետ կապված բոլոր հարաբերությունները: Միջազգային իրավաբանական պրակտիկայում գոյություն ունեն բազմաթիվ միջոցներ, որոնք օգտագործելով պատասխանող կարող է խուսափել գործը պայանագրում նշված դատարանում քննելուց (Arthur von Mehren, A General View of Contract, 7 International Encyclopedia of Comparative Law No.4 (1982)): Օրինակ՝ իրավաբանական գրականության մեջ ընդունված է առանձնացնել պետական ինունիտետի վկայակոչումը (մի պետության, պետական մարմնի կամ կազմակերպության դեմ այլ պետության դատարանում հայց հարուցելու անհնարինությունը), այլ պետության քաղաքացու վրա տվյալ դատարանի իրավասությունը չտարածվելու դոկտրինան, ինչպես նաև անգլոսաքսոնական իրավական համակարգում տարածված՝ պատասխանողի շահերի հետ դատարանի ակնհայտ անհամապատասխանություն («Forum non convenience») դոկտրինան: Բացի այդ, եթե ընդունենք, որ պայանագրում նշված դատարանը քննության է առել իրեն հանձնված վեճը և գործով կայացրել է վճիռ, ապա դա դեռևս չի նշանակում, որ այն անվերապահորեն կճանաչվի այլ պետությունում և կկատարվի հարկադիր կարգով: Այսպիսով, վերը նշվածները մեզ բերում են այն համոզման, որ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում, միջազգային արբիտրաժից բացի, վեճերի լուծման առավել արդյունավետ այլ միջոց չկա:

<sup>1</sup> See Tibor Varadi, The International Commercial Arbitration in Different Legal Systems, 1998, էջ 52:

վածի 3-րդ կետը, համաձայն որի արբիտրաժը համարվում է միջազգային, եթե.

ա) Կողմերի (կողմերին պատկանող) ձեռնարկությունները միջնորդ համաձայնության կնքման պահին գտնվում (կամ գրանցված) են տարբեր պետություններում: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ հողավածում տեղ գտած «կողմերի ձեռնարկությունները» (կամ «կողմերին պատկանող ձեռնարկությունները») ձևակերպումը այդքան էլ համահունչ չէ ՀՀ օրենսդրությանը, քանի որ ըստ 1998թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավաբանական անձինք քաղաքացիական շրջանառության ինքնուրույն մասնակիցներ են, քաղաքացիական իրավունքի առանձին սուբյեկտներ (ՀՀ քաղ. օր. բաժին II, գլուխ V) և քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդես են գալիս ինքնուրույն: Կողմերը կարող են հանդես գալ միայն (իհարկե, օրենքով նախատեսված դեպքերում) իրավաբանական անձի անունից, իսկ իրավունքներ է ձեռք բերում և պարտականություններ ստանձնում միայն իրավաբանական անձը:

Քաղաքացին (ենթադրաբար՝ պայմանագրի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անունից հանդես եկող) կարող է միայն՝

1. եթե իրավաբանական անձը բաժնետիրական ընկերություն է, լինել բաժնետեր.

2. եթե իրավաբանական անձը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, ունենալ բաժնեմաս կամ հանդիսանալ հիմնադիր (լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունում՝ մասնակից).

3. եթե իրավաբանական անձը տնտեսական ընկերակցություն է, լինել լիակատար ընկեր.

4. կամ անդամ, եթե խոսքը գնում է կոոպերատիվների մասին:

բ) (1) եթե պայմանագրի կողմերը սերվում են (գրանցված, եթե պայմանագրի կողմն իրավաբանական անձ է) տարբեր պետություններից,

գ) արբիտրաժի վայր է ընտրվել օտարերկրյա պետությունը,

դ) պարտավորությունների գերակշռող մասը պետք է կատարվեն օտարերկրյա պետությունում կամ վեճի առարկան գտնվում է այլ պետության տարածքում,

ե) արբիտրաժային համաձայնությանն է միացել օտարերկրյա անձ:

Առանձին դեպքերում ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվում է «օտարերկրյա տարր» եզրույթը, որի տակ ըստ ՀՀ Քաղ. օր. հասկացվում է օտարերկրյա անձ՝ այն է .

ա) օտարերկրյա քաղաքացիներ՝ ներառյալ անհատ ձեռնարկատերեր (նման ձևակերպումը նույնպես ճիշտ չէ),

բ) օտարերկրյա իրավաբանական անձինք:

Միջազգային առևտրային արբիտրաժի հատուկ իրավական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է վերջինիս մի շարք առանձնահատուկ գծերով: Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ այս հարցի շուրջ միանշանակ մոտեցում դեռևս չի ձևավորվել: Այս ինստիտուտի անջատ իրավական կարգավորման անհրաժեշտության դեմ բերվող առարկությունները որոշ հեղինակներ հիմնավորում են միջազգային առևտրային արբիտրաժում առաջացող հարաբերությունների բազմաբովանդակությամբ, և գտնում են, որ այս հարցի կարգավորումը պետք է թողնել միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների իրացման պրակտիկային, քանզի արբիտրաժը հանդիսանում է հենց վերջինիս ածանցյալը: Ասվածը նշանակում է, որ նման մոտեցման դեպքում առավել նպատակահարմար է հարցը կարգավորել միջազգային համաձայնագրերով և առևտրային սովորույթներով (Lex Mercatoria), քանի որ նույնիսկ ամենակատարյալ ազգային օրենքները չեն կարող այնպիսի բարդ և ինքնակառավարվող համակարգի համար արդյունավետ կարգավորիչ հանդիսանալ, ինչպիսին միջազգային առևտրային հարաբերությունների համալիրն է: Խնդիրն այլ տեսանկյունից դիտարկելիս պարզ է դառնում, որ այս հարաբերությունների անընդհատ զարգացումը (դինամիկան), միջազգային համաձայնագրերի միանշանակ կիրառման անհնարինությունը, վերջիններս մեկնաբանման և կոնկրետ գործերի մակարդակով կիրարկման հետ կապված դժվարությունները, պետությունների օրենսդրական և քաղաքական համակարգերի առանձնահատկություններից վեր գտնվելու հանգամանքն էլ հենց պայմանավորում են միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող



վեճերի լուծման հետ կապված հարցերը կարգավորող հատուկ նորմատիվ ակտերի ընդունումը: Նման պարագայում օրենսդրի հիմնական խնդիրը պետք է հանդիսանա հարաբերությունները միջազգային առևտրի զարգացման ժամանակակից միտումներին և սկզբունքներին համապատասխան իրավական կարգավորման ենթարկելը: Պետք է նշել, որ մինչ այժմ իրավագետների մոտ վեճերի տեղիք է տվել միջազգային և ներքին արբիտրաժներն անջատ իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտության խնդիրը, քանի որ այս երկու ինստիտուտներն էլ կարգավորման առարկայով (որը ներառում է վեճերի լուծման ընթացքում առաջացող հարաբերությունների համալիրը), գործունեության սկզբունքներով, ընթացակարգային կանոններով ընդունվող որոշումների բնույթով գրեթե ամբողջովին համընկնում են: Արդարության համար պետք է ընդունել, որ միջազգային և ներքին արբիտրաժների անջատ իրավական կարգավորման պարագայում բազմաթիվ նորմեր անխուսափելիորեն կրկնվելու են:

Այնուամենայնիվ, միջազգային արբիտրաժի ինքնատիպությունը նախևառաջ պայմանավորված է տարբեր իրավական մշակույթների (համակարգերի) բախումներով, որ անվերապահորեն առանձին ուշադրության է արժանի: Այս պատճառով էլ դատավարագիտության մեջ նույնիսկ կարծիք է ձևավորվել, որի համաձայն օրենսդրական տեսանկյունից ճիշտ չէ ներքին և միջազգային արբիտրաժները մեկ միասնական իրավական ակտով կարգավորելը<sup>1</sup>: Ասվածը կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ այս ինստիտուտները կարգավորող ակտերը հասցեագրված են առևտրատնտեսական հարաբերությունների սուբյեկտների տարբեր շրջանակի: Եթե ներքին արբիտրաժի կարգավորման ժամանակ առավելությունը տրվում է ազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, ապա միջազգայինի դեպքում հիմնական շեշտը

<sup>1</sup> Ինչպես դա կատարվել է Ֆրանսիայի նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Միջազգային արբիտրաժի կարգավորմանը նվիրված են Ֆրանսիայի ՔԴՕ 1492-1497 հոդվածները:

դրվում է միջազգային մասնավոր իրավունքի և սովորույթների վրա (Lex Mercatoria, UNIDROIT):

Վերը նշված նրբություններն անվերապահորեն պետք է արտացոլվեն միջազգային առևտրային արբիտրաժը կարգավորող ազգային օրենքում: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունը համանուն օրենք ոչ միայն չի ընդունել, այլ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում տարբերակված չեն միջազգային և ներքին արբիտրաժների գործառնությունները, ինչը գործող օրենսդրության մեջ անճշտությունների և հակասությունների տեղիք է տալիս: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6<sup>1</sup> բաժնում խոսվում է միջազգային արբիտրաժների որոշումը ճանաչելու և Հայաստանի Հանրապետության տարածքում կատարելու մասին, մինչդեռ արբիտրաժը կարգավորող հիմնական օրենսդրական ակտում միջազգային արբիտրաժի մասին անգամ նշում չկա: Իսկ Եվրահամայնքի և ՀՀ միջև 1996թ. «Համագործակցության և գործընկերության մասին» համաձայնագրի հոդված 86-ով ՀՀ-ն պարտավորվել է խրախուսել արբիտրաժային կարգով միջազգային առևտրային և համագործակցային գործարքներից բխող վեճերի լուծումը և ՄԱԿՄԱԻ-3 կանոնակարգի կիրառումը:

Պետք է նշել, որ գրեթե նմանատիպ իրավիճակում էր հայտնվել Շվեյցարիան 1998թ.-ին, երբ «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» ֆեդերալ օրենքի քննարկման ժամանակ որոշ տեսաբաններ առաջ քաշեցին միջազգային արբիտրաժի ինստիտուտի ինքնուրույն կարգավորման անհրաժեշտության հարցը: Վերջիններս թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական փաստարկներով հիմնավորում էին, որ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման ոլորտում արբիտրաժի դերն ու նշանակությունն անառարկելիորեն աճելու է: Հարցի կարևորությունը պայմանավորված է նաև միջազգային առևտրային արբիտրաժային կենտրոնների միջև մրցակցության խստացմամբ, որն իր հերթին կարող էր բացասաբար անդրադառնալ ինչպես այս ոլորտում Շվեյցարիային ձեռք բերած հեղինակությամբ, այնպես էլ երկրի առևտրային համակարգի վրա: Նման մտավախությունը հիմն-

ված էր նաև Ֆրանսիայում, Անգլիայում, Շվեդիայում, Ավստրիայում և Իտալիայում ազգային օրենսդրության կատարելագործման, այդ թվում՝ արբիտրաժային օրենսդրությունը միջազգային առևտրի պահանջներին համապատասխանեցնելու փաստի վրա: Իսկ կատարյալ ազգային օրենսդրությունը, որպես կանոն, կարող է բավականին դրական ազդեցություն ունենալ տվյալ երկրի միջազգային առևտրային արբիտրաժային կենտրոնների հեղինակության բարձրացման վրա:

Միջազգային առևտրային արբիտրաժի մասին առանձին օրենքի ընդունումը կամ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը դարձել է անհրաժեշտ և ժամանակի հրամայական, քանզի միջազգային առևտրատնտեսական համակարգին միասնացվելու (ինտեգրվելու) արդյունքում այս ոլորտը նույնպես հատուկ իրավական կարգավորման կարիք է զգում:

Միջազգային պրակտիկայում ներկայումս ընդունված է նպաստել տարբեր բնույթի վեճերի լուծման պայմանագրային (փոխզիջումային) եղանակի զարգացմանը<sup>1</sup>: Նման մոտեցումը բխում է 1975 թ. Հելսինկյան կոնֆերանսի «Եվրոպայի անվտանգության մասին ակտի» եզրափակիչ մասի բանաձևից, որը կողմերին առաջարկում էր արբիտրաժի վայր ընտրել հատկապես չեզոք պետությունների տարածքները: Ի վերջո միջազգային արբիտրաժի ոլորտում յուրաքանչյուր պետության դիրքերի ուժեղացումը պայմանավորում է համաշխարհային քաղաքական և տնտեսական կյանքում վերջինիս հեղինակության բարձրացումը:

Կենտրոնական Եվրոպայում միջազգային արբիտրաժի յուրահատկություններն ածանցված են տվյալ տարածաշրջանի երկրների իրավական համակարգերի և պետական կառուցվածքի առանձնահատուկ կողմերից: Ֆեդերատիվ պետություններում մենք կարող ենք միջազգային արբիտրաժի կարգավորման տարբեր իրավական ռեժիմների հանդիպել, որոնք շատ դեպքերում հանգեցնում են

<sup>1</sup> Այդ թվում՝ քաղաքական միջնորդության կամ արբիտրաժային կարգով առևտրատնտեսական վեճերի լուծման ընդլայնումը:

կենտրոնի և ֆեդերացիայի սուբյեկտների իրավական համակարգերի հարաբերակցության փոփոխության: Մասնավորապես, մինչ վերջերս Շվեյցարիայում որոշ կանտոններ աչքի էին ընկնում միջազգային առևտրային արբիտրաժի նկատմամբ համեմատաբար կոշտ դիրքորոշմամբ, և արբիտրաժային կարգով վեճերի լուծումն այստեղ զգալիորեն սահմանափակված էր, չնայած այն հանգամանքին, որ Շվեյցարիան աշխարհին հայտնի է որպես միջազգային առևտրային արբիտրաժը խրախուսող պետություն: 1989 թ. հունվարի 1-ին այստեղ ուժի մեջ մտավ «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» ֆեդերալ օրենքը, որն էական փոփոխությունների ենթարկեց ինչպես միջազգային արբիտրաժի իրավական կարգավորումը, այնպես էլ վերջինիս գործառնությունը: Այդ պահից սկսած միջազգային արբիտրաժը Շվեյցարիայում կարգավորվում է բացարձակապես ֆեդերալ իրավունքի նորմերով, մինչդեռ ներքին արբիտրաժի նկատմամբ կիրառվում է կանտոնային իրավունքը<sup>1</sup>:

Հայաստանը միջազգային առևտրային արբիտրաժի իրավական կարգավորմանն անդրադառնալիս պետք է հիմք ընդունի ոչ միայն զարգացած իրավական համակարգեր ունեցող երկրների փորձը, այլև օրենսդրորեն արտացոլի համաշխարհային առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական միտումներն ու առաջադեմ մոտեցումները: Արբիտրաժի կարգավորման գործում որպես ելակետ պետք է ընդունել լիբերալիզմի սկզբունքի ամրագրումը: Լիբերալիզմը առանցքային նշանակություն ունի գրեթե բոլոր եվրոպական երկրների ազգային արբիտրաժային օրենսդրություններում<sup>2</sup>:

<sup>1</sup> Մինչ 1989 թ.-ի հունվարի 1-ը ինչպես ներքին, այնպես էլ միջազգային առևտրային արբիտրաժները կարգավորվում էին կանտոնային իրավունքով և 1969 թ.-ի «Արբիտրաժի մասին» Շվեյցարիայի կոնկորդատով: Ներկայումս բոլոր կանտոնները, բացառությամբ Լյուցեռնի, միացել են այս ակտին, որը «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» ֆեդերալ օրենքի ընդունումով դարձել է ներքին արբիտրաժը կարգավորող միասնական իրավական ակտ:

<sup>2</sup> Blessing, Marc. The New International Arbitration Law In Euorop (Switzerland)-Assignificant Step Forward Liberalizm, Journal of International Arbitration, 1988թ., N5, էջ 2:

Նշված սկզբունքն իր ամրագրումն է ստացել ոչ միայն ազգային օրենքներում, այլև բազմաթիվ միջազգային համաձայնագրերում, ինչի կարևորությունը հատկապես ընդգծվում է միջպետական առևտրատնտեսական հարաբերություններում, որտեղից որ սկիզբ է առնում միջազգային առևտրային արբիտրաժը:

Ընդ որում, լիբերալիզմը չպետք է շփոթել այս ոլորտում ծագող հարաբերությունների իրավական կարգավորման անարխիկ մոտեցման հետ: Այս սկզբունքը ենթադրում է այնպիսի հենասարքի գոյություն, որի շրջանակներում իրավահարաբերությունների սուբյեկտները կարող են գործել ազատորեն և ըստ իրենց հայեցողության լուծել ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութական իրավունքի կիրարկման հետ կապված հարցերը: Միջազգային արբիտրաժում այս սկզբունքն իր արտահայտությունն է գտել կամքի ինքնավարության ինստիտուտում:

Միջազգային առևտրային արբիտրաժը բարդ իրավական համալիր (կոմպլեքսային) ինստիտուտ է, որտեղ համատեղվում են մի կողմից միջազգային մասնավոր իրավունքի սկզբունքները, իսկ մյուս կողմից՝ միջազգային քաղաքացիական դատավարության նորմերը: Եթե միջազգային մասնավոր իրավունքի նորմերը կողմերին հնարավորություն են ընձեռում մինչև վեճի ծագումը կամ վեճ առաջանալուց հետո ընտրել կիրառման ենթակա նյութական իրավահարաբերությունները կարգավորող (կոնկրետ ազգային) իրավունքը, ապա դատավարական նորմերը կարգավորում են հենց բուն արբիտրաժային վարույթը:

Ժամանակակից իրավագիտությունն ապացուցել է, որ միջազգային արբիտրաժն ազգային իրավական համակարգերից վեր կանգնած ինստիտուտ է: Ազգային իրավունքը (օրենսդրությունը) հիմնականում ուղղված է ներքին (ներպետական) իրավահարաբերություններին, իսկ միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների համապարփակ կարգավորումն առավել արդյունավետ կարող է իրականացվել միայն միջազգային պրակտիկայում ձևավորված ունիվերսալ նորմերի համակարգով<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Джудитта К.М., Указатель сочинений, N48, էջ 19:

Ներկայումս գրեթե բոլոր երկրներում օրենսդրական մակարդակով հրաժարվում են միջազգային արբիտրաժը որևէ ազգային իրավական համակարգին կապելու կամ ամրակցելու գաղափարից: Շվեյցարական օրենսդրությունը հանդիսանում է սրա դրսևորման ամենավառ օրինակը: Այսպես, այստեղ արբիտրաժը կարգավորող նորմերը կրում են դիսպոզիտիվ բնույթ և կիրառվում են միայն այն դեպքում, երբ կողմերն արբիտրաժային համաձայնությամբ այլ բան չեն նախատեսել:

Նմանատիպ դրույթ է ամրագրված նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում, որի 19 և 28-րդ հոդվածներով սահմանված կարգով կողմերն արբիտրաժային համաձայնությամբ կարող են ընտրել վեճի էության նկատմամբ կիրառելի նորմերը կամ էլ իրենց հայեցողությամբ համաձայնվել վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ:

Միջազգային և ներքին արբիտրաժների անջատ իրավական կարգավորման անհրաժեշտության ընդունումը միջազգային իրավաբանական պրակտիկայում սկսվեց իրավական բուրգի գագաթնակետից, այսինքն՝ միջազգային համաձայնագրերից և միջպետական այլ պայմանագրերից<sup>1</sup>:

Ներկայումս, գրեթե բոլոր եվրոպական երկրներում միջազգային և ներքին արբիտրաժները կարգավորվում են առանձին օրենսդրական ակտերով: Ընդ որում, ներքին արբիտրաժի կարգավորման համար, որպես կանոն, կիրառվում են զուտ ազգային իրավունքի նորմերը, առանց հաշվի առնելու այլ երկրների, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցության հարաբերությունների արդյունքում ձևավորված իրավական կարգավորման առանձնահատկությունները: Սակայն ազգային օրենսդրության կատարելագործման հիմքում միշտ էլ դնում են հանրաճանաչ միջազգային սկզբունքները և իրավակիրառ պրակտիկան: Իսկ միջազգային

<sup>1</sup> Միջազգային և ներքին արբիտրաժների առաջին իմաստային տարանջատումը տեսանելի էր արդեն օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Ժնևի 16.09.1927թ. կոնվենցիայում, որին փոխարինելու եկավ «Արբիտրաժային որոշումների ճանաչման և հարկադիր կատարման մասին» Նյու Յորքի 1958թ. համաձայնագիրը:

դեպքում առավելությունը տրվում է միջպետական համաձայնագրերին, կոնվենցիաներին, ինչո՞ւ չէ՝ նաև երկկողմ պայմանագրերին<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ ներքին և միջազգային արբիտրաժների տարանջատման չափորոշիչները ձևավորվել են միջազգային առևտրային և արբիտրաժային պրակտիկայում ու իրենց արտացոլումն են գտել միջազգային համաձայնագրերում և պայմանագրերում, իսկ հետո էլ մասամբ ազգային օրենքներում: Ինչպես արդեն նշվել է, ՄԱԿՄԱԻՅ՝ օրենքի 1(3) հոդ. համաձայն արբիտրաժը համարվում է միջազգային, եթե կողմերը կամ նրանց պատկանող կազմակերպությունները գտնվում են տարբեր երկրներում, ինչպես նաև՝ եթե պարտավորությունների զգալի մասը պետք է կատարվի այլ երկրում, երբ վեճի առարկան գտնվում է այլ պետության տարածքում և այլն: «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքի 1.2 հոդվածի համաձայն արբիտրաժը համարվում է միջազգային, երբ կողմերից թեկուզև մեկի կազմակերպությունը գտնվում է ՌԴ սահմաններից դուրս: Այս օրենքի համաձայն միջազ-

<sup>1</sup> Մասնավորապես՝ Նիդերլանդների 1986թ. ՔԴՕ 4-րդ գլուխը նվիրված է արբիտրաժին, որտեղ ինչպես Շվեյցարիայի 1969թ. Կոնկորդատում կարգավորվում են թե՛ միջազգային և թե՛ ներքին արբիտրաժին վերաբերող հարցերը: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս վերոհիշյալ ակտը նախևառաջ ուղղված է միջազգային առևտրային արբիտրաժի խնդիրների լուծմանը: Իզուր չէ, որ Յուլանդիայում ասում են, թե այն ինչ լավ է միջազգային արբիտրաժի համար, լավ է նաև հոլանդականի համար: Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել նաև Բելգիայում, որտեղ թե՛ միջազգային և թե՛ ներքին արբիտրաժները կարգավորվում են 1972թ. հուլիսի 4 դատավարական օրենսգրքի բաժին 6-րդով, որը լրացումների և փոփոխությունների ենթարկվեց 1985թ. մարտի 27-ին: Ֆրանսիայում արբիտրաժի կարգավորմանը նվիրված է նոր ՔԴՕ 4-րդ բաժինը, որի 1492-1497 հոդվածներն ուղղակիորեն վերաբերում են միջազգային արբիտրաժային կարգով առևտրատնտեսական վեճերի լուծմանը: Մեծ Բրիտանիայում 1996թ. ընդունվեց արբիտրաժի մասին ակտը, որը քննարկվող ինստիտուտի կարգավորման նպատակով որևէ հատուկ իրավական ռեժիմ չի սահմանում: Նման մոտեցումը կարելի է ավելի շուտ բացառությունների շարքին դասել, ինչը պայմանավորված է ընդհանուր իրավական համակարգի երկրներին բնորոշ իրավաբանական ավանդույթներով: Պետք է նշել, որ ամենաառաջադեմ ճանապարհով շարժվեցին շվեյցարական օրենսդիրները, որոնք տարանջատեցին ներքին և միջազգային արբիտրաժների իրավական կարգավորումը, ինչը հարցի լուծման ամենաառաջադեմ մոտեցումն է:

գային արբիտրաժային դատարանի լուծմանը կարող են հանձնվել օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների միջև կամ նրանց մասնակցությամբ բոլոր վեճերը: Ինչպես տեսնում ենք, ՌԴ օրենքը նույնպես ամրագրել է այն կարևորագույն դրույթը, համաձայն որի արբիտրաժային կարգով կարող են լուծվել նաև պետությունների, պետական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերը, քանի որ իրավունքի սուբյեկտ, և ըստ այդմ էլ՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներ են հանդիսանում պետությունները և համայնքները, որոնք քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Ընդ որում, միջազգային և ներքին արբիտրաժների տարբերակման չափորոշիչների սահմանմամբ Ռուսաստանը տարբերվում է ինչպես եվրոպական երկրներից, այնպես էլ ՄԱԿՄԱԻՅ՝ օրենքը և եվրոպական համաձայնագրի դրույթները փոխառած այլ պետություններից: Եթե նշված օրենսդրությամբ տարանջատման հիմնական չափորոշիչ է հանդիսանում կողմերի էքստերիտորիալությունը, ապա «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» 1993թ. ՌԴ օրենքում հիմք է ընդունվում կողմերի իրավական կարգավիճակը՝ կապված ձեռնարկություններում կապիտալի ծագման, դրա պատկանելության հետ<sup>1</sup>:

Մեր կարծիքով միջազգային և ներքին արբիտրաժների տարանջատման ամենատրամաբանական չափորոշիչը կողմերի էքստերիտորիալությունն է: Միայն այս պարագայում մենք կարող ենք խոսել տարբեր իրավական համակարգերի, մշակույթների բախման մասին: Ինչ վերաբերում է ՌԴ օրենքում կամ Ֆրանսիայի քաղաքա-

<sup>1</sup> Ֆրանսիայի ՔԴՕ 1492 հոդվածի համաձայն՝ արբիտրաժը համարվում է միջազգային, եթե վերջինս այս կամ այն չափով առնչվում է միջազգային առևտրին: Այս չափորոշիչը կարելի է մեկնաբանել տարբեր կերպ: Սակայն նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ Ֆրանսիայում գրանցված օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների և իրավունքի այլ սուբյեկտների միջև վեճերը հանձնվում են միջազգային արբիտրաժի լուծմանը, քանի որ դրանք առնչվում են միջպետական (միջազգային) առևտրատնտեսական հարաբերություններին:

ցիական դատավարության օրենսգրքում ամրագրված դրույթն՝ կապիտալում օտարերկրյա ներդրումների առկայության վերաբերյալ, ապա վերջինս միջազգային և ներքին արբիտրաժների տարանջատման, դրանց համար տարբեր իրավական ռեժիմներ սահմանելու տեսանկյունից, այդքան էլ հարմար չափորոշիչ չէ, քանի որ այս դեպքում դուրս չենք գալիս ազգային իրավակարգի շրջանակներից: Օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունները նույնպես յուրաքանչյուր պետության իրավունքի սուբյեկտ են, գործում են միևնույն իրավակարգի ներսում, և սրանց գործունեությունը՝ սկսած պետական գրանցումից մինչև լուծարումը կարգավորվում է տվյալ երկրի օրենսդրությամբ: Հետևաբար, նման դեպքերում օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների միջև, ինչպես նաև դրանց մասնակցությամբ վեճերը դուրս չեն գալիս ազգային իրավական համակարգի շրջանակներից: Նման վեճերի լուծումը ավելի շուտ վերաբերում է ներքին արբիտրաժի խնդիրներին: Ուստի ՌԴ օրենքում ամրագրված այս դրույթը կարելի է համարել ոչ ճիշտ, քանի որ նշված հատկանիշը անվերապահորեն պետք է հաշվի առնել միջազգային առևտրային արբիտրաժի մասին հայրենական օրենքը մշակելիս: *Հենց տարբեր իրավակարգերի բախումը* պետք է դրվի միջազգային և ներքին արբիտրաժների տարանջատման հիմքում: Իսկ այս հնարավոր է միայն կողմերի էքստերիտորիալության սկզբունքի անվերապահ ճանաչման դեպքում: Այս առումով հատկանշական է շվեյցարական օրենսդիրների մոտեցումը, համաձայն որի, Շվեյցարիայում գտնվող (գրանցված) օտարերկրյա կազմակերպությունների միջև վեճերը լուծվում են ներքին արբիտրաժում (Միջազգային մասնավոր իրավունքի մասին ֆեդերալ օրենք): Միջազգային առևտրային արբիտրաժի ՌԴ օրենքով նման վեճերը հանձնվում են միջազգային արբիտրաժի լուծմանը<sup>1</sup>:

Միջազգային արբիտրաժի գործառնությունը կարգավորող հիմնական ակտը՝ «Արտաքին արբիտրաժի մասին» եվրոպական համաձայնագիրը, նույնպես միջազգային արբիտրաժի սահման-

<sup>1</sup> Այս հարցում ամենամանորոշը ֆրանսիական տարբերակն է, որտեղ միջազգային արբիտրաժի տարանջատման հիմքում դրված է միջազգային առևտրին առնչվելու հարցը:

ման հիմնական չափորոշիչ է համարում կողմերի էքստերիտորիալությունը, նշելով որ արբիտրաժը միջազգային ճանաչելու համար անհրաժեշտ է, որպեսզի պայմանավորվող կողմերը տարբեր պետություններից սերվեն: Չնայած, որ նույն ակտի 1(1) հոդվածը սահմանում է, որ միջազգային արբիտրաժի լուծմանը կարող են հանձնվել միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերը, մեր կարծիքով, այս պարագայում որոշիչը էքստերիտորիալության սկզբունքն է, քանի որ տարբեր պետություններում գտնվող կողմերի միջև վեճը ինքնուրույն կրթի միջազգային առևտրային հարաբերություններից:

Ինչպես արդեն նշվել է, էքստերիտորիալության սկզբունքը անվերապահորեն պետք է դրվի հայրենական օրենքում փոփոխությունների մշակման հիմքում: Ընդ որում, չպետք է անտեսել այն հանգամանքը, որ պայմանագրի (արբիտրաժային համաձայնության) կողմերից թեկուզև մեկը կարող է լինել օտարերկրյա անձ, սակայն վերջինիս բնակության կամ գտնվելու վայրը հանդիսանա Յայաստանը, ուստի նման դեպքերում առավել նպատակահարմար է նախատեսել պահանջ, համաձայն որի, պայմանագրի կողմերից մեկի բնակության կամ գտնվելու վայրը պետք է լինի ՀՀ սահմաններից դուրս, քանի որ Յայաստանում գրանցված անձանց գործունեությունը կարգավորվում է հայրենական օրենսդրությամբ: Հետևաբար, այս դեպքում նրանք գործում են միևնույն իրավակարգի շրջանակներում: Այս առումով առանձնանում է ՄՄԻ մասին Շվեյցարիայի ֆեդերալ օրենքը, որի 12-րդ գլխում սահմանվում է, թե, որպեսզի արբիտրաժը ճանաչվի միջազգային, կողմերից մեկի բնակության կամ գտնվելու վայրը արբիտրաժային համաձայնության կնքման պահին պետք է լինի Շվեյցարիայի սահմաններից դուրս: Այս պահանջը հավասարապես վերաբերում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ արբիտրաժային համաձայնություններին: Պետք նշել սակայն, որ նման ձևակերպումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ արբիտրաժային համաձայնության կնքման պահին կողմերի բնակության կամ գտնվելու վայրը լինի Շվեյցարիայից դուրս, իսկ հետագայում տեղի ունենան փոփոխություններ, ինչի արդյունքում արբիտրաժային

քննության պահին երկու կողմն էլ Շվեյցարիայի ռեզիդենտ հանդիսանա (օրինակ, եթե կողմը քաղաքացի է, ապա քաղաքացիության կամ բնակության վայրի փոփոխությունը, կամ, եթե կողմը իրավաբանական անձ է, ապա գտնվելու վայրի փոփոխությունը): Հարց է ծագում. արդյո՞ք նման դեպքերում պետք է կիրառվի ֆեդերալ օրենքի 12-րդ գլուխը, և որքանով է այդ նպատակահարմար: Եվ հակառակը, արբիտրաժը կկարգավորվի ներքին արբիտրաժին վերաբերող նորմերով, եթե արբիտրաժային համաձայնության կնքման պահին կողմերը Շվեյցարիայի ռեզիդենտ են հանդիսացել, սակայն արբիտրաժային քննությունը սկսելու ընթացքում դարձել են օտարահպատակ կամ փոխել են իրենց գտնվելու, բնակության վայրը: Այս դեպքում առավել տրամաբանական է կնքել նոր արբիտրաժային համաձայնություն, որով վեճի լուծումը կհանձնվեր միջազգային արբիտրաժին: Բացի այդ, ֆեդերալ օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիությունը չի կարող միջազգային արբիտրաժի տարանջատման լուրջ չափորոշիչ հանդիսանալ, մասնավորապես, եթե պայմանագրի երկու կողմերն էլ գտնվում են Շվեյցարիայում, իսկ եթե նրանցից մեկի բնակության վայրը Շվեյցարիայի սահմաններից դուրս է, ապա այս հանգամանքը միջազգային արբիտրաժ դիմելու հիմք է: Այս փաստարկը ևս խոսում է էքստերիտորիալության սկզբունքի օգտին, ինչի հիմքում ընկած է ոչ թե քաղաքացիական պատկանելությունը, այլ բնակության կամ գտնվելու վայրը որոշելը: Պետք է նշել սակայն, որ այս հարցը իրավաբանական գրականության մեջ լուրջ տարաձայնությունների տեղիք է տվել և վերջնական լուծում դեռևս չի ստացել:

Մեր կարծիքով, ներքին և միջազգային արբիտրաժների տարանջատման դրանց կարգավորման և գործառնության տարբեր իրավական ռեժիմներ սահմանելու հիմքում չպետք է դնել միայն մեկ սկզբունք կամ առաջնորդվել միայն մեկ չափորոշիչով՝ էքստերիտորիալությամբ: Միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի բազմաբովանդակությունն ու դրանց համապարփակ կարգավորման անհրաժեշտությունը մեզ պարտադրում են ցուցաբերել պլյուրալիստական (բազմակողմանի) մոտեցում, և հարցի առանցքում դիտարկել նաև միջազգային արբիտրա-

ժի տարանջատման այլ չափորոշիչներ: Որպես օրինակ կարող ենք բերել վեճի բնույթը, այսինքն՝ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխելու փաստը, որն անառարկելիորեն ենթադրում է նաև կողմերի էքստերիտորիալությունը: Ընդ որում, այս չափորոշիչն ընկած է բազմաթիվ եվրոպական երկրների արբիտրաժային օրենսդրության հիմքում<sup>1</sup>: Վերջիվերջո, չպետք է մոռանալ, որ միջազգային արբիտրաժի առաքելությունը միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծումն է:

Հայրենական օրենսդիրները միջազգային արբիտրաժի իրավական կարգավորման պարագայում նույնպես որպես ելակետ պետք է ընդունեն այս մոտեցումը՝ առավելությունը տալով տարանջատման առավել պարզ և հստակ չափորոշիչներին: Ինքնին պարզ է, որ շատ դեպքերում ավելի հեշտ է որոշել կողմերի տարածքային պատկանելության, քան ծագած վեճի միջազգային առևտրատնտեսական բնույթ կրելու հարցը, ինչը խոր ուսումնասիրությունների և գործի բոլոր հանգամանքների վերլուծություն է պահանջում: Ինչևէ, չպետք է անտեսել նաև վեճի առարկայի գտնվելու վայրի, գործարքի կնքման, պարտավորությունների կամ դրանց զգալի մասի կատարման, արբիտրաժի վայրի՝ լրացուցիչ չափորոշիչների սահմանումը, որոնք նույնպես կարող են ներքին և միջազգային արբիտրաժների տարբերակման հիմք հանդիսանալ: Հարկ է նշել նաև, որ միջազգային արբիտրաժը կարգավորող առանձին օրենք ընդունելու դեպքում բազմաթիվ դրույթներ կրկնվելու են: Այդ պատճառով էլ կարելի է հարցն ուղղակիորեն լուծել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

*Հաշվի առնելով բերված փաստարկները՝ անհրաժեշտ է «Առևտրային արբիտրաժի մասին» հայրենական օրենքում առանձին հոդվածով նախատեսել.*

*«արբիտրաժը համարվում է միջազգային, եթե՝*

<sup>1</sup> Տե՛ս Ֆրանսիայի ՔԳՕ 1492-րդ հոդված, ՄԻԻ մասին Շվեյցարիայի ֆեդերալ օրենքի 12-րդ գլուխ, Fourchard, Philippe, L'arbitrage commercial International. Paris, 1964, 21-22 էջերը, Paulsson, Jean Arb.Int. 1986, էջ 90:

ա) արբիտրաժային համաձայնության կնքման պահին պայմանագրի կողմերը տարբեր պետություններից են (կամ գրանցված են տարբեր պետություններում, եթե կողմն իրավաբանական անձ է ),

բ) արբիտրաժի վայր է ընտրվել օտարերկրյա պետությունը,

գ) պայմանագրային պարտավորությունների գերակշռող մասը պետք է կատարվի օտարերկրյա պետությունում կամ վեճի առարկան գտնվում է այլ երկրի տարածքում,

դ) արբիտրաժային համաձայնությանը միացել է օտարերկրյա (ֆիզիկական կամ իրավաբանական) անձ:

Նշված լրացումը թույլ կտա վերացնել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում առկա թյուրըմբռնումը, քանի որ դատավարության օրենքում կարգավորվում են ՀՀ-ում միջազգային արբիտրաժների որոշումների ճանաչման ու հարկադիր կատարման հետ կապված հարցերը, իսկ առևտրային արբիտրաժը կարգավորող օրենքում միջազգային արբիտրաժի մասին հիշատակում չկա: Նշված անհամապատասխանությունը կարող է հարթվել նաև դատավարության օրենքում փոփոխություն կատարելու միջոցով, մասնավորապես՝ «միջազգային արբիտրաժի» փոխարեն օգտագործելով «օտարերկրյա արբիտրաժ» բառակապակցությունը:

*Իմի բերելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ միջազգային (առևտրային) արբիտրաժային կարգով գործերի քննությունը միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից կամ օտարերկրյա անձանց (տարրի) մասնակցությամբ առևտրատնտեսական գործարքներից բխող վեճերի լուծման համար նախատեսված կառուցակարգ է, որի միջոցով երկու և ավելի անձանց միջև կնքված արբիտրաժային համաձայնության հիման վրա և կիրառման ենթակա իրավունքին համապատասխան իրականացվում է արբիտրաժի իրավասությանը հանձնված վեճի քննումը և լուծումը:* Ընդ որում, արբիտրաժի արդյունքում կայացված վճիռը (իհարկե, եթե այն կայացվել է օրենքին և արբիտրաժային համաձայնությանը համապատասխան) վերջնական է, պարտադիր է կողմերի համար և ենթակա է հարկադիր կատարման Նյու Յորքի 1958թ. համաձայնագրի մասնակից հանդիսացող յուրաքանչյուր երկրում:

## **§6. Միջազգային առևտրային և հանրային արբիտրաժները**

Միջազգային առևտրային արբիտրաժը պետք է տարբերել նաև միջազգային (հանրային) արբիտրաժից: Վերջինս իրականացնում է միջազգային իրավունքի սուբյեկտների միջև ինչպես քաղաքական, այնպես էլ զուտ տնտեսական բնույթի վեճերի արբիտրաժային լուծման գործառույթ<sup>1</sup>: Այդպիսի գործառույթ է իրականացնում, օրինակ, Հաագայում մշտապես գործող միջնորդ դատարանը:

Միջազգային հանրային և մասնավոր (առևտրային) արբիտրաժների նույնացումը բացառելու համար առանձնակի ուշադրության պետք է արժանացնել այս երկու ինստիտուտների հարաբերակցությանը: Թեև սրանք տարբեր իրավական ինստիտուտներ են, սակայն ունեն որոշակի ընդհանրություններ, որոնք բազմաթիվ շփոթությունների տեղիք են տալիս: Այստեղ գործում են գրեթե նույն սկզբունքները, որոնք էլ իրենց հերթին պայմանավորում են հանրային և առևտրային արբիտրաժներում նույնանման ինստիտուտների առկայությունը: Մասնավորապես, միջազգային հանրային և առևտրային արբիտրաժներում նույնական է օրինակ՝ արբիտրաժային համաձայնության ինստիտուտը, սակայն դրսևորման որոշակի առանձնահատկություններով:

Միջազգային հանրային արբիտրաժում արբիտրաժային քննության համար հինք կարող է հանդիսանալ վեճը արբիտրաժային կարգով լուծելու մասին կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը: Ընդ որում, վեճը արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու մասին պարտավորությունը կարող է արտահայտված լինել թե՛ բազմակողմ և թե՛ երկկողմ պայմանագրերում, որոնք հիմնականում նվիրված են միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորմանը: Ընդհանուր տեսակի բազմակողմ համաձայնագրի օրինակ է 1907թ. Հաագայի կոնվենցիան և Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին 1949թ. վերանայված ընդհանուր ակտը: Միջազգային վեճերի խաղաղ կարգավորմանը նվիրված

<sup>1</sup> St'u Брунцева Е.Б., Международный Коммерческий Арбитраж. М. 2001, էջ 98:

երկկողմ պայմանագրի օրինակ է 1965թ. Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի միջև կնքված Չաշտեցման, վեճերի՝ դատական կարգով լուծման և արբիտրաժի մասին պայմանագիրը (իր հավելվածներով): Այս պայմանագրի 4-րդ գլխում սահմանվում են վեճը լուծող արբիտրների քանակը, քաղաքացիությունը և նշանակման կարգը, ինչպես նաև թափուր տեղերի լրացման և արբիտրաժի իրավագործության հետ կապված հարցերը: Հավելվածներում առաջարկվում են արբիտրաժային կանոնակարգեր, երաշխավորված ընթացակարգային կանոններ, որոնց առանձին դրույթների վրա կողմերը կարող են հղում կատարել կամ, ցանկության դեպքում, ընտրել կիրարկման համար:

Միջազգային վեճը արբիտրաժի լուծմանը հանձնելու մասին պարտավորությունը կարող է արտահայտված լինել նաև վեճը ծագելուց հետո կնքված հատուկ ակտերում, որոնք հիմնականում կրում են փոխգիշտության բնույթ: Հարկ է նշել, որ եթե, առևտրային արբիտրաժում բավական է արբիտրաժային համաձայնության հասարակ գրավոր ձևը պահպանելը, ապա հանրայինի դեպքում այս նորմը միանշանակ չի կարող ընդունվել: Հանրային արբիտրաժում արբիտրաժային համաձայնությունը, ըստ էության, միջպետական պայմանագիր է, որը կարող է ուժի մեջ մտնել միայն պայմանավորվող պետությունների օրենսդիր մարմիններում վավերացնելուց հետո:

Միջազգային հանրային արբիտրաժում, որպես կանոն, քննվում են իրավաբանական<sup>1</sup> վեճեր, բացառությամբ ՄԱԿ-ի միջազգային դատարանի և պետությունների ներքին իրավասությանը վերապահված գործերի: Բացի այդ, միջազգային հանրային արբիտրաժում որպես կողմ կարող են հանդես գալ միայն միջազգային իրավունքի սուբյեկտները: Առանձին քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և իրավաբանական անձինք միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն: Հարկ է նշել, սակայն, որ Հաագայի միջնորդ դատարանի մշտական պալատի լուծմանը կարող են հանձնվել նաև քաղաքացիների մասնակցությամբ գործերը, որոնք

<sup>1</sup> Ժամանակակից միջազգային իրավունքում դեռևս իրավաբանական և քաղաքական վեճերի սահմանազատման հստակ չափորոշիչներ չեն սահմանվել:

դատարանը լուծում է միջազգային հանրային իրավունքի նորմերին համապատասխան: Միջազգային հանրային արբիտրաժի իրավասության, գործունեության սկզբունքներին վերաբերող այլ հարցերը կարգավորվում են միջազգային համաձայնագրերով: Մինչդեռ, առևտրային արբիտրաժում այս հարցերի լուծումը վերապահված է թե՛ միջազգային իրավական ակտերին և թե՛ ներպետական օրենսդրությանը: Բացի այդ, միջազգային հանրային և առևտրային արբիտրաժները տարբերվում են նաև արբիտրաժի կազմի ձևավորման կազմակերպարավական եղանակներով: Այսպես, համաձայն Հաագայի 1907թ. կոնվենցիայի (45 հոդվ.) հանրային արբիտրաժում յուրաքանչյուր կողմ նշանակում է երկուական դատավոր, որոնցից միայն մեկը կարող է քաղաքացի հանդիսանալ: Նշանակված դատավորներն էլ ընտրում են նախագահողին: Միջազգային հանրային արբիտրաժի պատմությանը հայտնի են դեպքեր, երբ գործը քննվել և լուծվել է միանձնյա: Մասնավորապես, 1901թ. Բրիտանական Գվինեայի և Բրազիլիայի միջև սահմանային ճշտումների հետ կապված վեճի լուծումը հանձնվեց Իտալիայի թագավորին, որը գործի քննությունը վարեց միանձնյա: Հարկ է նշել, որ միջազգային իրավական պրակտիկայում վեճերի կոլեգիալ քննության սկզբունքը հիմնականում բխում է բազմակողմ միջազգային համաձայնագրերից: Սակայն, գոյություն ունեն նաև այնպիսի բազմակողմ համաձայնագրեր, որոնք շեղվում են այս սկզբունքից, օրինակ՝ Միջազգային ջրագրական կազմակերպության մասին 1967թ. կոնվենցիան (հոդվ. 17), Տիեզերական արբանյակային ծրագրերի մասին 1971թ. համաձայնագիրը և այլն: Ընդ որում, միջազգային հանրային արբիտրաժում առավել հաճախ հանդիպում ենք կոլեգիալ դատարանների: Օրինակ՝ Լա Մանչի նեղուցի ցամաքային շելֆի սահմանազատման հետ կապված վեճերը լուծող արբիտրաժային դատարան ստեղծելու մասին 1975թ. Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքված համաձայնագիրը, «Նոր տեսակի բույսերի պաշտպանության մասին» 1961թ. կոնվենցիան և այլն:

Ինչևէ, միջազգային հանրային և առևտրային արբիտրաժները միջև ընդհանրական է այն, որ երկու դեպքում էլ զուգակցվում են գործերի միանձնյա և կոլեգիալ կարգով քննության սկզբունքները:



Միջազգային հանրային և առևտրային արբիտրաժները տարբերվում են նաև գործերի քննության ընթացակարգային կարգավորվածության աստիճանով: Միջազգային հանրային արբիտրաժում գործերի քննությունը կարգավորող հատուկ ընթացակարգային կանոններ դեռևս չեն ընդունվել: Միջազգային իրավունքում ամրագրվել է փոխզիջումների միջոցով վեճերի լուծման սկզբունքը, սակայն առանց ընթացակարգային հարցերի լուծման: Այս հարցերի լուծումը թողնված է կողմերի հայեցողությանը: Օրինակ՝ 1988թ. Թաբի վեճը կարգավորելու նպատակով միջնորդ դատարան ստեղծելու մասին համաձայնագրով կարգավորված էին միայն ընդհանուր բնույթի հարցերը, ինչպես օրինակ՝ դատարանի տեղակայումը (Ժնև), դատավարության լեզուն որոշելը և այլն: Նախատեսված էր նաև դրույթ, համաձայն որի միջնորդ վճռի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր հարցերը հանձնվում են նույն դատարանի լուծմանը: Ավելին, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Նիդեռլանդների միջև 1925 թվականից ի վեր սահմանված է, որ արբիտրաժի ընթացքում ծագող ընթացակարգային բոլոր հարցերի լուծումը թողնված է արբիտրի հայեցողությանը:

Իսկ միջազգային առևտրային արբիտրաժում, որպես կանոն, գործի քննության ընթացակարգային հարցերը կարգավորված են ինստիտուցիոնալ կանոնակարգերով: Ad hoc արբիտրաժի դեպքում կողմերը կարող են հղում կատարել ՄԱԿՄԱԻՅ արբիտրաժային կանոնակարգի վրա:

Այլ է նաև միջազգային հանրային և առևտրային արբիտրաժների ֆինանսավորման կարգը: Միջազգային հանրային արբիտրաժը ֆինանսավորում են պայամանավորվող պետությունները, մինչդեռ մասնավոր արբիտրաժային կենտրոնների ֆինանսական միջոցները գոյանում են արբիտրաժային տուրքերից, մատուցվող ծառայությունների դիմաց վճարումների գումարներից և այլն: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված է գործի քննության ընթացքում սեփական ծախսերը հոգալու սկզբունքը, այդ թվում՝ փաստաբանների հոնորարները, փորձաքննությունների համար վճարումները, ապացույցների հավաքման, փաստաթղթերի թարգմանությունների հետ կապված ծախսերը և այլն: Իհարկե, դրանք հետագայում ենթակա են հատուցման:

Միջազգային հանրային և առևտրային արբիտրաժները տարբերվում են նաև արբիտրաժային վճիռների վիճարկման տեսանկյունից: Միջազգային հանրային արբիտրաժում ընդունված որոշման վիճարկում գործնականում հնարավոր չէ: Այս ոլորտին վերաբերող միջազգային ոչ մի համաձայնագիր, այդ թվում՝ 1899 և 1907թ. Հասագայի կոնվենցիաները այդպիսի կարգ չեն պարունակում: Սակայն, Միջազգային իրավունքի հանձնաժողովի տիպային կանոնների ժողովածուի 31-րդ հոդվածն ամրագրում է, որ արբիտրաժային որոշումը կարող է վերանայել, ուղղել միայն այն կայացնող դատարանը, և այն էլ, միայն գրասխալների, վրիպակների, մաթեմատիկական սխալների հետ կապված:

Պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում եղել են դեպքեր, երբ արբիտրաժային որոշման (վճռի) մեկնաբանման և կատարման հետ կապված հարցերը լուծելու համար կազմավորվել է առանձին միջնորդ (արբիտրաժային) դատարան: Օրինակ՝ Արգենտինա-Չիլիական սահմանային վեճով 1902թ. կայացված արբիտրաժային որոշման մեկնաբանման և կատարման համար 1966թ. ստեղծվեց նոր արբիտրաժային դատարան: Սակայն ասվածը միանշանակ չի կարելի ընդունել: Նիկարագուայի և Հոնդուրասի միջև 1906թ. սահմանագծման վեճով միջնորդ դատարանը որոշում էր կայացրել հոգուտ Հոնդուրասի, սակայն հակառակ կողմը համաձայն չէր մնան որոշման հետ, և, ցանկանալով որոշակի պարզաբանումներ մտցնել վեճի մի շարք դրույթների մեջ, այն կրկին բանակցությունների առարկա դարձրեց: Երբ բանակցությունների գործընթացը մտավ փակուղի, 1957թ. կողմերը փոխադարձ համաձայնությամբ վեճը հանձնեցին ՄԱԿ-ի միջազգային դատարանի լուծմանը, որտեղ Նիկարագուան հիմնավորեց, որ արբիտրաժային որոշումը պարունակում է էական սխալներ, հիմնավորված չէ, հակասությունների հետևանքով գործնականում անիրագործելի է: Չնայած բերված փաստարկներին, միջազգային դատարանը 1960թ. որոշմամբ հաստատեց արբիտրաժի 1906թ. որոշման օրինականությունը:

Մեր կարծիքով, այս գործընթացն այդքան էլ ճիշտ չէ արբիտրաժային վճռի վիճարկում համարել: Բողոքարկման պարագայում գործի քննության համար հակառակ կողմի համաձայնությունը

պարտադիր չէ: Մինչդեռ, այս դեպքում մենք գործ ունենք վեճը և կայացված որոշումը փոխադարձ համաձայնությամբ այլ դատարանի լուծմանը հանձնելու հետ, ինչը բողոքարկում կամ վիճարկում դժվար է համարել: Ինչևէ, տեսականորեն միջազգային համաձայնագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային արբիտրաժում այդպիսի դեպքերը բացառված չեն<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ միջազգային առևտրային արբիտրաժում արբիտրաժային վճռի բողոքարկման ինստիտուտը չի գործում: Այստեղ հնարավոր է միայն պետական դատարանում արբիտրաժի արդյունքում ընդունված ակտի վիճարկում: Ընդ որում, արբիտրաժային վճռի վերանայումը իրականացվում է վերջինիս օրինականության ստուգմամբ, միայն օրենքում (միջազգային համաձայնագրերում) ամրագրված հիմքերով: Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը նախատեսված են թե՛ մեր պետական օրենսդրությամբ և՛ թե՛ միջազգային համաձայնագրերում, որոնք հիմնականում հանգում են նյութական և դատավարական իրավունքի խախտումների: Այս առումով հատկանշական է 1958թ. Նյու Յորքի համաձայնագիրը, որտեղ հանգամանալից շարադրված են արբիտրաժային անվավերության հիմքերը (հոդվ. 4): Չպետք է մոռանալ, սակայն, որ մեր պետական օրենսդրությամբ կարող են սահմանվել անվավերության լրացուցիչ այլ հիմքեր: Խնդիր չունենալով տրվել արբիտրաժային վճռի վիճարկման հիմք հանդիսացող հանգամանքների մանրագնին ուսումնասիրությանը, նշեն, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը հանգամանալից կարգավորել է արբիտրաժային վճիռը վիճարկելու և չեղյալ ճանաչելու գործընթացը (գլուխ 7): Այս առումով կատարյալ էր «Արբիտրաժի մասին» 1929թ. Շվեյցարիայի օրենքը, որը սահմանելով արբիտրաժային վճռի անվավերության հիմքերը (հոդվ. 20), բացառել է բոլոր իրավաբանական անորոշությունները՝ հստակորեն սահմանազատելով բողոքարկման և այն անվավեր ճանաչելու ինստիտուտները:

Իմի բերելով վերը շարադրվածը, կարող ենք փաստել, որ միջազգային առևտրային արբիտրաժում արբիտրաժային վճռի բողոք

քարկում հնարավոր չէ, մինչդեռ հանրային արբիտրաժում այս ինստիտուտի կիրարկումն անորոշությունների հետ է կապված:

Միջազգային հանրային և առևտրային արբիտրաժները տարբերվում են նաև արբիտրաժային վճիռների (որոշումների) կատարման տեսանկյունից: Դեռևս չի ընդունվել միջազգային այնպիսի համաձայնագիր, որը համապարփակ կարգավորման կենթարկեր հանրային արբիտրաժային վճիռների (որոշումների) կատարման հետ կապված բոլոր հարցերը: Ավելին, միջազգային հանրային իրավունքում արբիտրաժային որոշումների կատարման հատուկ կարգ չի սահմանվել: Այսինքն՝ նշված ինստիտուտն իր դասական իմաստով այստեղ չի գործում: Ենթադրվում է, որ հանրային արբիտրաժում պայմանավորվող պետությունները արբիտրաժային համաձայնության կնքմամբ պարտավորվում են անվերապահորեն կատարել արբիտրաժի բոլոր որոշումները: Սակայն, գործնականում հնարավոր է նաև շեղումներ: Մասնավորապես՝ 1907թ. Հաագայի կոնվենցիայի 82-րդ հոդվածի համաձայն արբիտրաժային որոշման կատարման և մեկնաբանման հետ կապված բոլոր հարցերը հանձնվում են նույն դատարանի լուծմանը, եթե այլ բան նախատեսված չէ արբիտրաժային համաձայնությամբ: Այս համաձայնագրի մասնակիցներ ԱՄՆ-ի և Մեքսիկայի միջև Ռիո Գրանդե գետի հունի փոփոխության հետևանքով սահմանային ճշտումների հետ կապված վեճի քննության արդյունքում կայացված ակտով ԱՄՆ-ը Մեքսիկային պետք է զիջեր որոշ տարածքներ: Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ն պարտականություն էր ստանձնել արբիտրաժային վճիռը ճանաչել վերջնական և կատարման համար պարտադիր, սակայն իրաժարվեց այն կատարելուց, պատճառաբանելով, որ արբիտրաժային դատարանը դուրս է եկել իր իրավագործության շրջանակներից և գործով կայացրել է անորոշ և անիրագործելի վճիռ: Հետագայում, միջազգային հանրության ճնշման տակ ԱՄՆ-ն վերանայեց իր դիրքորոշումը և 1963թ. կատարեց արբիտրաժային դատարանի 1911թ. որոշումը:

Միջազգային առևտրային արբիտրաժում գործում են արբիտրաժային վճիռների (որոշումների) հարկադիր կատարումն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր կառուցակարգերը: Ընդ որում, այդ

<sup>1</sup> Տե՛ս Международное право в документах, 46-48 էջերը:

կառուցակարգերն իրենց արտացոլումն են գտել ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրության մեջ: Արբիտրաժային որոշումների ճանաչման և հարկադիր կատարման ամենաարդյունավետ կառուցակարգեր պարունակող փաստաթուղթը Նյու Յորքի 1958թ. համաձայնագիրն է, որին միացել են ավելի քան հարյուր պետություն: Այս համաձայնագիրը հիմք է ինչպես արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները համապարփակ կարգավորելու, այնպես էլ այս ոլորտին առնչվող ներպետական օրենսդրությունը կատարելագործելու համար:

Միջազգային հանրային և առևտրային արբիտրաժների հիմնական ինստիտուցիոնալ տարբերությունները կայանում էին վերը նշված հանգամանքներում: Սակայն չպետք է անուշադրության մատնել նաև այս երկու իրավական ինստիտուտներում գործող սկզբունքների գործառնության առանձնահատկությունները: Առաջին հայացքից թվում է, թե միջազգային հանրային իրավունքում գործող սկզբունքները ոչ մի առնչություն չեն կարող ունենալ միջազգային առևտրային արբիտրաժի հետ: Միջազգային առևտրային արբիտրաժում և միջազգային հանրային իրավունքում գործող սկզբունքներն իմաստային առումով գրեթե համընկնում են, սակայն այս երկու տարբեր ոլորտներում ստանում են այլաբանական դրսևորում և շատ դեպքերում էլ անվանակոչվում են տարբեր կերպ: Մասնավորապես, միջազգային հանրային իրավունքում գործող պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվ.) սահմանում է, որ միջազգային իրավունքի սահմաններում բոլոր պետություններն օժտված են հավասար իրավունքներով և կրում են հավասար պարտավորություններ:

Յուրաքանչյուր պետություն պետք է հարգի միջազգային իրավունքի այլ սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, որոնք տնօրինվում են ըստ տվյալ պետության հայեցողության: Այս սկզբունքն իր ուրույն դրսևորումն է ստանում միջազգային մասնավոր ոլորտում, այդ թվում՝ արբիտրաժում:

Հարկ է նշել, որ ներկայումս միջազգային իրավունքի գիտության մեջ վիճաբանությունների տեղիք է սվել այն հարցը, թե ար-

բիտրաժային կարգով պետությունների մասնակցությամբ վեճերի լուծումը արդյո՞ք չի հակասում ինքնիշխան հավասարության սկզբունքին, քանի որ այս սկզբունքը ելնում է նաև *par in parem nos* (հավասարը հավասարի վրա ենթադատություն (իրավագորություն) չունի) ելակետային դրույթից: Իսկ հանրաճանաչ է, որ միջազգային առևտրային արբիտրաժային որոշումները պարտադիր են նաև պետությունների համար, եթե պետությունները սահմանված կարգով արբիտրաժային համաձայնություն են կնքել: Այս առումով հատկանշական է պրոֆ.-ներ Լադիժենսկու և Բլիշենկոյի կողմից առաջ քաշված այն տեսակետը, համաձայն որի, քանի որ պետություններն իրենք են արբիտրաժային համաձայնությամբ վեճը հանձնում արբիտրաժի լուծմանը և, դրանով իսկ, սուվերեն կամք են արտահայտում, ապա վերը նշված սկզբունքի խախտումը բացառվում է:

Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր միջազգային համաձայնագիր որոշակի առումով ենթադրում է պետությունների բացարձակ ինքնիշխանության սահմանափակում: Սակայն այդպիսի սահմանափակումները հնարավոր են փոխադարձության և հավասարության հիմքի վրա: Միջազգային առևտրային արբիտրաժում պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունը կայանում է նաև պետության կամ նրա մարմինների կողմից անձեռնմխելիությունից (ինունիտետից) հրաժարվելու մեջ: Մասնավորապես, պետության մասնակցությամբ կնքված արտաքին առևտրատնտեսական գործարքում պարունակվող արբիտրաժային վերապահումով, եթե վեճը հանձնվել է արբիտրաժի լուծմանը, ապա պետությունը հրաժարվում է այդ հարաբերություններում ինունիտետից, իսկ արբիտրաժային վճիռը պետության համար դառնում է պարտադիր և անվերապահ կատարման ենթակա:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ազգային օրենքներով ամրագրված է հանրաճանաչ այն սկզբունքը, համաձայն որի քաղաքացիական իրավահարաբերության բոլոր մասնակիցներն իրենց կարգավիճակով հավասար են: Այս է ամրագրում նաև հայրենական օրենսդրությունը, որի համաձայն պետությունը քաղաքացիական

շրջանառության մեջ չի օգտվում պետական իմունիտետից և հանդես է գալիս այլ մասնակիցների հետ հավասար հիմունքներով<sup>1</sup>:

Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը միջազգային առևտրային արբիտրաժում իմաստային առումով հանդնկնում է կողմերի իրավահավասարության սկզբունքի հետ, քանի որ արբիտրաժային դատավարությունում կողմերն օժտված են հավասար իրավունքներով և կրում են հավասար պարտականություններ:

Հանրային իրավունքում ուժ կամ ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքը (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետ) ենթադրում է պետությունների միջև հարաբերությունները միմյանց տարածքային անձեռնմխելիության և քաղաքական անկախության դեմ ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրման բացառում: Միջազգային առևտրային արբիտրաժում այս սկզբունքը որոշակի ինքնատիպություն է ձեռք բերում, քանի որ առավելապես վերաբերում է ֆիզիկական և իրավաբանական անձանց: Այստեղ կարևորվում է տնտեսական ճնշման և հարկադրանքի այլ միջոցների կիրառման բացառումը: Այս պատճառով է, որ ազգային իրավունքներում (այդ թվում՝ Հայաստանի օրենսդրությամբ) ուժի, բռնության, խաբեության կամ սպառնալիքի ազդեցության տակ առաջացող իրավահարաբերություններն առնչվում են:

Ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդված, կետ 7-րդ) հանրային իրավունքում դրսևորվում է պետությունների ներքին իրավասությանը վերաբերող հարցերով այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից անհարկի միջամտության բացառումով: Վերոնշյալ սկզբունքն իր ուրույն դրսևորումն է ստանում առևտրային արբիտրաժում, որտեղ պետությունը հանդես է գալիս և՛ որպես ինքնիշխանություն կրող, և՛ որպես քաղաքացիական շրջանառության մասնակից: Բացի այդ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև արբիտրաժի նկատմամբ պետական հսկողության սահմանները ճշտելու հարցը, որտեղ պետությունն իրավունք չունի միջամտել արբիտ-

<sup>1</sup> Տե՛ս ԳՅ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածը:

րաժային քննությանը: Արբիտրաժի նկատմամբ պետական հսկողությունը հիմնականում արտահայտվում է արբիտրաժային վճռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելիս՝ դատական ստուգման գործընթացում, երբ որոշվում է արբիտրաժային վճռի՝ ազգային իրավունքին համապատասխանելու կամ հանրային կարգին չհակասելու հարցը: Ընդ որում, այս դրույթն ամրագրված է թե՛ ազգային օրենքներում և թե՛ միջազգային համաձայնագրերում: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքի 36-րդ հոդվածի, ինչպես նաև 1958թ. Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն արբիտրաժային վճիռների ճանաչումն ու հարկադիր կատարումը կարող է մերժվել, եթե այն հակասում է տվյալ պետության ազգային իրավունքի նորմերին (օրինակ՝ վեճը չի կարելի հանձնել արբիտրաժի լուծմանը, հակասում է հանրային կարգին և այլն): Ընդունելով այս բոլորը, նշենք, որ միջազգային արբիտրաժում պետության միջամտությունը չի խրախուսվում, և ներկայումս այս դրույթը դարձել է ելակետային:

Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքն (ՄԱԿ-ի կանոնադրության 2.4.3 հոդված) ուղղված է միջազգային հարաբերություններում պետությունների միջև ծագած վեճերի խաղաղ լուծմանը, այնպես, որպեսզի վտանգի չենթարկվեն միջազգային (տարածաշրջանային) անվտանգությունը, համընդհանուր խաղաղությունը, արդարությունը, այլ պետությունների տարածքային ամբողջականությունը և այլն: Միջազգային առևտրային արբիտրաժում այս սկզբունքը գրեթե իմաստային փոփոխություն չի կրում: Առևտրային արբիտրաժում, որպես կանոն, մինչ վարույթն սկսելը կողմերին առաջարկվում է բանակցությունների, փոխզիջումների միջոցով հարթել առաջացած տարածայնությունները, որտեղ ճնշման գործադրումը կամ ծայրահեղ այլ քայլերը բացառվում են: Նույնիսկ հեղինակավոր արբիտրաժային կենտրոնները այդպիսի ծառայությունների մատուցում նախատեսող հատուկ կանոնակարգեր են ընդունել (օրինակ՝ մեդիացիոն, կոնսիլիացիոն և այլն):

Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը, ինչը միջպետական հարաբերություններում կայունության երաշխիքներից մեկն է, այն եզակի սկզբունքներից է, որը թե՛ հանրային,

թե՛ ամևտրային արբիտրաժներուն իմաստային փոփոխությունների չի ենթարկվում: Սակայն միջազգային ամևտրային արբիտրաժում այն ուղղված է սուբյեկտների ավելի լայն շրջանակի, քանի որ այստեղ խոսքը գնում է ոչ միայն պետությունների, այլև քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների մասին:

Հարկ է նշել, որ, եթե միջազգային հանրային իրավունքում վերոնշյալ սկզբունքներն այն ելակետերն են, որոնց վրա կառուցվում է միջազգային իրավունքի ողջ իրավունքը, ապա միջազգային մասնավոր ոլորտում, այդ թվում՝ ամևտրային արբիտրաժում առաջնայնությունը տրվում է այլ սկզբունքի: Այն է՝ **կամքի ինքնավարության սկզբունքին**, ինչը, կարելի է ասել, անկյունաքարային է ամևտրային արբիտրաժի համար: Ամևտրային արբիտրաժի ինստիտուտներից մեկը՝ արբիտրաժային համաձայնությունը հենց այս սկզբունքի դրսևորումն է: Բացի այդ, միջազգային հանրային իրավունքի այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են պետական սահմանների անխախտելիության, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքները, կարևորվում են միջազգային հանրային իրավահարաբերություններում: Բացառություն է միայն մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքը, որն ընդունված է նաև ամևտրային արբիտրաժում:

Միջազգային հանրային արբիտրաժ է նախատեսված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998թ. Օրհուսի կոնվենցիայի 2-րդ հավելվածով, որը կարգավորում է համաձայնագրի կողմերի միջև վերջինիս դրույթներից բխող վեժներն արբիտրաժային կարգով լուծելու հետ կապված հարցերը<sup>1</sup>: Հավելվածի 5-րդ կետը սահմանում է, որ արբիտրաժային դատարանը որոշումը կայացնում է միջազգային իրավունքին և կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Այսինքն՝ արբիտրա-

ժային դատարանը, որոշում կայացնելիս ղեկավարվելու է միջազգային հանրային իրավունքի նորմերով:

Ինչևէ, վերը քննարկվածը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն առանձնացնել միջազգային հանրային և ամևտրային արբիտրաժների գործառնության ոլորտները, այլև իմաստային առումով տարբերակել վերջիններիս հիմնական ինստիտուտներն ու սկզբունքները, ինչը կնպաստի հետագա շփոթությունների և թյուրիմացությունների բացառմանը:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կողմից այն վավերացվել է 2001թ. օգոստոսի 1-ին:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԱՌԵՎՏՐՈՒՄԻ ԱՐՔԻՏՐԱԺԻ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

#### **§1. Առևտրային արքիտրաժի սկզբունքների հասկացությունը և դասակարգումը**

Յուրաքանչյուր իրավական համակարգում, այդ թվում՝ իրավունքի ցանկացած ճյուղում առանձնանում են ելակետային այնպիսի հիմնարար դրույթներ, որոնք ընդհանրացված արտացոլում են վերջինիս նորմերի բովանդակությունը, ցույց են տալիս իրավունքի այս ճյուղի տեղը և դերը ընդհանուր ազգային իրավական համակարգում, ինչպես նաև հանդիսանում են այդ ոլորտի իրավակիրառ, ինչու չէ, նաև իրավաստեղծ գործընթացի հիմնական բնութագրիչները:

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արքիտրաժային ձևի բնույթի և բովանդակության ուսումնասիրության հիմքում պետք է դնել հենց այդ ելակետային դրույթները՝ արքիտրաժային քննության սկզբունքները: Ընդ որում, այդ սկզբունքներն օբյեկտիվորեն պետք է բնութագրեն արքիտրաժային իրավահարաբերությունների բովանդակությունը, խտացված արտացոլեն դրանց իրացման ընդհանուր օրինաչափությունները:

Առևտրային արքիտրաժի սկզբունքներն ուսումնասիրելիս որպես ելակետ պետք է ընդունել վերջիններիս բնորոշումը, գործառնության ոլորտն ու առանձնահատկությունները: Բանն այն է, որ արքիտրաժային քննության սկզբունքները սկիզբ են առնում իրավունքի տարբեր ճյուղերից, և, կարելի է ասել, ունեն տարբեր ճյուղային պատկանելություն՝ քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական դատավարության իրավունքի, միջազգային իրավունքի սկզբունքներ և այլն: Հետևաբար, առևտրային արքիտրաժի սկզբունքները մի կողմից արտացոլում են իրավունքի նշված ճյուղերի ընդհանուր օրինաչափություններն ու ելակետային դրույթները, իսկ մյուս կողմից՝ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արքիտրաժային ձևի հիմնական առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված բացառությունները:

Հարկ է նշել, որ դժվար է արքիտրաժային քննության սկզբունքների միանշանակ և լիարժեք այնպիսի սահմանում տալ, որը կարտացոլեր նաև իրավունքի այն ճյուղերի զարգացման օրինաչափությունները, որոնցից սկիզբ են առնում դրանք: Նշված բարդությունը առաջին հերթին պայմանավորված է առևտրային արքիտրաժի համալիր բնույթով: Արքիտրաժային հարաբերություններ կազավորող նորմեր կարող են նաև իրավունքի այլ ճյուղերում պարունակվել (քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական դատավարության իրավունքի և այլն): Այդուհանդերձ, արքիտրաժի սկզբունքների հասկացության հիմքում պետք է առաջին հերթին դնել առավել ընդհանուր և հիմնարար բնութագրիչները: Մասնավորապես.

– արքիտրաժային քննության սկզբունքները խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության դատավարական կառուցակարգերի պատմական զարգացման ընթացքում ձևավորված և մշակված ելակետային դրույթներ են: Առևտրային արքիտրաժի սկզբունքներն արտացոլել են պատմական զարգացման տարբեր փուլերում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները: Դրանց միջոցով հստակ երևացել է պետության ընդգծված վերաբերմունքը իրավունքների պաշտպանության այլընտրանքային կառուցակարգերի և ձևերի նկատմամբ: Ընդ որում, իրավական համակարգի զարգացմանը զուգընթաց դրանք անընդհատ հղկվել և կատարելագործվել են: Սկզբունքներն ուղղակիորեն արտացոլել են նաև հասարակության, իրավական մշակույթի, այս կամ այն երկրում հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները: Կարելի է ասել, որ արքիտրաժային քննության սկզբունքները պատմականորեն ձևավորված հասկացություններ են,

– սկզբունքները նաև իրավական գաղափարներ են: Ելնելով հարաբերությունների կարգավորման հարցում հայեցակարգային մոտեցումների մշակման անհրաժեշտությունից, հաճախ սկզբունքներն սկզբում հանդես են գալիս որպես տեսականորեն հիմնավորված գաղափարներ, այնուհետև իրենց ամրագրումն են ստանում իրավունքի կոնկրետ նորմերում,

– հանդես գալով որպես իրավական գաղափարներ, արբիտրաժի սկզբունքները կամխորոշում են նաև սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի զարգացման հեռանկարները,

– արբիտրաժային քննության սկզբունքներն այնպիսի կենտրոնական հասկացություններ են, որոնք արտացոլում են առևտրային արբիտրաժի հիմնական ինստիտուցիոնալ-կառուցվածքային առանձնահատկությունները: Առևտրային արբիտրաժի այնպիսի հիմնարար ինստիտուտի գոյությունը, ինչպիսին օրինակ արբիտրաժային համաձայնությունն է, ուղղակիորեն պայմանավորված է կամքի ինքնավարության սկզբունքով,

– հանդիսանալով ղեկավար դրույթներ, արբիտրաժային քննության սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել իրավական նորմերում, ինչի շնորհիվ ձեռք են բերել համապարտադիրության հատկանիշ: Այսինքն, սկզբունքներն ապահովված են պետական հարկադրանքի ուժով և դրանց խախտումն անվերապահորեն առաջացնելու է անցանկալի իրավական հետևանքներ,

– առևտրային արբիտրաժի սկզբունքները որոշակի առումով կրում են նաև իրավական կարգավորման ժամանակակից միջազգային հայեցակարգերի ազդեցությունը: Ներկայումս միջազգային և տարածաշրջանային մակարդակներով ընթացող միասնացման գործընթացների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է բազմաթիվ միջազգային պարտավորություններ, որոնք պետք է արտացոլվեն նաև հայրենական իրավական համակարգում: Հաճախ դրանք ամրագրվում են հենց սկզբունքներում (օր.՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքին վերաբերող և այլ հիմնարար դրույթներում, որոնք վերաբերում են նաև առևտրային արբիտրաժին):

Հարկ է նշել, որ առևտրային արբիտրաժի սկզբունքները որոշիչ նշանակություն ունեն իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրության կատարելագործման համար: Կարելի է ասել, որ սկզբունքները յուրօրինակ չափորոշիչներ են իրավունքի ճյուղի պոզիտիվ զարգացման համար:

Սկզբունքները կարևոր նշանակություն ունեն նաև իրավակիրառ գործունեության ապահովման համար: Սկզբունքների միջոցով ոչ միայն անհատականացվում է իրավունքի ճյուղը, այլև տեղի է ունենում արբիտրաժային իրավահարաբերությունները կարգավորող նորմերի մեկնաբանությունը: Առևտրային արբիտրաժի սկզբունքների հիման վրա այս ոլորտը կարագավորող իրավական նորմերի ճիշտ մեկնաբանությունը և կիրառումն էլ իր հերթին ապահովում է պատշաճ իրավակիրառ պրակտիկան ու օրինականությունը առևտրային հարաբերություններից բխող վեճերն արբիտրաժային կարգով լուծելու գործում:

Առևտրային արբիտրաժի սկզբունքներն իրավական ելակետեր են, հիմնարար ղեկավար դրույթներ, ինչով և տարբերվում են հասարակական կյանքի այլ ոլորտներում գործող սկզբունքներից և բարոյական նորմերի համակարգից: Որպես իրավական սկզբունքների ինքնուրույն խումբ, արբիտրաժի սկզբունքները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

– ամրագրվելով կոնկրետ իրավունքի նորմերում ստանում են իրավական ձևակերպում և ձեռք են բերում նորմատիվ բնույթ: Իրավունքի նորմում չամրագրված սկզբունքը լավագույն դեպքում կարող է կոլեկտիվ իրավագիտակցության բաղկացուցիչ հանդիսանալ<sup>1</sup> կամ գոյություն ունենա միայն որոշակի իրավական ուսմունքի, դոկտրինի շրջանակներում,

– դրանց իրացումն իրականացվում է իրավական նորմերի միջոցով, որոնք սկզբունքների ապահովմանն ուղղված անհրաժեշտ երաշխիքներ են պարունակում: Առանց սկզբունքների իրացումն ապահովող անհրաժեշտ իրավական կառուցակարգերի, դրանք սուսկ հռչակագրային բնույթ կկրեն, որոնց իրականացումը գործնականում կդառնա անհնար,

– այս սկզբունքները իրավունքի կոնկրետ ճյուղում որոշակի գործառնություն են իրականացնում,

<sup>1</sup> Տե՛ս Фурсов Д.А. Предмет, система и основные принципы арбитражного процессуального права (проблемы теории и практики).-М.: ИНФРА-М, 1999.-360-361 էջերը:

– բովանդակային առունով արտացոլում կան իրավունքի ճյուղի նորմերի իրացման կառուցակարգեր են սահմանում: Հետևում է, որ առևտրային արբիտրաժի սկզբունքներն այնպիսի կառուցակարգեր են սահմանում, որոնք ուղղված են արբիտրաժային քննությունը կարգավորող նորմերի լիարժեք իրացմանը, ինչն իր հերթին նպաստում է խախտված կամ վիճարկվող իրավունքներն արբիտրաժային ձևով պաշտպանելու արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, *առևտրային արբիտրաժի սկզբունքներն արբիտրաժային օրենսդրության մեջ անրագրված այն ելակետային դեկլարատորություններն են, որոնք արտացոլում են իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի ընդհանուր ինստիտուցիոնալ-կառուցվածքային առանձնահատկությունները, նորմերի և այս ոլորտում իրավակիրառ գործունեության հիմնական բովանդակությունը:*

Առևտրային արբիտրաժի սկզբունքները միմյանց հետ գտնվում փոխադարձ կապի և սերտ փոխգործակցության մեջ: Դրանք մեկը մյուսի տրամաբանական կամ օրգանական շարունակությունը հանդիսացող սկզբունքների մեկ միասնական համակարգ են: Անհնար է պատկերացնել մեկ սկզբունքի գործունեությունը առանց մյուս սկզբունքի գոյության, քանի որ հաճախ մեկ սկզբունքը մյուսի իրացման երաշխիքն է հանդիսանում (օրինակ՝ արբիտրաժային քննության լեզվի ազատ ընտրության սկզբունքը կամքի ինքնավարության սկզբունքի իրացման երաշխիքն է): Կամ մեկ սկզբունքի խախտումը մեխանիկորեն այլ սկզբունքի խախտմանն է հանգեցնում (օրինակ՝ արբիտրաժի յուրաքանչյուր սկզբունքի խախտումը հանգեցնելու է օրինականության սկզբունքի խախտմանը): Հարկ է նշել, որ արբիտրաժի սկզբունքներն իրենց բովանդակությամբ ոչ միայն բնորոշում են արբիտրաժի ինստիտուտները, այլև ապահովում են արբիտրաժային քննության այս կամ փուլում ծագող հարաբերությունների բնականոն ընթացքը, և հաճախ վերջինս իրացվում է կոնկրետ փուլի շրջանակներում: Օրինակ՝ մրցակցության սկզբունքի բովանդակությունից բխում է կողմերի պահանջների հիմքում ընկած հանգամանքների հաստատումը: Հետևում է, որ կողմերն իրենց պահանջների հիմքում ընկած հանգամանքները հաստատող ապացույցներ կարող են ներկայացնել, երբ արդեն

սկսվել է գործով արբիտրաժային քննությունը: Իսկ օրինակ՝ օրինականության կամ կողմերի իրավահավասարության սկզբունքները գործում են արբիտրաժային վարույթի ողջ ընթացքում: Առևտրային արբիտրաժի բոլոր սկզբունքների համակցությունն է հնարավորություն տալիս ապահովել խախտված կամ վիճարկվող իրավունքներն արբիտրաժային կարգով պաշտպանելու արդյունավետությունը, որոշել արբիտրաժի տեղը և դերը ազգային իրավական համակարգում:

Արբիտրաժի սկզբունքներն են կամքի ինքնավարությունը, օրինականությունը, դատական միջամտության սահմանափակումը, տնօրինչականությունը, կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը, մրցակցությունը, կողմերի իրավահավասարությունը, արբիտրների նշանակովիությունը, արբիտրների անկախությունը և անաչառությունը, արբիտրաժային քննության լեզվի ազատ ընտրությունը, արբիտրաժի վայրի ընտրությունը, գործերի միանձնյա և կոլեգիալ քննության կարգի զուգորդումը, գործերի բանավոր և գրավոր քննությունը զուգորդելը և գործերի քննության անմիջականությունը:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում արբիտրաժային քննության սկզբունքներն առանձին հոդվածով չեն նախատեսվել: Արբիտրաժային սկզբունքների կազմի և գործառնության առանձնահատկությունների վերաբերյալ կարելի է դատողություններ անել և ընդհանուր պատկերացում կազմել միայն հայրենական օրենքի ամբողջական ուսումնասիրության արդյունքում: Մինչդեռ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով սահմանվել էին միջնորդ դատարանների գործունեության սկզբունքները<sup>1</sup>:

<sup>1</sup> «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն միջնորդ դատարանների գործունեությունը հիմնվում է օրինականության, դատավորների անկախության, օրենքի և դատարանի առջև քաղաքացիների, իրավաբանական անձանց հավասարության, կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների վրա: Հարկ է նշել սակայն, որ նման մոտեցումը ևս արդարացված համարել չի կարելի: Քաղաքացիական դատավարության սկզբունքները մեխանիկորեն, առանց բովանդակային փոփոխությունների և լրացումների տարածել միջնորդական քննության վրա:



Իրավաբանական գրականության մեջ ընդունված է սկզբունքները ենթարկել որոշակի դասակարգման: Ընդ որում, դասակարգման հիմքում կարելի է դնել տարբեր մոտեցումներ և չափանիշներ<sup>1</sup>: Հաշվի առնելով դատավարագիտության մեջ առկա սկզբունքների դասակարգման տարբեր մոտեցումները՝ առևտրային արբիտրաժի սկզբունքները կարելի է դասակարգել հետևյալ հիմքերով.

– ըստ նորմատիվ ակտի բնույթի, որում ամրագրված է սկզբունքը,

– ըստ գործունեության բնագավառի,

– ըստ այն հարաբերությունների առանձնահատկությունների, որոնց անմիջական կարգավորմանն ուղղված է սկզբունքը:

Հարկ է նշել, որ եթե առաջին հատկանիշից ելնելով սկզբունքներն ավանդականորեն բաժանվում էին սահմանադրականի և զուտ ճյուղային օրենսդրության մեջ ամրագրված սկզբունքների, ապա ելնելով ներկա իրողություններից, ընթացող համընդհանրացման և միասնացման գործընթացներից, առևտրային արբիտրաժի սկզբունքները նախևառաջ անհրաժեշտ է բաժանել արբիտրաժի միջազգային սկզբունքների և ազգային իրավական սկզբունքների:

Արբիտրաժի միջազգային սկզբունքները Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային ակտերում՝ պայմանագրերում և համաձայնագրերում ամրագրված այն ղեկավար, ելակետային դրույթներն են, որոնք վերաբերում են արբիտրաժային կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը: Օրինակ՝ 1965թ. Վաշինգտոնի համաձայնագրում (բաժին 3-րդ) կամ 1992թ. Կիևի համաձայնագրում ամրագրվել է կամքի ինքնավարության սկզբունքը: Պետք է նշել նաև, որ առևտրային արբիտրաժի իրավական կարգավորմանն ուղղված և արբիտրաժային սկզբունքներ պարունակող միջազգային համաձայնագրերն էլ առանձնանում են տարածքային գործունեությամբ և կիրառման ոլորտով կամ բնագավառով: Առաջին չափանիշից ելնելով արբիտրաժը կարգավորող միջազգային համաձայնագրերը բաժանում ենք համաշխարհային և

<sup>1</sup> Տե՛ս Тараненко В.Ф. Принципы арбитражного процесса. М., 1988, 7-8 էջերը և Коршунов Н.М. Мареєв Ю.А. Гражданский процесс. М., 2007, 27-28 էջերը:

տարածաշրջանային համաձայնագրերի, իսկ ըստ գործունեության կամ կիրառման ոլորտի, համաձայնագրերը լինում են ընդհանուր և հատուկ:

Համաշխարհային մակարդակով գործող միջազգային համաձայնագրերից կարելի է առանձնացնել «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի, «Պետությունների և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերի կարգավորման» մասին 1965թ. Վաշինգտոնի համաձայնագրերը և այլն:

Տարածաշրջանային համաձայնագրերի թվին կարելի է դասել «Արտաքին առևտրային արբիտրաժի մասին» 1961թ. Ժնևի համաձայնագիրը, որին միացել են գրեթե բոլոր Եվրոպական երկրները, «Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարաբերություններից բխող քաղաքացիաիրավական վեճերն արբիտրաժային կարգով լուծելու մասին» 1972թ. Մոսկվայի համաձայնագիրը և այլն:

Ընդհանուր համաձայնագրերը արբիտրաժային քննությունը և արբիտրաժի հիմնարար ինստիտուտների, այդ թվում՝ արբիտրաժային համաձայնությունների և որոշումների ընդհանրական կարգավորմանն ուղղված միջազգային համաձայնագրերի խումբն է, որոնցից կարելի է առանձնացնել «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի համաձայնագիրը, Պանամայի համաձայնագիրը և այլն: Հատուկ համաձայնագրի օրինակ է «Պետությունների և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերի կարգավորման» մասին 1965թ. Վաշինգտոնի համաձայնագիրը:

Միջազգային համաձայնագրերում և պայմանագրերում ամրագրված արբիտրաժային սկզբունքները Հայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են<sup>1</sup>: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 6-րդ:

Առևտրային արբիտրաժի ազգային իրավական սկզբունքներն իրենց հերթին բաժանվում են սահմանադրական սկզբունքների և զուտ ճյուղային օրենսդրության մեջ ամրագրված սկզբունքների: Արբիտրաժի սահմանադրական սկզբունքներից է օրինականությունը, մրցակցությունը, կողմերի իրավահավասարությունը, որոնք ամրագրված լինելով ՀՀ սահմանադրության մեջ, հավասարապես վերաբերում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության այլ ձևերին: Ճյուղային սկզբունքներից են «Առևտրային արբիտրաժի մասին» հայրենական օրենքում ամրագրված արբիտրաժի լեզվի ընտրության, արբիտրաժի վայրի ընտրության սկզբունքները և այլն:

Հարկ է նշել, որ արբիտրաժային սկզբունքները կարելի է առանձնացնել իրավական նորմերում ամրագրման կարգի տեսանկյունից: Հայրենական օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ կան օրենքում ամրագրված, այսպես կոչված, նորմ-սկզբունքներ: Այսինքն, դրանք իրավաբանական ձևակերպում են ստացել առանձին հոդվածով նախատեսված կոնկրետ իրավական նորմում: Օրինակ՝ 18-րդ հոդվածով նախատեսվել է կողմերի նկատմամբ հավասար մոտեցման սկզբունքը: Իսկ կան նաև այնպիսի սկզբունքներ, որոնք բխում են մի քանի հոդվածների բովանդակությունից և դրանց զոյության և գործառնության առանձնահատկությունների մասին կարելի է պատկերացում կազմել միայն մի շարք նորմերի վերլուծության արդյունքում: Օրինակ՝ կանքի ինքնավարության սկզբունքը բխում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7, 10, 19, 20, 22-րդ և մի շարք այլ հոդվածների բովանդակությունից:

Երկրորդ հատկանիշից ելնելով սկզբունքները բաժանվում են ընդհանուր (միջճյուղային) սկզբունքների և ճյուղային սկզբունքների: Արբիտրաժային քննությունում գործող օրինականության, մրցակցության, տնօրինչականության սկզբունքները գործում են նաև իրավունքի այլ ճյուղերում (քաղաքացիական դատավարությունում, վարչական դատավարությունում, քրեական դատավարությունում): Ճյուղային սկզբունքների շարքում կարելի է առանձնացնել արբիտրաժի լեզվի կամ վայրի ընտրության սկզբունքները և այլն:

Ըստ դասակարգման երրորդ չափանիշի՝ արբիտրաժի սկզբունքները բաժանվում են կազմակերպական և գործառնության սկզբունքների: Սկզբունքների դասակարգման այս դեպքում որպես ելակետ ընդունվում է ոչ միայն կարգավորման առարկան կազմող հասարակական հարաբերությունների բնույթը, այլ նաև այն հանգամանքը, թե նշված սկզբունքը արբիտրաժային քննությունում ինչ հարց է լուծում և, ընդհանուր առմամբ, ինչ գործառնությ է իրականացնում՝ կազմակերպական, թե զուտ ընթացակարգային: Հարկ է նշել, որ դասակարգման երրորդ մոտեցման պարագայում է առավելապես բացահայտվում արբիտրաժի սկզբունքների ներքին կողմնու բովանդակությունը: Արբիտրաժի սկզբունքների արտաքին դրսևորումների ուսումնասիրության արդյունքում մենք չենք կարող ամբողջական պատկերացում կազմել դրանց էության վերաբերյալ: Այս պատճառով էլ թե՛ հայրենական դատավարագիտության մեջ, թե՛ արբիտրաժային իրավունքի գիտությունում առավել արժեքավոր է համարվում երրորդ դասակարգման շրջանակներում սկզբունքների ուսումնասիրությունը<sup>1</sup>: Պետք է նշել նաև, որ սկզբունքների խմբավորման չափանիշները պայմանական բնույթ են կրում և չեն նստեցնում սկզբունքների այս կամ այն խմբի նշանակությունը: Դրանք բոլորն էլ կարևոր ելակետեր են արբիտրաժային քննության համար:

Արբիտրաժի սկզբունքների դասակարգման հարցում իրավաբանական գրականության մեջ միասնական մոտեցում դեռևս չի ձևավորվել: Սկիզբ առնելով իրավունքի տարբեր ճյուղերից, առևտրային արբիտրաժի սկզբունքները հաճախ հակադրվում են իրավունքի վերոհիշյալ ճյուղերի հիմնարար դրույթներին: Այս հարցի շուրջ բավական լուրջ աշխատանք է կատարել Ա.Ա.Գրիգորովը<sup>2</sup>: Սակայն վերջինիս հետազոտությունները կրում են սահմանափակ բնույթ, քանզի արբիտրաժի սկզբունքների գործառնության ուսում-

<sup>1</sup> Ст'я Арбитражный процесс. Под. ред. В. Яркова. Москва, Волтерс Клубер, 2003, 51-53 էջերը:

<sup>2</sup> Ст'я Григоров А.А. Правовая природа и процедура внешнеторгового арбитража в СССР. Автореферат диссертации на соискание ученой степени к.юр.наук. Ростов на Дону, 1971:

նասիրության հիմքում դրվել է միայն խորհրդային իրավունքի և այս ոլորտում վերջինիս իրացման փորձը: Ներկայումս օբյեկտիվ պայմանների ու գործոնների փոփոխման պայմաններում (օրենսդրության դինամիկա) կատարված հետազոտությունները չի կարելի բավարար համարել այն պարզ պատճառով, որովհետև լուրջ փոփոխությունների է ենթարկվել ինչպես արբիտրաժային ինստիտուտների և հաստատությունների կազմակերպման, այնպես էլ վերջիններիս գործառնության հիմնական սկզբունքները: Գրիգորովի կողմից տրված առևտրային արբիտրաժի սկզբունքների երկաստիճան դասակարգումը (մասնավորապես, արբիտրաժի կազմակերպական սկզբունքներ և ընթացակարգային- գործառնական սկզբունքներ) պետք է լրացնել արբիտրաժային որոշումների ճանաչումն ու կատարումը կարգավորող սկզբունքներով:

Հարկ է նշել նաև, որ չի կարելի միանշանակ մոտենալ նաև արբիտրաժի սկզբունքները կազմակերպականի և գործառնությանի դասակարգելու հարցին: Իրավաբանական գրականության մեջ ձևավորվել է կարծիք, համաձայն որի առևտրային արբիտրաժի սկզբունքների համակարգում առաջնային տեղը գրավում է կողմերի կամքի ինքնավարության սկզբունքը, որն իմաստային առումով կլանում է մյուս սկզբունքները: Մասնագիտական գրականության մեջ կողմերի կամքի ինքնավարության սկզբունքը մեկնաբանվել է տարբեր կերպ: Դ.Ֆ. Ռամզայցևայի կարծիքով կամքի ինքնավարությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ կանոն է<sup>1</sup>, Բոգուսլովսկու կարծիքով՝ պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորումն է<sup>2</sup>, ըստ Լունցի՝ այն իրավունքի կոլիզիոն նորմերից կամ ինստիտուտներից մեկն է<sup>3</sup>: Ա.Գ Ֆիլիպովը գտնում է, որ կողմերի կամքի ինքնավարության սկզբունքը երկու ելակետային դրույթների՝ կոլիզիոն և պայմանագրի ազատության սկզբունքների հա-

մակցությունն է<sup>1</sup>: Խնդիր չունենալով տրվել կամքի ինքնավարության սկզբունքի վերաբերյալ արտահայտված այս կամ այն տեսակետի քննադատությանը, անկարելի է անտեսել գրեթե բոլոր մեկնաբանություններում առկա ամենազլխավոր թերությունը: Այն է՝ վերը թվարկված բոլոր մեկնաբանություններում կամքի ինքնավարության սկզբունքի էության, բովանդակության բացահայտման հիմքում դրվում են վերջինիս արտաքին դրսևորումները՝ արտահայտման և իրացման մակերեսային առանձնահատկությունները: Նման մոտեցմամբ չի կարող պարզաբանվել հասարակական հարաբերությունների մասնակիցների կողմից իրավունքին հակազդելու ֆենոմենը, երբ հարաբերությունների կարգավորիչի դերում հանդես է գալիս ոչ թե որևէ ազգային իրավունքը, միջազգային պայմանագիրը կամ սովորույթը, այլ հարաբերությունների կարգավորման առանցքում դրվում է զուտ կողմերի ազատ կամարտահայտումը, արդարացիության սկզբունքը: Այս առումով բավական հետաքրքրական է Ռուբանովայի կողմից առաջ քաշված տեսությունը: Նա կամքի ինքնավարությունը համարում է ինքնուրույն իրավական ինստիտուտ, որը հենվում է ազգային իրավական համակարգերի փոխգործակցության, իրավունքի և հասարակական հարաբերությունների միջև հակադարձ կապի առկայության տեսական հիմնավորման վրա: Չնայած այս ոլորտում հասարակական հարաբերությունների մասնակիցները իրավաստեղծներ չեն, սակայն արբիտրաժում կարող են ընտրել կիրառման ենթակա իրավունքը<sup>2</sup> կամ էլ ինքնուրույն սահմանել գործի լուծման ընթացակարգային կանոնները:

Սակայն արբիտրաժի սկզբունքները կամքի ինքնավարության շրջանակներում դիտարկել չի կարելի: Գիշտ է, արբիտրաժային քննությունում կամքի ինքնավարությունը բովանդակային առումով կլանում է սկզբունքների մի զգալի խումբ, բայց ոչ բոլորը: Արբիտ-

<sup>1</sup> Տե՛ս Բամզայցևա Դ.Փ. Договор купли-продажи во внешней торговле СССР. М., 1963, էջ 53:

<sup>2</sup> Տե՛ս Բոգուսլովսկույի Մ.Մ. Коллизионные вопросы обязательственных правоотношений во внешней торговле СССР// Правовое регулирование внешней торговли СССР. М., 1960, էջ 480:

<sup>3</sup> Տե՛ս Լունց Լ.Ա. Международное частное право. М., 1981, էջ 237:

<sup>1</sup> Տե՛ս Филипов А.Г. Некоторые аспекты автономии воли в российском международном частном праве. М., 1998, էջ 439:

<sup>2</sup> Տե՛ս Рубанова А.А. Теоретические основы международного взаимодействия национальных правовых систем I., 1984, էջ 13-106 և Автономия воли в международном частном праве как теоретическая проблема// Советский ежегодник международного права. М., 1985, էջ 86:

րաժի սկզբունքները զուտ կամքի ինքնավարության շրջանակներում դիտարկելու արդյունքում սկզբունքների մի մասը դուրս կմնան ուսումնասիրության առանցքից: Եթե կամքի ինքնավարության սկզբունքի բովանդակությունից բխում է արբիտրների նշանակովիությունը, արբիտրաժային քննության լեզվի ազատ ընտրությունը, արբիտրաժի վայրի ընտրությունը և այլն, ապա արբիտրաժի մյուս սկզբունքների բովանդակությունը այսքանով չի սպառվում: Դեռ ավելին, կան արբիտրաժում գործող այնպիսի սկզբունքներ, որոնք հրամայական են նաև կողմերի կամքի ինքնավարության դրսևորման պարագայում: Մասնավորապես՝ օրինակաճության սկզբունքը կամ կամքի ինքնավարության լիարժեք դրսևորման համար անհրաժեշտ է կողմերի իրավահավասարությունը և այլն: Այսինքն, կամքի ինքնավարության սկզբունքը բովանդակային առումով չի կարող սպառել արբիտրաժի մյուս սկզբունքները, օրինակ՝ օրինակաճությունը, կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը, մրցակցությունը, կողմերի իրավահավասարությունը, արբիտրների անկախությունը և անաչառությունը, գործերի միանձնյա և կոլեգիալ քննության կարգի զուգորդումը, գործերի բանավոր և գրավոր քննությունը զուգորդելը և գործերի քննության անմիջականությունը: Իսկ կամքի ինքնավարության սկզբունքի բովանդակությունն էլ չի սպառվում կլանված սկզբունքների միասնական բովանդակությամբ:

Առևտրային արբիտրաժում կամքի ինքնավարության սկզբունքի բովանդակությունից բխում է, որ՝

– քաղաքացիական շրջանառության մասնակիցներն ազատ են արբիտրաժային համաձայնություն կնքելու հարցում: Ընդ որում, արբիտրաժային համաձայնությունը նրանք կարող են կնքել ինչպես հիմնական պայմանագրում արբիտրաժային վերապահում կատարելու, այնպես էլ առկա կամ հնարավոր վեճն արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու մասին առանձին համաձայնագիր կնքելու միջոցով: Իրավունքի սուբյեկտի ինքնավար կամքի ազատ դրսևորման համար չափազանց կարևոր է այն որևէ արտաքին ազդեցությունից զերծ պահելը: Դրա համար էլ այստեղ կարևորվում է մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրե-

լիությունը: Իրավունքի սուբյեկտի ազատ կամահայտնությունը չպետք է սահմանափակվի, քանի որ քաղաքացիական շրջանառության յուրաքանչյուր մասնակից ազատ է գործարարությամբ կամ օրենքով չարգելված այլ գործունեությամբ զբաղվելու, օրենքով սահմանված կարգով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու հարցում,

– կամքի ինքնավարությունը և իրավունքի սուբյեկտի ազատ կամահայտնությունը կարող է դրսևորվել միայն օրենքով սահմանված կարգով կամ չպետք է հակասեն գործող օրենսդրության պահանջներին: Այսինքն, քաղաքացիական շրջանառության յուրաքանչյուր մասնակից օրենքի շրջանակներում պետք է դրսևորի պատշաճ վարքագիծ, որպեսզի վերջինիս իրավունքների իրականացումը չխախտի այլ անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը: Օրենքի շրջանակներից դուրս կամքի ինքնավարության դրսևորումն իրավական հետևանքներ առաջացնել չի կարող: Այդ իսկ պատճառով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսվել են արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչելու հիմքերը: Նման դրույթներ է պարունակում նաև «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի համաձայնագրի 5-րդ հոդվածը,

– կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են ընտրել արբիտրաժի լեզուն: Այսինքն, կամքի ինքնավարությունը ենթադրում է նաև արբիտրաժի լեզվի ազատ ընտրության սկզբունքը, որը կարելի դասել արբիտրաժի կազմակերպական սկզբունքների շարքին,

– կողմերը կարող են ընտրել արբիտրաժի վայրը: Արբիտրաժի վայրի ընտրությունը ևս կազմակերպական սկզբունքներից է, որը բխում է կամքի ինքնավարության բովանդակությունից,

– կողմերն իրենք են ձևավորում արբիտրաժային դատարանի կազմը,

– կողմերն ընտրում են կիրառման ենթակա իրավունքը: Կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը ներառում է արբիտրաժային քննության ընթացակարգային կանոններ որոշելը և վիճելի

նյութական իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ընտրությունը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերն օրենքի դրույթների պահպանմամբ կարող են իրենց հայեցողությամբ համաձայնվել արբիտրաժային տրիբունալի (դատարանի) կողմից վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ: Այս պարագայում ընթացակարգային կանոնների որոշումը կարող է կատարվել երկու եղանակով՝ արբիտրաժային համաձայնությամբ կամ մինչ արբիտրաժային վարույթն սկսելը ձեռք բերված այլ համաձայնությամբ հղում կատարել որևէ արբիտրաժային կանոնակարգի վրա կամ ինքնուրույն սահմանել վեճի լուծման ընթացակարգ, որը գործնականում գրեթե անհնար է: Արբիտրաժային պրակտիկայում, երբ խոսքը գնում է ad hoc արբիտրաժի մասին, կողմերը հաճախ հղում են կատարում որևէ արբիտրաժային հաստատության կանոնակարգի վրա, միաժամանակ կարող են փոփոխություններ կատարել նաև վարույթի իրականացման կանոններում:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն ընտրել վեճի էության նկատմամբ կիառելի նորմերը: Արբիտրաժային դատարանը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Ընդ որում, ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

Անկախ ընտրված իրավունքից՝ կողմերը մինչև վճռի կայացումը կարող են արբիտրաժային դատարանին ուղղակիորեն լիազորել վեճը լուծելու արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա կամ որպես հաշտարար միջնորդ: Այսինքն, կամքի ինքնավարությունն արբիտրաժային քննությունում ենթադրում է նաև արբիտրաժային դատարանին վեճը ex aequo et bono լուծելու հանձնարարություն տալու կողմերի իրավունքը:

Կամքի ինքնավարության սկզբունքի բովանդակությունից բխում է նաև արբիտրաժային քննությունում տնօրինչական գործողություններ կատարելը:

Ինչպես տեսնում ենք, կամքի ինքնավարությունը, որպես հիմնարար սկզբունք-կառուցակարգ, կարմիր թելի նման անցնում է առևտրային արբիտրաժի հիմնական ինստիտուտներով և, անկախ վերջինիս կարգավիճակից, կանխորոշում հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Կամքի ինքնավարության սկզբունքն արբիտրաժային վարույթում կարգավորում է ինչպես կազմակերպական, այնպես էլ զուտ գործառութային բնույթի հարցեր: Այդ իսկ պատճառով արբիտրաժի որոշ սկզբունքներ ուղղակիորեն բխում են կամքի ինքնավարության սկզբունքի բովանդակությունից: Սակայն դրանք արբիտրաժային քննությունում հանդես են գալիս ինքնուրույն և վերջիններիս բովանդակությունը կամքի ինքնավարության սկզբունքի վերլուծությամբ չի սպառվում: Արբիտրաժային քննության ընթացքում այդ սկզբունքներն ունեն իրացման միայն իրենց բնորոշ առանձնահատկություններ, ինչի հետևանքով առանձին ուսումնասիրության են արժանի: Այդ իսկ պատճառով առևտրային արբիտրաժի սկզբունքների էության համակողմանի պարզաբանման համար առավել նպատակահարմար է դրանք դասակարգման երրորդ մոտեցման շրջանակներում ուսումնասիրելը:

Բացի այդ, արբիտրաժային քննությունում կան նաև այնպիսի սկզբունքներ, որոնք ուղղված են կամքի ինքնավարության սկզբունքի ապահովմանը: Միայն այդ սկզբունքների գոյությամբ է պայմանավորված կամքի ինքնավարության լիարժեք իրացումն առևտրային արբիտրաժում: Անհնար է պատկերացնել կամքի ինքնավարության սկզբունքի գործառնությունը արբիտրաժային քննությունում առանց օրինականության, կողմերի նկատմամբ հավասար մոտեցման և կողմերի իրավահավասարության սկզբունքների ապահովման: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցում է, որ առևտրային արբիտրաժի բոլոր սկզբունքների համակցությունն է հնարավորություն տալիս ապահովել արբիտրաժային քննության և սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի արդյունավետությունը: Իսկ սկզբունքներն էլ՝ մեկը մյուսի տրամաբանական շարունակությունը հանդիսացող և լիարժեք իրացումն ապահովող իրավական երաշխիքներ են:

## **§2. Արբիտրաժի կազմակերպական և գործառույթային սկզբունքները**

Արբիտրաժի սկզբունքները ուսումնասիրելիս, պետք է նշել, որ կամքի ինքնավարությունից զատ գոյություն ունի մեկ սկզբունք ևս, որը բացառապես դասակարգման կազմակերպական և գործառույթային սկզբունքների շրջանակներում դիտարկել չի կարելի: Խոսքը գնում է օրինականության սկզբունքի մասին, որ բխելով սահմանադրությունից, պարտադիր է ՀՀ իրավական համակարգի յուրաքանչյուր ճյուղի, այդ թվում՝ արբիտրաժային վարույթի համար: Կարելի է ասել, որ օրինականությունը հարաբերությունների իրավական կարգավորման սկզբունք-մեթոդ է, որը հավասարապես վերաբերում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Օրինականությունը ենթադրում է իրավունքի նորմերի անշեղ կատարում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և կազմակերպությունների կողմից: Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը (Սահմանադրության 47-րդ հոդված):

Արբիտրաժային քննությունն առևտրային հարաբերություններում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ինքնուրույն ձև է, որը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրության պահանջներին: Արբիտրաժային վարույթում օրինականության սկզբունքի ապահովման երաշխիքներն ամրագրված են արբիտրաժային իրավունքի մի շարք նորմերում: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում օրինականության սկզբունքի մասին առանձին նորմով որևէ հիշատակում չկա և այս սկզբունքի մասին կարելի է դատողություններ կատարել օրենքի մի շարք հոդվածների (16, 19, 28, 34- րդ և այլն) վերլուծությունից: Մինչդեռ «Միջնորդ դատարանների

և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 4-րդ հոդվածն ամրագրել էր, որ միջնորդ դատարանների գործունեությունը հիմնվում էր օրինականության սկզբունքի վրա:

Օրինականության սկզբունքն առևտրային արբիտրաժում ենթադրում է, որ

1. արբիտրաժային համաձայնությունը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությանը և կողմերի հանդեպ կիրառելի իրավունքին,

2. արբիտրաժային դատարանի լուծմանը կարելի է հանձնել միայն օրենքով արբիտրաժի ենթակայությանը վերապահված վեճ,

3. արբիտրաժային դատարանը վեճը լուծելիս պետք է ղեկավարվի բացառապես կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերով: Կիրառման ենթակա իրավունքում կամ իրավական համակարգում վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ իրավական ակտի բացակայության դեպքում արբիտրաժային դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտի նորմերը, իսկ նման նորմերի բացակայության դեպքում վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից կամ կարող է կիրառել նաև գործարար շրջանառության սովորույթները,

4. արբիտրաժային դատարանը գործի քննությունն իրականացնում է բացառապես կիրառման ենթակա դատավարական նորմերին և կողմերի համաձայնեցրած ընթացակարգային կանոններին համապատասխան,

5. արբիտրաժային վճիռը չպետք է հակասի Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Ինչպես տեսնում ենք օրինականության սկզբունքը հավասարապես վերաբերում է արբիտրաժային քննության բոլոր մասնակիցներին: Արբիտրաժային դատարանը պարտավոր է ճիշտ կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը, իսկ կողմերն էլ արբիտրաժային համաձայնություն կնքելիս և արբիտրաժային վարույթն սկսելիս պետք է պահպանեն օրենսդրության պահանջները: Արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրաժային դատարանը և վարույթի այլ մասնակիցները պետք է ղեկավարվեն

նյութական և դատավարական իրավունքի նորմերով, ինչպես նաև իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Առևտրային արբիտրաժի յուրաքանչյուր սկզբունքի խախտումը մեխանիկորեն հանգեցնելու է օրինականության սկզբունքի խախտմանը:

Արբիտրաժի կազմակերպական սկզբունքներն են արբիտրաժային քննությանը դատական միջամտության սահմանափակումը, արբիտրների նշանակովիությունը, արբիտրների անկախությունը և անաչառությունը, արբիտրաժային քննության լեզվի ազատ ընտրությունը, արբիտրաժի վայրի ընտրությունը, գործերի միանձնյա և կոլեգիալ քննության կարգը, ինչպես նաև գործերի բանավոր և գրավոր քննության կարգը զուգորդելը:

Արբիտրաժային քննությանը **դատական միջամտության սահմանափակման սկզբունքը** նախևառաջ ուղղված է խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի արդյունավետության ապահովմանը, քանի որ այս պարագայում խոսք է գնում առևտրային հարաբերություններից բխող վեճը պետական դատական շրջանակներից համակարգից դուրս կարգավորելու մասին: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով իրավական կարգավորման են ենթարկվել արբիտրաժային քննությանը դատական միջամտության սահմանները, որի համաձայն արգելվում է որևէ դատական միջամտություն արբիտրաժային օրենսդրությամբ կարգավորվող հարցերին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսինքն, այս նորմով սահմանափակվել է դատական մարմինների կամայական միջամտությունը արբիտրաժային քննությանը, քանի որ նման միջամտությունը կարող է տեղի ունենալ միայն օրենքով նախատեսված դեպքերում, որը պետք է կարող ինչպես օժանդակ, այնպես էլ վերահսկողական բնույթ կրել:

Արբիտրաժային վարույթին դատական միջամտության դեպքերը նախատեսված են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածով, 27-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ օրենքի 6-րդ հոդվածով արբիտրաժին աջակցելու և վերահսկելու գործառնության իրականացումը վերապահ-

վել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստանի դատարանին<sup>1</sup>: Այսինքն, օրենսդիրը կենտրոնացրել է արբիտրաժային քննության նկատմամբ վերահսկողությունը, ինչը կնպաստի արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման կազմակերպվածության բարձրացմանը: Փաստորեն վերը նշված նորմերով նախանշվել են առևտրային արբիտրաժին դատական միջամտության սահմանները: Դատարանը կարող է առնչվել կամ միջամտել արբիտրաժային քննությանը միայն «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, այն էլ բացառապես իրեն վերապահված գործառնությունների իրականացման շրջանակներում, մասնավորապես՝

– արբիտրաժի կողմի միջնորդության հիման վրա որոշում է կայացնում հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին ( 9-րդ հոդված),

– 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ արբիտրաժի կողմի խնդրանքով նշանակում է արբիտր,

– որոշում է կայացնում արբիտրին հայտնված բացարկի վերաբերյալ (13-րդ հոդվածի 3-րդ մաս),

– որոշում է կայացնում արբիտրի լիազորությունների դադարեցման հարցի վերաբերյալ (14-րդ հոդված),

– 27-րդ հոդվածով սահմանված կարգով դատական աջակցություն է ցուցաբերում ապացույցներ ձեռք բերելիս,

– չեղյալ է ճանաչում արբիտրաժային վճիռը (34-րդ հոդված),

– որոշում է կայացնում արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ (36-րդ հոդված):

Յուրաքանչյուր երկրի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում այս սկզբունքի ամրագրումը գործում էրաշխիք է հանդիսանում իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի ինքնավարության ապահովման համար:

<sup>1</sup> Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում չի վկայակոչվել նույն օրենքի 36-րդ հոդվածը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում և Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման ու կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ պետություններում արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարումը մերժելու հիմքերին:

ՀՀ օրենսդիրն առաջընթաց քայլ է կատարել կոնկրետ իրավական նորմում ամրագրելով արբիտրաժային քննությանը դատական միջամտության սահմանները:

**Արբիտրների նշանակվողության** սկզբունքն ամրագրված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 10 և 11-րդ հոդվածներում, որտեղ կարգավորված են նաև արբիտրաժային դատարանի կազմի ձևավորման հետ կապված հարցերը:

Առևտրային արբիտրաժում արբիտրների նշանակվողությունը ենթադրում է, որ կողմերն իրենք են նշանակում արբիտրներին և վերջիններին կամարտահայտությունը որոշիչ նշանակություն ունի արբիտրաժի կազմը ձևավորելու հարցում՝ կողմերը որոշում են արբիտրների թիվը, նրանք կարող են սահմանել արբիտրներին ներկայացվող պահանջներ և այլն:

Հարկ է նշել, որ այս սկզբունքը բխում է կամքի ինքնավարության բովանդակությունից, սակայն արբիտրաժային քննությունում հանդես է գալիս ինքնուրույն և դիտարկվում է արբիտրաժի կազմակերպական սկզբունքների շրջանակներում: Այն տարբերվում է քաղաքացիական դատավարության դատավորների նշանակվողության սկզբունքից: Մասնավորապես՝

– առևտրային արբիտրաժում արբիտրների թիվը որոշում են կողմերը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային դատարանի ձևավորում գույք կազմով, ապա արբիտրների թիվը պետք է մեկով ավելացվի: Արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային դատարանը ձևավորվում է երեք արբիտրների կազմով: Քաղաքացիական դատավարությունում դատարանակազմությունը, դատավորների թվաքանակը, դատարանի կազմի ձևավորումը (միանձնյա կամ կոլեգիալ) սահմանված է օրենքներով (ՀՀ դատական օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով), և կողմերի կամարտահայտությունն այստեղ որևէ նշանակություն չունի:

– Առևտրային արբիտրաժում կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ, այդ թվում՝ որակավորման վերաբերյալ («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված): Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Արբիտր կարող է լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր ֆիզիկական գործունակ անձ, եթե կողմերի համաձայնությամբ ավելի բարձր տարիք նախատեսված չէ: Պետական դատական համակարգում դատավորներին ներկայացվող պահանջները սահմանված են օրենքով (ՀՀ դատական օրենսգրքի 115-119 հոդվածներ և այլն), և կողմերը փոխադարձ համաձայնությամբ որևէ լրացուցիչ կամ այլ պահանջ ներկայացնել չեն կարող: Արբիտրին ներկայացվող կողմերի պահանջը հրամայական է ինչպես արբիտրաժային հաստատության, այնպես էլ արբիտրաժին աջակցող կամ վերահսկող դատարանի համար: Գործող օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը արբիտր նշանակելիս պարտավոր է հաշվի առնել նրա որակավորման վերաբերյալ կողմերի համաձայնության մեջ առկա պահանջները:

– Արդարադատության խորհրդի առաջարկությամբ վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին և դատավորներին նշանակում է ՀՀ նախագահը (ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդված 11-րդ կետ): Առևտրային արբիտրաժում արբիտրներին նշանակում՝ արբիտրաժի կազմը ձևավորում են կողմերը: Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ կողմերն ազատ են համաձայնեցնելու արբիտրի կամ արբիտրների նշանակման ընթացակարգը: Իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե արբիտրների նշանակման ընթացակարգի շուրջ համաձայնությունը բացակայում է, ապա երեք կամ ավելի արբիտրներով իրականացվող արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր կողմը նշանակում է հավասար թվով արբիտր, և այդ կերպ նշանակված արբիտրները ձայների մեծամասնությամբ նշանակում են վերջին արբիտրին, որը



հանդես է գալիս որպես նախագահող: Հարկ է նշել, որ այստեղ ավելի ճիշտ կլիներ օգտագործել «ընտրում են» բառը, քանի որ, որպես կանոն, արբիտրաժային դատարանների կազմը ձևավորվում է ընտրովիության և նշանակովիության սկզբունքների զուգակցմամբ: Գործող օրենքը, չառանձնացնելով ինստիտուցիոնալ և ad hoc արբիտրաժները, անուշադրության է մատնել նաև այս հարցը: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում էր, որ կողմերի նշանակած միջնորդ դատավորներն ընտրում են երրորդին՝ նախագահողին: Եթե միջնորդ դատավոր նշանակելու մասին կողմի դիմումն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում մյուս կողմը չի նշանակում միջնորդ դատավոր, կամ կողմերի նշանակած միջնորդ դատավորները համաձայնություն ձեռք չեն բերում երրորդ միջնորդ դատավորի (նախագահողի) ընտրության վերաբերյալ, ապա՝

– մշտապես գործող միջնորդ դատարանում միջնորդ դատավորին կամ նախագահողին նշանակում է այն կազմակերպության ղեկավարը, որին առընթեր գործում է միջնորդ դատարանը՝ այդ դատարանի դատավորների անվանացուցակից,

– կոնկրետ վեճը լուծելու համար ստեղծվող միջնորդ դատարանում միջնորդ դատավորին կամ նախագահողին նշանակելու (ընտրելու) կարգը որոշվում է կողմերի միջնորդ համաձայնությամբ: Նման ձևակերպումից հստակ երևում է արբիտրաժի կազմի ձևավորման գործում նշանակովիության և ընտրովիության սկզբունքների զուգակցումը: Ելնելով արբիտրաժի տեսակից, ինչպես նաև արբիտրների թվաքանակից, արբիտրաժային դատարանի կազմի ձևավորման տարբեր կարգեր են կիրառվում, մինչդեռ, գործող օրենքում խոսվում է միայն արբիտրների նշանակման մասին՝ միաժամանակ խստացվել է նաև դատական հսկողությունը այս գործընթացի նկատմամբ: Փաստորեն, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքն ավելի ազատական էր այս խնդրի կարգավորման հարցում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ամրագրելով արբիտրաժային քննությանը դատական միջամտության սահմանները՝ դրանք

ավելի ընդլայնել է: Մասնավորապես՝ նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝

1) երեք կամ ավելի արբիտրներով իրականացվող արբիտրաժի դեպքում, եթե մի կողմը արբիտր նշանակելու մասին մյուս կողմի պահանջը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, չի նշանակում արբիտր, կամ կողմերի նշանակած արբիտրներն իրենց նշանակման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, համաձայնություն ձեռք չեն բերում վերջին արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը:

2) միանձնյա արբիտրի մասնակցությամբ արբիտրաժի դեպքում, եթե կողմերը չեն համաձայնվում արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը:

Նման ձևակերպման պայմաններում հատկապես անհասկանալի է ինստիտուցիոնալ արբիտրաժի պարագայում արբիտրների կամ նախագահողի նշանակման կամ ընտրության զուգորդումը: Արբիտրաժային դատարանի կազմի ձևավորման նշանակովիության և ընտրովիության զուգորդումը նախատեսված է նաև հեղինակավոր արբիտրաժային հաստատությունների կանոնակարգերով (օրինակ՝ Մոսկվայի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կանոնակարգի 20-րդ պարագրաֆով, Առևտրի միջազգային պալատի արբիտրաժային կանոնակարգի 9-րդ հոդվածով և այլն):

*Հաշվի առնելով բերված փաստարկները՝ անհրաժեշտ է գործող օրենքի 11-րդ հոդվածով սահմանել նաև ինստիտուցիոնալ և ad hoc արբիտրաժային դատարանների կազմի ձևավորման առանձնահատկությունները:*

**Արբիտրների անկախության և անկոմսակալության** սկզբունքը հաղիսանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի արդյունավետության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը: Այս սկզբունքը հնարավորություն է տա-

լիս անհրաժեշտ և բավարար պայմաններ ստեղծել արբիտրների իրավունքների և պարտականությունների լիարժեք իրացման, արբիտրաժային դատարանի ինքնուրույն և անկողմնակալ գործառնության համար: Արբիտրաժային դատարանի բնականոն գործունեության հիմքը արբիտրների անկախությունն ու անկողմնակալությունն է, որը բխում է առևտրային արբիտրաժը կարգավորող գործող օրենքի մի շարք դրույթներից: Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում: Հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ օրենսդիրը վեճերի արդարացի լուծումն ուղղակիորեն պայմանավորում է արբիտրաժային դատարանի անկողմնակալությամբ: Իսկ օրենքում արբիտրաժային դատարանի անկողմնակալության ապահովման համար նաև առանձին հոդվածներով անհրաժեշտ երաշխիքներ են սահմանվել: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատարանն արբիտր նշանակելիս պարտավոր է հաշվի առնել այն հանգամանքները, որոնք կարող են ապահովել անկախ և անաչառ արբիտրի նշանակումը, իսկ միանձնյա կամ երրորդ արբիտր նշանակելիս պարտավոր է հաշվի առնել նաև կողմերի երկրների քաղաքացի չհանդիսացող անձին որպես արբիտր նշանակելու նպատակահարմարությունը: Վերջին դրույթը հատկապես կիրառելի է միջազգային առևտրային արբիտրաժային պրակտիկայում, երբ տարբեր պետությունների ռեզիդենտների միջև վեճը հանձնվում է երրորդ՝ կամ այլ կերպ ասած չեզոք կողմի լուծմանը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը թեև առանձին հոդվածով արբիտրների անկախությունն ու անաչառությունը որպես արբիտրաժի սկզբունք չի հռչակել, սակայն 12-րդ հոդվածում ամրագրել է, որ որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած անձ և պարտավոր է հայտնել այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրն իր նշանակման պահից և արբիտրաժի ամբողջ ընթացքում

մինչև արբիտրաժային դատարանի կողմից վերջնական վճռի կայացումը կամ արբիտրաժային վարույթի որևէ այլ ձևով ավարտը, պարտավոր է կողմերին անհապաղ հայտնել ցանկացած այսպիսի հանգամանքների մասին, եթե նա ավելի վաղ չի հայտնել վերջիններիս դրանց մասին: Սակայն, արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկախության կամ անկողմնակալության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում: Կողմը կարող է բացարկ հայտնել իր կողմից կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին միայն այնպիսի հիմքերով, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:

Օրենքի վերլուծությունից երևում է, որ քննարկվող սկզբունքը ներառում է երկու հիմնական կանոն: Առաջինը արբիտրների անկախությունն է, որը ենթադրում է, որ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից կամ ում մասնակցությամբ է նշանակված արբիտրը, նա արբիտրաժային քննության ընթացքում պարտավոր է պահպանել անկողմնակալությունը և իր գործունեության մեջ լինել անկախ ու անկաշկանդ: Կողմի կարծիքը պետք է պարտադիր իրավական նշանակություն չունենա արբիտրի համար: Գործի փաստական հանգամանքների, ապացույցների գնահատման կամ կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատողությունները, պետք է հիմնված լինեն գործի համակողմանի ուսումնասիրության և վերլուծության վրա, այլ ոչ թե կախված լինեն կողմերի կամարտահայտությունից: Հաջորդն անաչառ վարքագծի դրսևորումն է: Վեճը լուծելիս արբիտրը պարտավոր է ղեկավարվել կիրառման ենթակա իրավունքի նորմերով և գործի քննության ընթացակարգային կանոններով: Կողմերի կամարտահայտությունն արբիտրաժում իրավական նշանակություն ունի միայն վեճի էության նկատմամ կիրառելի նորմերը և գործի լուծման ընթացակարգը որոշելու հարցում: Սակայն վեճը լուծելիս արբիտրի համար առաջնայինը իրավունքի նորմն է կամ սկզբունքը, այլ ոչ թե կողմերի արտահայտած կարծիքը կամ այլ հանգամանքները, այդ թվում անձնական շահը: Արբիտրաժում կոլեգիալ կազմով գործը քննելիս ծագող

հարցերը լուծվում են ձայների մեծամասնությամբ, և որևէ արբիտր իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկելուց: Մեծամասնության որոշման հետ չհամաձայնվող արբիտրը կարող է չստորագրել վճիռը և ունի հատուկ կարծիքի իրավունք («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի նախատեսել այս դրույթը, ինչի մասին կխոսենք հաջորդ գլուխներում):

Արբիտրների անկախության և անկողմնակալության ապահովման համար կարևոր երաշխիք է հանդիսանում այն հանգամանքը, որ կողմն օրենքով նախատեսված հիմքերով կարող է բացարկ հայտնել ինչպես իր կողմից կամ իր մասնակցությամբ, այնպես էլ հակառակ կողմի նշանակած արբիտրին: Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարությունում սահմանված են նաև դատավորների անկախության ապահովման համար իրավական այլ երաշխիքներ. նրանք անփոփոխելի են, դատավարությունն իրականացնում են հրապարակայնորեն, չեն կարող լինել որևէ այլ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ, նրանց նշանակման, լիազորությունների դադարեցման, պատասխանատվության հիմքերն ու կարգը, այդ թվում՝ նրանց կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով (ՀՀ Սահմանադրության 39 և 96 հոդվ.): Առևտրային արբիտրաժում վերը նշված նորմերը չեն գործում, սակայն արբիտրաժը կարգավորող օրենքում տեղ գտած իրավական կառուցակարգերը լիովին բավարար են արբիտրաժային դատարանի անկախության և անկողմնակալության ապահովման համար:

Ներկայումս բազմաթիվ հեղինակավոր արբիտրաժային հաստատությունների կանոնակարգեր ուղղակիորեն ամրագրել են արբիտրների անկախության և անկողմնակալության սկզբունքը, միաժամանակ համապատասխան իրավական կառուցակարգեր և երաշխիքներ սահմանելով վերը նշված սկզբունքի լիարժեք իրացման համար (օրինակ՝ ԱՄՊ արբիտրաժային կանոնակարգի հոդվ. 7, կետ 1 և այլն):

**Արբիտրաժի լեզվի ազատ ընտրության** սկզբունքն ամրագրված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում, որի համաձայն կողմերն իրենց հայեցողությամբ կարող են պայմանավորվել արբիտրաժային վարույթի ընթացքում կիրառվող լեզվի (լեզուների) շուրջ: Հոդվածի շարադրանքից բխում է, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ արբիտրաժային քննությունը կարող է իրականացվել ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավել լեզուներով: Երբ արբիտրաժային համաձայնության կողմերը միևնույն պետության ռեզիդենտներ են, ապա լեզվի ընտրության հետ խնդիրներ առաջանալ չեն կարող: Արբիտրաժի լեզվի ընտրությունը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնության կողմերը տարբեր պետություններից են կամ արբիտրաժային վճիռը (որոշումը) պետք է ճանաչվի և կատարման ներկայացվի այլ երկրի տարածքում, ինչպես նաև, երբ արբիտրաժի վայր է ընտրվել այլ պետության տարածքը: Այդ պատճառով էլ հայրենական օրենքը հնարավորություն է ընձեռում պայմանավորվել ինչպես արբիտրաժային վարույթի ընթացքում կիրառվող լեզվի, այնպես էլ լեզուների շուրջ: Արբիտրաժային պրակտիկայում հաճախ վարույթն իրականացվում է երկու կողմերի համար հասկանալի լեզվով, սակայն արբիտրաժային վճիռը կամ այլ որոշումը, որպես կանոն, շարադրվում է այն երկրի պետական լեզվով, որտեղ պետք է ճանաչվի և կատարման ներկայացվի համապատասխան վճիռը կամ որոշումը:

Կիրառվող լեզվի ընտրության վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային դատարանն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (լեզուները): Ընդ որում, այդ համաձայնությունը կամ որոշումը, եթե դրանցում այլ բան չի նշվում, վերաբերում է կողմերի ցանկացած գրավոր հայտարարություններին, գործի ցանկացած լսումներին, կամ արբիտրաժային դատարանի ցանկացած վճիռն, որոշմանը կամ հաղորդակցությանը (22-րդ հոդվ. կետ 1-ին): Հետևում է, որ կողմերը կարող են պայմանավորվել գրավոր հայտարարությունների կամ գործի լսումների իրականացման լեզվի շուրջ, սակայն արբիտրաժային դատարանի վճիռը կամ որոշումը շարադրվի այլ լեզվով: Կիրառվող լեզվի

ընտրության ազատությունն արտահայտում է արբիտրաժի ճկունությունը, սակայն այդ հնարավորությունը պետք է ուղղված լինի գործի քննությունը հեշտացնելուն, այլ ոչ թե վարույթի անհարկի բարդացմանը կամ ծանրաբեռնմանը: Ամեն դեպքում առավել նպատակահարմար է գործի քննությունն իրականացնել արբիտրաժի վայրի պետական լեզվով կամ այն երկրի պետական լեզվով, որտեղ պետք է ի կատար ածվի արբիտրաժային վճիռը:

Արբիտրաժային դատարանը կարող է որոշում կայացնել, որ գրավոր ապացույցն ուղեկցվի այն լեզվի կամ լեզուների թարգմանությամբ, որի մասին կողմերը պայմանավորվել են, կամ որի վերաբերյալ որոշում է կայացրել արբիտրաժային դատարանը: Հարկ է նշել, որ ամեն դեպքում արբիտրաժային վարույթը որևէ լեզվով իրականացնելու վերաբերյալ արբիտրաժային դատարանը որոշում է կայացնում, սակայն մի դեպքում որոշման հիմքը կիրառվող լեզուն ընտրելու մասին կողմերի կամարտահայտությունն է, իսկ մյուս դեպքում՝ սեփական նախաձեռնությունը: Առևտրային արբիտրաժում լեզվի ազատ ընտրության հնարավորությունը հակադարձվում է քաղաքացիական դատավարության՝ դատավարությունը պետական լեզվով իրականացնելու սկզբունքին: Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է հայերենով, գործին մասնակցող հայոց լեզվին չտիրապետող անձանց համար ապահովվում է թարգմանչի միջոցով գործերի նյութերին ծանոթանալու, դատավարական գործողություններին մասնակցելու և դատարանում այլ լեզվով հանդես գալու իրավունքը: Դատավարությունը հայոց լեզվով իրականացնելու սկզբունքը հրամայական քաղաքացիական դատավարությունում, իսկ առևտրային արբիտրաժում սահմանվել է կիրառվող լեզվի ազատ ընտրության հնարավորությունը: Հարկ է նշել, որ որոշ առաջատար արբիտրաժային հաստատությունների կանոնակարգեր ամրագրել են լեզվի սկզբունքը՝ միաժամանակ կատարելով վերապահումներ: Այսպես՝ Մոսկվայի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կանոնակարգի 10-րդ պարագրաֆով նախատեսվել է, որ գործի քննությունն իրականացվում է ռուսերեն լեզվով: Կողմերի համաձայնությամբ ար-

բիտրաժային դատարանը վարույթը կարող է իրականացնել նաև այլ լեզվով: Եթե կողմը չի տիրապետում վարույթի իրականացման լեզվին, ապա դատարանը կողմին իր խնդրանքով և իր հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով: Հետևում է, որ կանոնակարգով ամրագրվել է վարույթը կոնկրետ լեզվով (այս պարագայում՝ ռուսերեն) իրականացվելու հնարավորությունը, միաժամանակ սահմանելով նաև վարույթի ընթացքում կիրառվող լեզվի ազատ ընտրության սկզբունքը:

**Արբիտրաժի վայրի ընտրությունը** ևս կարևոր տեղ է զբաղեցնում կազմակերպական սկզբունքների շարքում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերաբերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային դատարանը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ՝ կողմերի համար հարմարությունը: Արբիտրաժի վայրն ընտրելու մասին կողմերի համաձայնությունը պարտադիր է արբիտրաժային դատարանի համար: Հիմնականում արբիտրաժի վայր է ընտրվում ապացույցների մեծամասնության գտնվելու վայրը: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, արբիտրաժային դատարանը կարող է միստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաների, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով: Հարկ է նշել, որ արբիտրաժի վայրն ընտրելու վերաբերյալ կողմերի կամարտահայտությունը կարևոր է գործի քննության արդյունավետության ապահովման նպատակով միստ գումարելու, այդ թվում՝ վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու, ապրանքներ կամ այլ գույք, փաստաթղթեր ուսումնասիրելու հարցում: Սակայն արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու հարցում, առավել նպատակահարմար կլինեք կարևորել արբիտրաժային դատարանի որոշումը: Օրենսդրորեն պետք է հնարավորություն ընձեռել արբիտրներին գործի փաստական հանգամանքների վերաբերյալ խորհրդակցությունների անց-

կացման վայրի ընտրության վերաբերյալ ազատորեն, սեփական նախաձեռնությամբ և նպատակահարմարությունից ելնելով որոշում կայացնել:

Ad hoc արբիտրաժի պարագայում վեճի լուծման վայրի ընտրությունը կախված է կողմերի կամքից, իսկ համապատասխան համաձայնության բացակայության դեպքում հարցը լուծում է արբիտրաժային դատարանի կազմը՝ հաշվի առնելով կողմերի համար հարմարությունը և գործի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Սակայն, ինստիտուցիոնալ արբիտրաժում այս սկզբունքն ունի դրսևորման որոշակի առանձնահատկություններ:

Արբիտրաժի վայրի ընտրության հարցում արբիտրաժային կանոնակարգերում տարբեր մոտեցումներ է ամրագրված՝ ազատական և պահպանողական: Ազատական մոտեցման պարագայում արբիտրաժի վայրի ընտրությունն անբողջությամբ կախված է կողմերի կամարտահայտությունից: Օրինակ՝ Գերմանական արբիտրաժային հաստատության (ինստիտուցիայի) 1998թ. կանոնակարգի 21-րդ պարագրաֆում սահմանվել է, որ այն դեպքում, երբ կողմերը չեն պայմանավորվել արբիտրաժային վարույթի իրականացման վայրի շուրջ, ապա վարույթի իրականացման վայրը որոշում է արբիտրաժի կազմը (արբիտրաժային դատարանը): Այստեղ արբիտրաժի վայրը նախապես սահմանված չէ կանոնակարգով, և արբիտրաժի վայրի ընտրության հարցում որևէ սահմանափակում չկա: Կամ Առևտրի միջազգային պալատի արբիտրաժային կանոնակարգի 14-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրաժային քննության վայրը սահմանում է դատարանը, եթե դրա շուրջ կողմերը չեն պայմանավորվել: Արբիտրաժի վայրի ընտրության հարցում պահպանողական մոտեցում է ամրագրել Մոսկվայի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կանոնակարգը, որի 7-րդ պարագրաֆում սահմանվել է, որ արբիտրաժային դատարանի գտնվելու և արբիտրաժային քննության վայրը Մոսկվա քաղաքն է: Կողմերը կարող են պայմանավորվել արբիտրաժային վարույթն իրականացնել Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող այլ վայրում: Այս դեպքում Մոսկվայից դուրս նիստ գումարելու հետ կապված ծախսերը դրվում են վիճող կողմերի վրա: Արբիտրաժային դատարանը կարող է կողմերից պահանջել նախապես այդ ծախսերի հատուցման համապատասխան երաշխիքներ ներկայացնել: Համաձայնեցնելով Մոսկվայի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի նախազահի հետ՝ արբիտրաժի կազմը կարող է անհրաժեշտության դեպքում նիստ գումարել նաև Մոսկվայից դուրս՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող այլ վայրում:

Հարկ է նշել, որ վերոնշյալ սահմանափակումները չեն հակասում արբիտրաժի վայրի ընտրության սկզբունքին: Կողմերն արբիտրաժային համաձայնությամբ վեճը հանձնելով կոնկրետ արբիտրաժային դատարանի լուծմանը կամ հղում կատարելով որևէ արբիտրաժային կանոնակարգի վրա՝ ինքնըստինքյան ընտրում են վեճի լուծման համապատասխան ընթացակարգային և այլ կանոնները, ինչն ուղղակիորեն բխում է կամքի ինքնավարությունից:

Հաշվի առնելով շարադրվածը՝ անհրաժեշտ է *«Առևտրային արբիտրաժի մասին»* ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանել նաև, որ արբիտրները ներքին խորհրդակցություն կարող են իրականացնել ցանկացած այլ վայրում, որը կհամարեն նպատակահարմար:

**Գործերի միանձնյա և կոլեգիալ քննության կարգի զուգորդման** սկզբունքը բխում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի և 10-րդ հոդվածի բովանդակությունից: Առևտրային արբիտրաժում գործի քննությունը կարող է իրականացվել ինչպես արբիտրի կողմից միանձնյա, այնպես էլ կոլեգիալ՝ երեք կամ ավելի արբիտրների կազմով: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «արբիտրաժային տրիբունալ» նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ: Այսինքն քննարկվող նորմում ի նկատի է ունեցվում արբիտրաժային դատարանի կազմը, միաժամանակ սահմանելով գործերի միանձնյա կամ կոլեգիալ քննության կարգի հնարավորությունը: Ընդ որում, առևտրային արբիտրաժում կողմերն իրենք են սահմանում արբիտրների թիվը և որոշում՝ գործի քննությունը իրականացվելու է միանձնյա, թե կոլեգիալ կարգով՝ մի քանի արբիտրների կազմով: Այս հանգամանքը հանդիսանում է արբիտրա-

ժուև գործող և քաղաքացիական դատավարության համաճանաչում սկզբունքների միջև հիմնական տարբերությունը: Քաղաքացիական դատավարությունում գործի միանձնյա և կոլեգիալ քննության կարգը և դեպքերը սահմանված են օրենքով, որոնք հրամայական են և պարտադիր ողջ դատավարության ընթացքում: Այսպես՝ ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ից 7-րդ կետերով սահմանվում է, որ ընդհանուր իրավասության և քաղաքացիական դատարաններում գործերը քննվում են դատավորի կողմից միանձնյա: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, այլ դատական ակտերի դեմ բողոքները՝ միանձնյա: Վճռաբեկ դատարանում գործերի քննությունն իրականացվում է կոլեգիալ՝ դատարանի կազմով: Եթե քաղաքացիական դատավարությունում դատական համակարգի տարբեր օղակներում դատարանի կազմը և գործերի քննության կարգը (միանձնյա կամ կոլեգիալ) սահմանված է օրենքով, ապա արբիտրաժում այս հարցի լուծումն ամբողջությամբ կախված է կողմերի կամարտահայտությունից: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առևտրային արբիտրաժում բացակայում է դատարանների աստիճանակարգությունը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային դատարանի ձևավորում զույգ կազմով, ապա արբիտրների թիվը պետք է մեկով ավելացվի: Այս հանգամանքն ապահովում է արբիտրաժի կազմի ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման հնարավորությունը: Հակառակ դեպքում կոլեգիալ կազմով գործեր քննելիս հնարավոր է, որ ձայների մեծամասնություն չապահովվի և գործով վճիռ կամ այլ որոշում կայացնելը գործնականում դառնա անհնար: Սակայն վերը նշված նորմը բավարար չէ արբիտրաժի կազմի կողմից որոշումների ընդունումն ապահովող երաշխիքների սահմանման համար: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ վեճի քննության դեպքում արբիտրաժային դատարանը

վճիռ է կայացնում ձայների մեծամասնությամբ: Որպեսզի արբիտրաժային վարույթում այս նորմի լիարժեք իրացումն ապահովվի, անհրաժեշտ է սահմանել նաև, որ որևէ արբիտր իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկելուց: Միայն այս դեպքում է հնարավոր անվերապահորեն ապահովել ձայների մեծամասնությունը արբիտրաժային կարգով վեճերի լուծման ընթացքում որոշում կայացնելիս:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է լրացնել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը և 2-րդ կետով սահմանել, որ գործով վճիռ կամ այլ որոշում կայացնելիս որևէ արբիտր իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկելուց:*

Անգլիական իրավունքում գործում է կանխավարկած, որի համաձայն, եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված չէ արբիտրաժի դատարանի ստեղծում արբիտրների կոլեգիալ կազմով, ապա գործը քննվում է միանձնյա (solo arbitrator): Հայրենական օրենքով սահմանվել է հակառակը. արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային դատարանը ձևավորվում է երեք արբիտրի կազմով (10-րդ հոդվ. 2-րդ կետ):

Հարկ է նշել, որ առևտրային արբիտրաժում առավել նպատակահարմար է արբիտրաժային դատարանը ձևավորել կոլեգիալ կազմով: Այս պարագայում առավել հեշտ է ապահովել գործի բազմակողմանի քննությունը, քանի որ կողմերը հնարավորություն ունեն նշանակել կոնկրետ բնագավառում նեղ մասնագիտական գիտելիքների տիրապետող արբիտրների, իսկ նախագահողը, որը ցանկալի է, որ մասնագիտությամբ իրավաբան լինի, կապահովի գործի քննության իրավական կողմը:

**Գործերի բանավոր և գրավոր քննության կարգի զուգորդման** սկզբունքը նախատեսված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, որի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային դատարանը որոշում է կայացնում գործի վարույթն իրականացնել կամ բանավոր, կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Այնուամենայնիվ, արբիտրաժային դատարանը պարտավոր է իրականացնել բանավոր լսումներ արբիտրաժային վարույթի համապա-

տասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լուսմներ: Քննարկվող սկզբունքը գործի հանգամանքները, ապացուցողական նյութը հաղորդելու ձև է, հատուկ եղանակ, որը հնարավորություն է ընձեռում վարույթն իրականացնող մարմնին և գործի քննության այլ մասնակիցներին ծանոթանալ գործի փաստական հանգամանքներին: Օրենքի 24-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ գործերի քննության բանավոր կամ գրավոր քննության կարգը որոշվում է՝

– կողմերի համաձայնությամբ,

– արբիտրաժային դատարանի որոշմամբ՝ եթե բացակայում է բանավոր լուսմների կամ փաստաթղթային վարույթ իրականացվելու վերաբերյալ կողմերի համաձայնությունը,

– գործի վարույթն իրականացվում է կամ բանավոր լուսմների կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Այսինքն, հողվածը հնարավորություն չի ընձեռում համատեղել գործերի բանավոր և գրավոր քննության կարգը: Մինչդեռ, գործի քննության արդյունավետության ապահովման նպատակով առավել շահեկան կլիներ, որպեսզի օրենքով նախատեսվեր բանավոր և գրավոր քննության կարգը համատեղելու հնարավորությունը: Բացի այդ, հողվածը դրույթ չի պարունակում այն մասին, թե բանավոր լուսմների կարգով գործի քննության ժամանակ արձանագրություն վարվում է, թե ոչ: Իսկ արձանագրությունը բավական կարևոր է օրենքին արբիտրաժային վարույթի կազմակերպման համապատասխանության հարցը ստուգելու համար, հատկապես, երբ խոսքը գնում է արբիտրաժային վճիռը չեղյալ հայտարարելու հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմերի խախտումները վեր հանելու մասին: Քաղաքացիական դատավարությունում գործի քննությունն իրականացվում է բանավոր, իսկ դատական նիստն արձանագրվում է (ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 9 և 147-րդ հոդվածներ): Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարությունում գործերի բանավոր և գրավոր քննության կարգի զուգորդման սկզբունքն ավելի ժողովրդավարական է և առավել արդյունավետ՝ վարույթի կազմակերպման տեսանկյունից: Փաստորեն, առևտրային արբիտրաժը կարգավոր

րող հայրենական օրենքն արձանագրության վարումը վարույթի համար պարտադիր չի համարել: Մինչդեռ, արբիտրաժային վարույթը միայն բանավոր լուսմների միջոցով իրականացնելը ճիշտ չէ: Արբիտրաժային դատարանի որոշումներն ու գործողությունները, կողմերի և վարույթի այլ մասնակիցների բոլոր գործողությունները, այդ թվում՝ հայտարարություններն ու բանավոր միջնորդություններն անպայմանորեն պետք է իրենց գրավոր արտացոլումն ունենան արձանագրության մեջ, որին պետք է կցվի ապացուցողական ողջ նյութը: Հետագայում, արբիտրաժային վճռի վիճարկման ժամանակ դատարանը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ ինչպես արբիտրաժային վճռի հիմքում դրված, այնպես էլ արբիտրների կարծիքով գործի լուծման համար նշանակություն չունեցող և ապացուցման առարկայի մեջ չմտած նյութերին: Գործի քննությունը բանավոր և գրավոր ձևերով իրականացնելը կախված է այն հանգամանքից, թե ապացույցներն ինչ կարգով են ներկայացվում արբիտրաժային դատարանին, հաշվի առնելով արբիտրների կողմից դրանք ընկալելու արդյունավետությունը և հետագոտելու նպատակահարմարությունը:

Հետևաբար՝ *«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կետը պետք չարտադրել հետևյալ խմբագրությամբ.*

*«Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային դատարանի որոշմամբ գործի վարույթը կարող է իրականացվել և բանավոր լուսմների, և միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Արբիտրաժային դատարանը պարտավոր է իրականացնել բանավոր լուսմներ արբիտրաժային վարույթի համապատասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լուսմներ:*

*Բանավոր լուսմների ձևով արբիտրաժային վարույթն իրականացնելիս վարվում է արձանագրություն, որտեղ պետք է նշվեն՝*

*– նիստի տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,*

*– նիստը սկսելու և ավարտելու ժամը,*

*– արբիտրաժային հաստատության անվանումը (եթե վարույթն իրականացվում է ինստիտուցիոնալ արբիտրաժի կողմից), արբիտ-*

րաժային դատարանի կազմը և արձանագրությունը վարողի անունը,

– գործի անվանումը,

– տեղեկություններ կողմերի և վարույթի այլ մասնակիցների ներկայանալու մասին,

– արբիտրաժային դատարանի որոշումներն ու նիստում կատարված գործողությունները,

– կողմերի և վարույթի այլ մասնակիցների հայտարարությունները, միջնորդությունները և բացատրությունները,

– վկաների ցուցմունքները, փորձագետի բանավոր պարզաբանումները եզրակացությունների վերաբերյալ,

– տեղեկություններ ապացույցների հրապարակման, զննման և հետազոտման վերաբերյալ,

– արբիտրաժային վճռի եզրափակիչ մասը:

Կողմերի համաձայնությամբ նիստը կարող է նաև տեսաձայնագրվել:

Արձանագրությունը վարում է արբիտրաժային հաստատության աշխատակիցը կամ արբիտրաժային դատարանի կողմից նշանակված այլ անձ (քարտուղարը), եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

Արձանագրությունը ստորագրում է արբիտրը (արբիտրները):

Արձանագրությունը կողմերին է տրամադրվում ոչ ուշ, քան արբիտրաժային վճռի տրամադրումը:

Վարույթի մասնակիցներն իրավունք ունեն ծանոթանալ նիստի արձանագրությանը և իրենց դիտողությունները ներկայացնել այն կազմելու և ճշտության վերաբերյալ»:

Կազմակերպական սկզբունքների շարքում կարելի է առանձնացնել նաև արբիտրաժային քննության **գաղտնիությունը**՝ սակայն որոշակի վերապահումներով: Արբիտրաժային քննության գաղտնիությունը այնպիսի հրամայական պահանջ չէ, որի խախտումը կհանգեցնի բացասական իրավական հետևանքների առաջացման, այդ թվում՝ արբիտրաժային վճռի չեղյալության: Գործի գաղտնի կամ հրապարակային քննությունն ամբողջությամբ կախված է կողմերի կամարտահայտությունից: «Առևտրային արբիտրաժի մասին»

ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանվում է, որ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնվել արբիտրաժային վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ: Հետևում է, որ օրենսդիրը քննարկվող սկզբունքը դիտարկում է կամքի ինքնավարության շրջանակներում, որը առանձին դեպքերում որոշակիորեն կարող է սահմանափակվել և, օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանել է՝ եթե օրենքով կամ դատարանի որոշմամբ այլ բան նախատեսված չէ, կամ այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա բոլոր արբիտրաժային վարույթները գաղտնի են և դռնփակ, և ոչ մի փաստաթուղթ կամ ներկայացված այլ ապացույց կամ արբիտրաժի ժամանակ երբևէ կատարված հայտարարություն չի կարող տրամադրվել այլ անձանց կամ որևէ դատարանի կամ այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունները տրամադրվում են դատարանի որոշմամբ կամ անհրաժեշտ են դատարանում վարույթի շրջանակներում՝ արբիտրաժի վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ հայտարարման համար: Հոդվածով նախատեսված դրույթները չեն տարածվում առանց որևէ չիրապարակման պարտավորության խախտման նախկինում հրապարակված փաստաթղթերի, ապացույցների կամ հայտարարությունների վրա: Հետևաբար, արբիտրաժային վարույթի գաղտնիությունը ենթադրում է, որ՝

1. գործերը քննվում են արբիտրաժային դատարանի դռնփակ նիստում,

2. արբիտրաժի ընթացքում ներկայացված ապացույցները կամ կատարված հայտարարությունները ենթակա չեն հրապարակման,

3. արբիտրաժում քննվող վեճի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ապացույցների կամ այլ փաստաթղթերի, ինչպես նաև կողմերի հայտարարությունների մասին տեղեկությունները այլ անձանց կամ պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց կարող են տրամադրվել միայն դատարանի որոշմամբ,

4. վերը նշված տեղեկատվությունը կարող է տրամադրվել դատարանում արբիտրաժային վճռի ճանաչման, հարկադիր կատար-



ման կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ վարույթի շրջանակներում:

Արբիտրաժային քննության գաղտնիությունն ապահովող դրույթներ են նախատեսված նաև արբիտրաժային կանոնակարգերով: Օրինակ՝ Մոսկվայի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կանոնակարգի 27-րդ պարագրաֆի համաձայն՝ գործի քննությունն իրականացվում է դռնփակ, իսկ 8-րդ պարագրաֆի համաձայն՝ արբիտրները, զեկուցողները, քարտուղարության աշխատակիցները պարտավոր են գաղտնի պահել արբիտրաժային դատարանում լուծվող վեճի մասին տեղեկատվությունը, որը կարող է վնասել կողմերի շահերին:

Արբիտրաժային քննության գաղտնիությունը հակադարձվում է քաղաքացիական դատավարության հրապարակայնության սկզբունքին, որի համաձայն դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է, իսկ դռնփակ դատական նիստերում գործի քննությունը թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարելու դեպքում (ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 8-րդ հոդվ.): Արբիտրաժում քննարկվող սկզբունքի կիրառումը պայմանավորված է կողմերի կամարտահայտությունից և դրսևորվում է կամքի ինքնավարության շրջանակներում: Հաշվի առնելով առևտրային հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաև վեճն առանց ավելորդ աղմուկի լուծելու նպատակահարմարությունը՝ առևտրային արբիտրաժում, որպես կանոն, գործերի քննությունն իրականացվում է դռնփակ նիստերում: Արբիտրաժային վճիռներն առանց կողմերի համաձայնության ենթակա չեն հրապարակման այլ անձանց, այդ թվում՝ զանգվածային լրատվական միջոցների առջև:

Սակայն հայրենական օրենքն արբիտրաժային վարույթի գաղտնիության ապահովման համար բավարար երաշխիքներ չի պարունակում: Մասնավորապես, հոդվածի շարադրանքից պարզ

չէ, թե դռնփակ նիստում արբիտրաժային կարգով վեճի լուծման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկություններն առանց համապատասխան հիմքերի այլ անձանց տրամադրելու համար արբիտրները, արբիտրաժային հաստատության աշխատակիցները և վարույթի այլ մասնակիցները պատասխանատվություն կրում են, թե ոչ: Կամ արբիտրաժային վճռի ճանաչման կամ վիճարկման վերաբերյալ վարույթների շրջանակում գործի քննությունը դատարանում իրականացվելու է դռնփակ, թե դռնբաց դատական նիստում: Գործը դռնփակ դատական նիստում քննելու մասին որոշումը դատարանը կայացնում է համապատասխան միջնորդությունը բավարարելու դեպքում: Այսինքն, եթե օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ գործի դռնփակ քննություն, ապա հարցի լուծումը թողնված է դատարանի հայեցողությանը, որն իհարկե, ղեկավարվելով դատավարական օրենքի նորմերով, պարտավոր է բավարարել կողմի՝ օրենքի պահանջներին համապատասխան արված միջնորդությունը: Հետևում է, որ այն դեպքերում, երբ կողմերի համաձայնությամբ որոշվել է արբիտրաժային վարույթն իրականացնել գաղտնի, և հետագայում արբիտրաժային վճիռը չեղյալ հայտարարելու պահանջով շահագրգռված անձը դիմել է դատարան, ապա հնարավոր է, որ դատարանը գործը դռնփակ դատական նիստում քննելու մասին որոշում չկայացնի: Դատարանը գործը դռնփակ դատական նիստում քննելու մասին որոշում է կայացնում միայն դատավարության օրենքով նախատեսված դեպքերում, մինչդեռ հնարավոր է, որ արբիտրաժային կարգով լուծված գործն առևտրային կամ բանկային գաղտնիք չպարունակի:

*Հետևում է, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում նաև պետք է նախատեսել.*

*«1. Արբիտրները, արբիտրաժային հաստատության աշխատակիցները, վարույթի մասնակիցները պատասխանատվություն են կրում վեճի լուծման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունների, այդ թվում՝ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիքի հրապարակման համար:*

*Գործը դռնփակ քննելիս արբիտրներից, արբիտրաժային հաստատության աշխատակիցներից, որոնք առնչվում են գործով իրա-*

կանացվող վարույթին, կողմերից, նրանց ներկայացուցիչներից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաներից, թարգմանիչներից և փորձագետները ստորագրություն է վերցվում իրենց հայտնի դարձած տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին:

2. *Գաղտնի և դժնփակ իրականացվող արբիտրաժային վարույթի արդյունքում կայացված վճիռը չեղյալ հայտարարելու վերաբերյալ գործերի քննությունը դատարանում իրականացվում է դժնփակ դատական նիստում:*

Արբիտրաժի գործառության սկզբունքներն են կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը և իրավահավասարությունը, տնօրինչականությունը, մրցակցությունը, գործերի քննության անմիջականությունը:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված **կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը**, կարելի է ասել, որ հանդիսանում է քաղաքացիական դատավարության քաղաքացիների և կազմակերպությունների հավասարությունն օրենքի և դատարանի առջև դատարանակազմական սկզբունքի ուրույն դրսևորումը արբիտրաժային քննությունում: Վերոնշյալ սկզբունքի բովանդակությունից բխում է, որ ի սկզբանե քաղաքացիական շրջանառության մասնակիցները՝ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք հավասար են օրենքի առաջ, իսկ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունները հիմնված են մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ինչպես նաև քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման և խախտված իրավունքների վերականգնման ապահովման անհրաժեշտության վրա: Արբիտրաժային քննությունում կողմերի (նույն քաղաքացիական շրջանառության մասնակիցների) նկատմամբ հավասար մոտեցումը ենթադրում է, որ անկախ գույքային վիճակից, տնտեսական հզորության աստիճանից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հարցերից (սեռից, ռասայից, էթնի-

կական կամ սոցիալական ծագումից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, հաշմանդամությունից, տարիքից) խտրականությունն արգելվում է: Քննարկվող սկզբունքը բացառում է առևտրային արբիտրաժում վերը նշված հատկանիշներից ելնելով առավելությունների և արտոնությունների սահմանումը:

Հարկ է նշել, որ առևտրային արբիտրաժում այս սկզբունքը ստանում է առավել լիարժեք և ամբողջական դրսևորում և իր գործառնության առանձնահատկություններով տարբերվում է քաղաքացիական դատավարության՝ օրենքի և դատարանի առջև քաղաքացիների և կազմակերպությունների հավասարության սկզբունքից: Այսպես՝ քաղաքացիական դատավարությունում օրենքով նախատեսված դեպքերում, ելնելով առանձին կատեգորիայի գործերով քաղաքացիների որոշակի խմբերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից, կարող են լրացուցիչ երաշխիքներ և արտոնություններ սահմանվել: Մասնավորապես՝ ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան կամ առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի կամ վնասի պատճառման վայրի դատարան և այլն: Ելնելով քաղաքացիների առողջական վիճակից, գույքային դրությունից և այլ հանգամանքներից՝ արտոնություններ են սահմանված դատական ծախսերի վճարումից ազատելու հարցում (ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 70-րդ և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածներ):

Առևտրային արբիտրաժում կողմերի նկատմամբ հավասար մոտեցման սկզբունքը գործում է առանց բացառությունների: Վերը նշված հանգամանքն առավելապես պայմանավորված է արբիտրաժի ինստիտուտի պայմանագրային բնույթով:

Արբիտրաժային քննությունում կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը ենթադրում է նաև կողմերի իրավահավասարությունը: Մասնավորապես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր կողմին

պետք է տրամադրվեն բոլոր հնարավորություններն իր գործի ներկայացման համար: Եթե քաղաքացիական դատավարությունում օրենքի և դատարանի առջև քաղաքացիների և կազմակերպությունների հավասարության և կողմերի իրավահավասարության սկզբունքները դիտարկվում են առանձին՝ դասակարգման դատարանակազմական և գործառույթային սկզբունքների շրջանակներում, ապա առևտրային արբիտրաժում դրանք գտնվում են երկմիասնական կապի մեջ և կազմում են կողմերի նկատմամբ հավասար մոտեցման սկզբունքի բովանդակությունը: Կողմերի դատավարական իրավահավասարությունը քաղաքացիական դատավարությունում օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքի զարգացման արտահատումն է: Հարկ է նշել, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրվել էր նաև կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը առանձնացվել էր օրենքի և դատարանի առջև քաղաքացիների և իրավաբանական անձանց հավասարության սկզբունքից: Արբիտրաժը կարգավորող գործող օրենքի այս երկու ելակետային դրույթները բխեցրել է կողմերի նկատմամբ հավասար մոտեցման սկզբունքի բովանդակությունից: Այս մոտեցման արդյունքում բովանդակային լուրջ սխալ տեղի չի ունեցել, սակայն այս երկու սկզբունքները դատավարագիտությունում միշտ դիտարկվել են առանձին: Դրանք բովանդակային առումով տրամաբանական սերտ կապի մեջ են գտնվում, սակայն դատավարական իրավահարաբերություններում ունեն դրսևորման իրենց առանձնահատկությունները՝ մեկը կազմակերպական բնույթի հարցեր է լուծում, իսկ մյուսն՝ արտահայտում է զուտ իրավունքների դատական պաշտպանության գործառույթային կողմը: Օրենսդրի նման մոտեցումը կարելի է բացատրել միայն նրանով, որ արբիտրաժային իրավահարաբերություններն իրենց բնույթով և ընթացակարգային են, և ունեն պայմանագրային որոշակի տարրեր: Բոլոր դեպքերում, այս երկու սկզբունքները բովանդակային առումով տարբեր են, և արբիտրաժային քննությունում ունեն դրսևորման որոշակի առանձնահատկություններ:

Կողմերի իրավահավասարության հիմքում ընկած է քաղաքացիական շրջանառության մասնակիցների հավասարությունը: Իսկ

իրավահավասարությունն առևտրային արբիտրաժում ենթադրում է, որ արբիտրաժային քննության տարբեր փուլերում նրանք օժտված են իրենց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հավասար հնարավորություններով: Հայցվորն արբիտրաժային համաձայնության շրջանակներում իրավունք ունի փոփոխել պահանջը, հրաժարվել հայցից, կատարել անհրաժեշտ գործողություններ, որոնց միջոցով, ըստ իր հայեցողության, կարող է ազդել վարույթի շարժի վրա և այլն: Պատասխանողն իրավունք ունի առարկել հայցի դեմ, փոփոխել իր առարկության հիմքերը, արբիտրաժային համաձայնության շրջանակներում հակընդդեմ հայց հարուցել, ընդունել հայցը և այլն: Բոլոր դեպքերում արբիտրաժային քննությունում պետք է կողմերի իրավունքների պաշտպանության համար բավարար պայմաններ ապահովվեն: Ընդ որում, արբիտրաժում կողմերն իրենց իրավունքներն ու օրինական շահերը կարող են պաշտպանել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով:

**Տնօրինչականությունն** առևտրային արբիտրաժի այն եզակի սկզբունքներից է, որ հանդիսանալով կանքի ինքնավարության դրսևորումներից մեկը, բովանդակային առումով ամբողջությամբ համընկնում է քաղաքացիական դատավարության համանուն սկզբունքի հետ: Այն կողմերին տրված հնարավորությունն է օրենքով սահմանված կարգով սեփական հայեցողությամբ տնօրինելու իրենց իրավունքները: Քննարկվող սկզբունքը բխում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 23, 30, 32-րդ և մի շարք այլ հոդվածների բովանդակությունից, և տնօրինչական գործողություններ կատարելով կողմերը կարողանում են ազդել վարույթի շարժի վրա, պաշտպանել իրենց իրավունքներն ու օրինական շահերը: Այս սկզբունքի լիարժեք իրացումը պայմանավորված է վիճելի նյութական իրավահարաբերությունների՝ արբիտրաժային համաձայնության կողմերի հավասարությամբ և շահերի հակադիր բնույթով: Տնօրինչականության սկզբունքն առևտրային արբիտրաժում կողմերին վերապահված հնարավորությունն է՝ վարույթի շարժման ընթացքում տնօրինելու վեճի առարկան, որը ենթադրում է՝

1. Արբիտրաժային համաձայնության կողմն ինքն է որոշում պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել արբիտրաժային դատարան և իրացնել արբիտրաժային կարգով իր իրավունքների պաշտպանության իրավունքը, թե ոչ: Արբիտրաժային վարույթը հարուցվում է միայն կողմի՝ վեճն արբիտրաժին փոխանցելու (հանձնելու) պահանջով, հայցի հիման վրա: Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային դատարանի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստաթղթերը, իսկ 21-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրաժային վարույթը համարվում է սկսված վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

2. Յուրաքանչյուր կողմն արբիտրաժային համաձայնության շրջանակներում իր հայեցողությամբ կարող է կատարել այնպիսի տնօրինչական գործողություններ, որոնք ուղղված են գործով արբիտրաժային վարույթի շարժի վրա ազդելուն: Արբիտրաժային վարույթի ընթացքում յուրաքանչյուր կողմ կարող է լրացնել կամ փոփոխել հայցը կամ պատասխանը, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Ընդ որում, արբիտրաժային դատարանը պետք է աննպատակահարմար չհամարի այդպիսի փոփոխության թույլատրումը՝ հաշվի առնելով այն կատարելու ուշացումը (23-րդ հոդվ. 2-րդ կետ): Այսինքն, հայցվորն իր պահանջների առարկան և հիմքը որոշում է ինքնուրույն, հետևաբար տնօրինչականությունը ներառում է նաև սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության եղանակներն ընտրելը: Հայցվորը մինչև արբիտրաժային վարույթի ավարտը կամ գործով վճիռ կայացնելը կարող է փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցապահանջի չափը, ցանկացած պահի հրաժարվել հայցից: Հայցվորի կողմից հայցից հրաժարումը պարտադիր է արբիտրաժային դատարանի համար, եթե այն չի խախտում պատասխանողի օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում, և այս դեպ

քու արբիտրաժային դատարանը պարտավոր է որոշում կայացնել արբիտրաժի ավարտի վերաբերյալ (32-րդ հոդվ. 2.1 կետ): Պատասխանողը կարող է առարկել հայցի դեմ, փոփոխել կամ լրացնել պատասխանը, փոխել առարկությունների հիմքը, արբիտրաժային համաձայնության շրջանակներում հակընդդեմ հայց հարուցել, ամբողջությամբ կամ մասնակի ընդունել հայցը<sup>1</sup>: Մինչև արբիտրաժի ավարտը կողմերը կարող են կնքել հաշտության համաձայնություն: Գործող օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է՝ եթե արբիտրաժի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային դատարանը դադարեցնում է գործի քննությունը և կողմերի խնդրանքով արբիտրաժային դատարանի կողմից առարկությունների բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններով կայացնում է վճիռ՝ հաշտության մասին: Կողմերը կարող են պայմանավորվել վարույթի դադարեցման վերաբերյալ (32-րդ հոդվ. 2.2 կետ):

3. Տնօրինչական գործողությունները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված կարգով: Այդ գործողությունները որոշ դեպքերում կարող են հակասել օրենքին կամ այլ իրավական ակտերին, կամ կարող են խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Կողմերը զրկված չեն արբիտրաժային վարույթում նշված գործողությունները կատարելու իրավունքից, սակայն արբիտրաժային դատարանը, ելնելով օրինականության ապահովման և այլ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից, կարող է չընդունել հայցվորի կողմից հայցից հրաժարումը կամ մերժի հաշտության համաձայնության մասին վճռի

<sup>1</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածում սահմանված է, որ արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային դատարանի կողմից վճիռ կամ արբիտրաժն ավարտելու վերաբերյալ որոշում կայացնելու պահից այն դեպքում, երբ հայցվորը հրաժարվում է հայցից, կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ կամ արբիտրաժային դատարանը գտնում է, որ գործի քննության շարունակությունը որոշակի պատճառով դարձել է ավելորդ կամ անհնարին: Հոդվածի բովանդակությունից չի երևում, թե արբիտրաժային դատարանն իչպես պետք է վարվի պատասխանողի կողմից հայցն ընդունելու դեպքում: Հետևում է, որ արբիտրաժային դատարանի վճռով կամ պետք է հայցը բավարարվի, կամ էլ՝ հաստատվի հաշտության համաձայնությունը:

կայացումը: Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արբիտրաժային դատարանը վարույթն ավարտելու վերաբերյալ որոշում չի կայացնում, եթե պատասխանողն առարկուն է գործի վարույթի ավարտման դեմ և ճանաչվում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում, կամ 30-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ արբիտրաժային դատարանը կողմերի համաձայնեցրած պայմաններով հաշտության համաձայնության մասին վճիռ է կայացնում իր կողմից առարկությունների բացակայության դեպքում: Հոդվածի վերլուծությունից կարելի է ենթադրել, որ արբիտրաժային դատարանի առարկությունները հենց վերաբերում են կողմերի կամարտահայտության և օրենքի կամ այլ իրավական ակտերի միջև առկա հակասություններին:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում առանձին նորմով սահմանել, որ արբիտրաժային դատարանը պարտավոր է չընդունել հայցվորի կողմից հայցային պահանջներից ամբողջովին կամ մասնակի հրաժարումը, պատասխանողի կողմից հայցային պահանջներն ամբողջովին կամ մասնակի ընդունելը, վճիռ չկայացնել կողմերի հաշտության համաձայնության մասին, ինչպես նաև վարույթը դադարեցնելու վերաբերյալ կողմերի պայմանավորվածության հիմքով որոշում չկայացնել արբիտրաժի ավարտի մասին, եթե դրանք հակասում են ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին կամ խախտում են այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Թեև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում որևէ նորմով **մրցակցության սկզբունքն** ուղղակիորեն չի նախատեսվել, սակայն օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրաժային վարույթը ՀՀ-ում իրականացվում է կողմերի մրցակցության հիման վրա: Մրցակցությունը արբիտրաժային վարույթի իրականացման ձև է, կառուցակարգ, որը մյուս սկզբունքների համակցության մեջ ապահովում է արբիտրաժային կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումն առևտրային արբիտրաժում պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

1. Մրցակցության ապահովման առաջին պայմանը կողմերի իրավահավասարությունն է: Կողմերն իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանել կարող են միան հավասար պայմաններում մրցակցելու, պաշտպանության հավասար միջոցներից օգտվելու դեպքում: Մրցակցության հիմքը կողմերի իրավահավասարությունն է՝ արբիտրաժային վարույթում նրանց հավասար իրավական դրությունը: Օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված է, որ արբիտրաժում կողմերի նկատմամբ պետք է կիրառվի հավասար մոտեցում, և յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվեն բոլոր հնարավորություններն իր գործի ներկայացման համար:

2. Յուրաքանչյուր կողմը պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ (23-րդ հոդվ. կետ 1-ին):

3. Ապացույցները ներկայացնում են կողմերը, իսկ կողմը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել, իրավունք ունի ստանալ աջակցություն: Արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում արբիտրաժային դատարանը կամ կողմը արբիտրաժային դատարանի համաձայնությամբ կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության կամ իրավասու ցանկացած այլ դատարան տվյալ անձի կողմից՝ արբիտրաժի մեկ կամ մեկից ավելի կողմերին կամ արբիտրաժային դատարանին վարույթին առնչվող ցանկացած փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու կամ լուծմանն ենթարկելու անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու կամ որևէ այլ կերպ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու միջնորդությամբ: Դատարանը կարող է բավարարել այդ միջնորդությունն իր իրավասության շրջանակներում (27-րդ հոդվ.):

Հետևում է, որ ապացուցման պարտականությունն արբիտրաժում դրված է վիճող կողմերի վրա, իսկ վարույթն իրականացնող մարմինը կամ դատարանը կողմի խնդրանքով միայն կարող են օժանդակել նրանց այս հարցում: Արբիտրաժային դատարանը պարտավոր է հավասար պայմաններ ապահովել կողմերի ապացուց-

ղական գործունեության համար: Կողմի ապացուցողական գործունեությունը ներառում է ապացուցման առարկան որոշելը, ապացույցներ ձեռք բերելն ու դրանք ներկայացնելը, ինչպես նաև վարույթի ընթացքում դրանք հետազոտելը կամ ստուգելը: Կողմերը կարող են իրենց հաղորդումներին կից ներկայացնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք, ըստ իրենց, առնչվում են գործին, կամ հղում կատարել ապագայում իրենց կողմից ներկայացվելիք փաստաթղթերին կամ այլ ապացույցներին (27-րդ հոդվ.): Այս դրույթով ապացուցման առարկան որոշելու հարցում արբիտրաժային դատարանի դերն անտեսվել է: Մինչդեռ, կողմերը կարող են գործի լուծման համար էական նշանակություն չունեցող նյութերով անհարկի ծանրաբեռնել գործի քննությունը: Հետևաբար, անհրաժեշտ է ապացուցման առարկան կամ գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի շրջանակը որոշելու հարցում հաշվի առնել նաև արբիտրների կարծիքը: Բացի այդ, մրցակցության լիարժեք իրացման և ապացուցման պարտականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ երաշխիքներ սահմանել ապացուցման գործընթացին կողմի մասնակցության համար: Օրինակ՝ եթե կողմը հրաժարվում (խուսափում) է պատասխանել արբիտրների կամ վարույթի այլ մասնակիցների հարցերին, ապա արբիտրաժային դատարանը կարող է կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ անհիմն համարել կողմի հրաժարումը, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ հարցերին կողմը հրաժարվում (խուսափում) է պատասխանել, կարող է համարվել ապացուցված կամ ամեն դեպքում մեկնաբանվել ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Հարկ է նշել, որ օրենքը դրույթ չի պարունակում նաև ապացուցելուց ազատելու հիմքերի մասին, մինչդեռ առանձին նորմով պետք է սահմանվեր, որ *հանրահայտ ծանաչված և նախադատելի փաստերը կրկին անգամ ապացուցման ենթակա չեն*:

**Գործերի քննության անմիջականության** սկզբունքն արբիտրաժային վարույթում ուղղված է ապացույցների, ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների անմիջական հետազոտման և ուսումնասիրության ապահով-

մանը: Քննարկվող սկզբունքը բխում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 15, 20, 24-26, 31-րդ հոդվածների բովանդակությունից, որոնք նաև գործուն երաշխիքներ են սահմանում արբիտրաժային քննության ընթացքում այս սկզբունքի լիարժեք իրացման համար: Նախևառաջ, անմիջականությունն արբիտրաժային վարույթում նշանակում է, որ արբիտրաժային դատարանը գործի նյութերին, այդ թվում՝ իրեղեն և գրավոր ապացույցներին ծանոթանում է անմիջականորեն, լսում է կողմերի, վարույթի այլ մասնակիցների բացատրություններն ու ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը: Ընդ որում, առևտրային արբիտրաժում անմիջականությունը ենթադրում է ոչ միայն արբիտրաժային դատարանի, այլև կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությունը ապացուցողական նյութին ծանոթանալու հարցում: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում անմիջականությունն առանձին նորմով ուղղակիորեն նախատեսված չէ, այն է՝ չի սահմանվել, որ արբիտրը (արբիտրները) վեճը քննելիս պարտավոր է գործի ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին, զննել իրեղեն ապացույցները, լսել փորձագետի եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքներն ու բացատրությունները: Սակայն, օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, արբիտրաժային դատարանը կարող է նիստ գումարել այն վայրում, որը հարմար է համարում արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով: Կողմերը պետք է նախապես պատշաճ ձևով իրազեկվեն արբիտրաժային դատարանի ցանկացած նիստի կամ ապրանքների, այլ գույքի զննման կամ փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով ցանկացած հանդիպման մասին (24-րդ հոդվ. կետ 2): Եթե կողմերից մեկը չի ներկայանում կամ արբիտրաժային դատարանի կողմից կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում գրավոր ապացույցներ՝ արբիտրաժային դատարանը կարող է շարունակել վարույթը և վճիռ կայացնել՝ իր մոտ առ-

կա ապացույցների հիման վրա (25-րդ հոդվ. կետ 3): Եթե արբիտրաժային դատարանը անհրաժեշտ համարի, փորձագետը պարտավոր է իր գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ արբիտրներին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննարկվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով (26-րդ հոդվ. կետ 2): Արբիտրաժային վճռում պետք է նշվեն դրա հիմքում ընկած հանգամանքները, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում, կամ կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ: Վճռի հիմքում ընկած հանգամանքների տակ պետք ի նկատի ունենալ նաև այն փաստերը, որոնք հաստատվել կամ հերքվել են գործով ուսումնասիրված ապացույցներով: Միայն ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում է հնարավոր դրանց արժանահավատության վերաբերյալ դատողություններ անել, իսկ անմիջականությունն ապացուցողական նյութին ծանոթանալու, դրանք ուսումնասիրելու ձև է, որը բխում է արբիտրաժը կարգավորող հայրենական օրենքի վերլուծությունից: Օրենքում ամրագրված է անմիջականության սկզբունքի ապահովմանն ուղղված մեկ կարևոր դրույթ ևս, որի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, երբ փոխարինվում է միանձնյա արբիտրը կամ նախագահողը, ապա բոլոր լսումները նորից են վերսկսվում, իսկ եթե փոխարինվում է ցանկացած այլ արբիտր, ապա այդպիսի լսումները կարող են վերսկսվել արբիտրաժային դատարանի հայեցողությամբ: Արբիտրների կողմից ապացույցների անմիջական ընկալումը գործով ճշմարտությունը բացահայտելու երաշխիք է: Հետևաբար, ավելի ճիշտ կլիներ, որ գործով լսումները նորից վերսկսելը պայմանավորված չլիներ կողմերի համաձայնությունից և կրեր հրամայական բնույթ՝ անկախ նրանից՝ միանձնյա կամ նախագահող արբիտր է փոխարինվում, թե ոչ:

Բացի այդ, անհրաժեշտ է *«Առևտրային արբիտրաժի մասին» ԳԳ օրենքում ուղղակիորեն նախատեսել, որ արբիտրաժային դատարանը վեճը քննելիս պարտավոր է գործի ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին,*

*զննել իրեղեն ապացույցները, լսել փորձագետի եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքներն ու բացատրությունները:*

Առևտրային արբիտրաժում որոշակի վերապահումներով գործում է նաև դատավարագիտությունում ընդունված օբյեկտիվ ճշմարտության կամ դատական ճշմարտության սկզբունքը, սակայն այն հրամայական բնույթ չի կրում և իրավական արժեքավորման տեսանկյունից ստորադասվում է արբիտրաժի մյուս սկզբունքներին: Գործով ճշմարտությունը բացահայտելու մասին խոսք լինել չի կարող, երբ կողմերը լիազորում են արբիտրաժային դատարանին վեճը լուծել արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositer), կամ երբ արբիտրաժային դատարանը համաձայնեցված պայմաններով վճիռ է կայացնում հաշտության համաձայնության մասին: Վերջին երկու դեպքերում արբիտրաժային քննությունն ուղղվում է առաջին հերթին կոնֆլիկտային իրավիճակի վերացմանը, տարաձայնությունները հարթելուն և կողմերի համար ընդունելի վճիռ կայացնելուն: Նման պարագայում հնարավոր է, որ արբիտրաժային դատարանը գործով ճշմարտության բացահայտումը մղի երկրորդ պլան:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է առևտրային արբիտրաժի սկզբունքների մեկ խումբ ևս, որը կազմված է արբիտրաժային վարույթին դատական աջակցության, արբիտրաժային վճիռների ճանաչումն ու հարկադիր կատարումը երաշխավորող հրամայական նորմերից: Այս առումով բավական հետաքրքրական է արբիտրաժի սկզբունքների ուսումնասիրությանը նվիրված՝ Ն.Ի. Մարիշևայի աշխատությունը, որտեղ նա նշում է, որ այս սկզբունքները, որպես կանոն, ամրագրված են միջազգային համաձայնագրերում և հիմնականում ձևակերպվում են միջազգային իրավական փոխօգնության սկզբունքների անալոգիայով<sup>1</sup> և արտացոլված են ազգային օրենսդրության մեջ: Վերջինս առանձնացնում է պետական դատարանների կողմից արբիտրաժին աջակցե-

<sup>1</sup> Տե՛ս Маршова Н.И. նշվ. աշխ. 26-28 էջերը:

լու, ազգային իրավունքին համապատասխան արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման հետ կապված հարցերի լուծման, միջազգային արբիտրաժի ոլորտում միջազգային պայմանագրերի նորմերի պահպանման, արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման հետ կապված հարցերի լուծման ընթացքում քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և օտարերկրյա քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը, հանրային կարգի սահմանափակումների ճիշտ կիրառման սկզբունքները: Հարկ է նշել սակայն, որ սկզբունքների այս խումբն առավելապես բնորոշում է ոչ թե առևտրային արբիտրաժի ինստիտուցիոնալ-կառուցվածքային առանձնահատկությունները, այլև կարգավորում է հանրային իշխանության մարմինների, այդ թվում՝ դատական համակարգի գործունեությունը: Դրա համար էլ սկզբունքների այս խումբը պետք է դիտարկել ոչ թե արբիտրաժային իրավունքի, այլ իրավունքի մյուս ճյուղերի շրջանակներում, որոնք կարգավորում են համապատասխան հարաբերությունները: Արբիտրաժին աջակցելը, միջազգային արբիտրաժի ոլորտում միջազգային պայմանագրերի նորմերի պահպանումը, արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման ընթացքում քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և օտարերկրյա քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը, հանրային կարգի սահմանափակումների ճիշտ կիրառումը դատական իրավասության հետ կապված հարցեր են, որոնք պետք է ուսումնասիրվեն քաղաքացիական դատավարության, այդ թվում՝ միջազգային, կատարողական վարույթի սահմաններում: Օրինակ՝ հայրենական իրավունքում ամրագրված օրինականության սկզբունքն իր մեջ պարունակում է Մարիշևայի կողմից առաջ քաշված միջազգային արբիտրաժի երրորդ խումբը կազմող գրեթե բոլոր ելակետային դեկավար դրույթները:

Ինչպես տեսնում ենք, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում չեն առանձնացվում արբիտրաժի կազմակերպական կամ գործառնության սկզբունքները: Դա ավելի շուտ արբիտրաժային ի-

րավունքի գիտության խնդիրն է և ունի զուտ տեսական նշանակություն: Արդարության համար պետք է նշել, որ ՀՀ օրենքում նշված սկզբունքների մի մասը թեև առանձին հողվածներով ուղղակիորեն չեն նախատեսվել, սակայն դրանց գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ հստակ դատողություններ կարելի է անել մի շարք հողվածների վերլուծության արդյունքում, որոնք նաև երաշխիքներ են պարունակում վերջիններիս լիարժեք իրացման համար:



## **ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ԻՐԱՎԱՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **§1. Արբիտրաժային իրավահարաբերությունների հասկացությունը և ծագման մախադրյալները**

Ցանկացած բազմակողմ հասարակական երևույթ ամբողջությամբ հետազոտելիս և դրա բոլոր կողմերը լուսաբանելիս մեթոդաբանական դժվարությունների հետ բախումն անխուսափելի է: Բացառություն չէ առևտրային արբիտրաժը: Վերջինս ընդգրկում է հասարակական հարաբերությունների այնպիսի բազմաբովանդակ և լայն շրջանակ, որ առաջին հայացքից թվում է, թե այն անհնար է տեղավորել առանձին սկզբունքների և ինստիտուտների սահմանափակ համակարգում: Արբիտրաժային իրավահարաբերություններն իրենց բնույթով և քաղաքացիաիրավական են, և դատավարական, քանի որ վերջինիս հատուկ են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական (պրոցեսուալ) իրավունքներին բնորոշ գծերը: Եթե իրավաբանական զրականությունում ընդունված է նյութական (ռեզոլյատիվ) իրավահարաբերությունները համարել փաստական հասարակական հարաբերությունների արտահայտման կամ իրացման ձև, ապա պրոցեսուալ իրավահարաբերությունները կարելի է համարել ռեզոլյատիվ իրավահարաբերությունների դրսևորման կամ իրացման ձևը<sup>1</sup>: Արբիտրաժային կարգով գործերի քննության և լուծման ընթացքում վարույթի մասնակիցների, ինչպես նաև վարույթն իրականացնող արբիտրաժային մարմնի կամ հաստատության միջև առաջացող հարաբերություններն այս երկուսի համակացությունն են:

Նախևառաջ, արբիտրաժային հարաբերությունները իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերություններ են և հանդիսանում են իրավական հարաբերությունների տարատեսակ: Դրանք

կարգավորվող հասարակական հարաբերությունների ինքնուրույն խումբ են կազմում, որոնք ստանալով իրավական բնույթ, ծագում և գործառնում են իրավունքի նորմերի հիման վրա, կոնկրետ բնագավառում իրավաբանորեն ամրապնդում են կողմերի փոխադարձ վարքագիծը և ապահովված են պետական հարկադրանքի ուժով: Իրավական կարգավորվածությունն ու պետական հարկադրանքի ուժով ապահովված լինելու հանգամանքն էլ հանդիսանում են արբիտրաժային իրավահարաբերությունների և հասարակական կյանքի այլ ոլորտներում առաջացող հարաբերությունների սահմանազատման հիմքը: Ի տարբերություն հասարակական կյանքի այլ ոլորտների, օրինակ՝ միջանձնային կամ կենցաղային հարաբերությունների, որոնց կարգավորման հիմքում առավելապես ընկած են բարոյական նորմերը, արբիտրաժային իրավահարաբերությունների բնականոն գործառնության խաթարման դեպքում անցանկալի իրավական հետևանքների առաջացումն անխուսափելի է<sup>1</sup>: Իրավահարաբերությունների այս խմբի կայունությունը երաշխավորված է պետության հեղինակությամբ, իրավական համակարգի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ կառուցակարգերով: Բոլոր իրավահարաբերությունների նման, սրանք ևս ծագում են կոնկրետ անձանց միջև և ունեն իրենց տարրերը՝ սուբյեկտների կազմը, օբյեկտը և բովանդակությունը: Սակայն, հենց տարրերի անհատականացման շնորհիվ են արբիտրաժային իրավահարաբերությունները տարբերվում իրավական հարաբերությունների մյուս տարատեսակներից:

Որպես իրավական հարաբերությունների տարատեսակ, արբիտրաժային իրավահարաբերությունները բնութագրվում են որոշակի հատկանիշներով:

<sup>1</sup> Օրինակ՝ եթե արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետությամբ օրենսդրության համաձայն, անվավեր է, կամ կողմերի համաձայնությամբ արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնվել է վեժ, որը չի կարող լինել արբիտրաժային քննության առարկա, արբիտրաժային վճիռը վիճարկելու և չեղյալ հայտարարելու հիմք է:

<sup>1</sup> Տե՛ս Сабо И. Основы теории права. М., 1974. էջ 52 և Коршунов Н. Мареев Ю. Гражданский процесс. М., 2007, էջ 49:

1. Դրանք կազմում են հասարակական հարաբերությունների ինքնուրույն խումբ, հասարակական գործունեության յուրահատուկ բնագավառ, որոնց մասնակիցների գործելակերպը և կամահայտնությունը որոշվում է օրենքով և սահմանված սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների բովանդակությամբ: Այսպես՝ արբիտրաժային իրավահարաբերություններն արբիտրաժային կարգով վեճերի քննության և լուծման ընթացքում կողմերի, վարույթի այլ մասնակիցների և արբիտրաժային դատարանի կամ հաստատության միջև որոշակի իրավաբանական գործողությունների կատարման արդյունքում առաջացող հարաբերությունների համակցություն է: Այն ընդգրկում է արբիտրաժային իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական գործունեության որոշակի բնագավառ:

2. Արբիտրաժային հարաբերությունները համակարգային իրավահարաբերություններ են: Դրանք ունեն համակարգված բնույթ, բնորոշվում են միասնական նպատակին ուղղված իրավաբանական գործողությունների համակցությամբ: Արբիտրաժային հարաբերությունները տրամաբանական և օրգանական փոխադարձ կապի մեջ են գտնվում, հաջորդաբար լրացնում են միմյանց: Դրանք միմյանցից տարբերվում են և ծագման հիմքերով, և բովանդակությամբ: Օրինակ՝ արբիտրաժային վարույթի հարուցումը ենթադրում է գործն արբիտրաժային քննության նախապատրաստելը, ինչն իր հերթին ուղղված է վեճի արագ, արդյունավետ լուծմանը և վճռի կայացմանը: Ինչպես տեսնում ենք, նշված փուլերում առաջանում են որոշակի հարաբերություններ, որոնք փոխադարձորեն լրացնում են միմյանց, դրանք կազմում են արբիտրաժային հարաբերությունների համակարգի տարրերը և չեն կարող իրարից զատ գոյություն ունենալ: Հարկ է նշել, որ դատավարական իրավահարաբերություններն իրարից տարբերվում են նաև սուբյեկտների կազմով՝ մի դեպքում հարաբերություններ են առաջանում գործին մասնակցող անձանց և ընդհանուր իրավասության դատարանների, այլ դեպքում վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի միջև: Արբիտրաժային հարաբերություններում վարույթն իրականացնող մարմինը միշտ նույնն է՝ արբիտրաժային դատարանը:

3. Արբիտրաժային իրավահարաբերությունները կամային հարաբերություններ են: Այս հարաբերությունների ծագման և փոփոխման համար որոշիչ նշանակություն ունի կողմերի կամահայտնությունը, իհարկե, եթե դա իրականացվել է օրենքով սահմանված կարգով: Օրինակ՝ վեճն արբիտրաժային դատարանի լուծմանը կարող է հանձնվել միայն կողմերի համաձայնությամբ (ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 18 հոդվ.): Օրենքի նորմերին չհամապատասխանող կամահայտնության արդյունքում ծագող արբիտրաժային իրավահարաբերություններն անհրաժեշտ իրավական հետևանքներ առաջացնել չեն կարող: Բացի այդ, արբիտրաժային քննության ընթացքում կամքի ինքնավարության դրսևորումները գերակշռող բնույթ են կրում, որոնք արտահայտվում են կիրառման ենթակա իրավունքի ընտրության, ինչպես նաև զուտ ընթացակարգային հարցերի լուծման մեջ:

4. Արբիտրաժային հարաբերությունները, քաղաքացիադատավարական հարաբերությունների նման, ունեն երկսուբյեկտ կառուցվածք: Դրանք վեճի լուծման կապակցությամբ արբիտրաժային դատարանի և քննության մասնակիցների միջև առաջացող հարաբերություններ են: Արբիտրաժային հարաբերություններ կարող են առաջանալ միայն արբիտրաժային հաստատության և գործին մասնակցող անձանց և վարույթի այլ մասնակիցների միջև: Ընդ որում, արբիտրաժային մարմինն այդ հարաբերությունների հիմնական մասնակիցն է, որը պատասխանատու է վարույթի ընթացքում իրավաբանական նշանակություն ունեցող հարցերի լուծման համար:

5. Արբիտրաժային հարաբերությունները համակցում են քաղաքացիական և դատավարական իրավահարաբերությունների հիմնական բնութագրիչ գծերը և բնորոշվում է ինչպես մասնակիցների իրավահավասարությամբ, այնպես էլ ենթակարգության սկզբունքով: Քաղաքացիական շրջանառության մասնակիցները չեն կարող միմյանց պարտադրել որոշակի պայմաններ, այդ թվում՝ արբիտրաժային համաձայնություն կնքելու առումով: Սակայն, այլ է վարույթի ընթացքում արբիտրաժային դատարանի և գործի քննության մասնակիցների փոխհարաբերությունը: Կողմերը կարող են ընտրել կիրառման ենթակա իրավունքը կամ ընթացակարգային

կանոններ սահմանել, սակայն ընտրված իրավունքի շրջանակներում արբիտրաժային դատարանը գործի քննության այլ մասնակիցների նկատմամբ որոշակիորեն օժտված է իշխող իրավագործություններով: Արբիտրաժային վճիռը պարտադիր է կողմերի համար և ենթակա է հարկադիր կատարման:

Ընդհանրացնելով շարադրվածը, կարող ենք ասել, որ արբիտրաժային իրավահարաբերությունները վեճի լուծման կապակցությամբ արբիտրաժային դատարանի (հաստատության) և գործի քննության մասնակիցների միջև առաջացող համակարգային հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որը կարգավորվում է արբիտրաժային օրենսդրությամբ:

Արբիտրաժային հարաբերությունները տարբեր են ծագման հիմքերով, ինչպես նաև արբիտրաժային քննության տարբեր փուլերում կոնկրետ նպատակին հասնելուն ուղղված իրավաբանական գործողությունների բովանդակությամբ: Ընդ որում, այստեղ չի գործում քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ ընդունված այն տեսակետը, որի համաձայն քաղաքացիական դատավարության մեկ փուլից մյուսին անցնելը չի կարելի դիտարկել որպես դատավարական իրավահարաբերությունների զարգացում<sup>1</sup>: Յուրաքանչյուր փուլում առաջանում են քաղաքացիական դատավարական նոր իրավահարաբերություններ, քանի որ փոխվում է այդ հարաբերությունների հիմնական սուբյեկտը՝ վեճը լուծող մարմինը (դատարանը): Առաջին ատյանի ընդհանուր իրավասության կամ մասնագիտացած դատարանը փոխվում է վերաքննիչ դատարանով, հետո որպես գործը քննող սուբյեկտ հանդես է գալիս վճռաբեկ դատարանը: Նշված տեսակետն արբիտրաժային իրավահարաբերությունների պարագայում կիրառելի չէ: Արբիտրաժային իրավահարաբերություններում վեճը լուծող կամ վարույթն իրականացնող սուբյեկտը չի փոխվում: Յետևաբար, արբիտրաժային իրավահարաբերությունները շարունակաբար զարգացող և միմյանց տրամաբանորեն հաջորդող հարաբերություններ են: Ընդ որում, վարույթի տարբեր մասնակիցների և արբիտրաժային դատարանի

<sup>1</sup> Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն: Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, 189 էջ:

միջև առաջացող հարաբերություններն իրենց բնույթով և տևողությամբ կարող են տարբեր լինել: Օրինակ՝ արբիտրաժային դատարանի և կողմերի միջև ծագող հարաբերությունները հիմնական են, առաջանում են վեճը լուծելուն ուղղված կոնկրետ գործողությունների հետևանքով: Դրանք տևական հարաբերություններ են, քանի որ ծագում են վարույթի հարուցման պահից և դադարում են արբիտրաժային վճռի կայացմամբ: Այլ են արբիտրաժային դատարանի և, օրինակ, փորձագետի միջև առաջացող հարաբերությունների բնույթը: Դրանք ուղղված են գործի քննության ժամանակ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանմանը և ապահովում են քննության բազմակողմանիությունն ու լրիվությունը: Փորձագետի և արբիտրաժային դատարանի միջև առաջացող հարաբերությունները լրացնում են արբիտրաժային հարաբերությունների համակարգը: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կարող է՝

– նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար,

– պահանջել կողմից՝ փորձագետին տրամադրել գործին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնել գործին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և այլ գույք կամ այդպիսի փաստաթղթերի, ապրանքների և այլ գույքի ուսումնասիրության հնարավորություն ստեղծել:

Կողմի միջնորդությամբ կամ արբիտրաժային դատարանի նախաձեռնությամբ փորձագետը պարտավոր է գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ դատարանի կազմին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

Արբիտրաժային դատարանի և փորձագետի կամ վկայի միջև առաջացող հարաբերությունները կարճատև են, ավարտվում են եզրակացության հրապարակմամբ, առաջադրվող հարցերի կա-

պակցությամբ բացատրություններ կամ ցուցմունքներ տալով: Մինչդեռ, գործի քննությունը կարող է շատ ավելի երկար տևել:

Արբիտրաժային իրավահարաբերությունները տարբեր են նաև կոնկրետ նպատակին ուղղված գործողությունների բովանդակությամբ: Այստեղ կարևորվում են պրոցեսուալ բնույթի այնպիսի գործողությունների հետևանքով առաջացող իրավահարաբերությունների բնույթը, որոնք ուղղված են որոշակի նպատակին հասնելուն՝ արբիտրաժային վարույթի հարուցմանը, գործն արբիտրաժային քննությանը նախապատրաստելուն, արբիտրաժային լսումներին և վճռի կայացմանը: Այս առումով կարելի է առանձնացնել արբիտրաժային վարույթի հարուցման կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններ, գործն արբիտրաժային քննության նախապատրաստելու և լսումների ընթացքում առաջացող իրավահարաբերություններ, որոնք ավարտվում են վճռահատությամբ կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացմամբ:

Հարկ է նշել, որ արբիտրաժային վճռով կատարողական թերթ վերցնելն ու արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը չի կարելի դիտարկել արբիտրաժային հարաբերությունների համակարգում: Արբիտրաժային վճռով կատարողական թերթի տրամադրման պարագայում խոսքը գնում է քաղաքացիատավարական հարաբերությունների մասին, որտեղ որպես պարտադիր սուբյեկտ հանդես է գալիս դատարանը: Իսկ կատարողական վարույթն իրականացվում է գործադիր իշխանության մարմինների համակարգում գործող Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից: Արբիտրաժային իրավահարաբերություններն առաջանում են վարույթի հարուցման պահից և ավարտվում են արբիտրաժային վճռի կայացմամբ: Այս հարաբերությունների համակարգից դուրս է նաև արբիտրաժային համաձայնության կնքումը: Այստեղ մենք առավելապես գործ ունենք քաղաքացիաիրավական հարաբերությունների հետ, քանի որ արբիտրաժային համաձայնությունն իր բնույթով ավելի շատ քաղաքացիաիրավական է և ընդամենն արբիտրաժային հարաբերությունների ծագման նախադրյալ է հանդիսանում: Արբիտրաժային համաձայնության կնքումն ինքնին արբիտրաժային վարույթ չի առաջացնում, այլ միայն վկայում է հնա-

րավոր կամ առկա վեճն արբիտրաժային կարգով լուծելու՝ կողմերի կամահայտնության մասին: Հնարավոր է, որ նույնիսկ գոյություն ունեցող արբիտրաժային համաձայնության պայմաններում կողմերը փոխադարձ համաձայնությամբ հրաժարվեն վեճն արբիտրաժային կարգով լուծելու մտադրությունից: Այդ իսկ պատճառով, արբիտրաժային համաձայնության կնքումը պետք է դիտարկել արբիտրաժային հարաբերությունների ծագման նախադրյալների շրջանակներում:

Արբիտրաժային իրավահարաբերությունները ծագում են արբիտրաժային վարույթի հարուցման պահից: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը: Կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային դատարանի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, ապահովման կամ հատուցման մասին պահանջները, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ, եթե կողմերն այդ հաղորդումների ամհրաժեշտ տարրերի մասին այլ բան չեն պայմանավորվել:

Այնուհետև արբիտրաժային հարաբերությունները զարգանալով թևակոխում են վեճն արբիտրաժային կարգով քննելուն նախապատրաստելու փուլ: Այստեղ կողմերն իրենց հայեցողությամբ ընտրում են արբիտրաժի վայրը, լեզուն, ձևավորում են արբիտրաժային դատարանի կազմը: Ընդ որում, նախապատրաստական փուլի ընթացքում իրականացվող գործողություններն «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում սպառիչ թվարկված չեն: Դրանք մենք պայմանականորեն կարող ենք բաժանել կողմերի և արբիտրաժային դատարանի կողմից իրականացվող գործողությունների՝ ուղղված գործն արբիտրաժային կարգով քննությանը նախապատրաստելուն: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը նախատեսում է, որ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերա-

բերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային դատարանը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Կողմերն իրենց հայեցողությամբ կարող են պայմանավորվել արբիտրաժի վարույթի ընթացքում կիրառվող լեզվի շուրջ: Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային դատարանն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (հոդված 22): Կողմերը ձևավորում են նաև արբիտրաժային դատարանի կազմը՝ սահմանում են արբիտրների թիվը, արբիտրներին ներկայացնում համապատասխան պահանջներ, նշանակում կամ ընտրում են նրանց (հոդված 10, 11): Հարկ է նշել, որ կան այնպիսի գործողություններ, որոնք իրականացնում է արբիտրաժային դատարանի կազմը, լսումներն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ի տարբերություն դատավարական օրենքի՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը նախատեսված գործողությունների ծավալը չի նախատեսել: Մինչդեռ, արբիտրաժային դատարանը մինչև լսումներն սկսելը պարտավոր է՝

- պարզել հայցի առարկան և հիմքը,
- վիճելի իրավահարաբերության բնույթը,
- կողմերի ընտրած՝ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավունքին համապատասխան որոշել կիրառման ենթակա օրենսդրությունը,
- անհրաժեշտության դեպքում կողմերին պարզաբանել իրենց իրավունքներն ու պարտականությունները, գործողություններ կատարելու կամ չկատարելու իրավական հետևանքները,
- որոշել ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման պարտականության կանոնների համապատասխան կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականություն, առաջարկել գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնել,
- որոշել փորձաքննություն նշանակելու, իրեղեն և գրավոր ապացույցները ուսումնասիրելու, ապացույցների ապահովման հարցերը,
- լուծել հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման հարցերը և կողմերի այլ միջնորդությունները,

– անհրաժեշտության դեպքում քննարկել մի քանի պահանջների միացման, հայցի հիմքը կամ առարկան փոխելու, ինչպես նաև այլ վայրում նիստ անցկացնելու հնարավորության հարցերը,

- որոշել ապացույցների հետազոտման կարգը,
- իրականացնել գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

Հետևաբար, *անհրաժեշտ է փոփոխություն կատարել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում, առանձին հոդվածով նախատեսելով գործն արբիտրաժային կարգով լուծելուն ուղղված՝ արբիտրաժային դատարանի կողմից իրականացվող նախապատրաստական գործողությունները:*

Արբիտրաժային իրավահարաբերությունները դադարում են գործի լսումների արդյունքում արբիտրաժային վճռի կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացման պահից: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում գործի վարույթն իրականացնել կամ բանավոր լսումների, կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Իսկ 32-րդ հոդվածը նախատեսում է, որ արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային դատարանի (տրիբունալի) կողմից վճռի կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացման պահից: Արբիտրաժային դատարանն արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշում է կայացնում այն դեպքում, երբ՝

1. Հայցվորը հրաժարվում է հայցից, բացառությամբ, երբ պատասխանողն առարկում է գործի վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային դատարանը ճանաչում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում:
2. Կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ:
3. Արբիտրաժային դատարանը գտնում է, որ գործի քննության շարունակումը դարձել է ավելորդ կամ անհնարին:

Արբիտրաժային դատարանի լիազորությունները դադարում են արբիտրաժի ավարտի հետ միաժամանակ<sup>1</sup>:

Արբիտրաժային վճռով կատարողական թերթի տրամադրման և հարկադիր կատարման փուլերը դուրս են արբիտրաժային վարույթի շրջանակներից, և այստեղ արբիտրաժային իրավահարաբերություններ չեն ծագում: Դրանք քաղաքացիադատավարական կամ կատարողական հարաբերություններ են, որոնք դուրս են գտնվում խնդրո առարկայից:

Հարկ է նշել, որ արբիտրաժային վարույթի ընթացքում կարող են նաև քաղաքացիադատավարական հարաբերություններ առաջանալ, որոնք կրում են արբիտրաժային կարգով գործի քննությանն օժանդակող բնույթ: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մա-

<sup>1</sup> Հարկ է նշել, որ արբիտրաժային վճռին և արբիտրաժի ավարտին վերաբերող 31 և 32-րդ հոդվածները զուրկ չեն թերություններից: Նախևառաջ, օրենքում նշված չէ, թե երբ է արբիտրաժային վճիռը մտնում ուժի մեջ՝ կայացման, թե հրապարակման պահից: Այս առումով առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի օրենքում առանձին հոդվածով նախատեսվեր, որ արբիտրաժային վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման կամ կողմերին առաքելու պահից: Հակառակ պարագայում ստացվում է, որ արբիտրաժային դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում կայացման պահից, անկախ այն հանգամանքից՝ կողմերին վճիռը հրապարակվել է, թե ոչ: Բացի այդ, արբիտրաժային վճռի բովանդակությանը և ձևին առաջադրվող պահանջներից առաջ անհրաժեշտ էր նախատեսել վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերի շրջանակը: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը սահմանում էր, որ միջնորդ դատարանը վճիռ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, սահմանում է գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, որոշում է հայցը բավարարելու կամ մերժելու հարցը:

Օրենքից պարզ չէ նաև, հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դեպքում կողմերը կրկին կարող են արբիտրաժային դատարան դիմել, թե ոչ: Կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացման պարագայում զրկվում են նույն գործով դատարան դիմելուց, թե ոչ: Քննադատության չի դիմանում նաև 32-րդ հոդվածի 3-րդ կետը, որի համաձայն արբիտրաժը կարող է ավարտվել նաև այն դեպքում, եթե արբիտրաժային դատարանը գտնի, որ գործի քննության շարունակումը դարձել է ավելորդ: Եթե կողմերը դիմել են արբիտրաժային դատարան և վճարել են արբիտրաժային տուրք, ապա վարույթը չի կարելի սուսկ այս նկատառումներով դադարեցնել: Դա պարզապես մատուցվող ծառայություններից անհարկի հրաժարում է:

սին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում արբիտրաժային դատարանը կամ կողմն արբիտրաժային դատարանի համաձայնությամբ կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան կամ իրավասու ցանկացած այլ դատարան տվյալ անձի կողմից՝ արբիտրաժի մեկ կամ մեկից ավելի կողմերին կամ արբիտրաժային տրիբունալին վարույթին առնչվող ցանկաված փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու կամ լսումներին ցանկացած անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու կամ որևէ այլ կերպ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու միջնորդությամբ: Դատարանը կարող է բավարարել այդ միջնորդությունն իր իրավասության շրջանակներում: Իհարկե, այս պարագայում արբիտրաժի կողմի և իրավասու դատարանի միջև առաջացող հարաբերությունները քաղաքացիադատավարական բնույթ կկրեն, որոնք ուղղված են արբիտրաժային կարգով գործի քննությանն օժանդակելուն:

Արբիտրաժային իրավահարաբերությունների ծագման նախադրյալներ են հանդիսանում *իրավունքի նորմերը, արբիտրաժային համաձայնությունը, իրավաբանական փաստերը և կողմերի իրավասուբյեկտությունը*:

Իրավունքի նորմերով որոշվում են արբիտրաժային իրավահարաբերությունների մասնակիցների հնարավոր կամ թույլատրելի վարքագիծը: Արբիտրաժային օրենսդրությամբ սահմանվում է այդ հարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները՝ որոշակի գործողություններ կատարելու և այդ գործողությունների իրավական հետևանքների առաջացման առումով: Իրավունքի նորմերով է սահմանվում արբիտրաժային համաձայնության կնքման, վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելու, արբիտրաժային դատարան դիմելու և վարույթի իրականացման հետ կապված հարցերը: Իհարկե, արբիտրաժային օրենսդրությունում առկա նորմերը հիմնականում կրում են դիսպոզիտիվ բնույթ, որը պայմանավորված է կամքի ինքնավարության սկզբունքի գերակայությամբ, սակայն օրենքի խախտումով կատարված գործողություններն իրավական հետևանքներ առաջացնել չեն կարող: Իրավունքի

նորմերի կիրառումն ապահովելու նպատակով դրանցում պարունակվում են համապատասխան սանկցիաներ: Օրինակ՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ արբիտրաժային վճիռը կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել, եթե դիմում ներկայացնող կողմն ապացույցներ ներկայացնի այն մասին, որ պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ արբիտրաժային դատարանի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի համաձայնությանը և այլն: Այսինքն, իրավունքի նորմերի խախտմամբ կատարվող գործողություններն իրավական հետևանքներ առաջացնել չեն կարող և չեն կարող դրվել արբիտրաժային հարաբերությունների հիմքում: արբիտրաժային քննությունը արբիտրաժային դատարանի և վարույթի մասնակիցների գործունեությունն է՝ ուղղված վեճի լուծմանը: Իսկ այդ գործունեությունը կազմող գործողությունների շրջանակը և կատարման կարգը կարգավորված է օրենքով:

Իրավունքի նորմերը սահմանվում են պետության կողմից, ունեն համապարտադիր բնույթ, սահմանում են արբիտրաժային իրավահարաբերությունների մասնակիցների հնարավոր և թույլատրելի վարքագիծը, կարգավորում են արբիտրաժային վարույթի ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները, ապահովված են պետական հարկադրանքի, ինչպես նաև հարկադրանքի

հետ կապ չունեցող ներգործության միջոցների կիրառման հնարավորությամբ:

Արբիտրաժային իրավահարաբերությունների ծագման հաջորդ նախադրյալն արբիտրաժային համաձայնությունն է: Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարության գիտությունում իրավահարաբերությունների սուբյեկտների միջև կայացած համաձայնագրերը, այդ թվում՝ արբիտրաժային համաձայնությունն ընդունված է դիտարկել իրավաբանական փաստերի շրջանակներում<sup>1</sup>: Ընդ որում, իրավաբանական նշանակություն է տրվում ոչ թե դատավարության իրավունքի սուբյեկտի միակողմանի կամահայտնությանը, այլ նրանց համաձայնությանը: Նշված համաձայնությունը վարույթի շարժման վրա ազդում է դատարանի դատավարական գործողությունների հետ համակցված: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության, արբիտրաժային իրավահարաբերություններն առանց վեճն առևտրային արբիտրաժի լուծմանը հանձնելու մասին՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված համաձայնության առաջանալ չեն կարող: Այդ իսկ պատճառով, արբիտրաժային համաձայնությունը հարաբերությունների ծագման նախադրյալների շարքում պետք է առանձին դիտարկել: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ:

Երրորդ նախադրյալն իրավաբանական փաստերն են, այսինքն այն գործողությունները կամ անգործությունը, ինչպես նաև իրադարձությունները, որոնց հետ իրավունքի նորմը կապում է իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը, այդ թվում՝ որոշակի իրավական հետևանքների առաջացումը: Օրինակ՝ արբիտրաժային համաձայնության հիման վրա վեճն արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելը և հայցային պահանջներն ու դրանք հիմնավորող փաստաթղթերը ներկայացնե-

<sup>1</sup> Տե՛ս H.M. Коршунов, Ю. А. Мареев, Гражданский процесс. М., 2007, 54-56 էջերը:

լը (օրենքի 21 և 23-րդ հոդվածներ): Կամ հայցվորի կողմից հայցից հրաժարումը հիմք է վարույթն ավարտելու համար (օրենքի 32-րդ - հոդված): Եթե սահմանված ժամկետում կողմը չի նշանակում արբիտր, ապա մյուս կողմի խնդրանքով նշանակումը կատարում է արբիտրաժային համաձայնությանը նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում իրավասու դատարանը: Եթե հայցվորը չի ներկայացնում իր հայցադիմումը օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ արբիտրաժային դատարանը դադարեցնում է վարույթը: Առևտրային արբիտրաժում իրավաբանական փաստերի շրջանակներում պետք է դիտարկել նաև այս կամ այն հարցի կապակցությամբ կողմերի փոխադարձ համաձայնությունը: Պայմանավորված կամքի ինքնավարության սկզբունքի գերակայությամբ, արբիտրաժային վարույթի կարևորագույն, այդ թվում՝ կիրառման ենթակա իրավունքի, արբիտրաժի վայրի, լեզվի ընտրության, դատարանի կազմի ձևավորման և այլ հարցերը որոշվում են կողմերի համաձայնությամբ: Միայն այդպիսի համաձայնության բացակայության պայմաններում են օրենքի նորմերն արբիտրաժային դատարանին նշված հարցերի կապակցությամբ որոշում կայացնելու իրավունք վերապահում: Վեճը հաշտությամբ լուծելու դեպքում արբիտրաժային դատարանը դադարեցնում է գործի քննությունը և կողմերի խնդրանքով, առարկությունների բացակայության պարագայում, կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնության մասին (30-րդ հոդված):

Արբիտրաժային իրավահարաբերությունների առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ դրանք ծագում են իրավաբանական փաստերի որոշակի համակցությամբ՝ կողմերի և արբիտրաժային դատարանի փոխադարձ գործողություններով: Կողմի գործողությունն ինքնին արբիտրաժային իրավահարաբերություն կամ անհրաժեշտ իրավական հետևանքներ առաջացնել չի կարող: Հակառակն է անգործության դեպքը, որի առաջացրած իրավական հետևանքը վարույթի՝ հետևաբար նաև արբիտրաժային իրավահարաբերությունների դադարման հիմք է հանդիսանում (25-րդ հոդված):

Իրավաբանական փաստեր են նաև իրադարձությունները, որոնք հիմք են արբիտրաժային իրավահարաբերություններում որոշակի իրավական հետևանքներ են առաջացնում: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում իրադարձությունների հետ կապված իրավական հետևանքների առաջացման հնարավորության մասին որևէ հիշատակում չկա: Մասնավորապես՝ արբիտրաժի ավարտի հիմքերը սահմանող 32-րդ հոդվածում չի հիշատակվել, թե կողմ հանդիսացող քաղաքացու կամ իրավաբանական անձի լուծարման և նմանատիպ այլ իրադարձություններն արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացման հիմք են, թե ոչ: Ամեն դեպքում, հայրենական օրենքն արբիտրաժային վարույթը դադարեցնելու հիմքերի շարքում դրանք չի նախատեսել: Մինչդեռ, իրադարձությունները ևս որոշակի իրավական հետևանքներ են առաջացնում, որոնք իրավացիորեն ամրագրվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այսպես, ՀՀ ՔԴՕ 105 հոդվածի 3-րդ և 109 հոդվածի 4-րդ կետերը համապատասխան կողմի մահը, իրավահաջորդության թույլատրելիության դեպքում, հիմք է հանդիսանում վարույթը կասեցնելու, իսկ իրավահաջորդության անհնարինության դեպքում՝ գործի վարույթը կարճելու համար: Իհարկե, արբիտրաժային կարգով քննվող վեճերը, որպես կանոն, բխում են իրավահաջորդություն թույլատրող իրավահարաբերություններից, սակայն օրենքում նշում չկա այն մասին, թե ինչպես պետք է վարվի արբիտրաժային դատարանն, օրինակ, երբ համապատասխան կողմի ժառանգները հրաժարվում են ժառանգությունն ընդունելուց: Այդ իսկ պատճառով, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում իրավական գնահատականներ պետք է տրվեն նաև իրադարձություններին: Հետևաբար, *օրենքի 32-րդ հոդվածում որպես արբիտրաժային վարույթի դադարեցման հիմք պետք է սահմանել նաև կողմի մահը՝ եթե նյութական իրավահարաբերությունը թույլ չի տալիս իրավահաջորդություն կամ ժառանգները հրաժարվել են ժառանգությունն ընդունելուց, և իրավաբանական անձի լուծարումը:*

Արբիտրաժային իրավահարաբերությունների ծագման վերջին նախադրյալը վարույթի մասնակիցների իրավասուբյեկտությունն է,



որն արտահայտվում է վերջիններիս իրավունակության և գործունակության մեջ: Արբիտրաժային օրենսդրությունում իրավասության կտրուկ մասին նշում չկա, սակայն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իրավունակության և գործունակության կանոններն ընդհանուր են քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար, կարող ենք ասել՝ իրավունքներ (այդ թվում՝ դատավարական) ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը ճանաչվում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հավասար չափով: Քաղաքացիները, որպես նյութական իրավահարաբերությունների սուբյեկտներ, օժտված են իրավունակությամբ, որը ծագում է նրանց ծննդյան պահից և դադարում է մահվամբ: Իրավաբանական անձանց իրավունակությունը ծագում է գրանցման պահից և դադարում է լուծարմամբ կամ վերակազմակերպման առանձին դեպքերում: Առևտրային արբիտրաժում քաղաքացիական շրջանառության որոշ սուբյեկտների իրավունակությունը սահմանափակված է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ - հոդվածով նախատեսվել է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են այլ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Մինչդեռ, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ օտարերկրյա ներդրումների հետ կապած այն վեճերը, որոնցում որպես կողմ հանդես չի գալիս Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան քննվում են դատարաններում կամ տնտեսական վեճեր լուծող այլ մարմիններում, իսկ վիճող կողմերի համաձայնությամբ՝ նաև արբիտրաժային տրիբունալներում, եթե միջազգային պայմանագրերով կամ վիճող կողմերի նախնական պայմանավորվածությամբ այլ կարգ չի նախատեսված<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, արբիտրաժային հարաբերություններում իրավունակությամբ օժտված են միայն նյութական իրավահարաբերության մասնակիցները: *Եթե քաղաքացիական դատավարությունում դատավա-*

<sup>1</sup> Ընդունվել է 1994թ. ( ուժի մեջ է մտել 1994թ. հուլիսի 31-ից), Պաշտոնական տեղեկագիր Հ. Ն-1093-1.-ՀՕ-115:

*րական իրավունակությամբ օժտված են նաև իրավունքի այնպիսի սուբյեկտներ, որոնք դատարանի քննության տակ գտնվող իրավահարաբերության սուբյեկտներ չեն, ապա առևտրային արբիտրաժում գործին մասնակցող անձինք հենց վիճելի իրավահարաբերության սուբյեկտներն են՝ արբիտրաժային համաձայնության կողմերը<sup>1</sup>:* Գիշտ է, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ արբիտրաժային վճիռը կարող է վիճարկվել դիմում ներկայացնող կողմի պահանջով, որի տակ կարելի է ի նկատի ունենալ ինչպես արբիտրաժային համաձայնության կողմերին, այնպես էլ շահագրգիռ այլ անձանց, սակայն արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումը դուրս է արբիտրաժային վարույթի շրջանակներից, և այստեղ առաջացող հարաբերությունները դատարանի (Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության) պարտադիր մասնակցությամբ ծագող քաղաքացիադատավարական հարաբերություններ են: Հետևաբար, արբիտրաժային իրավահարաբերություններին նշվածը չի վերաբերում:

Ֆիզիկական և իրավաբանական անձինք օժտված են նաև արբիտրաժային դատարաններում իրենց գործողություններով իրավունքներ իրականացնելու և պարտականություններ ստանձնելու ունակությամբ (գործունակություն): Իրավաբանական անձինք գործունակություն ձեռք են բերում գրանցման պահից իրավունակության հետ միաժամանակ: Ֆիզիկական անձանց համար գործունակությունը լրիվ ծավալով ծագում է տասնութ տարեկան դառնալու պահից, էմանսիպացիայի կամ մինչև տասնութ տարին լրանալը՝ օրենքով սահմանված կարգով ամուսնանալու պահից: Հարկ է նշել,

<sup>1</sup> ՀՀ ՔԴՕ 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք: Կան 37-րդ հոդվածը սահմանում է, որ պետական մարմիններն իրավունք ունեն դատարան դիմել պետության գույքային շահերի պաշտպանության հայցով: Հայց հարուցած պետական մարմինն օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները: Դատախազը պետության գույքային շահերի պաշտպանությամբ հայց է հարուցում «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում:

որ առևտրային արբիտրաժում քննվում են առևտրային հարաբերություններից բխող վեճերը, իսկ այս հարաբերությունների մասնակիցները, որպես կանոն, տնտեսական գործունեությամբ զբաղվողներ են, հատկապես, երբ խոսք է գնում միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման մասին: Հետևաբար, իրավասուբյեկտության հարցի հետ կապված բարդություններն առևտրային արբիտրաժում հասնում են նվազագույնի:

Պետք է նշել նաև, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետով անգործունակությունն արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմք է համարվել: Մասնավորապես՝ արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե դիմումներ կայացնող կողմն ապացուցի, որ արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի օրենսդրության համաձայն, անվավեր է:

Այսպիսով, արբիտրաժային իրավահարաբերությունների առաջացման նախադրյալներն այն իրավաբանական հանգամանքներն են, առանց որոնց անհնար է վարույթի կամ արբիտրաժային կարգով վեճերի լուծման ընթացքում արբիտրաժային դատարանի և կողմերի ու վարույթի այլ մասնակիցների միջև հարաբերությունների առաջացումը, զարգացումը և դադարումը: Ընդ որում, միայն այդ նախադրյալների համակցությունն է արբիտրաժային իրավահարաբերությունների առաջացման, զարգացման և դադարման համար հիմք հանդիսանում: Դրանցից որևէ մեկի բացակայության պայմաններում այդ հարաբերությունների, այդ թվում՝ անհրաժեշտ իրավական հետևանքների առաջացումն անհնարին է:

## **§2. Արբիտրաժային իրավահարաբերությունների տարրերը**

Որպես իրավական հարաբերությունների ինքնուրույն տարատեսակ՝ արբիտրաժային հարաբերություններն ունեն իրենց տարրերը՝ սուբյեկտները, օբյեկտը և բովանդակությունը:

Արբիտրաժային իրավահարաբերությունների սուբյեկտները սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրողներն են, որոնց ըստ իրենց շահագրգռվածության բնույթի, արբիտրաժային վարույթում ունեցած դերակատարության, իրավունքների և պարտականությունների ծավալի, պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի՝

1. վեճը լուծող սուբյեկտներ,
2. վեճի (արբիտրաժային համաձայնության) կողմեր (դատավարական հակառակորդներ),
3. գործի քննությանն օժանդակող անձինք,
4. արբիտրաժին աջակցող և վերահսկող իրավասու դատարան:

Սուբյեկտների առաջին խումբն են կազմում արբիտրաժային դատարանները կամ այլ հաստատությունները: Ընդ ում, դրանք կարող են իրենց կարգավիճակով և կազմակերպահրավական տեսակներով տարբեր լինել: Առևտրային արբիտրաժները գործում են թե՛ միջազգային միջկառավարական կազմակերպությունների շրջանակներում (1965թ. Վաշինգտոնի համաձայնագրով հիմնված Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնը՝ MLPIIC) և թե՛ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների շրջանակներում (Առևտրի միջազգային պալատին առընթեր Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանը):

Արբիտրաժային դատարանները կարող են լինել կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) կամ մշտապես գործող (ինստիտուցիոնալ), որոնք տարբեր են թե իրենց ստեղծման կարգով, թե գործառնության իրավական ռեժիմներով: Ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարանները կարող են գործել որևէ կազմակերպությանն առընթեր (օրինակ՝ Առևտրի միջազգային պալատին առընթեր Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանը):

րանը) կամ գործեն որպես ինքնուրույն իրավաբանական անձ (օրինակ՝ Լոնդոնի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանը): Ինստիտուցիոնալ արբիտրաժներն կարող են բաժանվել նաև ազգային (վերջիններս, որպես կանոն, ստեղծվում են առևտրաարդյունաբերական պալատներին առընթեր) և միջազգային արբիտրաժային հաստատությունների:

Բացի այդ, տեսության մեջ ընդունված է արբիտրաժային դատարանները դասակարգել՝ հիմք ընդունելով վերջիններիս գործառնության ոլորտը, մասնավորապես՝ գործառնության ընդհանուր ոլորտ ունեցող (օրինակ՝ ՌԴ ԱԱՊ-ին առընթեր Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանը) և մասնագիտացված արբիտրաժային դատարանների (օրինակ՝ ծովային արբիտրաժը):

Ամեն դեպքում, արբիտրաժային դատարաններն արբիտրաժային իրավահարաբերություններում հանդես են գալիս որպես վեճը լուծող մարմին, որն օժտված է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության իրավազորությամբ:

Ընդ որում, արբիտրաժի իրականացման նպատակն առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի անկողմնակալ արբիտրաժային դատարանի կողմից վեճերի արդարացի լուծումն է: Իսկ հայրենական օրենսդրությունն անհրաժեշտ և բավարար երաշխիքներ է սահմանում արբիտրաժային դատարանի անկողմնակալության և վեճերի արդարացի լուծումն ապահովելու համար:

Սուբյեկտների երկրորդ խումբը վեճի կողմերն են՝ գործին մասնակցող հիմնական անձինք (հայցվորը և պատասխանողը), որոնք գործի ելքում ունեն իրավաբանական շահագրգռվածություն, նյութաիրավական շահ: Կողմերը վիճելի իրավահարաբերության սուբյեկտներ են, որոնք գործի ելքում ունեն հակադիր շահեր: Արբիտրաժային վճռի նյութաիրավական հետևանքները տարածվում են նրանց վրա և արբիտրաժային ծախսերը կրելու բեռն ամբողջությամբ ընկած է վերջիններիս վրա:

Հարկ է նշել, որ արբիտրաժային համաձայնության կողմերը նույնանում են հետագայում հայցվորի և պատասխանողի հետ: Սակայն, արբիտրաժային համաձայնության կնքման պահին անորոշ է, թե հետագայում ով հանդես կգա հայցվորի, ով պատասխանողի դե-

րում: Վիճակն այլ է արդեն իսկ գոյություն ունեցող վեճի կապակցությամբ արբիտրաժային համաձայնություն կնքելու պարագայում, երբ արդեն հայտնի են վիճելի իրավունքների և պարտականությունների ենթադրյալ կրողները: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային դատարանի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, ապահովման կամ հատուցման մասին պահանջները, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ, եթե կողմերն այդ հաղորդումների անհրաժեշտ տարրերի վերաբերյալ այլ բան չեն պայմանավորվել:

Արբիտրաժային հարաբերություններում որպես կողմ հանդես են գալիս քաղաքացիական շրջանառության մասնակիցները՝ ՀՀ քաղաքացիները (անհատ ձեռնարկատերերը) և իրավաբանական անձինք, օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք: Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են այլ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Իսկ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանափակվել է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ օտարերկրյա ներդրումների հետ կապված վեճերն արբիտրաժային կարգով լուծելու հնարավորությունը: Այսինքն, սահմանափակված է պետության մասնակցությունն արբիտրաժային իրավահարաբերություններին: Մինչդեռ, այս նորմը հակասության մեջ է մտնում «Պետությունների և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» 1965թ. Վաշինգտոնի կոնվենցիայի հետ, որի 25-րդ հոդվածը վերաբերում է պետությունների և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ներդրումային վեճերը փոխադարձ համաձայնությամբ Կենտրոնի (հաստատության) իրավասությանը հանձնելու մասին:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում ընդհանրապես արբիտրաժային հարաբերություններում որպես կողմ հանդես եկող սուբյեկտների մասին հիշատակում չկա: Հետևաբար՝ օրենքում առանձին հոդվածով պետք է սահմանել, որ կողմերի արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում արբիտրաժային դատարան դիմելու կամ արբիտրաժային վարույթում որպես հայցվոր կամ պատասխանող հանդես գալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք, օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք: Հայաստանի Հանրապետության և համայնքների մասնակցությամբ վեճերն արբիտրաժային կարգով կարող են լուծվել միայն օրենքով և միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում պետք է ավելացնել, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ ներդրումային վեճերն արբիտրաժային կարգով կարող են լուծվել միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում:

Սուբյեկտների երրորդ խումբն են կազմում գործի քննությանն օժանդակող անձինք, որոնք գործի ելքում նյութական շահագրգռվածություն չունեն, վիճելի իրավահարաբերությունների սուբյեկտներ չեն հանդիսանում և վճռի իրավական հետևանքները նրանց վրա չեն տարածվում: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում այս սուբյեկտներն առանձին չեն դասակարգվել, դրանց մասին հատուկ հիշատակում չկա, այլ 26-րդ հոդվածով սահմանվել է փորձագետի նշանակման կարգը: Արբիտրաժային վարույթում գործի քննությանն օժանդակող սուբյեկտներ են հանդիսանում փորձագետները, վկաները, ներկայացուցիչները, թարգմանիչները:

Արբիտրաժային վարույթում որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող և օրենքով նախատեսված կարգով արբիտրաժային դատարանի կողմից նշանակված անձը: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային դատարանը, գործի քննության ժամա-

նակ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով, կարող է

– նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային դատարանի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար,

– պահանջել կողմից՝ փորձագետին տրամադրել գործին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնել գործին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և այլ գույք կամ այդպիսի փաստաթղթերի, ապրանքների և այլ գույքի ուսումնասիրության հնարավորություն ստեղծել: Կողմերից մեկի պահանջով կամ արբիտրաժային դատարանի նախաձեռնությամբ փորձագետը պարտավոր է գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ արբիտրաժային դատարանին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

Վկա կարող է լինել ցանկացած անձ, որին հայտնի են քննվող վեճի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ: Ընդ որում, արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում արբիտրաժային դատարանը կամ կողմն արբիտրաժային դատարանի համաձայնությամբ կարող է դիմել իրավասու դատարան լսումներին ցանկացած անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու մասին: Այստեղ հարց է առաջանում, թե դատական աջակցության կարգով արբիտրաժային վարույթին որպես վկա ներգրավված անձը զգուշացվո՞ւմ է սուտ ցուցմունք տալու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին: Տրամաբանական կլիներ, որ դա այդպես լիներ:

Թարգմանիչն այն անձն է, որը տիրապետում է թարգմանության համար անհրաժեշտ լեզուներին և կողմի միջնորդությամբ կամ արբիտրաժային դատարանի նախաձեռնությամբ ներգրավվում է վարույթ: Հարկ է նշել, որ արբիտրաժային վարույթին թարգմանչի մասնակցության դեպքերը գրեթե բացառվում են, քանի որ լեզվի ազատ ընտրության սկզբունքի իրացման շնորհիվ գործի քննությունը

կարելի է իրականացնել երկու կողմերի համար հասկանալի ցանկացած լեզվով:

Արբիտրաժային վարույթում ուրույն դերակատարություն ունենան ներկայացուցիչները, որոնք վիճելի իրավահարաբերության սուբյեկտներ չեն, գործի ելքում ունեցած նրանց շահագրգռվածությունն անմիջականորեն չի բխում վիճելի նյութական հարաբերություններից, այլ գործի քննությանը մասնակցում են կողմերի իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով: Վեճի կողմերն արբիտրաժային վարույթին կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով: Ընդ որում, կողմի մասնակցությունը գործին չի զրկում նրան՝ գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից: Արբիտրաժում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած անձ, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն: Իրավաբանական անձանց ղեկավարները կամ նրանց կանոնադրությանը համապատասխան՝ իրավաբանական անձի շահերը ներկայացնելու իրավունք ունեցող այլ անձինք ներկայացուցչությունն իրականացնում են՝ ելնելով պաշտոնական կարգավիճակից կամ աշխատանքային պարտականությունների կատարման բերումով:

Արբիտրաժային իրավահարաբերությունների սուբյեկտների դասակարգման վերջին խումբն են կազմում արբիտրաժին աջակցող և վերահսկող իրավասու դատարանները: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ արբիտրաժին աջակցող և վերահսկողական գործառույթներն իրականացնում է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը<sup>1</sup>: Ընդ որում, արբիտրաժային հարաբերություններին, ինչպես արդեն նշել ենք, իրավասու դատարանը մասնակցում է երկու ձևով՝ օժանդակում է գործի քննությանը և իրականացնում է դատական վերահսկողություն: Այսպես՝ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային համաձայնության հետ անհամատեղելի չի համարվում և արբիտրաժային համաձայնությամբ նա-

<sup>1</sup> «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել էր, որ այդ գործառույթներն իրականացնում է միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարանը:

խատեսված իրավունքներից հրաժարում չի համարվում կողմի՝ արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում ցանկացած պահի հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը և դատարանի՝ նման ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշում կայացնելը:

11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են, որ արբիտրաժային դատարանը կոլեգիալ կազմով ձևավորելու դեպքում, եթե մի կողմն արբիտր նշանակելու մյուս կողմի պահանջը ստանալուց հետո՝ 30 օրյա ժամկետում, չի նշանակում արբիտր, կամ կողմերի նշանակած արբիտրներն իրենց նշանակման օրվանից՝ 30 օրյա ժամկետում, համաձայնություն ձեռք չեն բերում վերջին արբիտրի նշանակման շուրջ, ապա նշանակումը կատարում է իրավասու դատարանը: Իսկ միանձնյա արբիտրի մասնակցությամբ արբիտրաժի դեպքում, եթե կողմերը չեն համաձայնվում արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ իրավասու դատարանը:

Եթե կողմերի համաձայնեցրած կամ օրենքով նախատեսված կարգով հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30 օրյա ժամկետում կարող է դիմել իրավասու դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ (13-րդ հոդվ. 3-րդ կետ):

Այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն կամ փաստացի ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները, առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին: Այլ դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ այդ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրների լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել իրավասու դատարան, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ (14-րդ հոդվ.):

Արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում արբիտրաժային դատարանը կամ կողմն արբիտրաժային դատարանի համաձայ-

նությամբ կարող է դիմել իրավասու դատարան տվյալ անձի կողմից՝ արբիտրաժի մեկ կամ մեկից ավելի կողմերին կամ արբիտրաժային դատարանին վարույթին առնչվող ցանկացած փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու կամ լուծմանը ցանկացած անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու կամ որևէ այլ կերպ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու միջնորդությամբ: Դատարանը կարող է բավարարել այդ միջնորդությունն իր իրավասության սահմաններում (27-րդ հոդվ.):

Եվ վերջապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34 և 36-րդ հոդվածներով նախատեսված հիմքերով և նախատեսված կարգով դատարանը կարող է չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը, ինչպես նաև ճանաչումը և հարկադիր կատարումը մերժել: Օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրաժային վճռի վիճարկման վարույթում կամ մինչև վճռի ճանաչումը և կատարողական թերթ տրամադրելը դատարանը որոշակի ստուգողական գործողություններ է իրականացնում՝ պարզելով, թե կա՞ն արդյոք վճիռը չեղյալ ճանաչելու կամ կատարողական թերթ տրամադրելը մերժելու հիմքեր<sup>1</sup>: Վստահ կարող ենք ասել, որ սա դատարանների

<sup>1</sup> Արբիտրաժային վճիռը կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել միայն այն դեպքում, եթե դիմում ներկայացնող կողմն ապացույցներ ներկայացնի այն մասին, որ՝ 1. արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, ՀՀ օրենսդրության համաձայն անվավեր է, կամ 2. տվյալ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ 3. վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային դատարանի վճռի այն մասը, որը ներառում է համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ 4. արբիտրաժային դատարանի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում օրեն-

կողմից արբիտրաժի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառնության ամենավառ դրսևորումն է<sup>1</sup>:

քի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել օրենքին, կամ դատարանը պարզի, որ՝ ա) համաձայն ՀՀ օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ բ) վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Արբիտրաժային դատարանի վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, կարող է մերժվել միայն՝ 1. այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է, եթե այդ կողմն ապացույցներ ներկայացնի դատարան, որտեղ հայցվում է վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը այն մասին, որ՝ 1. արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը անվավեր է կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, վճռի կայացման երկրի օրենսդրությամբ, կամ 2. տվյալ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ 3. վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային դատարանի վճռի այն մասը, որը ներառում է համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ 4. արբիտրաժային դատարանի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել վճռի կայացման երկրի օրենսդրությանը, 5. վճիռը դեռևս չի դարձել պարտադիր կողմերի համար կամ չեղյալ է ճանաչվել, կամ դրա կատարումը կանխվել է այն պետության դատարանի կողմից, որտեղ կամ որի իրավունքին համապատասխան՝ կայացվել է այդ վճիռը, կամ դատարանը պարզի, որ՝ ա) համաձայն ՀՀ օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ բ) վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

<sup>1</sup> Հարկ է նշել, որ արբիտրաժային դատավարության նկատմամբ ընթացակարգային հսկողության որոշ տարրեր նկատվում են նաև ԱՄՊ նախագահի լիազորություններում (իհարկե, եթե մենք նկատի ունենք մշտապես գործող արբիտրաժային դատարանները):

Արբիտրաժային իրավահարաբերությունների օբյեկտը կողմերի միջև վեճն է՝ վիճելի նյութական իրավահարաբերությունը: Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարությունում եթե իրավահարաբերության օբյեկտ կարող է լինել նաև հատուկ վարույթներում պահանջը՝ հաստատելու որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, անձի իրավական վիճակ կամ անվիճելի իրավունք, ապա առևտրային արբիտրաժում ծագող իրավահարաբերությունների օբյեկտ կարող է լինել միայն վեճը: Թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (18-րդ հոդված), թե «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը (7-րդ հոդված), սահմանում են, որ կողմերի համաձայնությամբ արբիտրաժային դատարանի լուծմանը կարող են հանձնել միայն վեճը: Այստեղ հայցվորը ներկայացնում է պատասխանողին ուղղված իր պահանջները՝ կատարել որոշակի գործողություն, ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց, ճանաչել որոշակի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը: Սակայն, արբիտրաժային իրավահարաբերությունների օբյեկտը ավելի նեղ է, եթե համեմատելու լինենք քաղաքացիատավարական իրավահարաբերությունների օբյեկտի հետ: Քաղաքացիական դատավարության կարգով կարող են լուծվել քաղաքացիական իրավահարաբերություններից բխող գույքային և ոչ գույքային բնույթի վեճերը: Առևտրային արբիտրաժի պարագայում խոսքը գնում է առևտրային, այդ թվում՝ պայմանագրային և ոչ պայմանագրային հարաբերությունները ծագող վեճերի մասին:

Արբիտրաժում ևս կարելի է իրավահարաբերությունների համակարգի ընդհանուր օբյեկտից բացի, առանձնացնել արբիտրաժային դատարանի և գործի քննության մասնակիցներից յուրաքանչյուրի միջև իրավահարաբերությունների հատուկ օբյեկտներ (օրինակ՝ գործը լուծելու համար նշանակություն ունեցող հանգամանքները վեր հանելը և փաստական կազմը պարզելը): Սակայն արբիտրաժային վարույթում դրանք կարող են մղվել երկրորդ պլան, քանի որ արբիտրաժային վարույթում առաջնայինը վեճի կարգավորումն է, որը նաև կարող է լինել ինչպես փոխզիջումների, այնպես էլ արբիտրաժային դատարանին արդարության ընդհանուր

սկզբունքների հիման վրա (*ex aequo et bono*) կամ որպես հաշտարար միջնորդ (*amiable compositeur*) վեճը լուծելու և լիազորելը:

Արբիտրաժային իրավահարաբերությունների բովանդակությունն են կազմում այդ հարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը: Ընդ որում, առևտրային արբիտրաժի ոլորտում առաջացող իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները ի վերջո հանգում են որոշակի (դատավարական կամ պրոցեսուալ բնույթի) գործողություններ կատարելու կամ չկատարելու հնարավորության, և ելնելով կոնկրետ այն հանգամանքից, թե դրանք նպատակի են ուղղված, իրավունքները (պարտականությունները) կարելի է դասակարգել երկու խմբի՝ կազմակերպականի և գործառնությանի (ֆունկցիոնալի): Հարկ է նշել, որ դասակարգման այս շրջանակներում կարելի է դիտարկել արբիտրաժային իրավահարաբերությունների հիմնական սուբյեկտների (արբիտրաժային դատարանի) իրավունքներն ու պարտականությունները: Սուբյեկտների վերջին խումբը կազմող պետական դատարանների կազմակերպական գործառնությունները, ելնելով իրավահարաբերության բնույթից, կարող են փոխակերպվել օժանդակի, ինչը բխում է վերջինիս կողմից իրականացվող առանձին գործողությունների բնույթից: Այսպես, արբիտրաժային դատարանի կազմը ձևավորելու նախաձեռնությունը պատկանում է վեճի կողմերին, այլ ոչ թե դատարանին: Սակայն, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերում կողմերի խնդրանքով դատարանը կարող է մասնակցել արբիտրաժի կազմի ձևավորմանը: Բայց վերջինիս դերակատարումն այս գործընթացում սուբսիդիար է: Դատարանները արբիտրաժի ձևավորմանը մասնակից են դարձվում միայն ծայրահեղ դեպքերում: Օրինակ՝ երբ կողմերից մեկը խուսափում է արբիտրաժային համաձայնությունը կատարելուց, արբիտր նշանակելուց կամ ընտրելուց, և մյուս կողմը դիմում է դատարան՝ արբիտրաժին հարկադրելու և ստանձնած պարտավորությունները կատարելու պահանջով:

Կողմերի կազմակերպական իրավունքները (պարտականություններն) են.

- արբիտրներ նշանակելը կամ ընտրելը (արբիտրաժի կազմի ձևավորումը),
  - արբիտրների թեկնածության համար պարտադիր պայմաններ սահմանելը,
  - արբիտրների թվաքանակ սահմանելը,
  - արբիտրաժի վայրի ընտրությունը,
  - արբիտրաժի լեզվի ընտրությունը,
  - արբիտրաժային դատավարության ժամանակացույցը որոշելը,
  - լսումների իրականացման կարգը (բանավոր կամ փաստաթղթային) որոշելը,
  - վարույթի իրականացման կարգը (գաղտնի կամ հրապարակային) որոշելը,
  - արբիտրաժային քննության ընթացակարգային կանոններ սահմանելը կամ որևէ արբիտրաժային կանոնակարգի ընտրությունը,
  - վեճի էության նկատմամբ կիրառելի նորմերի ընտրությունը (որևէ ազգային իրավունքին կամ իրավական համակարգին հղում կատարելը) կամ արբիտրաժային դատարանին վեճը *ex aequo et bono* լուծելուն լիազորելը:
- Կողմերի գործառուծության իրավունքներն (պարտականություններն) են.
- պահանջներ ներկայացնելը, այդ թվում՝ հակընդդեմ հայց հարուցելը,
  - ապացույցներ ներկայացնելը և դրանց հետազոտմանը մասնակցելը,
  - բացարկներ հայտնելը,
  - արբիտրաժային դատարանին կամ վերջինիս թույլտվությամբ վարույթի այլ մասնակիցներին հարցեր, բացատրություններ տալը,
  - միջնորդություններ անելը,
  - գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ սեփական փաստարկները ներկայացնելը,

- այլ անձանց միջնորդությունների և փաստարկների դեմ առարկելը,
  - արբիտրաժային վարույթին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցելը,
  - հաշտության համաձայնություն կնքելը,
  - արբիտրաժային վարույթը դադարեցնելը,
  - արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու պահանջով իրավասու դատարան դիմելը,
  - արբիտրաժային դատարանի վճռի հիման վրա կատարողական թերթ ստանալու խնդրանքով իրավասու դատարան դիմելը:
- Արբիտրաժային դատարանի և կողմերի կազմակերպական իրավունքներն ու պարտականություններն ընդհանուր առմամբ համընկնում են: Սակայն, արբիտրաժային դատարանի մոտ դրանք ծագում են միայն այն դեպքերում, երբ կողմերը վերջ թվարկված հարցերի շուրջ համաձայնություն ձեռք չեն բերում կամ դրանց լուծումը թողնում են արբիտրաժի հայեցողությանը: Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերաբերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային դատարանը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ՝ կողմերի համար հարմարությունը: Կամ, օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրենց հայեցողությամբ կարող են պայմանավորվել արբիտրաժային վարույթի ընթացքում կիրառվող լեզվի (լեզուների) շուրջ: Կիրառվող լեզվի ընտրության վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային դատարանն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (լեզուները) և այլն:
- Արբիտրաժային դատարանի գործառուծային իրավունքները (պարտականություններն) են.
- հայցի (առաջադրված պահանջների) հիմքն ու առարկան որոշելը,
  - հայցի կամ ապացույցների ապահովման միջոցների կապակցությամբ որոշումներ կայացնելը,



- ապացուցման առարկան կամ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելը,
- անհրաժեշտ ապացույցներ պահանջելը, դրանք հետազոտելն ու գնահատելը,
- կողմերի և վարույթի այլ մասնակիցների միջնորդությունները լուծելը,
- վեճի լուծումն ու գործով վճիռ կայացնելը:

Հարկ է նշել, որ արբիտրաժի գործառնական իրավունքներն ու պարտականությունները համընկնում են պետական դատարանների գործառնական լիազորությունների հետ: Սակայն, պետական դատարանների մի շարք լիազորություններ ընդհանրապես անհամատեղելի են արբիտրաժային վարույթում և առևտրային արբիտրաժի պարագայում չեն կարող կիրառվել: Այսպես օրինակ՝ կողմերի փոփոխությունը քաղաքացիական դատավարությունում: Ինչպես գիտենք, դատարանն իրավունք ունի ոչ պատշաճ կողմին փոխարինել պատշաճով: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը սահմանում է դրա իրականացման կարգը: Այս նորմը չի կարող կիրառվել արբիտրաժում, քանի որ արբիտրաժային վարույթի հիմքը արբիտրաժային համաձայնությունն է, որ անմիջականորեն արտահայտում է կողմերի կամքը: Արբիտրաժային դատարանն իրավունք չունի որևէ մեկին, առանց նրա համաձայնության, մասնակից դարձնել գործի քննությանը:

Առևտրային արբիտրաժի ոլորտում պետական իրավասու դատարանների լիազորությունների դասակարգումն օժանդակողի և գործառնությանի առավելապես կախված է արբիտրաժի կողմից վեճը քննելու կամ տվյալ գործով վճիռ կայացնելու հանգամանքից: Պետական դատարանների օժանդակ իրավազորությունների շարքում կարելի է առանձնացնել (հայցի կամ ապացույցների) ապահովման միջոցների կիրառումը՝ այդ թվում, դատական աջակցությունն ապացույցներ ձեռք բերելիս, ինչպես նաև կողմերի կազմակերպական իրավունքների ու պարտականությունների իրականացմանը նպաստելը, մասնավորապես՝ արբիտրներ նշանակելը, բացարկների հարցը լուծելը և այլն:

Դատարանների գործառնությանի իրավազորությունները հիմնականում հանգում են արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժային վճռով կատարողական թերթ տրամադրելու կամ ճանաչումը և հարկադիր կատարումը մերժելուն: Ամեն դեպքում արբիտրաժային իրավահարաբերություններում դատարանի գլխավոր առաքելությունն արբիտրաժին աջակցելը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելն է, որը վերջինիս իրականացնում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

**ԳԼՈՒԽ ԴԻՆԳԵՐՈՐԴ**  
**ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ**  
**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐՔԻՏՐԱԺԻ ԴԻՄՆԱՐԱՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**§1. Արբիտրաժային համաձայնության  
հասկացությունը և տեսակները**

Անկարելի է որևէ երևույթի մասին ամբողջական պատկերացում ունենալ՝ առանց վերջինիս էությունը կազմող տարրերի և հիմնական ինստիտուտների ուսումնասիրության: Բացառություն չէ նաև առևտրային արբիտրաժը, որի առանցքային, ելակետային ինստիտուտը արբիտրաժային համաձայնությունն է: Վերջինիս գոյությունը հատկապես կարևորում են պայմանագրային տեսության կողմնակիցները: Նրանք, մասնավորապես, գտնում են, որ արբիտրաժային համաձայնությունը ոչ միայն կանխորոշում է արբիտրաժային քննության ընթացակարգը, այլև այս ինստիտուտի շարժիչ ուժն է: Արբիտրաժային համաձայնությունից ուղղակիորեն կախված են նրա մյուս ինստիտուտները: Այս ինստիտուտը պայմանավորում է արբիտրաժի զարգացումն ու գոյությունը: Արբիտրաժային համաձայնությունը և արբիտրաժային վարույթը գտնվում են բավական հետաքրքրական հարաբերակցության մեջ: Հանդիսանալով առևտրային արբիտրաժի ինստիտուտ՝ արբիտրաժային համաձայնությունն առանձին դեպքերում հանդես է գալիս որպես արբիտրաժն ածանցող երևույթ:

Համաձայնությունը առանձնակի կարևորվում է միջազգային առևտրային արբիտրաժում, քանի որ այստեղ վեճերի լուծման հետ կապված իրավահարաբերություններն ավելի բարդ ու բազմաբովանդակ բնույթ են ձեռք բերում: Անկարելի է անտեսել արբիտրաժային համաձայնությունների դերն արբիտրաժային պրակտիկայում, որոնք, կարելի է ասել՝ հանդիսանում են միջազգային առևտրային արբիտրաժի անկյունաքարը: Մասնավորապես, հենց այս համաձայնությունների կնքումով են կանխորոշվում և լուծվում այնպիսի իրավական հետևանքների առաջացումը, որոնք կապված են վեճը առևտրային արբիտրաժային կարգով քննելու և լուծելու,

գործի քննության կարգի, վճռի կայացման և կատարման հետ: Այսպես, արբիտրաժային համաձայնության ճիշտ կնքումից է կախված՝

1. Պետությունների կողմից արբիտրաժային համաձայնությունների օրինականության ճանաչումը (իհարկե, դատական ստուգման արդյունքում) և հարկադիր կատարումը՝ արբիտրաժին հարկադրելը:

2. Արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում վեճի դատական քննության անհնարինությունը, և դատարանի պարտականությունը՝ կողմերին հարկադրելու արբիտրաժի (ՀՀ - քաղ. դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ դատարանը հայցը թողնում է առանց քննության, եթե կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել):

3. Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչումը (1958թ.Նյու-Յորքի համաձայնագրին և ՀՀ քաղ. դատավարության օրենսգրքի 247<sup>7</sup> հոդվածին համապատասխան):

4. Առանց գործի կրկնակի քննության՝ օտարերկրյա արբիտրաժային վճիռների հարկադիր կատարումը:

Ցավոք, սկզբնական ժամանակաշրջանում իրավաբանական պրակտիկայում արբիտրաժային համաձայնություններին մեծ նշանակություն չէր տրվում, ինչի հետևանքով հաճախ դա հանգեցնում էր ոչ ցանկալի հետևանքների առաջացման: Պետք է նշել, սակայն, որ ներկայումս արբիտրաժային համաձայնությունները համապարփակ կարգավորման են ենթարկվել ինչպես միջազգային համաձայնագրերով, այնպես էլ բազմաթիվ ներպետական օրենսդրական ակտերով, ինչը վկայում է վերջինիս դերի բարձրացման և նշանակության կարևորման մասին: Մասնավորապես, ՄԱԿՄԱԻԴ-ի նմուշային օրենքի դրույթները զարգացնելով՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային բնույթի իրավահարաբերությունների կապակցությամբ կողմերի

միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ առանձին վեճերը արբիտրաժի լուծմանը հանձնելու մասին<sup>1</sup>:

Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես հիմնական պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով:

Արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր (7-րդ հոդվ. 2-րդ կետ): Համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ:

<sup>1</sup> Պետք է նշել նաև, որ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքն իր 7-ից 10-րդ հոդվածներով նույնպես համապարփակ կարգավորման էր ենթարկել միջնորդ համաձայնությունների կնքման հետ կապված բոլոր հարցերը՝ սահմանելով, որ միջնորդ համաձայնությունը կարող է կնքվել ինչպես առանձին պայմանագրի (միջնորդ պայմանավորվածություն), այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահման (միջնորդ վերապահում) ձևով: ՀՀ օրենքը սահմանում էր նաև միջնորդ համաձայնությունների կնքման կարգը, ձևը, վերջինիս բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև տարբերակում է միջնորդ համաձայնությունների տեսակները: Մասնավորապես, ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ միջնորդ համաձայնությունը կնքվում էր գրավոր: Միջնորդ համաձայնությունը կնքված էր համարվում, եթե դա կատարվել էր կողմերի ստորագրած մեկ փաստաթուղթ կազմելով կամ կնքված էր նամակներով, հեռախոսագրով, հեռագրով կամ այդպիսի համաձայնության ամրագրումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով: Այս կանոնները չպահպանելու դեպքում միջնորդ համաձայնությունն առոչինչ էր: Անցնելով միջնորդ համաձայնության բովանդակությանը՝ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ միջնորդ համաձայնության մեջ պետք է նշվեն՝ 1. միջնորդ դատարանի կազմավորման կարգը և դրա խախտման հետևանքները, 2. միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու կարգը, 3. միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան հայտնված բացարկի լուծման կարգը:

Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն պայմանով, որ պայմանգիրը կնքված է գրավոր ձևով, և տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանելով արբիտրաժային համաձայնության հասկացությունը և ձևին ներկայացվող պահանջները՝ ոչ մի դրույթով չի անդրադարձել համաձայնության տեսակներին և բովանդակությանը: Մինչդեռ՝ արբիտրաժային պրակտիկայում (այդպես էր վարվում նաև «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998թ. ՀՀ օրենքը (10-րդ հոդվ.)) ընդունված է առանձնացնել՝

1. բոլոր վեճերը մշտապես գործող որևէ արբիտրաժային դատարան հանձնելու,

2. ելնելով գործի բնույթից՝ վեճը մշտապես գործող համապատասխան (ինստիտուցիոնալ) արբիտրաժային դատարան հանձնելու և՝

3. կոնկրետ վեճը լուծող (ad hoc) արբիտրաժային դատարան հանձնելու մասին արբիտրաժային համաձայնությունները:

Բացի այդ, պետք է սահմանվեր նաև արբիտրաժային համաձայնության բովանդակությունը, որը, ելնելով համաձայնության առանձին տեսակներից, կարող է տարբեր լինել: Մասնավորապես, արբիտրաժային համաձայնության մեջ պետք է նշվեն՝

ա) արբիտրաժային դատարանի կազմավորման կարգը և արբիտրների թվաքանակը, ինչպես նաև արբիտրներին ներկայացվող պահանջները, եթե կողմերն այդ մասին ցանկություն են հայտնել,

բ) արբիտրների ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու կարգը,

գ) արբիտրաժային տուրքերի հարցը:

Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժային դատարանին վեճը հանձնելու մասին կողմերի համաձայնությունը, վերը նշված պայմանների փոխարեն, կարող է հղում պարունակել արբիտրաժային դատարանի կանոնակարգին:

Միջազգային առևտրային արբիտրաժի տեսանկյունից հատկանշական են արբիտրաժային համաձայնությանը ներկայացվող՝ «Արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի համաձայնագրով սահմանված պահանջները: Մասնավորապես, վերոնշյալ համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն. «Համաձայնագրին միացող ցանկացած պետություն պարտավոր է ճանաչել այն գրավոր համաձայնությունը, որով կողմերը պարտավորվել են արբիտրաժի լուծմանը հանձնել պայմանագրային կամ այլ բնույթի իրավահարաբերությունների կապակցությամբ իրենց միջև առկա կամ հնարավոր բոլոր կամ առանձին վեճերը, որոնք կարող են հանդիսանալ արբիտրաժային քննության առարկա»:

Համաձայնագրի 5-րդ հոդվածն իր հերթին սահմանում է, որ արբիտրաժային վճիռների ճանաչումն ու հարկադիր կատարումը կարող է մերժվել, եթե.

1. կողմերն իրենց նկատմամբ կիրառվող նյութական իրավունքի նորմերի համաձայն անգործունակ են,

2. արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն արբիտրաժային համաձայնությունն առաջինն է,

3. արբիտրաժային համաձայնության նկատմամբ որևէ երկրի իրավունքը կիրառելու մասին կողմերի համաձայնության բացակայության պայմաններում՝ արբիտրաժային համաձայնությունը հակասում է այն երկրի օրենքին, որտեղ կայացվել է արբիտրաժային վճիռը:

Նմանատիպ նորմեր են պարունակում միջազգային առևտրային արբիտրաժի մասին գրեթե բոլոր երկրների օրենքները (օրինակ՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի կամ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքի 34, 36 հոդվածները):

Իմի բերելով արբիտրաժային համաձայնությանը վերաբերող Նյու Յորքյան համաձայնագրի դրույթները, կարող ենք ասել, որ վերջինս արբիտրաժային համաձայնությանը ներկայացնում է հետևյալ հիմնական պահանջները.

- այն պետք է լինի գրավոր,
- վերաբերվի կողմերի միջև առկա կամ հնարավոր (ծագելիք) վեճերի լուծմանը,
- վեճերը պետք է լինեն իրավական բնույթի՝ պայմանագրային կամ ոչ պայմանագրային իրավահարաբերություններից բխող,
- վեճը պետք է հնարավոր լինի քննել և լուծել արբիտրաժային կարգով,
- կողմերը պետք է լինեն գործունակ,
- արբիտրաժային համաձայնությունը պետք է լինի օրինական կողմերի համաձայնությամբ որոշված կամ էլ արբիտրաժային վճռի կայացման վայրի իրավունքին համապատասխան:

Ինչպես Նյու Յորքի համաձայնագրով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ (մասնավորապես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով) արբիտրաժային համաձայնությանը ներկայացվող պահանջների շարքում առաջին հերթին առանձնացվում է վերջինիս գրավոր լինելու պայմանը: Մասնավորապես, համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, «արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ»: Հարկ է նշել, որ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքը, զարգացնելով Նյու Յորքի համաձայնագրի դրույթները, սահմանում է նաև հայցով արբիտրաժ դիմելը և հայցադիմումին պատասխանելը, որտեղ կողմերից մեկը պնդում է արբիտրաժային համա-

ծայնության առկայության մասին, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Ընդ որում, նման պարագայում արբիտրաժային համաձայնությունը գրավոր կհամարվի միայն այն դեպքում, երբ հիմնական պայմանագիրը կնքված է գրավոր, իսկ հղումից պարզ երևում է, որ արբիտրաժային վերապահումը հանդիսանում է այդ պայմանագրի բաղկացուցիչ մասը (նախատեսված է առանձին կետով): Այսպիսով, բանավոր կնքված ցանկացած արբիտրաժային համաձայնությունն առնչին է:

Հարկ է նշել, որ արբիտրաժը կարգավորող հայրենական օրենքում տեղ է գտել դրույթ, որը սահմանում է, որ արբիտրաժային համաձայնության կողմերից մեկի մահը չի հանգեցնում արբիտրաժային համաձայնության դադարման, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, կամ վիճելի իրավահարաբերությունը չի բացառում իրավահաջորդություն: Հետևում է, որ արբիտրաժային համաձայնությամբ ենթակայություն սահմանելը համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում է ժառանգներին:

Առանձին բարդություններ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնություն կնքելու մասին առաջարկությունն արվել է գրավոր, բայց այն ընդունվել է բանավոր կերպով կամ կոնկրետ գործողությունների կատարմամբ: Այս հարցի շուրջ տարբեր պետություններում ձևավորվել են գործնականում միմյանցից էականորեն տարբերվող մոտեցումներ: Բացի այդ, տարբեր երկրներում արբիտրաժային համաձայնությունների ձևի և բովանդակության հետ կապված տարբեր պահանջներ են ներկայացվում: Եվ շատ դեպքերում արբիտրաժի վայրն ընտրելիս, եթե խոսքը գնում է այնպիսի երկրների մասին, ինչպիսիք են օրինակ՝ Իսպանիան, Կորեան, Լյուքսեմբուրգը կամ Պերմանիան, նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել տեղի օրենսդրությունը, քանզի վերջիններս աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ արբիտրաժային օրենսդրությամբ<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ արբիտրաժի մասին միջազգային համաձայնագրերով, ինչպես նաև շատ երկրների ներպետական օրենսդրությամբ

<sup>1</sup> St'u Alan Parker International commercial arbitration in different legal systms. 1981, 48-66 էջերը:

յամբ տարբերություն չի դրվում արդեն իսկ գոյություն ունեցող վեճերի կապակցությամբ կնքված արբիտրաժային համաձայնությունների և առաջիկայում հնարավոր վեճերի կապակցությամբ կնքվող արբիտրաժային համաձայնությունների միջև: Անկարելի է ամտեսել նաև այն հանգամանքը, որ մինչ այժմ Նյու Յորքի համաձայնագրի մասնակից շատ երկրներ չեն ճանաչում այն արբիտրաժային համաձայնությունները, որոնք կնքվել են ապագայում հնարավոր, ծագելիք վեճերի կապակցությամբ: Այդպիսիք են Մերձավոր Արևելքի երկրները: Լատինական Ամերիկայի երկրներում, չնայած որ ապագայում հնարավոր վեճերի կապակցությամբ կնքված արբիտրաժային համաձայնությունները ճանաչվում և համարվում են օրինական, բայցևայնպես, վեճ առաջանալու դեպքում անհրաժեշտ է գործնական արբիտրաժ հանձնելու մասին կողմերի լրացուցիչ համաձայնություն:

Արբիտրաժի լուծմանը հանձնված վեճերի մեծ մասն ունեն պայմանագրային բնույթ, այսինքն բխում են պայմանագրային իրավահարաբերություններից: Սակայն, արբիտրաժային կարգով կարող են լուծվել նաև այնպիսի վեճեր, որոնք պայմանագրային իրավահարաբերությունների հետ գտնվում են անուղղակի կապի մեջ: Դրանց թվին կարող ենք դասել վնասի փոխհատուցման կապակցությամբ առաջացող վեճերը, նախապայմանագրային վեճերը, վարչական իրավահարաբերություններից բխող որոշ վեճեր. օրինակ՝ արժեթղթերի շուկայի կարգավորման հետ կապված վեճերը և այլն: Այստեղ պետք է ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսգրքի, չի նախատեսում վարչաիրավական հարաբերություններից բխող վեճերն արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու կարգ: Հետևաբար, վարչական իրավահարաբերություններից բխող վեճերն արբիտրաժային կարգով լուծվել չեն կարող:

Յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրում մշակվել են կանոններ, որոնք, ելնելով հասարակական շահերից, արգելում են առանձին կատեգորիայի գործերի հանձնումն արբիտրաժ: Ընդ որում, տարբեր պետություններում դասակարգումն իրականացվում է՝ ելնելով տարբեր չափանիշներից: Սակայն, իրենց առանձնահատկություն-

ներով հանդերձ, բոլոր պետություններում անվերապահորեն արգելված է արբիտրաժի լուծմանը հանձնել քրեական և մարդու իրավունքների ոտնահարմանը վերաբերող գործերը: Փաստորեն, կարելի է ասել, որ սա է այն միասնական չափանիշը, որով առաջնորդվում են աշխարհի բոլոր պետությունները: Պետք է նշել, որ կան այնպիսի երկրներ, որտեղ առևտրային արբիտրաժային կարգով քննման և լուծման ենթակա գործերի սահմանափակման շրջանակը հասցված է նվազագույնի: Որպես ապացույց կարող ենք բերել ԱՄՆ-ի օրինակը, որտեղ ներկայումս արբիտրաժային կարգով կարող են լուծվել այնպիսի գործեր, ինչպիսիք են հակամենաշնորհային, արժեթղթերի շրջանառության հետ կապված գործառնությունների և նույնիսկ՝ սնանկության հետ կապված գործերը:

1989թ. «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» Շվեյցարիայի օրենքը նույնպես ընդլայնեց միջազգային արբիտրաժի գործառնության ոլորտը՝ վերջինիս լուծմանը վերապահելով նաև արտոնագրերի, ապրանքային նշանների կապակցությամբ ծագող վեճերը, հակամենաշնորհային իրավահարաբերությունների, սնանկության հետ կապված գործերը, տնտեսական ընկերակցությունների մասնակիցների միջև առաջացած վեճերը և արժեթղթերի շրջանառության հետ կապված վեճերը: Միաժամանակ պետք է նշել, որ կան այնպիսի պետություններ, որտեղ նման սահմանափակումները հասցված են առավելագույնի (օրինակ՝ Չայաստան): Գերմանիայում, օրինակ հակամենաշնորհային օրենսդրության խախտումներից առաջացող գործերը արբիտրաժի լուծմանը հանձնելու մասին կողմերի համաձայնությունը կարող է օրինական համարվել միայն այն դեպքում, երբ կողմերը նման գործով (նույն հայցով) կարող են դիմել նաև դատարան:

Անհրաժեշտ է նշել նաև, որ առանձին կատեգորիայի գործերը արբիտրաժի լուծմանը հանձնելու հետ կապված սահմանափակումներին պետք է առանձնակի զգուշությամբ մոտենան հատկապես զարգացող երկրները: Այսպես, Մերձավոր Արևելքի երկրներում ուղղակիորեն արգելված է բնական պաշարների՝ մասնավորապես՝ նավթի արդյունահանման հետ կապված վեճերը հանձնել արբիտրաժային դատարանի լուծմանը: Կամ, օրինակ՝ նախկին Խորհրդա-

յին Միությունում միջազգային առևտրային արբիտրաժային կարգով կարող էին լուծվել միայն պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների մասնակցությամբ արտաքին առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերը:

Անհրաժեշտ է առանձնակի ուշադրության արժանացնել առևտրատնտեսական վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու հնարավորության հետ կապված երկու օրինաչափություններ: Առաջին օրինաչափության էությունը կայանում է նրանում, որ կողմերը կարող են արբիտրաժ դիմել իրենց այն իրավունքների պաշտպանության համար, որոնք նրանք կարող են ազատորեն տնօրինել: Դրանց թվին կարելի է, նախևառաջ, դասել քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված իրավունքները: Երկրորդ օրինաչափությունն այն է, որ արտաքին առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման դեպքում արբիտրաժային քննության կիրառելիության շրջանակը շատ ավելի լայն է, քան երբ խոսքը գնում է ներպետական արբիտրաժի այսինքն՝ երկրի ներսում ռեզիդենտների միջև առևտրատնտեսական վեճերի լուծման մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանին ընդդատյա վեճը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային դատարանի լուծմանը: Իսկ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը նախատեսելով պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերությունից ծագող վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելը, լռում է միջազգային արբիտրաժային կարգով քննվող վեճերի մասին: Նման ձևակերպումը չի համապատասխանում միջազգային առևտրատնտեսական իրավահարաբերությունների ոգուն, ինչպես նաև չի բավարարում ՄԱԿՄԱԻԳ-ի նմուշային օրենքի պահանջները: Այս առումով առավել ընդունելի է «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքը, որի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կողմերի համաձայնությամբ արբիտրաժի լուծմանը կարող են հանձնվել պայմանագրային և այլ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճերը, որոնք առաջանում են արտաքին առևտրային և այլ միջազգային

տնտեսական կապեր իրականացնելիս, եթե կողմերից թեկուզև մեկի ձեռնարկությունը գտնվում է արտասահմանում կամ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների մասնակցությամբ վեճերը, ինչպես նաև ՌԴ տարածքում ստեղծված միջազգային կազմակերպությունների և միությունների միջև ծագող առևտրատնտեսական վեճերը, նրանց մասնակիցների միջև, ինչպես նաև նրանց և ՌԴ իրավունքի այլ սուբյեկտների միջև ծագող վեճերը: Ինչպես արդեն նշվել է «կողմի ձեռնարկություն» կամ «կողմին պատկանող ձեռնարկություն» ձևակերպումները իրավական տեսանկյունից այնքան էլ ճիշտ չեն, քանի որ իրավաբանական անձինք քաղաքացիական շրջանառության ինքնուրույն մասնակիցներ են, և կողմը իրավաբանական անձում կարող է միայն բաժնեմաս, բաժնետոմս ունենալ կամ էլ հանդիսանալ մասնակից: Այսպիսով, ՌԴ օրենքը սահմանափակվում է միջազգային առևտրային արբիտրաժային քննության կողմ հանդիսանալու և արբիտրաժային համաձայնություն կնքելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանց մեջ ներառելով միայն արտաքին առևտրատնտեսական գործունեություն իրականացնող անձանց, իսկ այն գործարքները, որոնցից ծագող վեճերի կապակցությամբ կարող են արբիտրաժային համաձայնություններ կնքվել, սահմանափակվում են միայն օտարերկրյա տարրի մասնակցությամբ գործարքներով: Բոլոր այն գործերը, որոնց լուծումը միջազգային առևտրային արբիտրաժային կարգով արգելված է, նախատեսված են Ռուսաստանի Դաշնության ՔՂՕ-ում, ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքում և այլ օրենսդրական ակտերում, որոնց շարքում կարելի է առանձնացնել «Սնանկության մասին» ՌԴ օրենքը (29-ը հոդվ., կետ 3-րդ), «Արտոնագրման մասին» ՌԴ օրենքը և այլն: Խնդրո առարկային առնչվում է նաև ՀՀ ՔՂՕ-ով նախատեսված դատական ենթակայությանը վերապահված գործերի շրջանակը (15, 16 հոդվածներ):

Արբիտրաժային կարգով առանձին կատեգորիայի գործերը քննելու և լուծելու թույլատրելիության հարցը իրավաբանական պրակտիկայում ունի մեծ կարևորություն: Հարկ է նշել, որ այս պարագայում պետք է առանձնակի ուշադրության արժանացնել իրավական մի շարք հանգամանքների ուսումնասիրությանը, այն է՝

- արբիտրաժային համաձայնությունը կարգավորող իրավունքին, այսինքն նրան, թե որ երկրի օրենսդրությամբ են կողմերը ղեկավարվել համաձայնությունը կնքելիս,

- արբիտրաժի վայրի օրենսդրությամբ,
- այն պետության կամ պետությունների օրենսդրությամբ, որտեղ պետք է ճանաչվի և կատարվի արբիտրաժային վճիռը:

Եթե արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժային դատարանի լուծմանն է հանձնվել այնպիսի վեճ, որը արբիտրաժային համաձայնությունը կարգավորող կամ արբիտրաժի վայրի օրենքով չի կարող հանդիսանալ արբիտրաժային քննության առարկա, ապա կողմերին հետագայում հնարավոր չի լինի հարկադրել արբիտրաժի: Բացի այդ, եթե նույնիսկ նման գործով վճիռ կայացվի, ապա արբիտրաժային վճռի ճանաչումն ու հարկադիր կատարումը կմերժվի:

Ինչպես ցանկացած գործարք, այնպես էլ արբիտրաժային համաձայնություն կնքելու համար կողմերը պետք է լինեն գործունակ: Հակառակ դեպքում արբիտրաժային համաձայնությունը առոչինչ կհամարվի՝ առաջացնելով անցանկալի իրավական հետևանքներ: Կողմերի գործունակությանը վերաբերվող պահանջներ է պարունակվում ինչպես Նյու Յորքի համաձայնագրում (5-րդ հոդվածի 1-ին կետ), այնպես էլ ՀՀ ազգային օրենսդրությունում (օրինակ՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետ և 36-րդ հոդված 2-րդ կետի 1-ին ենթակետ):

Պետք է ընդգծել, որ աշխարհում դեռևս գոյություն չունեն կողմերի գործունակությունը կարգավորող միասնական կանոններ: Տարբեր պետություններում այս հարցը լուծվում է տարբեր կերպ: Ըստ որում, ֆիզիկական անձանց գործունակությունը որոշվում է այն երկրի իրավունքով, որի քաղաքացի են վերջիններս կամ որտեղ նրանք ունեն մշտական բնակության վայր: Իրավաբանական անձանց գործունակությունը որոշվում է նրանց պետական գրանցման, իսկ երբեմն էլ՝ հիմնական գործունեության իրականացման վայրի իրավունքով: Հարկ է նշել, որ «գործունակություն» եզրույթը հիմնականում օգտագործվում է քաղաքացիների նկատմամբ: Արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների մասնակից-

ներ, հետևաբար արբիտրաժային համաձայնության կողմեր մեծամասամբ հանդիսանում են իրավաբանական անձինք: Եվ քանի որ վերջիններիս գործունակությունը ծագում է իրավունակության հետ միասին (սինխրոն), ապա ավելի ճիշտ կլինի նրանց նկատմամբ օգտագործել «իրավասուբյեկտություն» եզրույթը: Իրավունակության (գործունակության) հետ կապված առանձնակի բարդություններ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնության կողմում հանդես են գալիս պետությունները (պետական մարմինները կամ կազմակերպությունները): Որոշ երկրների օրենսդրությամբ պետական մարմիններին ու կազմակերպություններին ուղղակիորեն արգելված է կնքել արբիտրաժային համաձայնություններ կամ էլ դրանք պարտադիր կարգով պետք է հավանության արժանանան կամ հաստատվեն վերադաս մարմինների կողմից (նախարարություն կամ կառավարություն): Այն պետությունների թվին, որոնք հրամայական ձևով արգելում են պետական մարմիններին կամ կազմակերպություններին արբիտրաժային համաձայնություններ կնքել, դասվում են Բելգիան և Սաուդյան Արաբիան: Սակայն ներկայումս պետությունների մեծ մասն այս հարցում առավելապես ունեն նվազ կոշտ դիրքորոշում: Այսպես, ԱՄՆ-ում ֆեդերալ կառավարությունն իրավասու չէ արբիտրաժային համաձայնություններ կնքել, սակայն մյուս պետական մարմինների և կազմակերպությունների համար նման արգելք չկա: Ֆրանսիայում, Ավստրիայում և Իտալիայում պետական մարմիններն ու կազմակերպություններն արբիտրաժային համաձայնություն կարող են կնքել միայն այն դեպքում, երբ լիազորված են դրա համար կամ ունեն հատուկ թույլտվություն<sup>1</sup>: Ընդ որում, Ֆրանսիայում պետական մարմիններն արբիտրաժային համաձայնություններով արբիտրաժի լուծմանը կարող են հանձնել առևտրատնտեսական հարաբերություններից ծագող ցանկացած վեճ: Ներկայումս ինչպես ՌԴ-ում, այնպես էլ ԱՊՀ երկրներից մեծամասնությունում պետական մարմինները սահմանափակված են արբիտրաժային համաձայնություն-

<sup>1</sup> Տե՛ս The Legal Systems and General view of Contract, 1998, էջ 56:

ների կնքման իրավասության հարցում<sup>1</sup>: Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի «ա» ենթակետի համաձայն արբիտրաժային համաձայնությունը պետք է համապատասխանի վերջինիս նկատմամբ կիրառվող իրավունքին, իսկ եթե կիրառման ենթակա իրավունքի մասին կողմերի համաձայնությունը բացակայում է, ապա այն երկրի իրավունքին, որտեղ կայացվել է արբիտրաժային վճիռը: Նմանատիպ դրույթներ են պարունակում նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34 և 36 հոդվածները:

Արբիտրաժային համաձայնության օրինականության հարցի լուծումը հանդիսանում է արբիտրաժային քննության ամենաելակետային հիմնախնդիրներից մեկը: Ընդ որում, այս հարցը սովորաբար ծագում է կամ արբիտրաժային վարույթի սկզբում, կամ էլ ամենավերջում: Այսպես, մինչ արբիտրաժային քննությունն սկսվելը, կողմերից մեկն ուղղակիորեն կարող է հայտարարել, որ արբիտրաժային կարգով գործի քննությունը տեղի ունենալ չի կարող, քանի որ արբիտրաժային համաձայնությունն անօրինական է: Նման հայտարարություն կարող է ուղղվել ինչպես արբիտրաժային դատարանին, այնպես էլ հակառակ կողմին: Արբիտրաժային համաձայնության անօրինականության մասին հայտարարություն կարող է արվել նաև արբիտրաժային վարույթի ավարտին, այսինքն՝ երբ արդեն գործով կայացվել է վճիռ, քանի, որ վերջինս կարող է արբիտրաժային վճռի բեկանման (վերանայման) հիմք հանդիսանալ: Պատճառաբանելով արբիտրաժային համաձայնության անօրինա-

<sup>1</sup> «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չէր արգելել պետական մարմիններին ու կազմակերպություններին դիմել միջնորդ դատարան, սակայն վերոհիշյալ օրենքի 6-րդ հոդվածում միջնորդ դատարան դիմելու (հետևաբար՝ միջնորդ համաձայնություն կնքելու) իրավունք ունեցող անձանց շարքում չէր նշել Հայաստանի Հանրապետությանը, ՀՀ պետական մարմիններին ու կազմակերպություններին: Մասնավորապես՝ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «կողմերի միջնորդ համաձայնության առկայության դեպքում միջնորդ դատարան դիմելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) և իրավաբանական անձինք, օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք»: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ պետական մարմինները և կազմակերպություններն այդպիսի իրավասությամբ օժտված չէին:



կանությունը՝ կողմը կարող է դատարանից պահանջել վերացնելու արբիտրաժային վճիռը կամ էլ չճանաչել այն և մերժել կատարողական թերթիկի տրամադրումը:

Արբիտրաժային համաձայնության վավերության հարցը որոշելիս հաշվի են առնվում բոլոր այն պահանջները, որոնք կիրառվում են ընդհանրապես գործարքների օրինականությունը ստուգելիս (կողմերի գործունակությունը, պայմանագրի ձևը, կողմերի կամքի և կամարտահայտության համապատասխանությունը և այլն): Ինչպես արդեն նշվել է, իրավաբանական պրակտիկան որոշակի պահանջներ է թելադրում նաև արբիտրաժային համաձայնություններին՝ կապված վերջիններիս բովանդակության հետ: Մասնավորապես՝ արբիտրաժային համաձայնության մեջ ցանկալի է, որ նշվեն արբիտրաժային դատարանի կազմավորման կարգը և դրա խախտման հետևանքները, արբիտրների ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու, ինչպես նաև ինքնաբացարկի և նրան հայտնված բացարկի լուծման կարգը: Այս պայմանները չպահպանելու դեպքում արբիտրաժային համաձայնությունն առոչինչ է: Խոսելով առևտրային արբիտրաժի մասին, կարող ենք ասել, որ այստեղ կարևորվում է նաև արբիտրաժային համաձայնությունների համար հիմնարար նշանակություն ունեցող այլ հարցերի լուծումը: Այդ հարցերից են, մասնավորապես՝

1. արբիտրաժային դատարանի տեսակի որոշումը (մշտապես գործող, թե՞ ad hoc),
2. մշտապես գործող արբիտրաժային դատարան ընտրելու դեպքում՝ կոնկրետ միջազգային առևտրային արբիտրաժային կենտրոնի, հետևաբար և՛ վերջինիս կանոնադրության ընտրությունը,
3. վեճերի տեսակները, որոնք պետք է քննվեն և լուծվեն արբիտրաժում,
4. արբիտրաժի վայրի ընտրությունը,
5. արբիտրաժի լեզուն որոշելը,
6. կիրառման ենթակա իրավունքը որոշելը,
7. արբիտրների քանակի սահմանումը,
8. արբիտրների ընտրության կարգը որոշելը:

Կոնկրետ իրավահարաբերության բնույթից կախված՝ արբիտրաժային համաձայնությունում կարող են նախատեսվել նաև լրացուցիչ (այլ) պայմաններ:

Այսպիսով, արբիտրաժային համաձայնություն կնքելիս առաջնային հարցը, որ պետք է լուծեն կողմերը, արբիտրաժային դատարանի տեսակի ընտրությունն է: Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) արբիտրաժ ընտրելու դեպքում կողմերը մեխանիկորեն ընտրում են նաև վերջինիս կանոնակարգը: Յետևաբար, կողմերը պարտավորվում են ենթարկվել ընտրված արբիտրաժի կանոնակարգով սահմանված ընթացակարգային կանոններին: Սրա հետ կապված՝ որոշ հեղինակներ (Ա. Լոզենբերգ) գտնում են, որ ինստիտուցիոնալ արբիտրաժն առավել արդյունավետ է ad hoc արբիտրաժից: Ի հաստատումն իրենց դիրքորոշման՝ նրանք բերում են հետևյալ փաստարկները.

1. մշտապես գործող միջազգային արբիտրաժային կենտրոնների նմուշային արբիտրաժային համաձայնությունները կողմերին ազատում են արբիտրաժային համաձայնության մշակման վրա ավելորդ ժամանակի անհարկի վատնումից.
  2. ինստիտուցիոնալ արբիտրաժն ունի իր կանոնակարգը, որով լուծում են ստացել ընթացակարգային բոլոր հիմնարար հարցերը: Ընդ որում, արբիտրաժների կանոնակարգերը, տեսության և պրակտիկայի զարգացմանը համընթաց փոփոխվում և լրացվում են, ինչն ապահովում է վեճերի արդյունավետ լուծումն ու միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հետ վերջինիս համահունչությունը,
  3. արբիտրաժային կենտրոնի աշխատակիցներն ունեն բոլոր անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները՝ գործը հավուր պատշաճի քննելու համար,
  4. արբիտրաժային կենտրոնի հեղինակությունն առանձին դեպքերում կարող է օժանդակել արբիտրաժային վճիռների արագ կատարմանը և այլն:
- Անկասկած, ինստիտուցիոնալ արբիտրաժն ունի նաև իր թերությունները, որոնց շարքում նախևառաջ կարելի է առանձնացնել գործի քննության լրացուցիչ ծախսերը. օրինակ՝ արբիտրաժային

տուրք, վարչական մուծումներ, որոշ դեպքերում՝ բյուրոկրատական ընթացակարգերը և այլն:

Ad hoc արբիտրաժի դեպքում կողմերին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն կանխորոշել և կառուցել արբիտրաժային քննության ողջ ընթացակարգը: Այն ավելի ճկուն է: Կողմերն այստեղ կարողանում են միջոցներ խնայել, քանի որ ad hoc արբիտրաժի դեպքում միջնորդ տուրքեր և վարչական մուծումներ չկան: Ad hoc արբիտրաժի թերությունների շարքում կարող ենք առանձնացնել ժամանակի ավելորդ կորուստը, որը վատնվում է արբիտրաժային համաձայնություններ մշակելու վրա, արբիտրների ընտրության դժվարությունը: Շատ դեպքերում կողմերի միջև համաձայնություն չի կայացվում նաև նախագահողի ընտրության հարցում: Սակայն, հարկ է նշել, որ ad hoc արբիտրաժի դեպքում ևս հնարավորություն կա խուսափել բոլոր այս դժվարություններից և բացառել հնարավոր բոլոր թերությունները: Մասնավորապես՝ կողմերը կարող են արբիտրաժային համաձայնություն կնքելիս ուղղակիորեն կիրառել ՄԱԿՄԱԻՅ–ի կանոնակարգը: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ և՛ ինստիտուցիոնալ, և՛ ad hoc արբիտրաժներն ունեն թե՛ իրենց թերությունները և թե՛ առավելությունները: Արբիտրաժի այս կամ այն տեսակի ընտրությունն առավելապես կախված է կոնկրետ իրավահարաբերության բնույթից: Օրինակ՝ եթե վեճը ծագել է միջազգային առուվաճառքի պայմանագրից, դժվար թե նպատակահարմար լինի վեճը հանձնել մշտապես գործող արբիտրաժային դատարանի քննությանը: Բայց միևնույն ժամանակ, եթե վեճը բխում է բարդ իրավահարաբերությունից կամ, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում պետությունը կամ պետական կազմակերպությունը, գործն ինստիտուցիոնալ արբիտրաժի քննությանը հանձնելը դառնում է անհնար: Նման պարագայում առավել ընդունելի է ad hoc արբիտրաժը: Եթե գործն ad hoc արբիտրաժի լուծմանը հանձնելու մասին որոշում է կայացվել, ապա անհրաժեշտ է կամ մանրամասն կանոնակարգել արբիտրաժային վարույթի ողջ ընթացքը, կամ էլ արբիտրաժն անցկացնել կողմերի ընտրած որևէ կանոնակարգի հիման վրա: Սակայն, պրակտիկան ցույց է տալիս, որ որևէ արբիտրաժի կանոնակարգի հիման վրա ad hoc արբիտրաժ կազմակերպելու

փորձերը սովորաբար հաջողությամբ չեն պսակվում: Բանն այն է, որ այդ կանոնները հարմարեցված են ինստիտուցիոնալ արբիտրաժին, և, սովորաբար, արբիտրաժային կենտրոններից դուրս այդքան արդյունավետ չեն գործում: Չնայած որ անհրաժեշտության դեպքում կողմերը կարող են պայմանավորվել ad hoc արբիտրաժից անցում կատարել ինստիտուցիոնալ արբիտրաժի, կամ էլ հակառակը՝ ինստիտուցիոնալ արբիտրաժի՝ ad hoc արբիտրաժի: Նման պարագայում ավելի նպատակահարմար կլինի, եթե կողմերը պայմանագրում ինստիտուցիոնալ արբիտրաժի մասին առանձին դրույթ նախատեսեն, որը կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել և վերածվել ad hoc արբիտրաժի: Ներկայումս աշխարհում գործում են բազմաթիվ արբիտրաժային կենտրոններ, որոնք հայտնի են իրենց հեղինակությամբ և որոնք կողմերին հնարավորություն են ընձեռում, ելնելով նպատակահարմարությունից, ընտրել իրենց խնդիրներին առավելապես համապատասխանող արբիտրաժային կենտրոն: Չպետք է մոռանալ նաև, որ արբիտրաժները (նրանց կանոնակարգերը) կարող են ձեռնտու չլինել պայմանագրի կողմերին, և այս պատճառով էլ նման հարցին պետք է շատ զգուշորեն մոտենալ: Արբիտրաժային այս կամ այն կենտրոնի ընտրությունը, նախևառաջ, կախված է կողմերի ազգությունից (թե ո՞ր պետության քաղաքացի են հանդիսանում, կամ իրավաբանական անձը ո՞ր պետությունում է գրանցված), գործարքի բնույթից, վճռի կատարման հետ կապված հնարավոր խնդիրների առաջացումից, ինչպես նաև հատուկ տարածաշրջանային կամ քաղաքական գործոններից: Արբիտրաժային այս կամ այն կենտրոնն ընտրելիս հաշվի են առնվում՝

1. Համապատասխան տարածաշրջանի հետ արբիտրաժային կենտրոնի աշխարհագրական կապը: Այսպես, Հոնկոնգի միջազգային արբիտրաժում քննվում և լուծվում են Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց միջև վեճերը (ամենից առաջ՝ Չինաստանի ռեզիդենտների), Կահիրեի արբիտրաժում՝ Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանից բխող առևտրատնտեսական վեճերը, իսկ Կուալա-Լումպուրի միջազգային արբիտրաժում՝ Հարավային և Հարավ-արևելյան Ասիայի տարածաշրջանում առևտրատնտե-

սական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների միջև վեճերը: Բայց, պետք է նշել, միևնույն ժամանակ որ կան արբիտրաժային այնպիսի կենտրոններ, որոնք ոչ մի տարածաշրջանի հետ աշխարհագրական կապվածություն չունեն: Օրինակ՝ Առևտրի միջազգային պալատի արբիտրաժը (չնայած, որ այստեղ առավելապես լուծվում են Եվրոպական տարածաշրջանից բխող առևտրային վեճերը):

2. Որակյալ կանոնադրության (կանոնակարգի) առկայությունը, որը հնարավորություն կընձեռի արագ, արդյունավետ և արդարացի լուծել ընթացակարգային բոլոր հարցերը, և որը երկու կողմերին էլ ձեռնտու կլինի:

3. Արհեստավարժ մասնագետների առկայությունը:

4. Տեղական իշխանություններից արբիտրաժի անկախությունը, որը վերջինիս անկողնակալության լրացուցիչ երաշխիք է համդիսանում:

5. Արբիտրաժային կենտրոնի կայունությունը: Կողմերը պետք է վստահ լինեն, որ վեճ առաջանալու պահին արբիտրաժը, որին հղում են կատարել իրենք, գոյություն կունենա: Պայմանագիր կնքելիս կողմերը հաճախ արբիտրաժային վերապահումով հնարավոր բոլոր վեճերը համձնում են որևէ կոնկրետ արբիտրաժային դատարանի լուծմանը: Իսկ պայմանագիր կնքելուց հետո հնարավոր է, որ տարիներ անցնեն և նոր միայն կողմերի միջև վեճ առաջանա: Եթե վեճ առաջանալու պահին արբիտրաժային վերապահումով ընտրված արբիտրաժն արդեն չի գործում, ապա նման պարագայում կիրառվում է Նյու Յորքի համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետը (ՌԴ ՄԱԱԴ, § 8, կետ 1-ին), համաձայն որի դատարանը կողմերին չի կարող հարկադրել արբիտրաժի, եթե արբիտրաժային համաձայնությունն առջինն է, կորցրել է ուժը կամ չի կարող իրականացվել (ակտիվացվել):

Գրականության մեջ ընդունված է արբիտրաժները տարբերակել, ելնելով վարչարարության աստիճանից: Մասնավորապես՝ առանձնացվում են լրիվ վարչարարության (административные) և մասնակի վարչարարության արբիտրաժները: Առաջինի օրինակ են հանդիսանում Ամերիկայի արբիտրաժային ասոցիացիան և Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանը, որտեղ արբիտրա-

ժային վարույթը կազմակերպվում և վերահսկվում է զարգացման բոլոր փուլերում (այստեղ հրապարակվում են նաև բոլոր արբիտրաժային վճիռները): Մասնակի վարչարարության արբիտրաժի օրինակ է հանդիսանում Առևտրի միջազգային պալատին առընթեր գործող Միջազգային արբիտրաժը, որը բավարարվում է միայն առանձին կարևորագույն գործառնությունների իրականացմամբ. օրինակ՝ կողմերի անհամաձայնության դեպքում արբիտրների թեկնածուներ առաջադրելով, կայացված վճռի ստուգմամբ և կազմակերպչական այլ գործառնություններով: Իրականացվող վարչական բնույթի ծառայությունների շարքում կարելի է առանձնացնել նաև սղագրությունը և այլ օժանդակ ծառայությունների մատուցումը: Դրանց մեջ մտնում է գործի քննության կազմակերպումը, կողմերի և արբիտրների միջև նամակագրության իրականացումը, արբիտրներին հոնորարներ հանձնելը և այլն:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր միջազգային արբիտրաժային կենտրոն ունի արբիտրաժային համաձայնության իր տարբերակը (ստանդարտ արբիտրաժային համաձայնություն), որը սովորաբար կողմերին է առաջարկվում պայմանագիր կնքելիս: Սակայն տիպային համաձայնությունները պարտադիր չեն կողմերի համար և արբիտրաժային համաձայնությունների մշակման համար կարող են և հիմք չհանդիսանալ: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե նպատակահարմար է արդյոք տիպային համաձայնություններն օգտագործել այն տեսքով, որով առաջարկվում է արբիտրաժային կենտրոնի կողմից, չի կարելի միանշանակ պատասխանել: Ինչպես ցույց են տվել այս ոլորտում կատարված ուսումնասիրությունները, տիպային համաձայնությունները շատ դեպքերում փոփոխման և լրացման կարիք են զգում: Այսպես, Առևտրի միջազգային պալատին առընթեր Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնված 237 գործերից միայն մեկ դեպքում է տիպային արբիտրաժային համաձայնությունն առանց փոփոխությունների ու լրացումների օգտագործվել: Ընդ որում, չնայած որ արբիտրաժային տարբեր կենտրոնների տիպային համաձայնությունները տարբերվում են միմյանցից, սակայն այդ տարբերություններն էական չեն: Դրանք հիմնականում վերաբերում են արբիտրաժային համա-

ծայնությունների ձևակերպմանը, ծավալին, իսկ որոշ դեպքերում՝ նաև բովանդակությանը:

Պետք է նշել, որ արբիտրաժային համաձայնությունը պարտադիր կարգով պետք է ցուցում պարունակի այն վեճերի մասին, որոնք կողմերը մտադիր են լուծել արբիտրաժային կարգով: Այդ կարող է իրականացվել տարբեր եղանակներով. օրինակ՝ բացառման եղանակով (բոլոր վեճերը՝ բացառությամբ բուն գործարքի կնքմանը վերաբերվող վեճերի ենթակա են ՄԱԱԴ-ի լուծմանը): Կամ ընդհակառակը՝ կողմերը կարող են թվարկել բոլոր այն վեճերը, որոնք նրանք հանձնում են արբիտրաժի լուծմանը. օրինակ՝ «տեխնիկական բնույթի բոլոր վեճերը, որոնք առաջանում են սույն պայմանագրի իրականացման ընթացքում, հանձնվում են արբիտրաժի լուծմանը իրավական բնույթի բոլոր վեճերը ենթակա են լուծման դատական կարգով»:

Արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժի լուծմանը չեն կարող հանձնվել այնպիսի վեճեր, որոնք կիրառման ենթակա իրավունքի համաձայն չեն կարող հանդիսանալ արբիտրաժային դատարանի քննության առարկա: Հակառակ դեպքում արբիտրաժային համաձայնությունն առոչինչ է: Ընդ որում, կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ արբիտրաժային կարգով լուծման ենթակա վեճերի ցանկը ձևակերպել ինչպես լայն, այնպես էլ նեղ տարբերակներով: Այս առումով առավել գերադասելի է ձևակերպման լայն տարբերակը, քանի որ այս դեպքում կողմերը արբիտրաժի լուծմանը կարող են հանձնել ինչպես, նախապայմանագրային, պայմանագրի կատարումից բխող, այնպես էլ հենց բուն պայմանագրի հետ կապված վեճերը. օրինակ՝ գործարքի կնքման հետ կապված վեճերը, պայմանագրից բխող վեճերը և այլն: Խոսելով արբիտրաժային կարգով լուծման ենթակա վեճերի ցանկը որոշելու մասին, անկարելի է չհիշատակել Նյու Յորքի համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետը, որից բխում է, որ պետությունները կարող են սահմանափակել վերջինիս գործողությունը միայն պայմանագրային և ոչ պայմանագրային այն վեճերի կապակցությամբ, որոնք այս կամ այն չափով առնչվում են վարչական մարմինների գործունեությանը: Իրենից մեծ կարևորություն է ներկայացնում նաև ար-

բիտրաժի վայրի ճիշտ ընտրության հարցը: Այս հարցի լուծման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից. այն է

- աշխարհագրական,
- քաղաքական,
- տնտեսական,
- և իրավական:

Արբիտրաժի վայրը պետք է հարմար լինի երկու կողմերի համար էլ և մատչելի՝ հաղորդակցման արդյունավետության տեսանկյունից: Սովորաբար միջոցներ խնայելու նպատակով արբիտրաժի վայրն ընտրվում է՝ հիմք ընդունելով կողմերի ծավալած հիմնական գործունեության վայրը: Սրա հետ է կապված համապատասխան տարածաշրջանային արբիտրաժային կենտրոնների գործունեությունը. օրինակ՝ Մոսկվայի, Վանկուվերի, Յոնկոնգո կամ Կահիրեի արբիտրաժները: Շատ հաճախ կողմերն արբիտրաժի վայրն ընտրելիս նախընտրում են դիմել երրորդ՝ չեզոք պետության արբիտրաժ, որը կապված չէ ոչ՝ կողմերի և ոչ՝ էլ պայմանագրի կատարման վայրի հետ: Ընդ որում, չեզոք պետություն ընտրելիս պետք է անվերապահորեն հաշվի առնվեն արհեստավարժ (որակյալ) արբիտրների, ինչպես նաև արբիտրաժային դատավարության անցկացման արդյունավետության հետ կապված բոլոր խնդիրները:

Քաղաքական գործոնների շարքում կարելի է առանձնացնել երկրի քաղաքական կայունությունն ապահովող միջոցները, կողմերի համար արբիտրաժի վայրի անվտանգությունն ու մատչելիությունն ապահովող միջոցների ամբողջությունը (այդ թվում՝ արագացված կարգով վիզա ստանալու հնարավորությունը), ինչպես նաև արբիտրների, կողմերի, նրանց ներկայացուցիչների, վկաների և փորձագետների մուտքի հետ կապված սահմանափակումների բացակայությունը: Մի խոսքով, արբիտրաժի վայրն ընտրելիս շատ կարևոր է համապատասխան երկրի քաղաքական իրավիճակի ճիշտ գնահատումը: Քաղաքական իրավիճակի սխալ գնահատականը կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ, ինչպես այդ տեղի ունեցավ Իրանի Նավթային Ազգային Ընկերության և «էլեդ» կորպորացիայի դեպքում: Այն է՝ Ամերիկյան կողմը իրաժարվեց մասնակցել արբիտրաժին՝ պատճառաբանելով, որ Իրանի տարած-

քում ԱՄՆ քաղաքացիներին վտանգավոր է որևէ գործընթացի մասնակցել, իսկ Իրանական կողմին չհաջողվեց վերջինիս հարկադրել արբիտրաժի (նույնիսկ այն դեպքում, երբ արբիտրաժի վայր էր առաջարկվում հենց ԱՄՆ-ն): Դատարանը մերժեց իրանական կողմի պահանջը, պատճառաբանելով, որ արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժի վայր է ընտրված Թեհրանը, իսկ դատարանը իրավասու չէ այն փոխել: Արբիտրաժի վայրը կարող է փոխվել միայն երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Տնտեսական գործոնների թվին են դասվում ֆինանսական միջոցների արագ փոխանցման, տեղաշարժման հնարավորությունը, արբիտրաժի վայր դրանց անխոչընդոտ ներմուծումը, անհրաժեշտ փաստաթղթերի և իրեղեն ապացույցների ապահովման հնարավորությունը, զարգացած ենթակառուցվածքների՝ այն է անհրաժեշտ շինությունների, կապի և տրանսպորտային միջոցների առկայությունը: Բացի այդ, գործի որակյալ քննության համար անհրաժեշտ է ապահովել բարձրակարգ թարգմանիչների և մասնագետների մասնակցությունը միջնորդ դատավարությանը: Մի խոսքով, տնտեսական գործոնների շարքին են դասվում արբիտրաժի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ բոլոր տնտեսական միջոցները: Ընդ որում, տարբեր արբիտրաժային կենտրոններում վարույթի կազմակերպման հետ կապված ծախսերը տարբեր են (օրինակ՝ Արևմուտքում արբիտրաժային ծախսերը զգալիորեն գերազանցում են ՀՀ-ում կամ ՌԴ-ում գանձվող արբիտրաժային ծախսերը):

Արբիտրաժի վայրի ընտրության գործում ամենավճռորոշ դերը պատկանում է իրավական գործոններին՝ գործի արդյունավետ քննության համար անհրաժեշտ իրավական դաշտի առկայությանը: Պետությունն աշխարհագրական տեսանկյունից կարող է շատ հարմար լինել, կայուն՝ քաղաքական տեսանկյունից, ունենալ բարենպաստ տնտեսական պայմաններ: Սակայն հնարավոր է, որ վերջինիս արբիտրաժային օրենսդրությունը խթանի կամ հնացած լինի, արբիտրաժային քննությանը միջամտեն պետական մարմինները (առաջին հերթին՝ դատարանները) կամ արբիտրաժային վճիռները ենթարկվեն խիստ դատական ստուգման և այլն: Այս ամենը բավական է, որպեսզի կողմերը խուսափեն տվյալ երկրում արբիտրաժ

անցկացնելուց: Արբիտրաժի վայրի ընտրության հարցում կարևորագույն գործոն է հանդիսանում նաև միջազգային համաձայնագրերին տվյալ պետության մասնակցության փաստը: Եթե պետությունը, որտեղ կողմերը որոշել են անցկացնել արբիտրաժը, հանդիսանում է օրինակ՝ 1958 Նյու Յորքի համաձայնագրի մասնակից, ապա արբիտրաժային վճիռի կատարման հետ կապված բարդություններ առաջանալ չեն կարող: Նույնիսկ այն դեպքում, երբ կողմերը Նյու Յորքի համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետության քաղաքացիներ են, եթե արբիտրաժն անցկացվել է համաձայնագրի մասնակից պետությունում, արբիտրաժային վճիռի ճանաչման և հարկադիր կատարման հետ բարդություններ առաջանալ չեն կարող: Իսկ արբիտրաժային վարույթն անց է կացվել համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետության տարածքում, ապա անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք լրացուցիչ իրավական գործոնների առկայության փաստը, որպեսզի հնարավոր լինի արբիտրաժային վճիռի ճանաչումն ու հարկադիր կատարումը: Դրանց թվին կարելի է դասել տարածաշրջանային համաձայնագրերը (օրինակ՝ Եվրոպական կամ Պանամայի համաձայնագիրը), առևտրի, իրավական փոխօգնության կամ ներդրումների խրախուսման ու իրավական պաշտպանության մասին երկկողմ պայմանագրերը, ինչպես նաև դատական և արբիտրաժային վճիռների ու որոշումների ճանաչումն ու հարկադիր կատարումն ապահովող այլ պայմանագրերի առկայությունը:

Ի դեպ՝ պետությունները միմյանցից տարբերվում են նաև առևտրային արբիտրաժի իրավական կարգավորման աստիճանի տեսանկյունից: Ներկայումս ժամանակակից արբիտրաժային օրենսդրություն ունեցող պետությունների մեծ մասում արբիտրաժային օրենսդրության ընդունման համար հիմք է ծառայել ՄԱԿՄԱԻՅ-ի 1985 թվականի տիպային օրենքը, որը հանգամանալից կարգավորում է արբիտրաժային ենթակայության հետ կապված բոլոր հարցերը, արբիտրների նշանակման, նրանց բացարկ հայտնելու, ինչպես նաև ինքնաբացարկի լուծման հետ կապված հարցերը, սահմանում է գործի քննության ընթացակարգային հիմնական կանոնները և այլն:

Պետք է հաշվի առնել արբիտրաժի վայրի օրենսդրությանը համապատասխան արբիտրաժային կարգով լուծման ենթակա գործերի շրջանակը: Օրինակ՝ ԱՄՆ-ում արբիտրաժի լուծմանը կարող է հանձնվել ցանկացած գործ՝ բացառությամբ քրեական և մարդու իրավունքների ոտնահարման հետ կապված գործերի: Ավելին, այնտեղ արբիտրաժային դատարաններում կարող են այնպիսի գործեր լուծվել, որոնք ենթակա չեն նույնիսկ դատարաններին (վարչական կարգով քննվող գործերը): Սակայն աշխարհում մեծ թվով պետություններ դեռևս չեն վերացրել արբիտրաժային կարգով գործերի քննության հետ կապված սահմանափակումները: Օրինակ՝ Չայաստան, ՌԴ և այլն: Գրեթե բոլոր պետություններում թույլատրվում է, որպեսզի իր տարածքում անցկացվող արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառվեն այլ պետության իրավունքով նախատեսված ընթացակարգային կանոնները (դատավարական իրավունքի նորմները): Արբիտրաժային օրենսդրությամբ պետք է սահմանվեն, մասնավորապես, արբիտրների նշանակման կարգը, նրանց ներկայացվող պահանջները և այլն: Ընդ որում, արբիտրաժի վայրի ընտրությունը կարող է ազդել նաև տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառվող նյութական իրավունքի ընտրության վրա: Եթե կողմերն իրենք չեն ընտրել կիրառման ենթակա նյութական իրավունքը, ապա արբիտրաժային դատարանն այս հարցի լուծման համար կարող է գնալ երկու ճանապարհով՝ կամ կիրառել տեղի նյութական իրավունքը, կամ էլ այն որոշել կոլիզիոն նորմերի օգնությամբ: Պետք է նշել, որ ցանկացած պետություն ունի կոլիզիոն նորմերի իր համակարգը: Արբիտրաժի վայրի ընտրությունը միշտ էլ էական նշանակություն է ունենում կողմերի իրավունքների և պարտականությունների որոշման համար:

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է առանձնացնել նաև արբիտրաժը խրախուսող կամ արբիտրաժի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ունեցող պետությունները: Այդպիսի պետությունների թվին են դասվում Ֆրանսիան, Շվեյցարիան, ԱՄՆ-ն, ՀՀ-ն և այլն: Ընդ որում, նման դասակարգման չափորոշիչ են հանդիսանում, որպես կանոն բարենպաստ (ժամանակակից) արբիտրաժային օրենսդրության առկայությունը, 1958 թվականի

Նյու Յորքի համաձայնագրին անդամակցության փաստը, արբիտրաժային օրենսդրության համապատասխանությունը ՄԱԿՄԱԻԳ-ի տիպային օրենքի պահանջներին, միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից բխող գրեթե բոլոր վեճերը արբիտրաժային կարգով լուծելու հնարավորությունը, ազգային դատարանների կողմից միջնորդ դատավարությանը միջամտելու՝ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների առկայությունը, արբիտրաժային համաձայնության պրեզումպցիայի ընդունումը, արբիտրաժային վերապահման և «competence-competence» դոկտրինաների ճանաչումը, արբիտրաժային դատարանի կազմը ձևավորելու և արբիտրաժային դատավարությունն ինքնուրույն կազմակերպելու կողմերի ազատությունը, կողմերի կամ արբիտրաժային դատարանի կողմից որոշված կիրառման ենթակա նյութական իրավունքի ընդունումը որպես նյութական իրավահարաբերության կարգավորման միջոց, արբիտրաժային դատարանի կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորությունը, արբիտրաժային դատավարությանը դատարանների կողմից իրականացվող օժանդակության առկայությունը և վերջապես, արբիտրաժային վճիռների ճանաչումն ու հարկադիր կատարումը:

Ինչ վերաբերում է արբիտրաժի վայրի ընտրությանը, ապա այն պետք է ընդունելի լինի ինչպես կողմերի, այնպես էլ արբիտրների համար: Այսինքն, արբիտրաժի վայրն ընտրելիս պարտադիր կարգով հաշվի են առնվում հայցվորի, պատասխանողի և արբիտրների շահերը: Այս առումով, իհարկե, դժվար է գտնել արբիտրաժի վայրի իդեալականորեն փոխընդունելի տարբերակ: Նման դեպքերում հայցվորը սովորաբար շահագրգռված է, որպեսզի արբիտրաժային դատավարությունը հնարավորինս արագ անցնի և քիչ ծախսատար լինի: Պատասխանողը, իհարկե, եթե մտադիր չէ հակընդդեմ հայց հարուցել, որպես կանոն այդքան էլ շահագրգռված չէ արբիտրաժային քննության արագությամբ: Նման դեպքերում պատասխանողին ավելի շատ հետաքրքրում է արբիտրաժի ընթացքում իր դիրքորոշումը մանրակրկիտ ներկայացնելու հնարավորությունը և ժամանակային սահմանափակումների բացակայությունը: Եթե տեղի իրավունքը նրան այդպիսի հնարավորություն կամ արբիտրաժային

վճիռը վերանայելու (վերացնելու) մասին միջնորդություն ներկայացնելու իրավունք է վերապահում, ապա այս դեպքում պատասխանողի ընտրությունը որևէ տարակուսանքի տեղիք չի տալիս: Արբիտրների դիրքորոշումը նման պարագայում սովորաբար համընկնում է հայցվորի դիրքորոշման հետ, քանի որ նրանք ձգտում են հնարավորինս արագ լուծել իրենց առջև դրված խնդիրները:

Այսպիսով, կարող ենք ասել, որ արբիտրաժի անցկացման իդեալական վայր գոյություն չունի և նման դեպքերում լավագույն տարբերակն է հանդիսանում արբիտրաժային քննության բոլոր մասնակիցների շահերի միջև հարաբերական հավասարակշռություն գտնելը: Ընդ որում, կողմերը կարող են արբիտրաժի վայրն ընտրել մինչև միջնորդ դատավարության սկիզբը ցանկացած պահի: Սակայն, թե կոնկրետ ո՞ր պահին է առավել նպատակահարմար արբիտրաժի վայրն ընտրել, իրավաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա: Ոմանք գտնում են, որ այս հարցի լուծումը հնարավոր է միայն վեճը ծագելուց հետո, քանի որ գործարքի կնքման պահին դեռևս հայտնի չէ, թե կողմերի միջև ինչ բնույթի վեճ կառաջանա կամ ընդհանրապես, տարածայնություններ կառաջանա՞ն, թե ոչ, կամ կողմերից ո՞ր մեկը հանդես կգա որպես հայցվոր, իսկ որը՝ պատասխանող, որտե՞ղ կգտնվեն ապացույցների մեծ մասը կամ վկաները: Այս ամենի հետևանքով էլ վեճի առաջացումից հետո արբիտրաժի վայրի ընտրությունը կողմերին լրացուցիչ հնարավորություն են ընձեռում հաշվի առնել գործի բոլոր առանձնահատկությունները: Հեղինակների մյուս խումբը պնդում է, որ վեճ ծագելուց հետո արբիտրաժի վայրի շուրջ համաձայնություն ձեռք բերելը բավականին դժվարանում է: Բացի այդ, նախապես իմանալով արբիտրաժային քննության անցկացման վայրը, կողմերը կարող են առանց ավելորդ ժամանակ վատնելու անցնել մյուս հարցերի լուծմանը. օրինակ՝ արբիտրներ նշանակելուն և այլն: Երկրորդ մտեցումը առավել հիմնավորված է համարվում, չնայած որ հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ բանակցությունների ընթացքում արբիտրաժի վայրի շուրջ կողմերի միջև համաձայնություն չի կայացվում և այդ հարցի լուծումը թողնվում է արբիտրաժային դատարանի հայեցողությանը: Արբիտրաժի վայրի ընտրության ամենագլ-

խավոր չափանիշն է արբիտրաժային վճռի հարկադիր կատարման հնարավորությունը, ինչպես այն երկրում, որտեղ կայացվել է, այնպես էլ ցանկացած այլ երկրում, որտեղ պատասխանողը կարող է գույք ունենալ (նկատի է առնվում Նյու Յորքի համաձայնագրի մասնակից երկրները):

Առանձնակի ուշադրության են արժանի այն դեպքերը, երբ կողմերին չի հաջողվում արբիտրաժի վայրի շուրջ համաձայնության գալ: Այս հարցը հետաքրքրական է հատկապես հնարավոր հետևանքների առաջացման տեսանկյունից: Եթե կողմերն արբիտրաժի վայրի շուրջ համաձայնություն ձեռք չեն բերում, ապա այդ հարցը լուծվում է կամ արբիտրաժային կենտրոնի կամ էլ արբիտրների կողմից: Արբիտրաժի վայրը արբիտրաժային կենտրոնի կողմից որոշելու հնարավորություն են նախատեսում Ամերիկայի արբիտրաժային ասոցիացիայի և Առևտրի միջազգային պալատին առընթեր միջազգային արբիտրաժային դատարանի կանոնակարգերը: ՌԴ ՄԱԱԴ-ի կանոնադրությունը սահմանում է, որ նման դեպքերում արբիտրաժային դատավարությունը պետք է անց կացվի Մոսկվայում: Արբիտրաժային որոշ կենտրոնների կանոնակարգեր (ԼՄԱԴ) այս հարցի լուծումը թողել են արբիտրների հայեցողությանը: Հարցի լուծման մույնաման տարբերակ է առաջարկում նաև ՄԱԿՄԱԻԴ-ի արբիտրաժային կանոնակարգը: Եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է, որ վեճ ծագելու դեպքում այն պետք է լուծվի ad hoc արբիտրաժային կարգով, ապա արբիտրաժի վայրի շուրջ համաձայնության բացակայության դեպքում հարցը կլուծի արբիտրաժը նախաձեռնող կողմի գտնվելու վայրի դատարանը (Ստոկհոլմի ինստիտուցիոնալ արբիտրաժի կանոնակարգի 22-րդ կետ): Արբիտրաժի վայրի շուրջ կողմերի համաձայնության բացակայության պայմանում արբիտրաժային դատարանը սովորաբար որոշում է արբիտրաժային վարույթը կազմակերպել այն պետության տարածքում, որի իրավունքը կիրառվում է վիճելի նյութական իրավահարաբերության նկատմամբ (վերջինս, որպես կանոն, որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ):

Հարցի լուծման այս տարբերակն արդարացված է և ունի լուրջ հիմնավորում, քանի որ սովորաբար նախագահող արբիտր է ընտր-

վում այն պետության ներկայացուցիչը, որտեղ պետք է իրականացվի արբիտրաժը, և որը տիրապետում է տեղի իրավունքին: Մի խոսքով, կարող ենք ասել, որ եթե կողմերը որոշում են կայացրել կիրառման ենթակա նյութական իրավունքի շուրջ, ապա առավել արդյունավետ և նպատակահարմար է արբիտրաժային դատավարությունն անցկացնել այն պետության տարածքում, որի իրավունքին կողմերը հղում են կատարել:

Այն դեպքերում, երբ կողմերը տարբեր պետությունների քաղաքացիներ են (ծագում են տարբեր պետություններից), ապա նրանց միջև կնքվող պայմանագրի տեքստը, որպես կանոն, կազմվում է մի քանի լեզուներով (կողմերի մայրենի լեզվով): Ընդ որում, շատ հաճախ նշվում է նաև, որ պայմանագրի տեքստի բոլոր տարբերակներն էլ հավասարազոր են կամ օժտված են միևնույն իրավական ուժով: Լինում են նաև դեպքեր, երբ պայմանագրի տեքստը կազմվում է երրորդ (չեզոք՝ բոլոր կողմերի համար հասկանալի լեզվով). օրինակ՝ Յայաստանի Հանրապետության և Վրացական կողմերի միջև պայմանագրի տեքստը կարող է կազմվել ռուսերեն: Եթե կողմերն արբիտրաժային համաձայնությամբ որոշել են արբիտրաժային քննության լեզուն, ապա նրանց որոշումը պարտադիր է արբիտրաժային դատարանի համար: Իսկ եթե արբիտրաժային համաձայնությամբ այս հարցը չի լուծվել, ապա արբիտրաժային վարույթի լեզվի ընտրությունը թողնվում է արբիտրաժային դատարանի հայեցողությանը: Նման դեպքերում արբիտրաժի անցկացման համար ընտրվում է այն լեզուն, որով կազմվել է պայմանագրի տեքստը: Եթե պայմանագրի տեքստը կազմվել է երկու տարբեր լեզուներով, ապա արբիտրաժային դատարանի որոշմամբ արբիտրաժը կարող է իրականացվել միայն դրանցից մեկով: Ընդ որում, հնարավոր է նաև արբիտրաժային լսումների միաժամանակյա (սինխրոն) թարգմանությունը կողմերի համար հասկանալի այլ լեզվով: Բացի այդ, իրավաբանական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ կողմերը արբիտրաժային համաձայնությամբ նախատեսում են արբիտրաժային դատարան մի քանի լեզուներով կազմված փաստաթղթեր ներկայացնելու հնարավորություն: Այս դեպքում փաստաթղթերը կազմվում են այն լեզուներով, որոնք հասկանալի են ինչպես կողմե-

րի, այնպես էլ արբիտրների համար: Որոշ դեպքերում, արբիտրաժային համաձայնության մեջ լեզվի ընտրության մասին դրույթի բացակայության դեպքում, արբիտրաժային վարույթի լեզու է ընտրվում արբիտրաժի վայրի պետական լեզուն: Դատավարության լեզվի հետ կապված՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ դատավարության լեզուն (լեզուները), որը պետք է օգտագործվի վեճը լուծելիս, որոշվում է կողմերի համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում վարույթի իրականացման լեզուն որոշում է արբիտրաժային դատարանը: Արբիտրաժային դատարանը կարող է կողմերից պահանջել գրավոր ապացույցների տեքստի թարգմանությունն այն լեզվով, որը պետք է օգտագործվի վեճը լուծելիս: Նմանատիպ դրույթ է պարունակում նաև «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքի 22-րդ հոդվածը: Իսկ ՄԱԿ-ի կանոնադրության § 10-րդ սահմանում է, որ գործի քննությունն իրականացվում է ռուսերեն լեզվով, սակայն այն կարող է իրականացվել նաև այլ լեզուներով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Հարկ է նշել, որ արբիտրաժային վարույթի լեզվի հետ կապված կողմերի միջև շատ հազվադեպ է վեճ առաջանում, և բացառիկ դեպքերում են կողմերը նման պահանջով դիմում դատարան: Նմանատիպ դեպք է գրանցվել 1997 թվականին Ավստրիայում, որտեղ Գերագույն դատարանի կողմից քննվել է մի գործ, որով պատասխանող կողմը հայց էր հարուցել արբիտրաժային դատարանի դեմ և պահանջում էր, որ գործի քննությունն իրականացվի գերմաներեն, այլ ոչ թե անգլերեն լեզվով (արբիտրաժային անգլերեն լեզվով անցկացնելու մասին արբիտրաժային դատարանը որոշում էր կայացրել): Սակայն Ավստրիայի Գերագույն դատարանը չընդունեց պատասխանող կողմի հայցը՝ պատճառաբանելով արբիտրաժին չմիջամտելու սկզբունքի անխախտելիության պահանջը: Դրանով դատավարության լեզվի վերջնական որոշումը թողնվեց արբիտրաժային դատարանի հայեցողությանը:



## **§2. Կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը առևտրային արբիտրաժում**

Առևտրային արբիտրաժում ամենակարևոր հարցը, թերևս, համարվում է կիրառման ենթակա իրավունքը որոշելը՝ իրավունքի ընտրությունը, որով պետք է կարգավորվի (կիրառվի նյութական իրավահարաբերության նկատմամբ) պայմանագիրը (գործարքը)<sup>1</sup>: Սա ունի առաջնային նշանակություն: Իհարկե, իրավաբանական պրակտիկայում հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ կազմված պայմանագիրն իր մեջ պարունակում է դրա կատարման, առանձին կետերի մեկնաբանման և հնարավոր վեճերի լուծման անհրաժեշտ բոլոր կանոնները: Սակայն այդպիսի դեպքեր հազվադեպ են հանդիպում: Դրանց մշակումը բավականին մեծ ժամանակ և ջանքեր է պահանջում: Ընդ որում, նույնիսկ այդ դեպքում հնարավոր չէ նախատեսել և կարգավորման ենթարկել բոլոր մանրամասները: Այս ամենի հետևանքով էլ իրավաբանական պրակտիկայում հարցի լուծման համար հաճախ կիրառվում է այլ մոտեցում. այն է՝ սահմանելով գործարքի համար էական նշանակություն ունեցող պայմանները կարգավորող կանոնները՝ կողմերն ընտրում են նաև իրավունք, որը կոչված է կարգավորելու պայմանագրում չհիշատակված բոլոր մյուս հարցերը: Բացի կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրությունից, կողմերը կարող են պայմանավորվել, որ պայմանագրի նկատմամբ կիրառվեն և բոլոր մեկնաբանություններն իրականացվեն միջազգային համաձայնագրերի հիման վրա (օրինակ՝ «Միջազգային առուվաճառքի մասին» կոնվենցիայի), Lex Mercatoria-ի կամ իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա, որպեսզի արբիտրաժային դատարանը հնարավորություն ունենա վեճը լուծել ex aequo et bono («ըստ արդարացիության և բարի խղճի»): Արբիտրաժային համաձայնության մեջ կիրառման ենթակա իրավունքի մասին նշումը կարևորվում է նաև այն պատճառով, որ համաձայնությունում այլ պայմանների բացակայության դեպքում հենց այդ իրավունքով է որոշվելու միջնորդ համաձայ-

նության օրինականությունը, գործողության ոլորտը և իրավական հետևանքների առաջացման հնարավորությունը: Բացի այդ, կարող ենք ասել, որ պայմանագրի տարբեր մասերի նկատմամբ հնարավոր է, որ կիրառվեն տարբեր պետությունների իրավունքներ: Սակայն վեճ առաջանալու դեպքում այն լրացուցիչ բարդություններ կարող է առաջացնել: Երբ հայտնի է կիրառման ենթակա իրավունքը, ապա հեշտանում է նաև արբիտրների ճիշտ ընտրության հարցը, քանի որ արբիտրների ընտրության հիմնական չափանիշ է հանդիսանում կիրառվող իրավունքին տիրապետելու աստիճանը: Պետք է նշել նաև, որ արբիտրաժի ընթացքում տարբեր հարցերի կարգավորման նպատակով կարող են կիրառվել տարբեր իրավունքներ՝

1. կողմերի գործունակությունը կարգավորող իրավունքը,
  2. արբիտրաժային համաձայնության վավերությունը սահմանող իրավունքը,
  3. արբիտրաժային վարույթը կարգավորող իրավունքը (lex arbitri),
  4. վեճի (նյութական իրավահարաբերության) նկատմամբ կիրառվող իրավունքը:
- Եթե կիրառման ենթակա իրավունքի ընտրության հետ կապված կողմերի միջև համաձայնություն չի կայացվել, ապա՝
5. հղում կոլիզիոն նորմերին, որոնց հիման վրա պետք է կատարվի կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը:

1. **Կողմերի գործունակությունը կարգավորող իրավունք:** Ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ արբիտրաժային համաձայնություն կնքելու համար կողմերը պետք է օժտված լինեն գործունակությամբ (Նյու Յորքի համաձայնագրի 5-րդ հոդված կետ 1-ին): Ընդ որում, աշխարհում գոյություն չունի գործունակության հետ կապված հարցերը կարգավորող միջազգային նորմերի միասնական համակարգ: Իրավաբանական անձանց գործունակությունը ծագում է իրավունակության հետ համատեղ, իսկ ֆիզիկական գործունակության համար տարբեր երկրներում տարբեր չափորոշիչներ են սահմանված (Հայաստանի Հանրապետությունում՝ 18 տարեկան, Սուդանում՝ 14 տարեկան և այլն):

<sup>1</sup> Տե՛ս 22 Yearbook Commercial Arbitration (1997), էջ 263:

**2. Արբիտրաժային համաձայնության վավերությունը սահմանող իրավունք:** Ինչ վերաբերում է արբիտրաժային համաձայնության վավերությունը որոշող իրավունքին, ապա Նյու Յորքի համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ այն պետք է համապատասխանի պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքին, իսկ եթե պայմանագրում կիրառման ենթակա իրավունքի ընտրության մասին դրույթ նախատեսված չէ, ապա՝ արբիտրաժի վայրի կամ վճռի կատարման իրավունքին:

**3. Արբիտրաժային դատավարությունը կարգավորող իրավունք (lex arbitri):** Lex arbitri եզրույթն ավելի շատ վերաբերվում է այն պետության իրավունքին, որտեղ պետք է իրականացվի արբիտրաժը, իսկ ավելի ստույգ՝ արբիտրաժը կարգավորող օրենսդրությանը: Բացի արբիտրաժային դատարանների կազմակերպմանն ու դրանց իրավասությանը վերաբերող նորմերից, արբիտրաժային օրենսդրությամբ սահմանվում է նաև արբիտրաժին ենթակա գործերի ցանկը, հայցի ապահովման միջոցների կիրառման, հայցապահանջների փոփոխման և լրացման, միացման կարգը, արբիտրաժային վճռին ներկայացվող պահանջները, ինչպես նաև դրանց դատական ստուգման իրականացման կարգը: Ուստի, անհրաժեշտ է նշել, որ lex arbitri-ին ամենից առաջ հանդիսանում է արբիտրաժային դատավարության բուն ընթացքը կարգավորող նորմերի ամբողջություն: Օրինակ՝ ԳՅ-ում որպես lex arbitri է հանդես գալիս «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը, ինչպես նաև Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կամ էլ կողմերը կարող են ազատորեն համաձայնվել արբիտրաժային դատարանի կողմից իրականացվող վարույթի ընթացակարգի շուրջ: Արբիտրաժային համաձայնություններում սովորաբար չի նշվում, թե արբիտրաժային դատարանը գործը քննելիս ինչ դատավարական օրենքով պետք է դեկավարվի: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված է, որ արբիտրաժային քննությունն անց է կացվում արբիտրաժի վայրի (դատավարական) օրենսդրությանը համապատասխան: Սակայն հնարավոր է նաև, որ արբիտրաժային դատավարությունն իրականացվի այլ պետության դատավարական օրենսդրությանը համապատասխան: Արբիտրաժային համաձայնությունում երրորդ

պետության արբիտրաժային օրենսդրության վրա հղում կատարելը չի կարելի ողջամիտ քայլ անվանել, չնայած, որ այս դեպքում էլ պարտադիր կարգով պետք է պահպանվեն ֆորումի (ընտրված պետության իրավունքի) իմպերատիվ նորմերը: Հակառակ դեպքում, տվյալ պետության տարածքում արբիտրաժային վճռի հարկադիր կատարումն անհնար կլինի (Նյու Յորքի համաձայնագրին համապատասխան հանրային կարգին հակասելու դեպքում): Բացի այդ, այս դեպքում կարող է նաև հարց առաջանալ, թե կողմերն առանձին հարցերով ո՞ր դատարան պետք է դիմեն (օրինակ՝ ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտության դեպքում) արբիտրաժի անցկացման վայրի դատարան, թե՞ այն երկրի դատարան, որի իրավական համակարգի վրա հղում են կատարել կողմերը: Այս պատճառով է, որ արբիտրաժն ավելի նպատակահարմար է անցկացնել այն պետության տարածքում, որի իրավունքի վրա հղում են կատարում կողմերը: Ընդ որում, վեճի կարգավորման նպատակով որևէ երկրի նյութական իրավունքի կիրառումն ամենևին չի նշանակում, որ գործի լուծման համար պետք է կիրառվի հենց այդ պետության դատավարական իրավունքը:

**4. Վեճի (նյութական իրավահարաբերության) նկատմամբ կիրառվող իրավունք:** Ներկայումս ինչպես միջազգային համաձայնագրերում, այնպես էլ ներպետական օրենսդրությունում արմատավորվել է գործարքը կարգավորող նյութական իրավունքի ազատ ընտրության կամ, այսպես կոչված, կողմերի ինքնավարության սկզբունքը: Այս սկզբունքն ամրագրվել է «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» 1961թ. եվրոպական համաձայնագրում (հոդվ. 7), Վաշինգտոնի 1965թ. համաձայնագրում (հոդվ. 42), «Պամանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» Զոնի 1980թ. համաձայնագրում, ՄԱԿՄԱԻԳ-ի Արբիտրաժային կանոնակարգում (հոդվ. 33, կետ1-ին), «Առևտրային արբիտրաժի մասին» ԳՅ օրենքում (հոդվ. 28), համաձայն որի՝ արբիտրաժային դատարանը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում: Կողմերի համաձայ-

նության բացակայության դեպքում արբիտրաժային դատարանը կիրառում է այն իրավունքը, որը որոշված էր իր կողմից կիրառվող կոլիզիոն նորմերով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքների և այլ իրավական ակտերի ու ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա): Բոլոր դեպքերում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում պայման գրի պայմանների համաձայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի առևտրային սովորույթները:

Կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում արբիտրաժային դատարանը կիրառում է այլ պետությունների իրավունքի նորմեր: Բացի այդ, այս սկզբունքն անրագրված է նաև բազմաթիվ արբիտրաժային կենտրոնների կանոնակարգերում (ԱՄՊ-ի Արբիտրաժային կանոնակարգի հոդված 13-ի 1-ին կետ): Իսկ ՌԴ - ՄԱԱԴ-ի կանոնադրության § 13-ով սահմանվում է, որ ՄԱԱԴ-ն վեճը լուծում է կողմերի համաձայնությամբ որոշված նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրության հետ կապված կողմերի իրավունքն առանձին դեպքերում կարող է սահմանափակվել: Ընդ որում, այդ սահմանափակումները կարող են նախատեսվել ինչպես արբիտրաժի վայրի, այնպես էլ այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացին են հանդիսանում կողմերը կամ գործարքի կատարման վայրի օրենսդրությամբ<sup>1</sup>: Բացառությամբ այսպիսի հրամայական պահանջների, կողմերն ազատ են կիրառման ենթակա իրավունքի

<sup>1</sup> Այսպես՝ Չիլիի Առևտրային օրենսգրքով (հոդվ. 32) սահմանված է, որ եթե գործարքը պետք է կատարվի Չիլիի տարածքում, ապա այն պետք է կարգավորվի տեղի օրենսդրությամբ, անկախ այն հանգամանքից, թե կողմերը կիրառման ենթակա իրավունքի շուրջ ի՞նչ ընտրություն են կատարել: Սաուդյան Արաբիայում նավթի արդյունահանման, վերամշակման կամ առուվաճառքի հետ կապված ցանկացած գործարք պետք է կարգավորվի տեղի օրենսդրությամբ: Չինական ժողովրդական Հանրապետությունում կապիտալ շինարարության (շինարարական կապալ), ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների ստեղծման հետ կապված պայմանագրերը պետք է կարգավորվեն բացարձակապես տեղի օրենսդրությամբ: ՌԴ տարածքում համատեղ ձեռնարկությունների ստեղծման պայմանագրերի նկատմամբ պետք է կիրառվի ՌԴ օրենսդրությունը (Քաղաքացիական օրենսդրության հիմունքների հոդվ. 166):

հարցում: Կիրառման ենթակա իրավունքն ընտրելու մասին կողմերի համաձայնությունը բացառում է տվյալ իրավահարաբերության նկատմամբ այլ երկրի իրավունքի կիրառման հնարավորությունը: Նման պարագայում նյութական իրավահարաբերության նկատմամբ այլ իրավունք կիրառելու մասին արբիտրաժային դատարանին ուղղված կողմի բոլոր պահանջներն ու փորձերը անհաջողության են դատապարտված, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը գնում է հրամայական նորմերի պահանջման մասին<sup>1</sup>: Կիրառման ենթակա իրավունքն ընտրելիս կողմերը կարող են արբիտրաժային համաձայնությամբ պայմանագրի կարգավորման և նրանից բխող բոլոր վեճերի լուծման նպատակով հղում կատարել.

- որևէ պետության ազգային իրավունքին,
- միջազգային իրավունքին,
- միջազգային համաձայնագրերին և այլ միջպետական պայմանագրերին,
- իրավունքի համընդհանուր սկզբունքներին,
- միջազգային առևտրային իրավունքին (Lex Mercatoria),
- երաշխավորող բնույթի միջազգային փաստաթղթերին,
- առևտրային սովորույթներին,
- արդարության սկզբունքներին (բարոյական նորմեր),
- իրավունքի նորմերի, սկզբունքների, առևտրային սովորույթների համակցությանը:

Արտաքին տնտեսական պայմանագրերը սովորաբար հղում են պարունակում կողմերից մեկի կամ որևէ երրորդ պետության ազգային իրավունքին: Որպես կանոն, կիրառման ենթակա իրավունքն ընտրելիս կողմերը նախապատվությունը տալիս են երրորդ պետության ազգային իրավունքին: Նման ընտրությունը հնարավորություն է ընձեռնում կանխատեսելու պայմանագրի կատարման, մեկնաբանման հետ կապված հնարավոր հարցերի առաջացումը: Որևէ պետության ազգային իրավունքին նախապատվություն տալը նախևառաջ պայմանավորված է պայմանագրի հետ վերջինիս կապ-

<sup>1</sup>St' u Ði çáí áádä Ì .Ä. "Í ðáèðèèä Ì áæáóí áðí áí í áí Èí ì áð-áñèí áí Àðáèððáæí í áí Ñóáà", 1993, էջ235:

վածության աստիճանով: Օրինակ՝ ռուսական և հայկական ընկերությունների միջև կնքված առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կողմերը կարող են կիրառել ՌԴ իրավունքը, եթե ՌԴ-ն պայմանագրի կատարման, ինչպես նաև վաճառողի գտնվելու վայրն է հանդիսանում: Շինարարական կապալի պայմանագրի դեպքում կողմերը պայմանագրի նկատմամբ կարող են կիրառել այն պետության ազգային իրավունքը, որի տարածքում պետք է կառուցվի շինությունը: Բացի այդ, իրավունքի ընտրության հարցում վճռորոշ է նաև վերջինիս զարգացածության և որակյալ լինելու աստիճանը, այսպես՝ շատ հաճախ կողմերն ընտրում են Անգլիայի ծովային իրավունքը, քանի որ վերջինս զարգացած է և համապարփակ իրավական կարգավորման է ենթարկում թե՛ ծովային փոխադրումները և թե՛ ծովային փոխադրումների հետ կապված այլ իրավահարաբերությունները (օրինակ՝ ապահովագրությունը): Պետք է նշել նաև, որ դաշնային պետությունների իրավունքի ընտրության դեպքում անհրաժեշտ է նշել կոնկրետ նահանգի՝ կիրառման ենթակա իրավունքը, քանի որ դաշնային պետություններում միասնական ճյուղային օրենսդրությունը բացակայում է. օրինակ՝ ԱՄՆ-ում միասնական առևտրային օրենսգիրքը, չնայած որ ԱՄՆ գրեթե բոլոր նահանգներն ընդունել են առևտրային օրենսգրքեր (բացառությամբ Լուիզիանա և Նևադա նահանգների), այնուամենայնիվ, նահանգների առևտրային օրենսդրությունն այս կամ այն չափով տարբերվում է միմյանցից:

Առանձնակի ուշադրությամբ է պետք կատարել կիրառման ենթակա իրավունքի ընտրությունն այն դեպքերում, երբ պայմանագրի կողմ են հանդիսանում պետությունները, պետական մարմինները կամ կազմակերպությունները: Միջազգային առևտրային պրակտիկայում ընդունված է որևէ պետության ազգային իրավունքը կիրառել միջազգային հանրային իրավունքի ընդհանուր սկզբունքների կամ Lex Mercatoria-ի հետ համադրությամբ: Տարածված է նաև երաշխիքային միջոցների կիրառումը, օրինակ՝ ռեցիպիենտ-պետության կառավարության երաշխավորությունն առ այն, որ եթե տեղի իրավունքը իր մեջ չի պարունակում նորմեր, որոնք պայմանագրի կատարումն անհնարին են դարձնում, խոչընդոտում են պայմա-

նագրից ծագող վեճը արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելուն: Գործի քննության ընթացքում օտարերկրյա իրավունքի կիրառումն իրականացվում է արբիտրաժային դատարանի կողմից՝ պաշտոնական կամ դոկտրինալ մեկնաբանություններին, դատական և արբիտրաժային պրակտիկայում ձևավորված կանոններին համապատասխան: Այս կապակցությամբ արբիտրները կարող են հաշվի առնել համապատասխան պետության ազգային իրավունքի վերաբերյալ փորձագետների ուսումնասիրությունները, կարծիքները, ինչպես նաև հետազոտել իրավունքի մասին ամբողջական պատկերացում ապահովող այլ փաստաթղթեր: Չարկ է նշել, որ ՌԴ-ում գործում է սկզբունք, որի համաձայն օտարերկրյա իրավունքի նորմերի մեկնաբանման անհնարինության դեպքում կիրառվում է ՌԴ իրավունքը (Չիմունքների 157-րդ հոդվ. 2-րդ կետ): Ընդ որում, կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ կողմերի ընտրությունը պարտադիր կերպով հաշվի է առնվում արբիտրաժային դատարանի կողմից: Բացառություն են կազմում հանրային կարգին հակասելու դեպքերը (Նյու Յորքի համաձայնագրի 5-րդ հոդվ., ՌԴ - հիմունքների 158-րդ հոդվ. և այլն):

Արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում հազվադեպ են հանդիպում պայմանագրի նկատմամբ միջազգային հանրային իրավունքի կիրառման դեպքեր: Ընդ որում, մեծամասամբ միջազգային հանրային իրավունքը կիրառվում է այն պայմանագրերի նկատմամբ, որոնցում կողմ են հանդիսանում պետությունները կամ պետական մարմիններն ու կազմակերպությունները՝ մի խոսքով, երբ խոսքը գնում է պետությունների մասնակցությամբ պայմանագրերին: Որպես օրինակ կարող ենք բերել Անգլիայի և Ֆրանսիայի միջև «Լա Մանշի թունելի կառուցման» պայմանագիրը, որից բխող վեճերը պետք է լուծվեն պայմանագրին և միջազգային հանրային իրավունքի սկզբունքներին համապատասխան: Բայց, միևնույն ժամանակ անպատակահարմար է արտաքին առևտրատնտեսական գործարքները կարգավորել միջազգային հանրային իրավունքով, քանի որ վերջինս չի պարունակում միջազգային մասնավոր ոլորտում պայմանագրային իրավահարաբերությունների համապարփակ կարգավորման համար անհրաժեշտ նոր-

մեր: Իսկ այս հանգամանքը ոչ միայն չի հեշտացնի, այլև անհարկի կոթվարացնի այդպիսի պայմանագրերից բխող վեճերի լուծումը:

Կողմերը կարող են պայմանագրի նկատմամբ կիրառել նաև առանձին միջազգային համաձայնագրեր: Ընդ որում, միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում ամենից հաճախ կիրառվում են «Միջազգային առուվաճառքի մասին» 1980թ. Վիեննայի, «Միջազգային ֆինանսական լիզինգի մասին» 1988թ. Օտտավայի, «Բեռների միջազգային փոխադրման մասին» 1978թ. Մոսկվայի համաձայնագրերը և այլն: Հարկ է նշել, որ միջազգային համաձայնագրերը կարող են կիրառվել ինչպես այն պարագայում, երբ պայմանագրի կողմերը համաձայնագրի մասնակից պետության քաղաքացիներ են (ռեզիդենտներ), այնպես էլ այն դեպքերում, երբ միայն մեկ կողմն է մասնակից պետության քաղաքացի: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում գրեթե չեն հանդիպում դեպքեր, երբ համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություններից սերվող կողմերը պայմանագրի նկատմամբ կիրառեն այդպիսի համաձայնագիր: Չնայած՝ տեսականորեն այդպիսի դեպքերը չեն բացառվում: Եթե առաջին դեպքում կողմերը կարող են արբիտրաժային համաձայնությունում այդ մասին առանձին նշում չկատարել, ապա երկրորդ և երրորդ դեպքերում նման նշումը պարտադիր է:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրությունը միջազգային իրավունքի աղբյուրների շարքում առանձնացնում է «Քաղաքակիրթ ազգերի (պետությունների) կողմից ճանաչված իրավունքի հիմնարար սկզբունքները»: Այս օրինակին հետևում են բազմաթիվ արբիտրաժային դատարաններ, օրինակ՝ ԼՄԱԴ: Պայմանագրային իրավահարաբերությունների կարգավորման նպատակով իրավունքի համընդհանուր սկզբունքների կիրառության դեպքերը տարածված չեն: Որպես կանոն վերջիններս կիրառվում են որևէ պետության ազգային իրավունքի հետ համադրությամբ (1965 թվականի Վաշինգտոնի համաձայնագրի 42-րդ հոդվ. 1-ին կետ): Կարելի է ասել, որ իրավունքի համընդհանուր սկզբունքների վրա հղումը, որևէ պետության ազգային իրավունքի համադրությամբ կիրառելը հանդիսանում է կայունացնող և երաշխավորող գործոն: Այսպես, օտարերկրյա ներդրումների պաշտպանության համար այն կարող է ա-

վելի բարենպաստ գտնվել, օրինակ՝ օտարերկրյա ներդրումներն ազգայնացնելն արգելել: Խոսելով միջազգային արբիտրաժային պրակտիկայում իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառության մասին, անհրաժեշտ է խոսել Մասնավոր իրավունքի միասնացման (ունիֆիկացման) միջազգային ինստիտուտի (UNIDROIT) կողմից 1994 թվականին մշակված միջազգային առևտրային պայմանագրերի կնքման սկզբունքների ու կանոնների մասին: Վերջիններս կիրառվում են միայն այն դեպքում, երբ կողմերն ուղղակիորեն հղում են կատարել դրանց վրա: Այսպես՝ երբ կողմերը պայմանագրում նշել են իրավունքի համընդհանուր սկզբունքի կիրառման մասին, հղում են կատարել Lex Mercatoria-ի վրա, ինչպես նաև՝ երբ կիրառման ենթակա իրավունքի նորմը որոշելը անհնար է և միասնացված (ունիֆիկացված) միջազգային իրավական փաստաթղթերի մեկնաբանման անհրաժեշտություն է առաջանում, միջազգային իրավունքի սկզբունքների կիրառումը դառնում է անհրաժեշտ: Ընդ որում, սկզբունքները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ որևէ պետության ազգային իրավունքի հետ համակցված: Վերը նշված մոտեցման օրենսդրական հիմնավորում է հանդիսանում, օրինակ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության անուսից կնքված միջազգային համաձայնագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են հանդիսանում: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ներպետական օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Ինչպես գիտենք, իրավունքի համընդհանուր սկզբունքներն իրենց ամրագրումն են ստանում միջազգային համաձայնագրերում ու պայմանագրերում: Այս առումով հատկանշական է ՌԴ սահմանադրությունը, որի 7-րդ հոդվածում հստակ ձևակերպված է, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները ՌԴ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են հանդիսանում:

Իրավաբանական գրականության մեջ արբիտրաժում իրավունքի համընդհանուր սկզբունքների կիրառման շուրջ ձևավոր-

ված միասնական կարծիք գոյություն չունի: Այս հարցին տարբեր հեղինակներ տարբեր կերպ են մոտենում: Մի խումբ հեղինակներ գտնում են, որ վերջիններս կոչված են որոշակիացնել և կոնկրետացնել ազգային իրավունքը, ըստ որում՝ դրանք գործում են նաև այն դեպքում, երբ ազգային իրավունքի այս կամ այն նորմը հակասում է վերջիններիս: Հեղինակների մյուս խումբը գտնում է, որ իրավունքի համընդհանուր սկզբունքները կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ ազգային իրավունքն ունի բացեր և չի կարող համապարփակ իրավական կարգավորման ենթարկել համապատասխան իրավահարաբերությունները, ուստի դրանք կրում են օժանդակող բնույթ: Հարկ է նշել սակայն, որ լինելով միայն սկզբունքների, այլ ոչ թե իրավունքի զարգացած համակարգ, իրավունքի համընդհանուր սկզբունքները ոչ միշտ է, որ բավարար են միջազգային բարդ առևտրատնտեսական վեճերի լուծման համար:

Կողմերը կարող են ուղղակիորեն հղում կատարել նաև Միջազգային առևտրային իրավունքի վրա: Lex Mercatoria-ն կամ միջազգային առևտրային իրավունքն առաջացել է առևտրային սովորույթների և առևտրային իրավունքի նորմերի համընդհանրացման արդյունքում: Իրավունք, որը պետք է օգներ վերացնելու առանձին երկրներում ձեռնարկատիրական (առևտրային) գործունեության կարգավորման տարբերությունները, վերացներ միջազգային առևտրի զարգացման խոչընդոտները, հեշտացներ միջազգային առևտրատնտեսական հարաբերություններից ծագող վեճերի լուծումը: Խոսելով Lex Mercatoria-ի մասին, տարբեր հեղինակներ հաճախ տարբեր եզրույթներ են օգտագործում. «Միջազգային պայմանագրային իրավունք» (Транснациональное торговое право), «Lex Mercatoria» կամ «Միջազգային առևտրային իրավունք»: Սակայն, բոլոր դեպքերում ի նկատի է առնվում արտաքին առևտրային գործարքները կարգավորող համընդհանուր, ամբողջական, վերազգային իրավական նորմերի համակարգը: Իրավաբանական գրականության մեջ ընդունված է «Lex Mercatoria»-ն բնորոշել որպես սովորույթներից, միջազգային համաձայնագրերից, նախադեպից և բազմաթիվ օրենքներից (ներպետական) բաղկացած իրավունքի աղբյուր: Ժամանակակից Lex Mercatoria-ի կերտողներից է ֆրան-

սիացի հանրաճանաչ իրավաբան Բերտրան Գոլբմանը, որն առաջին անգամ 60-ական թթ. իր աշխատություններում օգտագործեց «Lex Mercatoria» եզրույթը: «Lex Mercatoria» դոկտրինան գլխավորապես զարգանում էր կոնտինենտալ Եվրոպայում, որտեղ վերջինիս ջատագովներից էր շվեյցարացի իրավաբան Պիեռ Լալիվը: Վերջինս միջազգային իրավունքի և միջազգային առևտրային արբիտրաժի առաջատար մասնագետներից մեկն է: Lex Mercatoria-ի հիմնարար սկզբունքների ճանաչումն ու ընդունումը շատ արդյունավետ և օգտակար էր միջազգային առևտրային արբիտրաժի զարգացման համար: Նորամուծությունն այնքան արդյունավետ էր, որ նույնիսկ իսլամական արբիտրաժի ներկայացուցիչները հայտարարում են, որ Lex Mercatoria-ն և իսլամական իրավունքը լիովին համատեղելի են: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի իրավաբաններին, ապա նրանք վերապահումով են մոտենում Lex Mercatoria-ին, գտնելով որ վերջինս ընդհանրական է, զուրկ որոշակիությունից և գործի քննության ընթացքում արբիտրներին մեծ ազատություն է ընձեռում, իսկ այս հանգամանքը կարող է պայմանագրի պայմանների կամայական մեկնաբանման տեղիք տալ: Այս դոկտրինան գլխավորապես հիմնված է ո՛չ թե գրված իրավունքի կամ դատական նախադեպի վրա, այլ իրավունքի հիմնարար սկզբունքների և սովորույթների վրա: Ավանդականորեն Lex Mercatoria-ի աղբյուր են համարվում ազգային իրավական համակարգերի մեծամասնության համար ընդհանուր իրավունքի հիմնարար սկզբունքները: Վեճի լուծման ընթացքում ծայրահեղ դեպքերում կարող են կիրառվել այնպիսի սկզբունքներ, որոնք ընդհանուր են կողմերի ազգային իրավունքի համար: Որպես կանոն, այդպիսի սկզբունքներ են հանդիսանում միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի հիմնարար դրույթները (օրինակ՝ «Միջազգային առուվաճառքի մասին» 1980թ. Վիեննայի համաձայնագրի, «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» Հռոմի 1980թ. համաձայնագրի), առևտրային սովորույթները (այդ թվում՝ Առևտրի Միջազգային Պալատի կողմից օրինակարգված) և վերջապես, միջազգային արբիտրաժային դատարանների վճիռները՝ որպես նախադեպ: Սկզբունքների թվին են

դասվում նաև UNIDROIT 1994թ. Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները, որոնք զգալիորեն համակարգեցին Lex Mercatoria սկզբունքները: Այս առումով հատկանշական է անգլիացի իրավաբան Լորդ Մայքլ Մասթիլի աշխատությունը, որը փորձել է համակարգման ենթարկել միջազգային առևտրային իրավունքի 20 հիմնարար սկզբունքները<sup>1</sup>: Մի խոսքով, արբիտրաժային կարգով վեճերի լուծման ընթացքում Lex Mercatoria-ի կիրառման հետ խնդիրներ չեն կարող առաջանալ, եթե կողմերն ուղղակիորեն արբիտրաժային համաձայնությամբ նախատեսել են վերջինիս կիրառումը:

**Երաշխավորող բնույթի միջազգային փաստաթղթեր:** Կողմերը կարող են պայմանագրում հղում կատարել տարբեր տիպային օրենքներին և երաշխավորող բնույթի այլ ակտերին, օրինակ՝ ՄԱԿ-ՄԱԻՅ-ի «Ապրանքների (աշխատանքների) և ծառայությունների ձեռք բերման մասին» 1994թ. մոդելային օրենքին: Շատ դեպքերում ռուսական ընկերությունները կնքվող պայմանագրերում օգտագործում են «Մատակարարման ընդհանուր կանոնները», որը գործում է Տնտեսական Փոխօգնության Խորհրդում: Որպեսզի պայմանագրի նկատմամբ կիրառվի երաշխավորող բնույթի փաստաթղթերից որևէ մեկը, կողմերն այդ մասին ուղղակիորեն նշում պետք է կատարեն:

**Առևտրային սովորույթներ:** Առևտրային սովորույթները միջազգային տնտեսական վեճեր լուծելիս հաճախ են օգտագործվում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, «Ապրանքների միջազգային առուվաճառքի մասին» Վիեննայի համաձայնագրի 9-րդ հոդվածը, ՄԱԿՄԱԻՅ-ի Արբիտրաժային Կանոնակարգի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, արբիտրաժային բազմաթիվ այլ կենտրոնների, այդ թվում՝ ԱՄՊ-ի, ՄԱԱԴ-ի կանոնադրությունները պահանջում են, որպեսզի արբիտրաժային դատարանը վեճը լուծի ոչ միայն կիրառման ենթակա իրավունքի հիման վրա, այլև հաշվի առնի համապատասխան ոլորտում ձևավորված առևտրային սովորույթները: Ըստ որում, առևտրային սովորույթները կարող են ազգային իրավական համակարգի բաղկացուցիչ մասը հանդիսանալ,

<sup>1</sup> St'u Lord Justice Mustill, "The New Lex Mercatoria: The first 25 years, 4 Arbitration International", 1988, 86-108 էջերը:

կամ էլ գործեն վերջինից առանձին, անկախ (օրինակ՝ INCOTERMS կանոնները): Հետևաբար հնարավոր է դրանց կիրառման երկու տարբերակ՝

1. առևտրային սովորույթները, լինելով ազգային իրավունքի բաղկացուցիչ մաս, կիրառվում են անկախ այն հանգամանքից, թե կողմերը դրա վրա հղում կատարե՞լ են, թե՞ ոչ,

2. առևտրային սովորույթները կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ կողմերը միջնորդ համաձայնությունում ուղղակիորեն հղում են կատարել դրանց վրա: Եթե առևտրային այս կամ այն սովորույթը համընդհանուր ճանաչման չի արժանացել, ապա նախառաջ անհրաժեշտ է ապացուցել վերջինիս գոյությունը, ուսումնասիրությունները և մեկնաբանությունները կատարել՝ ելնելով գործի հանգամանքներից: Բազմաթիվ առևտրային սովորույթների մեկնաբանումներ են կատարվել Առևտրի Միջազգային Պալատի կողմից (Ինկոտերմս-Առևտրային եզրույթների մեկնաբանություններ): Ներկայումս մշակվել են պայմանագրերի ստանդարտ ձևեր, որոնք լայնորեն կիրառվում են միջազգային առևտրի, ծովային փոխադրումների, միջազգային մատակարարման և այլ ոլորտներում, որոնցում հղում է կատարված առևտրային սովորույթների վրա: Վերջիվերջո այս ամենը կհանգեցնի առևտրային սովորույթների և այս ոլորտում ձևավորված կանոնների համընդհանրացման:

**Իրավունքի սկզբունքների, նորմերի և սովորույթների համակցումը:** Ազգային իրավունքը միջազգային իրավունքի նորմերի հետ համակցելու և համադրելու հնարավորությունն ուղղակիորեն ամրագրված է Վաշինգտոնի 1965թ. համաձայնագրում: Կարելի է ասել, որ այս միջոցով ազգային իրավունքը որոշակիորեն դրվում է հսկողության տակ, որն օտարերկրյա ներդրումների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է հանդիսանում: Գործնականում ազգային իրավունքն իրավունքի համընդհանուր սկզբունքների, Lex Mercatoria-ի և արդարության սկզբունքների համադրությամբ իրավունքը կիրառելը լայն տարածում է ստացել: Նույնը կարելի է ասել իրավունքի նորմերը սովորույթների հետ համադրությամբ կիրառելու մասին: Առանձնակի զուշույթյամբ է պետք մոտենալ երկու տարբեր երկրների իրավունքի նորմերի համադրմանը, քանի որ

տարբեր իրավական համակարգերը միշտ չէ, որ միևնույն հարցին նույնանման մոտեցում են ցուցաբերում: Այսպես, օրինակ՝ Լա Մանչի թունելի կառուցման գործարքը կնքելիս անգլիական և ֆրանսիական ընկերությունները փոխադարձ համաձայնությամբ որոշել էին իրենց և պատվիրատուների միջև առաջացող հարաբերությունները կարգավորել ինչպես ֆրանսիական, այնպես էլ անգլիական իրավունքի համար ընդհանուր սկզբունքների հիման վրա: Իսկ ընդհանուր սկզբունքների բացակայության դեպքում՝ միջազգային առևտրային իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա, որոնք լայնորեն կիրառվում են միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում<sup>1</sup>: Ընդ որում, Անգլիան և Ֆրանսիան տարբեր իրավական համակարգի երկրներ են (Անգլիան՝ ընդհանուր, Ֆրանսիան՝ մայրցամաքային), երկուսն էլ ունեն զարգացած առևտրային իրավունք, բայց այնուամենայնիվ, շատ հարցերում նրանց մոտեցումներն առանձնանում և տարբերվում են միմյանցից: Չնայած, որ կողմերի նման ընտրությունը հանդիսանում է փոխզիջման արդյունք, բայց այն կարող է նաև զանազան բարդությունների պատճառ հանդիսանալ:

**Ընկերական միջնորդներ և վեճի լուծում ex aequo et bono:** Ընկերական միջնորդների միջոցով (*amiable compositeurs*) և *ex aequo et bono* վեճերի լուծման անհրաժեշտությունը սովորաբար առաջանում է այն դեպքերում, երբ իրադրության փոփոխման հետևանքով պայմանագիրը նույն պայմաններով կատարելը դառնում է անհնարին կամ վերջինիս կատարումը կողմերից մեկի համար կարող է ծանր հետևանքներ ունենալ, իսկ ծագած վեճը իրավունքի նորմերի խստագույն պահպանմամբ լուծելն անարդար է թվում: Այսպիսի պայմանների մեք հիմնականում կարող ենք հանդիպել երկարաժամկետ պայմանագրերում, որտեղ կողմերն արբիտրաժային դատարանին հնարավորություն են ընձեռում վեճը լուծելիս հաշվի առնել նաև նոր երևան եկած կամ փոփոխված հանգամանքները: Տարբեր երկրների օրենսդրությունները տարբեր կերպ են մոտենում *ex aequo et bono* լուծելու խնդրին: Մի խումբ երկրներ ընդհանրապես

<sup>1</sup> Տե՛ս Alan Redfern, Martin Hunter, *Law and Practice of International Commercial Arbitration*, 1999, էջ108:

բացառում են այն, երկրների մյուս խումբը վերջինիս կիրառումը թույլատրում է միայն այն դեպքում, երբ առկա է կողմերի համաձայնությունը, իսկ վեճն *ex aequo et bono* լուծելու մասին միջնորդների որոշումը պարտադիր է կողմերի համար: Երրորդ խումբ երկրներում միջնորդների՝ նման որոշումներ ընդունելու իրավասությունը սահմանափակված է:

Կարելի է ասել, որ մեծամասամբ արբիտրաժային կանոնակարգերն ու օրենքներն արբիտրաժային դատարանին թույլատրում են վեճերը լուծել «իրենց խղճին և արդարացիության սկզբունքներին համապատասխան և հանդես գալ որպես ընկերական միջնորդներ, եթե կողմերն ուղղակիորեն նախատեսել են դրա հնարավորությունը»: «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՄԱԿ-ՄԱԻՅ-ի նմուշային օրենքում ամրագրված է միջազգային արբիտրաժային պրակտիկայում ձևավորված մի կանոն, համաձայն որի արբիտրաժային դատարանը պարտավոր է վեճը լուծել իրավունքի նորմերի հիման վրա, եթե կողմերը արբիտրաժային համաձայնությամբ չեն նախատեսել ծագած վեճը *ex aequo et bono* կարգով լուծելու հնարավորություն: ՀՀ օրենսդրությամբ վեճն *ex aequo et bono* լուծելու և որպես «ընկեր-միջնորդ» որոշում կայացնելու հնարավորություն նախատեսված է: Հարկ է նշել, որ բառացիորեն կրկնելով «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՄԱԿ-ՄԱԻՅ-ի մոդելային օրենքի տեքստը, ՌԴ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է արբիտրաժային դատարանի կողմից առանց մոտիվի մատնանշման վճիռ կայացնելու հնարավորությունը, իսկ 28-րդ հոդվածի 3-րդ կետը՝ առանց նյութական իրավունքի նորմերի վճիռը հիմնավորելու հնարավորություն, եթե առկա է կողմերի համաձայնությունը):

«Արդարության սկզբունքների» հիման վրա կայացված վճիռը ոչ մի ընդհանուր բան չունի Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում տարածված արդարության իրավունքի հետ, քանի որ, արդարության սկզբունքների հիման վրա կայացված վճիռն իրավունքի նորմերով չի հիմնավորվում:

Ինչ վերաբերվում է ռուսական և հայկական ընկերությունների մասնակցությամբ այն պայմանագրերին, որոնցում կողմերի միջև



հնարավոր վեճն *ex aequo et bono* կամ «ընկերական միջնորդների» միջոցով լուծելու մասին դրույթ է պարունակվում, կարող են հիմնավորվել «Արտաքին առևտրային արբիտրաժի մասին» 1961թ. Եվրոպական համաձայնագրով, որի 7-րդ և 8-րդ հոդվածներով այդպիսի հնարավորություն է նախատեսված, իսկ ինչպես հայտնի է՝ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը միացել են այդ համաձայնագրին:

Երբ կողմերը պայմանագրում վեճն *ex aequo et bono* լուծելու մասին դրույթ են նախատեսում, ապա նախևառաջ անհրաժեշտ է հանգամանակից ուսումնասիրել արբիտրաժի վայրի և միջնորդ վճռի հնարավոր կատարման վայրի օրենսդրությունը:

**Կոլլիզիոն նորմեր:** Քանի որ միևնույն պայմանագիրը կարող է կարգավորվել միաժամանակ մի քանի երկրների իրավունքով (օրինակ՝ պետության, որտեղ կնքվել է այն, պետության, որի տարածքում պետք է կատարվի պայմանագիրը), անհրաժեշտ է որոշել, թե որ երկրի իրավունքին է տրվում նախապատվությունը: Կոլլիզիոն նորմերն էլ հենց կոչված են լուծել իրավունքի կիրառության հարցը, և, կիրառման ենթակա իրավունքի մասին կողմերի համաձայնության բացակայության դեպքում, պատասխանել այն հարցին, թե կոնկրետ որ պետության իրավունքով պետք է կարգավորվի այն: Ընդ որում, յուրաքանչյուր պետություն ունի կոլլիզիոն նորմերի իր համակարգը<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետությունում դրանք պարունակվում են ՔԴՕ-ում և ՔՕ-ում, ՌԴ-ում՝ Քաղաքացիական օրենսդրության հիմունքներում (7-րդ գլուխ): Որպես կանոն, կիրառման ենթակա իրավունքը որոշվում է այն պետության կոլլիզիոն նորմերով, որտեղ անց է կացվելու արբիտրաժային վարույթը: Միջազգային առևտրային արբիտրաժի դեպքում կիրառման ենթակա իրավունքի հարցը որոշելիս պետք է հաշվի առնվեն պայմանագրի կնքման, պայմանագրի կնքմանը նախորդող բանակցությունների անցկացման, գործարքի կատարման, պայմանագրի առարկայի գտնվելու վայրի օրենսդրության բոլոր մանրամասները: Այս ամենը արբիտրաժային դատարանին հնարավորություն կտա որոշելու, թե գոր-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Հայկյանց, Միջազգային մասնավոր իրավունք: Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 40-49 էջերը:

ծարքը առավել սերտ ո՞ր պետության իրավունքի հետ է կապված: Այդպիսին սովորաբար համարվում է.

- առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ վաճառողի երկրի իրավունքը,
- գույքի վարձակալության պայմանագրում՝ վարձատուի երկրի իրավունքը,
- շինարարական կապալի (կապիտալ շինարարություն) պայմանագրի դեպքում՝ այն պետության իրավունքը, որտեղ պետք է իրականացվի շինարարությունը:

Պետք է հիշել, որ վեճերն անմիջականորեն կոլլիզիոն նորմերի հիման վրա չեն լուծվում: Կոլլիզիոն նորմերով որոշվում է միայն կիրառման ենթակա իրավունքը: Դրանց կիրառումը հանդիսանում է կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրության միջանկյալ փուլ: Եվ որպեսզի բացառվի կոլլիզիոն նորմերի կիրառման ավելորդ փուլը (որը հաճախ բարդացնում է արբիտրաժային դատարարությունը), կողմերը պետք է նախապես արբիտրաժային համաձայնությամբ կատարեն կիրառման ենթակա նյութական իրավունքի ընտրություն:

Արբիտրաժային պրակտիկայում օգտագործվում է կիրառման ենթակա իրավունքի ընտրության երկու տարբերակ: Առաջին դեպքում կողմերն այն կարող են ուղղակիորեն նախատեսել պայմանագրում: Իսկ այն դեպքում, երբ կիրառման ենթակա իրավունքի ընտրության մասին կողմերի համաձայնությունը բացակայում է, հարցի լուծումը վերջնական թողնվում է արբիտրաժային դատարանի հայեցողությանը: Ընդ որում, արբիտրաժային դատարանը նախևառաջ պետք է հանգամանակից ուսումնասիրի արբիտրաժային համաձայնությունը՝ կիրառման ենթակա իրավունքի թաքնված ընտրությունը (այսպես կոչված, իրավունքի՝ թաքնված կամ ենթադրվող ընտրություն) բացահայտելու նպատակով: Իսկ եթե կողմերի համաձայնությունում այդպիսին բացակայում է, ապա հարցի վերջնական լուծումը թողնվում է արբիտրաժային դատարանի հայեցողությանը:

Կողմերին կիրառման ենթակա իրավունքի ընտրության հնարավորություն են ընձեռում ինչպես բազմաթիվ միջազգային համա-

ծայնագրեր, այնպես էլ վերջինս իր ամրագրումն է ստացել ներպետական օրենսդրությունում («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված): ՌԴ-ում. օրինակ՝ քաղ.օր. հիմունքների 166-րդ հոդվածը սահմանում է, որ. «Արտաքին տնտեսական գործարքներ կնքելիս կողմերի իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանվել գործարքի կնքման ժամանակ կողմերի ընտրած պետության իրավունքին, կամ էլ գործարքի կնքմանը հաջորդող արբիտրաժային համաձայնությանը համապատասխան»: Ընդ որում, կիրառման ենթակա իրավունքն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեք հանգամանք՝

- ընտրված պետության իրավունքը պետք է զարգացած և կատարյալ լինի (գոնե այն հարցերի մասով, որոնք կարող են ծագել պայմանագրի կատարման կապակցությամբ),
- ցանկալի է բացառել իրավունքում պարունակվող այն կոլլիզիոն նորմերի կիրառումը, որոնք ուղղակիորեն վերաբերվում են նյութական իրավունքի ընտրությանը,
- անհրաժեշտ է համոզվել, որ ընտրված պետության իրավունքը հնարավոր է համարում պայմանագրից բխող վեճերը լուծել արբիտրաժային կարգով:

Ձարգացած արբիտրաժային օրենսդրություն ունեցող երկրներում ձևավորված իրավունքի ընտրության դասական դոկտրինան պարտադիր է համարում պայմանագրի (արբիտրաժային վերապահման) և ընտրված իրավական համակարգի միջև որոշակի կապի առկայությունը: Սակայն միջազգային արբիտրաժային պրակտիկան, ինչպես նաև մի շարք միջազգային համաձայնագրեր (օրինակ՝ «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» 1980թ. Եվրոպական համաձայնագիրը) ներկայումս գնում են կողմերի ընտրությունն անվերապահորեն ընդունելու և հաշվի առնելու ճանապարհով: Իսկ եթե կիրառման ենթակա իրավունքի ընտրության շուրջ բանակցությունները մտնում են փակուղի, ապա նպատակահարմար է պայմանագրում իրավունքի ընդհանուր սկզբունքների կամ այդ սկզբունքներն ազգային իրավունքի, միջազգային համաձայնագրերի, Lex Mercatoria-ի, միջազգային Առևտրային Պայմանագրերի Սկզբունքների (UNIDROIT)

համադրմամբ կիրառելու կամ վեճերն *ex aequo et bono* լուծելու հնարավորություն նախատեսել:

Կողմերը կարող են պայմանագրում լրացուցիչ դրույթ նախատեսել, համաձայն որի վեճ ծագելու դեպքում այն պետք է լուծվի գործարքի կնքման պահին գործող իրավունքի հիման վրա: Սակայն նման որոշումը միշտ չէ որ հաշվի է առնվում միջնորդ դատարանի կողմից (որպես կանոն, արբիտրաժային դատարանը վեճը լուծում է միջնորդ դատավարության պահին գործող իրավունքի հիման վրա):

Եթե կողմերն ուղղակիորեն պայմանագրում կիրառման ենթակա իրավունքի մասին նշում չեն կատարել, ապա այս հարցը լուծելիս արբիտրաժային դատարանը կարող է համապատասխան եզրակացության գալ, ելնելով իրավունքի՝ այսպես կոչված ժխտական ընտրության բանաձևից (այսինքն՝ որոշել, թե կողմերը որ իրավունքը չեն ընտրել, կամ նրանք ինչ իրավունք կնախընտրեին կիրառել նյութական իրավաբանությունների կարգավորման նպատակով): Իրավաբանական պրակտիկայում ընդունված է ենթադրել, որ կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայությունը նախառաջ վկայում է իրենց ազգային իրավունքները կիրառելուց հրաժարվելու մասին: Երբեմն կողմերը միջնորդ համաձայնությամբ կարող են նախատեսել կոլլիզիոն նորմեր կիրառելու արբիտրաժային դատարանի պարտականությունը:

Երկար ժամանակ իրավունքի թաքնված ընտրությունը որոշվում էր՝ ելնելով «արբիտրաժի վայրն ընտրողն ընտրում է նաև կիրառման ենթակա իրավունքը» սկզբունքից: Այսպիսի մոտեցմամբ հատկապես առանձնանում են Անգլիայի արբիտրաժային կենտրոնները: Սակայն այս մոտեցումն արդարացված համարել չի կարելի, քանի որ հաճախ արբիտրաժի վայրն ընտրվում է, ելնելով ոչ թե իրավական, այլ ուրիշ չափանիշներով՝ աշխարհագրական դիրքի հարմարությունը, քաղաքական կայունությունը և այլն: Իսկ ասվածը չի նշանակում, որ վերոգրյալ գործոնների առկայությունը վկայում է նաև զարգացած և կատարյալ իրավական համակարգի մասին: Միջազգային համաձայնագրերով և ներպետական օրենսդրությամբ արբիտրաժային դատարանի՝ կիրառման ենթակա իրա-

վունքը որոշելու հետ կապված նրան բավականին լայն լիազորություններ են վերապահված: Այսպես, 1961թ. Եվրոպական համաձայնագրի 7-րդ հոդվածն ամրագրում է կոլլեզիոն նորմերի հիման վրա կիրառման ենթակա իրավունքն ընտրելու արբիտրաժային դատարանի ազատությունը: Ընդ որում, արբիտրաժային դատարանն ընտրությունը կատարում է այն կոլլեզիոն նորմերի հիման վրա, որոնց կիրառումն առավել նպատակահարմար և արդյունավետ է համարվում: 1965թ. Վաշինգտոնի համաձայնագրով ամրագրված է վեճի կողմ հանդիսացող պետության իրավունքը՝ միջազգային իրավունքի սկզբունքների համադրությամբ կիրառելու արբիտրաժային դատարանի իրավունքը (42-րդ հոդվ. 1-ին կետ): ՄԱԿՄԱԻԳ-ի արբիտրաժային կանոնակարգի 33-րդ հոդվածով և «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» տիպային օրենքի 28-րդ հոդվ. 2-րդ կետով արբիտրաժային դատարանին ազատություն է ընձեռվում կիրառման ենթակա իրավունքի ընտրության հարցում և սահմանվում է, որ վերջինիս ընտրությունը կատարվում է այն կոլլեզիոն նորմերի հիման վրա, որոնց կիրառումը տվյալ դեպքում նա նպատակահարմար է համարում: «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» 1993թ. ՌԴ օրենքը նույնպես հետևել է վերջիններիս օրինակին (28-րդ հոդված 2-րդ կետ): Եթե արբիտրաժային համաձայնությունը կիրառման ենթակա իրավունքի ընտրության մասին որևէ նշում չի պարունակում, ապա արբիտրաժային դատարանը կարող է այս հարցը լուծել, ելնելով հետևյալներից.

1. արբիտրաժի վայրն ընտրողը ընտրում է նաև կիրառման ենթակա իրավունքը: Ինչպես արդեն նշվել է, նման մոտեցումն իրեն չի արդարացնում և ներկայումս իրավաբանական պրակտիկայում հազվադեպ է կիրառվում,

2. կիրառել արբիտրաժի վայրի կոլլեզիոն նորմերը և կիրառման ենթակա իրավունքը որոշել վերջիններիս հիման վրա: Ներկայումս այս բանաձևը լայնորեն օգտագործվում է աշխարհի բոլոր արբիտրաժային կենտրոններում,

3. կիրառման ենթակա իրավունքը որոշել կողմերի ընտրած կոլլեզիոն նորմերի հիման վրա: Այս մոտեցումն իր ամրագրումն է ստացել ՄԱԿՄԱԻԳ-ի տիպային օրենքում և «Արբիտրաժային կանոնակարգում», և հետևաբար՝ նախատեսվել է նաև «Միջազգային

առևտրային արբիտրաժի մասին» ՌԴ օրենքում: Կիրառման ենթակա իրավունքը որոշելը կատարվում է ելնելով որևէ երկրի ազգային իրավունքի հետ վերջինիս փոխկապակցվածության աստիճանից («Միջազգային մասնավոր իրավունքի մասին» 1987թ. Շվեյցարիայի օրենք):

Մի խոսքով, արբիտրաժը սկսելու համար անհրաժեշտ բոլոր հարցերն իրենց լուծումն են գտնում նախևառաջ արբիտրաժային համաձայնությունում: Առանց արբիտրաժային համաձայնության կամ պայմանագրում արբիտրաժային վերապահում կատարելու, անհնար է կողմերի միջև ծագած կամ հնարավոր վեճն արբիտրաժի լուծմանը հանձնել: Բացի այդ, արբիտրաժային համաձայնությունից է կախված նաև արբիտրաժի հետագա ընթացքը, քանի որ հենց արբիտրաժային համաձայնությամբ է սահմանվում արբիտրաժային դատարանի կազմավորման, արբիտրների ինքնաբացարկի և նրանց հայտնված բացարկի լուծման կարգը, արբիտրաժային դատարանի իրավասությունը, արբիտրաժի վայրը, լեզուն, ընթացակարգային կանոնները, այդ թվում՝ բանավոր լսումների, ապացույցների ներկայացման կարգին, ապահովման միջոցների կիրառմանը վերաբերվող պայմանները և այլն:

Իմի բերելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ որքան մանրակրկիտ և հանգամանալից է մշակված արբիտրաժային համաձայնությունը, այնքան արագ և արդյունավետ կլուծվի ծագած վեճը և կկարգավորվեն կողմերի միջև առաջացած բոլոր տարածայնությունները: Բացի այդ, վերջինս հանդիսանում է նաև զսպիչ, կանխող գործոն, քանզի գաղտնիք չէ, որ վատ մշակված և ոչ արդյունավետ արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային պարտավորությունները խախտելու մտադրություն ունեցող կողմի համար կանխարգելող ազդեցություն չի կարող ունենալ: Որակյալ արբիտրաժային համաձայնությունների կնքմամբ կարելի է բացառել նաև արբիտրաժային վարույթը բարդացնող և երկարաձող, իսկ որոշ դեպքերում էլ՝ արբիտրաժային վճիռների կատարումը դժվարացնող խնդիրների հնարավոր առաջացումը կամ դրանք հասցնել նվազագույնի:

**ՂԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ  
ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**§1. Արբիտրաժային որոշումների հասկացությունը,  
արբիտրաժի վերջնական և միջանկյալ ակտերը**

Արբիտրաժային կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ընթացքում ծագում են բազմաթիվ հարցեր, որոնք իրենց լուծումն են ստանում արբիտրաժային դատարանի որոշումներում: Հարկ է նշել, որ արբիտրաժային որոշումներով կարող են տարբեր իրավական արժեք ներկայացնող հարցեր կարգավորվել, դրանք կարող են տարբեր իրավական հետևանքներ առաջացնել, սակայն վերջիններիս տեսական արժեքի մասին իրավաբանական գրականության մեջ նշված հանգամանքներով չի սահմանափակվում: Արբիտրաժային որոշումներում հիմնականում արտահայտվում են վարույթի ընթացքում արբիտրաժային դատարանի գործողությունները, նյութական և պրոցեսուալ իրավահարաբերությունների կապակցությամբ վերջինիս դիրքորոշումը և հրամայական եզրահանգումները:

Առևտրային արբիտրաժի տեսությունում արբիտրաժային որոշումները հաճախ բնորոշում են որպես արբիտրաժի կազմի կայացրած ակտեր, որոնք ուղղված են գործի քննության ընթացքում ծագող բոլոր կամ որոշակի հարցերի լուծմանը<sup>1</sup>: Սակայն արբիտրաժային որոշումների բովանդակությունն ու էությունը նշված ձևակերպմամբ չի կարող սպառվել: Արբիտրաժային որոշումների հասկացությունն արբիտրաժային հարաբերություններ կարգավորող միջազգային համաձայնագրերով և ազգային իրավական ակտերով, այդ թվում՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով չի ձևակերպվել: Նշված ակտերով առավելապես կարգավորվում են որոշումների կայացման ընթացքում առաջացող հարաբերությունները:

<sup>1</sup> Տե՛ս Alan Redfern, Martin Hunter, Law and Practice of International Commercial Arbitration, 1999թ., 364 էջ:

Նախևառաջ, անհրաժեշտ է տարբերակել արբիտրաժային դատարանի վերջնական և միջանկյալ ակտերը: Այս առումով որոշակի ընդհանրություններ կան արբիտրաժի և քաղաքացիական դատավարությունում վերոնշյալ ինստիտուտների միջև: Ընդ որում, արբիտրաժի վերջնական ակտը վճիռն է, որով ըստ էության լուծվում է վեճը: Սակայն, գործնականում հնարավոր է, որ արբիտրաժային վարույթում վերջնական լինի նաև վեճն ըստ էության չլուծող ակտը՝ որոշումը, որն ուղղված է արբիտրաժային իրավահարաբերությունների դադարեցմանը: Խոսքը գնում է, օրինակ, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված դեպքերում արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշում կայացնելու մասին: Հետևաբար, առևտրային արբիտրաժում անհրաժեշտ է առանձնացնել արբիտրաժային դատարանի վերջնական և միջանկյալ ակտերը, ինչպես նաև գործն ըստ էության լուծող և չլուծող ակտերը: Արբիտրաժային վճիռը վեճն ըստ էության լուծող վերջնական ակտ է, իսկ որոշումը՝ արբիտրաժային դատարանի կողմից կայացված՝ գործն ըստ էության չլուծող ակտ, որը կարող է ինչպես վերջնական բնույթ ունենալ, այնպես էլ միջանկյալ (օրինակ՝ օրենքի 20 և 22-րդ հոդվածներով սահմանված կարգով արբիտրաժի վայրի և կիրառվող լեզվի (լեզուների) վերաբերյալ արբիտրաժային դատարանի որոշումները): Այս առումով բավական հակասական դրույթ է պարունակում «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, որտեղ սահմանվել է, որ արբիտրաժային դատարանի կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումները կարող են ամրագրվել միջանկյալ վճիռի ձևով (2-րդ - կետ):

Ամեն դեպքում, արբիտրաժային դատարանի վերջնական ակտերը վեճն ըստ էության լուծող, ինչպես նաև վեճը չլուծող, սակայն վարույթի ընթացքում փոփոխման ոչ ենթակա կամ արբիտրաժային իրավահարաբերությունների դադարման համար հիմք հանդիսացող որոշումներն են, որոնցում արտահայտված են արբիտրի (արբիտրների) եզրահանգումներն ու հրամայական դատողությունները գործի քննության ընթացքում բացահայտված փաստերի, իրավահարաբերությունների և վարույթի հետագա ընթացքի վրա ազդող

այլ հանգամանքների վերաբերյալ: Արբիտրաժային դատարանի միջանկյալ ակտերն այն որոշումներն են, որոնք կրուն են նախապատրաստական կամ նախնական բնույթ, ուղղված են արբիտրաժային կարգով գործի քննության ընթացքում ծագող մասնավոր հարցերի լուծմանը և վարույթի ցանկացած փուլում կարող են փոփոխվել կամ վերացվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ արբիտրաժային դատարանի կողմից:

Հարկ է նշել, որ լայն առումով արբիտրաժային դատարանի բոլոր որոշումներն էլ վերջնական են, քանի որ ենթակա չեն բողոքարկման և առևտրային արբիտրաժի պարագայում չկա պետական դատական համակարգին բնորոշ այն աստիճանակարգությունը, որը բողոքարկման իրավունքի իրացման հիմք կարող էր հանդիսանալ<sup>1</sup>: Առևտրային արբիտրաժում տարանջատման հիմնական չափորոշիչը գործի քննության ընթացքում այն հարցերի բնույթն է կամ վերջնական նպատակը, որոնց լուծմանը կամ որին հասնելուն ուղղված է արբիտրաժային դատարանի համապատասխան ակտը: Հետևաբար, առևտրային արբիտրաժում և ՀՀ քաղաքացիական դատավարությունում միջանկյալ և վերջնական ակտերը չպետք է նույնացնել:

Արբիտրաժային վճիռների և որոշումների առարկան՝ վեճն ըստ էության կամ գործի քննության ընթացքում ծագող մասնավոր հարցերի լուծումը, տարբեր է, հետևաբար, դրանց տարբեր իրավական արժեքավորում պետք է տալ: Սակայն, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն ընդհանրապես այս հարցն անուշադրության է մատնել, մինչդեռ, դրանք տարբերվում են թե՛ կայացման կարգով, թե՛ հնարավոր իրավական հետևանքների առաջացման առումով: Հայրենական օրենքում բավական մակերեսային և թերի կարգավորվել են վճռի կայացմանը, ձևին և բովանդակությանը վերաբերող հարցերը, իսկ որոշումների մասին ընդհանրապես խոսք չկա: Օրենքի բովանդակությունից պարզ չէ առանձին ակտի ձևով կամ բանավոր որոշումների կայացման կարգը: Մինչդեռ, արբիտրաժային

<sup>1</sup> Արբիտրաժային որոշումները՝ այն էլ միայն արբիտրաժային դատարանի վճիռները, կարող են վիճարկվել դատական կարգով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

պրակտիկայում դրանք ունեն բավական կարևոր նշանակություն: Առևտրային արբիտրաժում որոշումների կայացման կարգն առավելապես պայմանավորված է կողմերի կամահայտնությամբ, այսինքն այն հանգամանքից՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ նախատեսված է վարույթն իրականացնել բանավոր լուծման, թե միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա, կամ նիստը արձանագրվելու է, թե ոչ: Բոլոր դեպքերում ցանկալի է, որ արբիտրաժային դատարանի որոշումները կայացվեն գրավոր, առանձին ակտի ձևով: Սակայն, արբիտրաժային վարույթում կան այնպիսի ընթացիկ հարցեր, որոնք անմիջական լուծում են պահանջում (օրինակ՝ ապացույցների հետազոտման հաջորդականությունը սահմանելը) և կարող են առանձին ակտի ձևով չկայացվել: Այսինքն, որոշման կայացման կարգը նախևառաջ պայմանավորված է առարկայով և իրավական հետևանքների առաջացման հնարավորությամբ: Դրա համար էլ արբիտրաժում պետք է հնարավոր համարել ինչպես առանձին ակտի ձևով՝ գրավոր, այնպես էլ բանավոր որոշումների կայացումը: Իսկ հայրենական օրենքն այս հարցն անուշադրության է մատնել: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով սահմանել, որ *արբիտրաժային դատարանը կարող է կայացնել ինչպես առանձին ակտի ձևով՝ գրավոր, այնպես էլ բանավոր որոշումներ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ*: Ամեն դեպքում, առանձին ակտի ձևով պետք է կայացվեն արբիտրաժային դատարանի կողմից՝ իր իրավասության, արբիտրաժի վայրի և լեզվի (լեզուների) ընտրության, արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումները: Առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

- արբիտրաժային դատարանի անվանումը, կազմը, որոշումը կայացնելու ամսաթիվը, վեճի առարկան,
- գործին մասնակցող անձանց անունը կամ անվանումը,
- հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում,
- շարժառիթները, որոնցով արբիտրաժային դատարանը հանգել է հետևությունների,
- եզրահանգումները քննարկվող հարցով:

Վարույթի ընթացքում լուծում պահանջող հարցերով այն որոշումները, որոնք առանձին ակտի ձևով չեն ձևակերպվում, կայացվում են բանավոր, որոնք ներառվում են արձանագրության մեջ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

*Ի տարբերություն որոշման՝ արբիտրաժային վճիռը վեճն ըստ էության լուծող ակտ է: Այն ուղղված է վիճելի իրավահարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը և հաստատում է որոշակի խախտված կամ վիճարկվող իրավունքների, իրավահարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը, կարգավորում է կողմերի միջև առկա հարաբերությունները՝ դրանց մասնակիցների իրավունքների և պարտականությունների իրականացումն ապահովելով: Արբիտրաժային վճիռն իրավակիրառ գործունեության արդյունք է, քանի որ վճռի հիմքում ընկած է կողմերի ընտրած կիրառման ենթակա իրավունքը կամ էլ արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono), ինչպես նաև որպես հաշտարար միջնորդ (amiable compositeor) վեճը լուծելու լիազորությունը: Հետևաբար, արբիտրաժային վճռով իրացվում են նաև իրավունքի նորմերն ու համընդհանուր սկզբունքները:*

Ելնելով տարբեր իրավական ակտերում առկա արբիտրաժային վճիռների ձևակերպումներից և դրանց հիմքում ընկած մոտեցումների տարբերություններից՝ արբիտրաժային իրավունքի գիտությունում փորձ է կատարվել այս ակտերը դասակարգման ենթարկել: Ընդ որում, թե՛ օրենսդրական մակարդակով, թե՛ առևտրային արբիտրաժի տեսությունում արբիտրաժային դատարանի վճիռների սահմանման և դրանց առանձին տեսակների իրավական բնութագրման վերաբերյալ միասնական կարծիք դեռևս չի ձևավորվել: Այսպես, ՄԱԿՄԱԻՉ-ի արբիտրաժային կանոնակարգով արբիտրաժային դատարանին վերջնական (**final award**) որոշումներից (վճիռներից) բացի, հնարավորություն է ընձեռվել ժամանակավոր (**interim**), միջանկյալ (**interlocutory**) և մասնակի (**partial**) որոշումներ (վճիռներ) կայացնել (32 հոդվ. 1-ին կետ): Սակայն կանոնակարգով չի սահմանվում վերոնշյալ որոշումների հասկացությունը և իրավական ռեժիմների տարբերությունը: Նման մոտեցումը պայմանավոր-

ված է ՄԱԿՄԱԻՉ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» տիպային օրենքի մշակման փուլում արբիտրաժային որոշումների (վճիռների) հասկացության սահմանման առաջարկով, որի համաձայն՝ արբիտրաժային վճիռներն արբիտրաժային դատարանի այն որոշումներն էին, որոնք լուծում են արբիտրաժի ենթակայությանը վերապահված բոլոր հարցերը՝ այդ թվում վեճն ըստ էության լուծող վերջնական ակտերը, կամ արբիտրաժային դատարանի իրավասությանը վերաբերող ակտերը, ինչպես նաև արբիտրաժային վարույթի ընթացակարգային հարցերը լուծող ակտերը՝ պայմանով, որ արբիտրաժային դատարանն այդ ակտերը որակի որպես վճիռներ (այսինքն, կայացնի վճռի ձևով): Սակայն նման ձևակերպումը տարակարծությունների և վեճերի տեղիք տվեց, քանի որ հեղինակների մի մասը գտնում էր, որ արբիտրաժային դատարանն իր իրավասության կամ վարույթի ընթացակարգային հարցերի վերաբերյալ վճիռ չի կարող կայացնել: Այդ հարցերը հնարավոր է կարգավորել միայն միջանկյալ ակտերով, որոնք վճռի ձևով չեն կայացվում: Արդյունքում՝ տիպային օրենքի նախագծի մշակողներն ընդհանրապես հրաժարվեցին արբիտրաժային որոշումների (վճիռների) սահմանման իրավական ձևակերպումից<sup>1</sup>:

Արբիտրաժային որոշումների (վճիռների) հասկացության սահմանման և դասակարգման հարցերը խնդրահարույց են նաև միջազգային համաձայնագրերում: Այս հարցին որոշակիորեն անդրադարձել է 1958թ. Նյու Յորքի կոնվենցիան, որի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արբիտրաժային որոշումները ոչ միայն կոնկրետ վեճը լուծելու համար նշանակված արբիտրների, այլև արբիտրաժային հաստատության մշտական մարմինների կողմից կայացված ակտերն են: Հարկ է նշել, որ այս մոտեցումը մշակվել է 50-ական թվականներին և իրավագիտության զարգացման ժամանակակից մոտեցումներին չի համապատասխանում: Ձևակերպումից պարզ չէ, թե որոնք են վեճն ըստ էության լուծող և չլուծող ակտերը, որոնք են արբիտրաժային դատարանի վերջնական կամ միջանկյալ ակտերը, դրանց միջև ինչ տարբերություններ կան՝ հնարավոր ի-

<sup>1</sup> Տե՛ս Howard M. Josef F. Neuhaus E. Model Law on International Commercial Arbitration. Legislative History & Commentary, Kluwer, 1986:

րավական հետևանքների առաջացման, կայացման կարգի և այլ առումներով:

Հետևում է, որ արբիտրաժային որոշումների սահմանման և դասակարգման շուրջ առևտրային արբիտրաժի միջազգային պրակտիկայում միասնական մոտեցում չի ձևավորվել, ավելին՝ առանձին պետությունների ազգային իրավունքներում եզրույթաբանական տարբերություններն էլ ավելի են դժվարացնում ընդհանուր հայեցակարգի մշակումը:

Արտասահմանյան արբիտրաժային պրակտիկայում «վերջնական արբիտրաժային որոշում» կամ «արբիտրաժի վերջնական ակտ» (sentence definitive, sentence final, final award) եզրույթները ևս օգտագործվում են իմաստային տարբեր առումներով: Հաճախ, արբիտրաժի վերջնական որոշումը որակվում է որպես արբիտրաժային դատարանի քննությանը վերապահված բոլոր պահանջները լուծող ակտ: Նման մեկնաբանության պայմաններում առանձնացնում են նաև մասնակի (partielle) որոշումները, որոնցով լուծվում են պահանջների մի մասը: Սակայն, այս պարագայում արբիտրաժային վարույթը չի ավարտվում և արբիտրները շարունակում են գործի քննությունը:

Մեկ այլ դեպքում արբիտրաժի վերջնական որոշումները ձեռք են բերում իմաստային այլ նշանակություն, մասնավորապես, երբ դրանք բնորոշվում են որպես արբիտրաժային դատարանի վեճն ըստ էության կամ մասնակի լուծող ակտեր, որոնք ուղղված են արբիտրաժային իրավահարաբերությունների դադարեցմանը կամ արբիտրաժի ավարտին: Նման պարագայում պետք է առանձնացնել միջանկյալ (interlocutory) ակտերը կամ արբիտրաժի ընթացակարգային հարցեր լուծող որոշումները, որոնք վեճի էությանը կամ կողմերի նյութաիրավական պահանջներին չեն վերաբերում: Նման մոտեցում անրագրված է Նիդեռլանդների արբիտրաժային օրենսդրությամբ, մասնավորապես՝ քաղ. դատ. օրենսգրքի 1049 հոդվածով, որի համաձայն արբիտրաժային դատարանը կարող է վեճը լուծել վերջնական արբիտրաժային, այդ թվում՝ լրիվ կամ մասնակի որոշումներով: Հետևում է, որ վերջնական արբիտրաժային որոշումը

մը կարող է ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի լինել՝ կախված որոշման առարկա հանդիսացող հարցերի շրջանակից:

Ամեն դեպքում, ՀՀ արբիտրաժային օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ արբիտրաժային դատարանը կայացնում է վճիռներ և որոշումներ: Արբիտրաժային վճիռը վեճն ըստ էության լուծող ակտ է, որն արբիտրաժային դատարանը կայացնում է կողմերի պահանջները բավարարելու կամ մերժելու, ինչպես նաև վիճելի իրավահարաբերությունը կարգավորելու առումով: Արբիտրաժային որոշումները վեճն ըստ էության չլուծող ակտերն են:

Կարելի է առանձնացնել նաև արբիտրաժային դատարանի վերջնական և միջանկյալ ակտերը: Ընդ որում, արբիտրաժային վճիռն ամեն դեպքում վերջնական ակտ է, որով արբիտրաժային դատարանը գնահատում է ապացույցները, իրացնում է տվյալ գործով կիրառման ենթակա իրավունքի նորմերը կամ արդարության ընդհանուր (ex aequo et bono) սկզբունքները, հաստատում է գործին մասնակցող անձանց իրավունքներն ու պարտականությունները, որոշում է հայցային պահանջները բավարարելու կամ մերժելու հարցը<sup>1</sup>: Սակայն վերջնական են արբիտրաժային դատարանի այն որոշումները, որոնք ուղղված են արբիտրաժային իրավահարաբե-

<sup>1</sup> Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չի սահմանել վճիռ կայացնելիս արբիտրաժային դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակը: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը սահմանում էր, որ միջնորդ դատարանը վճիռ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է կիրառման ենթակա օրենքներն ու այլ իրավական ակտերը, սահմանում է գործին մասնակցող անձանց իրավունքներն ու պարտականությունները, որոշում է հայցը բավարարելու կամ մերժելու հարցը: Նման ձևակերպումը ևս ճիշտ համարել չի կարելի, քանի որ կիրառման ենթակա իրավունքի նորմերը արբիտրաժային համաձայնությամբ կարող են որոշել նաև կողմերը: Արբիտրաժային դատարանի մոտ այդ իրավասությունը սուբսիդիար է և ծագում է այն դեպքում, երբ կողմերն այս հարցի շուրջ համաձայնություն չեն կայացրել: Բացի այդ, արբիտրաժային դատարանը ոչ թե սահմանում է գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, այլ հաստատում է դրանք: Իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են նորմատիվ իրավական ակտերով:

րությունների կամ արբիտրաժային վարույթի դադարեցմանը: Այս առումով որոշակի տարըմբռնում կարող է առաջացնել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, որը սահմանում է՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան: Հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումները կարող են ամրագրվել **միջանկյալ վճռի** ձևով: Հայցի ապահովման միջոցները, որոնք պահանջել կամ կարգադրել է ձեռնարկել արբիտրաժային տրիբունալը՝ կայացնելով միջանկյալ վճիռ, կարող են ճանաչվել, հարկադիր կատարվել կամ չեղյալ ճանաչվել իրավասու դատարանի կողմից օրենքի 34-36-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ: Նման մոտեցումն արտասահմանյան երկրների արբիտրաժային օրենսդրությունում ամրագրված՝ արբիտրաժային որոշումների դասակարգման չափանիշներով է պայմանավորված, որն ընդհանրապես չի համընկնում հայրենական իրավագիտության և իրավական համակարգի ինստիտուտներին: Հայցի ապահովումը, արբիտրաժի ցանկացած փուլում, արբիտրաժի կողմերից մեկի միջնորդության հիման վրա համապատասխան միջոցների ձեռնարկումն է, որը բացառում է հետագայում արբիտրաժային վճռի կատարման անհնարինությունը կամ դժվարացումը կամ վեճի առարկա հանդիսացող գույքի հնարավոր վատթարացումը: Հետևաբար, հայցի ապահովման միջոցներն ուղղված են հետագայում վճռի կատարումն ապահովելուն: Այս ակտով արբիտրաժային դատարանը գործն ըստ էության չի լուծում, և առնվազն անհեթեթություն է արբիտրաժային վճռով արբիտրաժային վճռի կատարումն ապահովելը: Առավել տրամաբանական կլիներ, որ օրենսդիրը խուսափեր օտարածին եզրութաբանությունից և հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին՝ արբիտրաժային դատարանին միայն որոշումներ կայացնելու հնարավորություն ընձեռեր: Հավանաբար նման ձևակերպումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ օրենսդրությամբ իրավասու դատարանը ճանաչում և կատարողական թերթ է տրամադրում միայն արբիտրաժային վճիռների հիման վրա:

ՀՀ օրենսդիրն «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում, միջանկյալ վճռից բացի, առանձնացնում է նաև արբիտրաժային դատարանի **լրացուցիչ** և համաձայնեցված պայմաններով՝ **հաշտության համաձայնության մասին վճիռները**, ինչպես նաև նախատեսում է վճռի ուղղման և պարզաբանման կարգը:

Այսպես, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ վճիռը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, եթե կողմերի համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանվել՝ կողմը տեղեկացնելով մյուս կողմին, կարող է դիմել արբիտրաժային դատարան (տրիբունալ), խնդրելով ուղղել վճռում տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ գրասխալները կամ նմանաբնույթ այլ սխալներ: Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է դիմել արբիտրաժային դատարան (տրիբունալ)՝ խնդրելով պարզաբանել վճռի որևէ կետ կամ մաս: Արբիտրաժային դատարանը (տրիբունալը) կողմի դիմումը հիմնավոր գտնելու դեպքում պարտավոր է այն ստանալուց հետո՝ 30 օրյա ժամկետում, կատարել համապատասխան ուղղումները կամ տալ պարզաբանում: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը: Հետևում է, որ արբիտրաժային վարույթում վճռի ուղղումը կամ պարզաբանումը կարող է իրականացվել միայն կողմերի միջև համապատասխան համաձայնությամբ սահմանված դեպքերում: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմը, մյուս կողմին տեղյակ պահելով, կարող է վճիռը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, դիմել արբիտրաժային դատարան (տրիբունալ), խնդրելով կայացնել լրացուցիչ վճիռ արբիտրաժային վարույթի ժամանակ ներկայացված, սակայն վճռում չարտացոլված պահանջների մասով: Արբիտրաժային դատարանը (տրիբունալը) դիմումը հիմնավոր գտնելու դեպքում պարտավոր է այն ստանալուց հետո՝ 60-օրյա ժամկետում, կայացնել լրացուցիչ վճիռ:

Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վճռի ուղղման, պարզաբանման կամ լրացուցիչ վճռի կայացման դեպքերում կիրառվում են արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը վերաբերող կանոնները: Ընդ որում, օրենքի վերլուծությունը թույլ է տա-



լիս եզրակացնելու, որ արբիտրաժային վճռի պարզաբանումն առանձին ակտի ձևով չի կայացվում, այլ հանդիսանում է վճռի բաղկացուցիչ մասը և առանձին իրավական հետևանքներ առաջացնել չի կարող: Վճռի ուղղումն ու պարզաբանումն իրականացվում է գրավոր, ստորագրվում է միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից:

Ի տարբերություն արբիտրաժային վճռի ուղղման կամ պարզաբանման՝ լրացուցիչ վճիռն առանձին ակտ է, որն արբիտրաժային դատարանը կայացնում է կողմի դիմումի հիման վրա, կողմերի համաձայնությամբ և օրենքով սահմանված կարգով: Քանի որ լրացուցիչ վճիռը կայացվում է հիմնական վճռի կայացման կանոնների պահպանմամբ՝ ինքնուրույն արբիտրաժային ակտի ձևով, հետևաբար՝ այն կառաջացնի համապատասխան իրավական հետևանքներ և կարող է չեղյալ ճանաչվել ընդհանուր հիմունքներով՝ սկզբնական վճռից առանձին: Արբիտրաժային վարույթում նախատեսվել է լրացուցիչ վճիռ կայացնելու միայն մեկ հիմք՝ գործի քննության ժամանակ ներկայացված, սակայն վճռում չարտացոլված պահանջների մասով: Քաղաքացիական դատավարությունում լրացուցիչ վճռի կայացման հիմքերը երեքն են՝ եթե դատարանը

- վճիռ չի կայացրել որևէ պահանջով, որով գործին մասնակցող անձինք ապացույցներ են ներկայացրել,

- լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը,

- չի լուծել դատական ծախսերի հարցը:

Քանի որ արբիտրաժային դատարանի վճռում արբիտրաժային ծախսերի նշումը և դրանց բաշխումն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքում, ապա լրացուցիչ վճռի կայացման հիմքերում իմպերատիվ ձևով նման դրույթ նախատեսել ճիշտ չէր լինի: Սակայն հողվածի բովանդակությունից պարզ չէ, թե ինչպես պետք է վարվի արբիտրաժային դատարանը, երբ լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը:

*Չաշվի առնելով վերոգրյալը, ավելի ճիշտ կլիներ, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 33-րդ հոդվածում որպես լրացուցիչ վճիռ կայացնելու հիմք նախատեսվեր նաև՝*

*- արբիտրաժային դատարանը լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը,*

*- վճռով չի լուծվել արբիտրաժային ծախսերի հարցը, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:*

Եթե արբիտրաժի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային դատարանը դադարեցնում է գործի քննությունը և կողմերի խնդրանքով արբիտրաժային դատարանի կողմից առարկությունների բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններով կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնության մասին, որը պետք է բավարարի արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին և պարունակի նշում այն մասին, որ հանդիսանում է արբիտրաժային դատարանի վճիռ: Ընդ որում, օրենքի 30 հոդվածի 2-րդ կետն ուղղակիորեն սահմանել է, որ այդպիսի վճիռն ունի նույն կարգավիճակը և ուժը, ինչպես արբիտրաժային դատարանի կողմից ըստ գործի ելույթի կայացվող ցանկացած այլ վճիռ: Պետք է նշել, որ համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ կայացնելու հիմքը ոչ միայն կողմերի հաշտության համաձայնությունն է, որը նրանք կարող են կնքել վարույթի ցանկացած փուլում, այլև՝ արբիտրաժային դատարանի կողմից դրա դեմ չառարկելը: Այս առումով, արբիտրաժային վարույթում կնքված հաշտության համաձայնությունը դատավարական կարգի առումով նմանվում է ՀՀ քաղաքացիական դատավարությունում կնքվող համաձայնությանը, քանի որ վարույթն իրականացնող դատարանը կարող է և չհաստատել այն՝ օրենքին հակասելու հիմքով, ինչպես նաև, եթե դրանով խախտվում են այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Առանձնակի ուշադրության է արժանի արբիտրաժային վճռի իրավաբանական բնույթը որոշելու հարցը: ՀՀ քաղաքացիական դատավարությունում դատարանի վճիռներն անհատական իրավական

ակտեր են, քանի որ դրանք իրավական նորմեր չեն պարունակում, այլ սահմանում են վարքագծի կանոններ միայն դատական ակտում ուղղակի անհատապես նշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների համար: Անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում: Սակայն, առանձին դեպքերում նորմատիվ բնույթի կարող են լինել նաև դատական ակտերը, երբ խոսքը գնում է, մասնավորապես, վարչական դատավարության կարգով նորմատիվ իրավական ակտերի (գերատեսչական նորմատիվ ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու, ինչպես նաև ՀՀ նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, ՀՀ կառավարության, վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի ՀՀ Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի գլուխ 24) իրավաչափությունը վիճարկելու մասին: Այս պարագայում դատական ակտը կլինի նորմատիվ բնույթի, քանի որ «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ - հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտ է համարվում նաև նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի գործողությունը դադարեցնող իրավական ակտը, նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների իրավական նորմ չպարունակելու դեպքում<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով, հաճախ դատական ակտերն իրավաբանական գրականությունում որակվում են որպես նեգատիվ բնույթի նորմատիվ իրավական ակտեր: Այստեղից հարց է առաջանում, թե իրավական, այդ թվում՝ դատական ակտին բնորոշ ի՞նչ հատկանիշներով է օժտված արբիտրաժային դատարանի վճիռը կամ վերջնական որոշումը:

<sup>1</sup> Ընդունվել է 2002թ. ապրիլի 3-ին: ՀՀ ՊՏ N49 (224) ,ՀՕ-320:

Արբիտրաժային վճիռը իրավական բնույթի ակտ է: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ Իրավական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ:

Հետևում է, որ արբիտրաժային վճիռը բավարարում է իրավական ակտին ներկայացվող պահանջներին: Այն արբիտրաժային դատարանի՝ օրենքով սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակներում ընդունված ակտ է: Արբիտրաժային դատարանը լուծում է միայն օրենքով սահմանված կարգով կողմերի արբիտրաժային համաձայնությամբ իր իրավասությանը վերապահված վեճերը: Արբիտրաժային դատարանը գործերը քննում է և վճիռ է կայացնում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Հակառակ պարագայում արբիտրաժի ակտն անհրաժեշտ իրավական հետևանքներ առաջացնել չի կարող: Արբիտրաժային վճիռը պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով արբիտրաժային դատարանը սահմանում է վիճելի իրավահարաբերությունների սուբյեկտների պարտադիր ճանաչման, պաշտպանության և կատարման իրավունքներ և պարտականություններ:

Արբիտրաժային վճռով վերականգնվում են խախտված կամ վիճարկվող իրավունքները, վիճելի պարտականությունների կրողին պարտավորեցվում է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ սահմանված գործողություններ կատարելուց, ճանաչել որոշակի իրավունքի, իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ինչն, ընդհանուր առմամբ, ուղղված է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը:

Որոշ դժվարություններ գոյություն ունեն իրավական ակտն ընդունող սուբյեկտների շրջանակում արբիտրաժային դատարանների կարգավիճակը որոշելու հարցում, քանի որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով չեն սահմանվում արբիտրաժային դատարանների տեսակներն ու կազմակերպարավական այլ առանձնահատկությունները: Ինստիտուցիոնալ արբիտրաժի պարագայում, երբ մշտապես գործող արբիտրաժային դատարանները ստեղծվում են որոշակի կազմակերպություններին առընթեր կամ ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակով, նշված խնդրի հանգուցալուծումն իրենից բարդություն չի ներկայացնում: Սակայն խնդիրներ կարող են առաջանալ կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժային կարգով վճիռ կայացնելու դեպքում, քանի որ ad hoc արբիտրաժային դատարանների կարգավիճակը և կազմակերպարավական ձևը, օրենքով սահմանված չեն: Կոնկրետ վեճը լուծելու համար արբիտրաժային դատարանները ստեղծում են արբիտրաժային համաձայնության կողմերը և դրանք իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: Ամեն դեպքում, ad hoc արբիտրաժային վճիռները ևս իրավական ակտեր են, քանի որ օրենքն իրավաբանական տեսանկյունից չի տարբերակում ինստիտուցիոնալ և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված արբիտրաժային դատարանների ակտերը, և դրանք առաջացնում նույն իրավական հետևանքները: Հատկապես, երբ պետությունը՝ ի դեմս իրավասու դատարանի, ճանաչում է արբիտրաժային վճիռները, դրանք ձեռք են բերում իրավական ակտին՝ ավելի կոնկրետ դատական ակտին բնորոշ հատկանիշներ, քանի որ ապահովված են լինում նաև պետության հեղինակությամբ և պետական հարկադրանքի ուժով<sup>1</sup>:

<sup>1</sup> Ինստիտուցիոնալ արբիտրաժային վճիռներն ապահովված են նախաառաջ այն կայացնող դատարանի վարկով և հեղինակությամբ: Որքան հեղինակավոր է արբիտրաժային դատարանը, այնքան բարձր է արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման հնարավորությունը: Նման պարագայում, հաճախ, պետական իրավասու մարմնի (դատարանի) կողմից արբիտրաժային վճռի ճանաչումն ու հարկադիր կատարման համար կատարողական բերթի տրամադրումը կրում է ձևական բնույթ:

Արբիտրաժային վճիռը անհատական ակտ է, քանի որ արբիտրաժային դատարանը, լուծելով իր իրավասությանը վերապահված վեճը, որոշում է կայացնում միայն ուղղակի անհատապես որոշված ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Այն իրավական նորմ չի պարունակում, այլ սահմանում է կոնկրետ անձանց վարքագծի կանոնները: Արբիտրաժային վճիռն, ի տարբերություն վերջնական դատական ակտի, նորմատիվ բնույթի լինել չի կարող, քանի որ ՀՀ օրենսդրությամբ հնարավոր չէ արբիտրաժային կարգով վիճարկել նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը: Վերոնշյալ գործերով բացառիկ դատական ենթակայություն (ընդդատություն) է սահմանված և դրանք քննվում են միայն վարչական դատավարության կարգով<sup>1</sup>:

Արբիտրաժային վճիռն ունի երկակի բնույթ՝ այն հրամայական ակտ է, որը սակայն պարունակում է պայմանագրային որոշակի տարրեր: Արբիտրաժային վճռի պայմանագրային կողմն արտահայտվում է նրանում, որ, արբիտրաժային համաձայնությամբ վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելով, կողմերն ապրիորի պարտավորվում են ընդունել և կատարել արբիտրաժային դատարանի վճիռը: Ինչպես կողմերի, այնպես էլ արբիտրաժային դատարանի գործողությունները պետք է համապատասխանեն արբիտրաժի վայրի կամ արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման երկրի (պետության) օրենսդրությամբ արբիտրաժային քննությանը ներկայացվող պահանջներին: Հետևաբար, արբիտրաժային վճիռը նաև պրոցեսուալ կամ դատավարական ակտ է:

Պետք է նշել նաև, որ արբիտրաժային վարույթը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման և համապատասխանաբար հանրային կարգին չհակասելու հանգամանքներն էլ պայմանավորում են պետության կողմից արբիտրաժային վճռի ճանաչումը և վճռով սահմանված հնարավոր իրավական հետևանքների առաջացումը: Ուստի, արբիտրաժային վճիռն օժտված է պարտադիրության հատկանիշով: Որպես կանոն, արբիտրաժային վարույթը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում սահմանվում է ար-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 8-րդ հոդվածները:

բիտրաժային վճիռների վերջնական և կողմերի համար պարտադիր լինելը, դրանով իսկ ամրագրելով վճռի պարտադիրությունը, որոշ դեպքերում էլ կատարելիությունը: Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ արբիտրաժային դատարանի վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի օրենքով սահմանված կարգով (հիարկե, եթե չկան արբիտրաժային վճռի ճանաչումն ու հարկադիր կատարումը մերժելու հիմքեր): Հետևաբար, արբիտրաժային վճիռն օժտված է թե՛ պարտադիրության, թե՛ կատարելիության հատկանիշներով: Սակայն, արբիտրաժային վճռի և քաղաքացիական դատավարության կարգով կայացված վճռի պարտադիրությունն և կատարելիությունը, ինչպես նաև օրինական ուժի այլ իրավական հետևանքները չեն նույնանում:

ՀՀ քաղաքացիական դատավարությունում դատական ակտերը պարտադիրություն, կատարելիություն, անհերքելիություն, բացառիկություն և նախադատելիություն ձեռք են բերում միայն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Արբիտրաժի պարագայում վճիռը վերոնշյալ իրավական հետևանքները կարող է առաջացնել միայն իրավասու դատարանի կողմից ճանաչվելու արդյունքում: Ընդ որում, արբիտրաժային իրավունքի գիտությունում վիճելի է արբիտրաժային վճռի պարտադիրության սահմանները որոշելու հարցը: Սասնավորապես, Մ. Դուբրովինան նշում է, որ արբիտրաժային վճռի և դատական ակտի պարտադիրության հատկանիշները չեն համընկնում, քանի որ արբիտրաժային վճիռը պարտադիր է կողմերի, իսկ դատական ակտը անձանց անորոշ շրջանակի, այդ թվում՝ բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար<sup>1</sup>: Սակայն, արտահայտված տեսակետը որևէ աղերս չունի ՀՀ գործող օրենսդրության

<sup>1</sup> Дубровина М.А. Международный коммерческий арбитраж в Швейцарии, Монография, Москва, 2001թ., էջ 145:

հետ, քանի որ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով արբիտրաժային վճռի պարտադիրությունը սահմանելիս անձանց կոնկրետ շրջանակ (այդ թվում՝ վեճի կողմերի առումով) չի նշվում: Հետևաբար, արբիտրաժային վճիռը պարտադիր է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց համար: Վերոնշյալ սուբյեկտները պարտավոր են հաշվի նստել արբիտրաժային վճռի, ինչպես նաև վճռով հաստատված իրավունքների հետ, նրանք չեն կարող վճռին հակասող որոշումներ կայացնել: Հետևում է, որ արբիտրաժային վճիռը պարտադիր է ոչ միայն կողմերի, այլև այլ անձանց համար:

Կատարելիությունն արբիտրաժային վճռով նախատեսված կոնկրետ գործողությունների կատարումը կամ գործողություններից ձեռնպահ մնալը, իրավունքի խախտումը վերացնելը երաշխավորող նորմերի համակարգ է: Վճռի կատարելիությունը նշանակում է, որ վճիռը պարտադիր ենթակա է կատարման: Այն կատարվում է կամավոր, ընդ որում, վճռում սահմանված ժամկետներում և կարգով: Վճիռը կանոնվի չկատարելու դեպքում, դրա կատարումն ապահովվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են նաև արբիտրաժային դատարանների, ինչպես նաև ՀՀ միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա արբիտրաժային դատարանների վճիռներն ու որոշումները<sup>1</sup>: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն անուշադրության է մատնել նաև արբիտրաժային վճռի կատարման հետ կապված հարցերը՝ 35 և 36-րդ հոդվածներով կարգավորելով միայն ճանաչումն ու կատարումը մերժելու կարգը և հիմքերը: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը սահմանում էր, որ միջնորդ դատարանի վճիռը կատարվում է կամավոր: Սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դի-

<sup>1</sup> Ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին: Ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

մել միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան՝ միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով: Առևտրային արբիտրաժը կարգավորող 2006թ. օրենքը, փաստորեն, չի նախատեսում արբիտրաժային վճռի կամավոր կատարման հարցերը: Իսկ գործնականում հնարավոր է, որ պարտապանը ցանկություն հայտնի կամավոր կատարի արբիտրաժային դատարանի վճիռը՝ հարկադիր կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերից խուսափելու համար:

Բացի այդ, այս հանգամանքը հիմք էր տալիս եզրակացնելու, որ մինչև արբիտրաժային վճռով կատարողական թերթ տրամադրելը, այն պարտադիր էր միայն կողմերի համար, իսկ կատարելիության հատկանիշն առաջանում էր վճռի հիման վրա կատարողական թերթը ստանալուց հետո:

ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչելով արբիտրաժային վճիռը՝ իրավասու դատարանը փաստացի սանկցիավորում է այն, վերջինիս օժտելով հանրային իրավական ուժով և պետության հեղինակության ապահովվածությամբ: Հետևաբար, այս պարագայում արբիտրաժային վճռին հատուկ են դատական ակտի օրինական ուժի իրավական հետևանքները, որոնք իրենց հերթին պայմանավորված են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի առանձնահատկություններով: Այս հանգամանքը հանդիսանում է արբիտրաժային վճռի երկակի բնութքի դրսևորումներից մեկը, քանի որ լինելով պայմանագրային հարաբերությունների արդյունք, օրենքով սահմանված կարգով այն ձեռք է բերում հանրային-իրավական ակտին բնորոշ հատկանիշներ, ինչը վկայում է արբիտրաժի խառը կամ հիբրիդային տեսության իրավացիության մասին:

Եթե մենք խոսում ենք արբիտրաժային վճռի պարտադիրության և կատարելիության մասին, ապա չպետք է անտեսենք նաև անհերքելիության, բացառիկության և նախադատելիության հատկանիշները:

Արբիտրաժային վճիռն օժտված է նաև անհերքելիության հատկանիշով, որը ենթադրում է, որ այն կայացնող արբիտրաժային դա-

տարանն իրավունք չունի փոխել կամ բեկանել այն: Ավելին, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն ընդհանրապես արբիտրաժային վճիռը նոր երևան եկած հանգամանքների ուժով վերանայելու ինստիտուտ չի նախատեսում: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը սահմանում էր, որ միջնորդ դատարանն իր կայացրած վճիռը, մինչև դրա կատարումը, կարող է վերանայել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով: Ընդ որում, նոր երևան եկած հանգամանքների հետևանքով միջնորդ դատարանի վճիռը վերանայվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով<sup>1</sup>: Միջնորդ դատարանը վճիռի վերանայելու մասին դիմումը քննում էր միատույն, ինչի արդյունքում կամ վերացնում էր վճիռը կամ մերժում դրա վերանայումը: Ներկայումս, արբիտրաժը կարգավորող հայրենական օրենքը, չնախատեսելով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով արբիտրաժային վճռի վերանայման հնարավորություն, փաստացի ամրագրել է բացարձակ անհերքելիության և անփոփոխելիության հատկանիշ: Ընդ որում, անհերքելիությունը կամ անփոփոխելիությունը ծագում է ոչ թե իրավասու դատարանի կողմից արբիտրաժային վճռի ճանաչման, այլ կայացման պահից: Արբիտրաժային վճիռները կարող են միայն վիճարկվել դատական կարգով և այս ակտերը չեղյալ ճանա-

<sup>1</sup> ՀՀ ՔԴՕ-ի 204<sup>11</sup> հոդվածով սահմանվել է, որ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝ 1. դիմողն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն, 2. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, փաստաթղթի կամ իրեղեն ապացույցի կեղծված լինելը հանգեցրել է ապօրինի կամ չիմնավորված դատական ակտ կայացնելուն, 3. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, կատարել են հանցավոր արարք, կամ՝ 4. այն դատական ակտի, դատավճռի կամ այլ մարմնի որոշման վերացումը, որը հիմք է ծառայել տվյալ վճռի կայացման համար:

չելու հիմքերի շարքում նոր երևան եկած հանգամանքները չեն ներառվել: Այս առումով, արբիտրաժային վճռի և դատական ակտերի անհերքելիության դրսևորումները տարբերվում են միմյանցից: Նախևառաջ դատական վճիռներն անհերքելիություն են ձեռք բերում օրինական ուժի մեջ նտնելուց հետո: Քաղաքացիական դատավարությունում անհերքելիությունը ենթադրում է, որ առաջին ատյանի դատարան վերաքննիչ բողոք բերել հնարավոր չէ, իսկ վերաքննության կամ վճռաբեկության կարգով վճիռը բողոքարկելու արդյունքում, երբ վճռի մի մասը բեկանվում է և գործն ուղարկվում է նոր քննության, ապա քննարկման առարկա չի կարող հանդիսանալ այն մասը, որի վերաբերյալ վճիռը նտել է օրինական ուժի մեջ:

Արբիտրաժային վճռի բացառիկությունը ենթադրում է, որ անհնար է նույնական հայցով նույն կողմերի միջև թե արբիտրաժային, թե դատական կարգով գործի կրկին քննության հնարավորությունը: Սակայն արբիտրաժային վճռի բացառիկությունն առաջանում է միայն իրավասու դատարանի կողմից այն ճանաչելու պահից: Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, արբիտրաժային վճռի բացառիկության կանոններ չի սահմանել: Մասնավորապես, օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ կետով գործի վարույթի կարճման հիմքերի շարքում սահմանել է, որ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալը մերժելու դեպքի: Օրենսգրքի 91-րդ - հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատավորը նույն հիմքով մերժում է նաև հայցադիմումի ընդունումը: Այսինքն, դատավարության օրենքն արբիտրաժային վճռի առկայության հետ կապում է հայց հարուցելու իրավունքի իրականացումը (այն համարելով հայցի իրավունքի ընդհանուր և բացասական նախադրյալ) և բացառում է հետագայում նույնական հայցով դատական կարգով գործի քննության հնարավորությունը: Հետևում է, որ արբիտրաժային վճռի բացառիկությունը գործում է ՀՀ քաղաքացիական դատավարություն-

նում, իսկ արբիտրաժային վարույթում օրենսդրի անուշադրության պատճառով նույնական հայցով նույն կողմերի միջև գործի կրկին քննությունը չի բացառվում:

*Ուստի, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածում որպես արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշում կայացնելու հիմք պետք է սահմանվի նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի վճռի առկայությունը, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալը մերժելու դեպքի:*

Առանձնակի ուշադրության է արժանի արբիտրաժային վճռի նախադատելիության հատկանիշը: Ընդ որում, այս հարցին միանշանակ մոտենալ չի կարելի, քանի որ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, թե «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում արբիտրաժային վճռի նախադատելիության մասին դրույթներ չեն նախատեսվել: Քաղաքացիական դատավարությունում նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին անգամ չեն ապացուցվում: Սակայն, օրենսդրական զարգացումները ներկայումս ընթանում են նախադատելիության սահմանները նեղացնելու և սահմանափակելու ճանապարհով, և դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2008թ. փոփոխություններով սահմանվեց, որ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները *նույն անձանց միջև* դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Սակայն, ամրագրելով դատական ակտերի փոխադարձ պարտադիրությունն արբիտրաժային վճիռներին այս առումով իրավական գնահատականներ ընդհանրապես չտրվեցին<sup>1</sup>: Մինչդեռ, եթե պետությունը ճանաչում է արբիտրաժային վճիռը և դրա պարտադիրությունը, ինք-

<sup>1</sup> ՀՀ ՔԴՕ 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

նըստինքյան ճանաչում է նաև վճռի իրավական ուժը և սանկցիավորում այն: Հետևաբար, արբիտրաժային վճռի պարտադիրության հետ մեկտեղ անհրաժեշտ է խոսել նաև նախադատելիության հատկանիշի մասին, որը հավասարապես պետք է վերաբերի թե քաղաքացիական դատավարության, թե արբիտրաժային կարգով գործերի քննությանը: Նախադատելիությունն ու պարտադիրությունը փոխկապակցված հասկացություններ են, պայմանավորում են միմյանց, և արբիտրաժային վճռում տեղ գտած փաստերն ու իրավահարաբերությունները չեն կարող կասկածանքի տակ դրվել և ապացուցման առարկայի մեջ մտցվել: Արբիտրաժային վճռի ճանաչումից հետո անհմաստ է վճռով հաստատված փաստերը, իրավունքներն ու պարտավորությունները նույն անձանց միջև այլ գործ քննելիս վիճարկել (հիարկե, եթե չկան արբիտրաժային վճիռը վիճարկելու օրենքով սահմանված հիմքեր):

*Հետևաբար, անհրաժեշտ է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով սահմանել, որ արբիտրաժային վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև արբիտրաժային կարգով այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալը մերժելու դեպքի: Ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածում նախատեսել, որ արբիտրաժային վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալը մերժելու դեպքի:*

Նկատի ունենալով վերոգրյալը, կարող ենք ասել, որ արբիտրաժային վճիռները ևս օժտված են անհերքելիության, բացառիկության, պարտադիրության, նախադատելիության, կատարելիության հատկանիշներով, որոնց դրսևորումները տարբերվում են քաղաքացիական դատավարությունում դատական ակտի օրինական ուժի իրավական հետևանքներից: Դա նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից պարզ չէ, թե արբիտրաժային վճիռ-

ները երբ են մտնում ուժի մեջ: Ժամանակակից դատավարագիտությունում վճիռների օրինական ուժի մեջ մտնելու գոյություն ունեցող տարբեր կարգեր են ուսումնասիրության արժանանում, որոնք կարող են տեսական արժեվորում ունենալ նաև առևտրային արբիտրաժում: Սակայն, արբիտրաժային վարույթը կարգավորող հայրենական օրենքի վերլուծությունից չի երևում՝ արբիտրաժային դատարանի վճիռներն ուժի մեջ են մտնում կայացման, հրապարակման, թե իրավասու դատարանի կողմից այն ճանաչելու պահից: Վերոնշյալ հանագամանքը բավական մեծ գործնական նշանակություն ունի հատկապես արբիտրաժային վճռի օրինական ուժի իրավական հետևանքների հնարավոր առաջացման առումով: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային դատարանի կողմից վճռի կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացմամբ, ընդհանրապես չամրագրելով արբիտրաժային վճիռը կողմերին հրապարակելու դատավարական կարգը: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում էր, որ նախագահողը վճռի եզրափակիչ մասը հրապարակում էր միջնորդ դատարանի նիստում: Վճռի տեքստը կազմելը կարող էր հետաձգվել ոչ ավելի, քան տասն օրով, որից հետո պատշաճ ձևով ուղարկվում էր կողմերին: Հաշվի առնելով, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չի սահմանել նաև արբիտրաժային վճռի կամավոր կատարում, կարող ենք ասել, որ վճռի **կատարելիությունն** առաջանում է իրավասու դատարանի կողմից այն ճանաչելու պահից: Մինչև դատարանի կողմից ճանաչելը, արբիտրաժային վճիռը պարտադիր է կողմերի համար, սակայն ճանաչումից հետո այն **պարտադիր** է դառնում նաև այլ, այսինքն՝ անձանց անորոշ շրջանակի համար: Պարտադիրության հետ մեկտեղ արբիտրաժային վճիռը ձեռք է բերում նաև **բացառիկություն և նախադատելիության** հատկանիշ: Իսկ **անհերքելիությունն** առաջանում է հենց արբիտրաժային վճռի կայացման պահից, քանի որ օրենքով արբիտրաժային վճիռը կայացնող արբիտրաժային դատարանի կամ հաստատության կողմից այն

փոխելու, վերացնելու կամ բեկանելու, ինչպես նաև վերանայելու կարգ սահմանված չէ:

Հետևաբար, արբիտրաժային վճռի իրավական հետևանքների առաջացման շուրջ անորոշությունից և տարակարծ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է օրենքով հստակ սահմանել արբիտրաժային վճռի ուժի մեջ մտնելու կարգը: Այս կապակցությամբ առաջարկում ենք *«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում առանձին նորմով սահմանել, որ արբիտրաժային վճիռներն ուժի մեջ են մտնում իրավասու դատարանի կողմից այն ճանաչելու պահից:*

Նման ձևակերպումը հնարավորություն կընձեռնի խուսափել առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտում հնարավոր չարաշահումներից: Եթե օրենքով սահմանվի, որ արբիտրաժային վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, կամ արբիտրաժային վճիռը կատարվում է կամավոր ու սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դիմելու իրավասու դատարան՝ հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով, ապա կողմերին փաստացի հնարավորություն է ընձեռնվում, շրջանցելով իրավասու դատարանը, կատարել վճռով սահմանված պարտավորությունները: Մինչդեռ, նման մոտեցումն արդարացված համարել չի կարելի: Հանրավոր է, որ կողմերը փողերի լվացման կամ հարկերից խուսափելու նպատակով կեղծ վեճ կամ վեճի իմիտացիա ստեղծեն և կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված (ad hoc) արբիտրաժային կարգով լուծեն «վեճը», ստանալով իրենց համար ցանկալի վճիռը: Նման պարագայում հնարավոր չէ ստուգել նաև արբիտրաժային համաձայնության վավերականության, այդ թվում՝ արբիտրաժի լուծմանը հանձնված վեճի թույլատրելի ենթակայության հարցը: Դրա համար էլ անհրաժեշտ է պահպանել պատշաճ դատական հսկողությունն արբիտրաժային վարույթի նկատմամբ, իհարկե, հաշվի առնելով նաև իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի ինքնուրույնությունն ու կամքի ինքնավարության սկզբունքի դրսևորումները:

## ***§2. Արբիտրաժային վճռի մերկայացվող պահանջները***

Ինչպես արդեն նշվել է՝ արբիտրաժային վճիռը, թեև պայմանագրային որոշակի տարրեր է պարունակում, սակայն պրոցեսուալ կամ դատավարական բնույթի ակտ է, և պետք է օրենքով սահմանված որոշակի պայմանների համապատասխանի: Պետության կողմից արբիտրաժային վճիռների ճանաչումն առավելապես կապված է ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման հետ, որոնք ներառում են՝

- արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող,

- արբիտրաժային վճռի կայացման կարգին վերաբերող պահանջները:

Արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, որի համաձայն՝ արբիտրաժային դատարանի (տրիբունալի) վճիռը պետք է կայացվի գրավոր ձևով և ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից: Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային տրիբունալի անդամների մեծամասնության ստորագրությունների առկայությունը այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները:

Արբիտրաժային տրիբունալի վճռում պետք է նշվեն դրա հիմքում ընկած հանգամանքները, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային դատարանի (տրիբունալի) վճռում պետք է նշվեն նաև արբիտրաժային ծախսերը և դրանց բաշխումը կողմերի միջև: Վճռում նշվում են արբիտրաժի անցկացման ամսաթիվը և վայրը: Արբիտրաժային տրիբունալի վճիռը համարվում է կայացված վճռում նշված վայրում: Վճռի կայացումից հետո յուրաքանչյուր կողմին պետք է ու-



ղարկվի դրա պատճենը՝ ստորագրված միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից:

Սակայն օրենքը չի սահմանել, թե ինչ ժամկետում է արբիտրաժային դատարանը պարտավոր վճռի տեքստը ուղարկել կողմերին: Նման բացթողումը գործնականում կարող է բավական բացասական հետևանքներ առաջացնել, հատկապես, երբ առևտրատնտեսական հարաբերություններում յուրաքանչյուր բոլորն էական նշանակություն ունի: Մինչդեռ, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը սահմանում էր, որ վճռի տեքստը կազմելը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան տասն օրով, որից հետո այն պատշաճ ձևով ուղարկվում էր կողմերին:

Հոդվածի վերլուծությունից երևում է, որ ՀՀ օրենքով արբիտրաժային վճռի ձևին ներկայացվող պահանջներն իմպերատիվ են՝ արբիտրաժային վճիռը պետք է կայացվի գրավոր ձևով, ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից: Արբիտրաժային վճռի ձևին ներկայացվող պահանջներն իրավաբանական գրականության մեջ ընդունված է դասակարգել *lex loci arbitri* նորմերի շարքին, որոնք սահմանում են նաև վճռի բովանդակության և կայացման կարգին վերաբերող ընդհանուր պայմաններն ու կանոնները:

Ի տարբերություն արբիտրաժային վճռի ձևին ներկայացվող պահանջների՝ բովանդակությունը սահմանող օրենսդրական նորմերը դիսպոզիտիվ բնույթի են, քանի որ կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են արբիտրաժի վերջնական ակտի բովանդակությանը վերաբերող այլ պահանջներ նախատեսել:

Հարկ է նշել, որ տարբեր ազգային իրավական համակարգերում արբիտրաժային վճիռների բովանդակությանը տարբեր պահանջներ են ներկայացվում: Մասնավորապես՝ Բելգիայի Դատական օրենսգրքի 1701-րդ հոդվածով սահմանվել է, որ արբիտրաժային վճռում պետք է նշվեն կողմերի և արբիտրների անունները (անվանումը) և իրավաբանական հասցեները, վեճի առարկան, վճռի կայացման վայրը: Ֆրանսիայի ՔԴՕ-ի 1412-րդ հոդվածով, բացի վերը նշված պայմաններից, նախատեսվել է, որ արբիտրաժային վճիռը պետք է բովանդակի նաև կողմերի ներկայացուցիչների ա-

նունները: Նմանատիպ պահանջներ սահմանված է նաև Նիդեռլանդների ՔԴՕ 1507-րդ հոդվածով, իսկ Մեծ Բրիտանիայի Արբիտրաժի մասին ակտի 52-րդ հոդվածում նախատեսվել է, որ արբիտրաժային վճիռը պետք է պարունակի նշումներ արբիտրաժի վայրի և ակտի կայացման ամսաթվի մասին, բոլոր արբիտրների ստորագրությունները և վճռի հիմնավորումը:

Ընդհանրացնելով արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ կարող ենք ասել, որ արբիտրաժային վճիռը պետք է՝

- կայացվի գրավոր ձևով,

- ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից, ընդ որում, այստեղ բավարար է արբիտրաժային դատարանի կազմի անդամների մեծամասնության ստորագրության առկայությունը,

- բովանդակի արբիտրաժի անցկացման վայրը և ամսաթիվը,

- հաշտեցման պայմանները, եթե վճիռը կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ,

- վճռի հիմքում ընկած հանգամանքները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ,

- արբիտրաժային ծախսերը և դրանց բաշխումը կողմերի միջև, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

Հարկ է նշել սակայն, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի շարքում սահմանված չէ, որ իրավասու դատարանի կողմից վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե այն չի համապատասխանում օրենքով կամ կողմերի համաձայնությամբ արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Այս հանգամանքը կարելի է օրենքի բացթողումներից համարել, քանի որ օրենսդիրը, մեխանիկորեն առաջնորդվելով Նյու Յորքյան համաձայնագրի դրույթներով, անուշադրության է մատնել այս հիմքը: Վիճակը որոշակիորեն շտկում է 34-րդ հոդվածի 2-րդ կետի դ) ենթակետը, որի համաձայն՝ արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում օրենքի

պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանում օրենքին:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ օրենքն արբիտրաժային վճռի բովանդակությունը սահմանելիս առանձին հարցերի լուծումը թողել է կողմերի հայեցողությանը, սակայն կան այնպիսի հարցեր, որոնց ընդհանրապես չի անդրադարձել: Մինչդեռ, արբիտրաժային վճիռն իրավունքների պաշտպանությանն ուղղված այն կարևորագույն փաստաթուղթն է, որը նախ պետք է ճանաչվի իրավասու դատարանի կողմից, հետո կատարման ենթարկվի: Հետևաբար, արբիտրաժային վճիռը, որքան հնարավոր է, պետք է հանգամանալից կարգավորված լինի նաև բովանդակային առումով՝ հետագայում թյուրիմացություններից և հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու նպատակով: Օրենքի բովանդակությունից պարզ չէ, թե արբիտրաժային վճռում նշվում է արդյոք արբիտրաժային դատարանի կազմը, արբիտրաժային համաձայնությունը, որի հիման վրա գործել է արբիտրաժային դատարանը, կողմերի անունները (անվանումը) և հասցեն, վեճի էության համառոտ շարադրանքը, վճռի կատարման կարգը և ժամկետները և այլն: Ընդ որում, արբիտրաժային վճռի բովանդակությունը սահմանող նորմերն ավելի շատ իմպերատիվ բնույթի պետք է լինեն: Հակառակ պարագայում արբիտրաժային վճռի ուսումնասիրությունից պարզ չի լինի, թե ինչ վեճ է լուծել արբիտրաժային դատարանը կամ որոնք են վարույթի կողմերը, ինչ կազմով է արբիտրաժային դատարանը քննել գործը և վճիռ կայացրել, ինչ կարգով պետք է կատարվի արբիտրաժային վճիռը և այլն:

*Հետևաբար, ավելի ծիշտ կլիներ, որպեսզի արբիտրաժային դատարանի վճռում նշվեն՝*

- վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,*
- արբիտրաժային դատարանի կազմը,*
- կողմերի արբիտրաժային համաձայնությունը, որի հիման վրա գործել է արբիտրաժային դատարանը,*
- կողմերի անունները (անվանումը) և հասցեն,*
- վեճի առարկան,*
- վեճի էության համառոտ շարադրանքը,*

*- արբիտրաժային դատարանի կողմից պարզված հանգամանքները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ,*

*- ապացույցները, որոնց վրա հիմնված են արբիտրաժային դատարանի հետևությունները,*

*- այն օրենքները և այլ իրավական ալ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է արբիտրաժային դատարանը վճիռ կայացնելիս,*

*- հայցվորի պահանջները բավարարելու կամ մերժելու մասին արբիտրաժային դատարանի եզրահանգումները,*

*- արբիտրաժային ծախսերը և դրանց բաշխումը կողմերի միջև, վճռի կատարման կարգը և ժամկետները:*

Ուստի, վերը նշված հանգամանքները պետք է հաշվի առնվեն «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Օրենքում պետք է նշվի նաև, որ *կողմերի հաշտության համաձայնության մասին արբիտրաժային դատարանի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:* Այս հանգամանքն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ արբիտրաժային վճիռը ճանաչելու ժամանակ իրավասու դատարանին հնարավորություն է ընձեռվում ստուգել կողմերի հաշտության համաձայնության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և հանրային կարգին, ինչպես նաև պարզելու, թե հաշտության համաձայնությամբ կարող են խախտվել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Կարևոր է վճռում նաև կատարման կարգի վերաբերյալ նշումը, քանի որ, ելնելով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի բնույթից, արբիտրաժային վճռի կատարման կարգը կարող է տարբեր առանձնահատկություններ ունենալ: Այդ իսկ պատճառով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում պետք է սահմանվեն նաև դրանական միջոցներ բռնագանձելու կամ գույք հատկացնելու մասին, մի քանի հայցվորների օգտին կամ մի քանի պատասխանողների դեմ կայացված, պայմանագիր կնքելու կամ փոխելու մասին, ինչպես նաև պատասխանողին

որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող վճռի առանձնահատկությունները:

Դրամական միջոցները գանձելու վերաբերյալ հայցը բավարարելու դեպքում արբիտրաժային դատարանը պետք է սահմանի բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին, ամիսը և ամսաթիվը: Գույք հատկացնելու դեպքում արբիտրաժային դատարանը նշում է հանձնման ենթակա գույքի անվանումը, դրա արժեքը, իսկ եթե հայտնի է՝ նաև գտնվելու վայրը:

Մի քանի հայցվորների օգտին վճիռ կայացնելու դեպքում դատարանը պետք է նշի նրանցից յուրաքանչյուրի պահանջը բավարարելու չափը կամ նշում այն մասին, որ բռնագանձման իրավունքը հանիրավի է: Մի քանի պատասխանողների դեմ վճիռ կայացնելու դեպքում արբիտրաժային դատարանը պետք է նշի նրանցից յուրաքանչյուրի պարտավորության չափը կամ սահմանում է, որ նրանց պատասխանատվությունը համապարտ է:

Պայմանագիրը կնքելու կամ փոխելու հետ կապված վեճով վճռում պետք է նշվի պայմանագրի յուրաքանչյուր վիճելի պայմանի վերաբերյալ որոշումը, իսկ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջի մասին վեճով՝ այն պայմանները, որոնցով կողմերը պարտավոր են կնքել պայմանագիր:

Պատասխանողին՝ գույք հանձնելու կամ դրամական գումարներ գանձելու հետ չկապված գործողություններ կատարելուն պարտադրող վճռում արբիտրաժային դատարանը պետք է նշի, թե ով, որտեղ, երբ կամ ինչ ժամկետում պետք է կատարի այդ գործողությունները: Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային դատարանը կարող է սահմանել նաև, որ պատասխանողի կողմից վճիռը չկատարելու դեպքում հայցվորն իրավունք ունի համապատասխան գործողությունները կատարել պատասխանողի հաշվին:

Առևտրային արբիտրաժը կարգավորող հայրենական օրենքի վերլուծությունը թույլ չի տալիս առանձնացնել վճռի բաղկացուցիչ մասերը՝ դատավարագիտությունում ընդունված ավանդական մո-

տեցմանը համապատասխան: Մինչդեռ, արբիտրաժային վճիռը պրոցեսուալ ակտ է, որը բաղկացած է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնք անխզելի և տրամաբանական կապի մեջ են գտնվում: Սակայն, գործող օրենքը, արբիտրաժային վճռի բովանդակությունը սահմանելիս, չի առանձնացրել դրանք, ավելին, չի նշել բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են վճռի անհատականացման համար:

Ուստի, ընդհանրացնելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում վճռի բովանդակությունը սահմանող նորմում փոփոխություններ և լրացում կատարելու վերաբերյալ առաջարկը, կարող ենք ասել, որ արբիտրաժային վճռի ներածական մասը պետք է պարունակի վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, արբիտրաժային դատարանի կազմը, կողմերի արբիտրաժային համաձայնությունը, որի հիման վրա գործել է արբիտրաժային դատարանը, կողմերի անունները (անվանումը) և հասցեն, և վեճի առարկան:

Ներածական մասում կարող է նշվել այն մասին, թե արբիտրաժային վարույթը գաղտնի՞ է իրականացվել, թե՞ ոչ: Սակայն, այս հարցը որոշելն արբիտրաժային պրակտիկայում սովորաբար թողնվում է կողմերի հայեցողության վրա:

Նկարագրական մասում նշվում է վեճի էության համառոտ շարադրանքը, որը պետք է պարունակի հայցային պահանջների, դրա պատասխանի կամ պատասխանողի առարկությունների, արբիտրաժային քննության մասնակիցների միջնորդությունների և այլ գործողությունների համառոտ շարադրանքը: Ընդ որում, այստեղ իրավական արժեքավորում են ստանում կողմերի այն գործողությունները, որոնք ուղղված են արբիտրաժային վարույթի շարժի վրա ազդելուն կամ հայցային պահանջների, առարկությունների, ինչպես նաև դրանց հիմքում ընկած հանգամանքները փոխելուն: Պետք է նշել նաև, որ վճռի նկարագրական մասում նշվում են միայն գործի քննության կամ լուծման ընթացքում կատարվող գործողությունները: Վարույթի իրականացման կարգը որոշելը, արբիտրների նշանակման, արբիտրաժի լեզվի և վայրի ընտրության, վեճի էության նկատմամբ կիրառվող նյութական իրավունքի նորմերի

ընտրության, ինչպես նաև ընթացակարգային կանոնները որոշելու և ուղղված գործողությունները, որ կատարվել են մինչև լսումներն սկսելը, վճռի նկարագրական մասում չեն նշվում:

Վճռի պատճառաբանական մասում նշվում են արբիտրաժային դատարանի կողմից պարզված հանգամանքները՝ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապացույցները, որոնց վրա հիմնված են արբիտրաժային դատարանի հետևությունները, այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է արբիտրաժային դատարանը վճիռ կայացնելիս: Այսինքն, արբիտրաժային վճռի պատճառաբանական մասը պետք է ներառի փաստական և իրավական հիմնավորումները, ինչպես նաև արբիտրաժային դատարանի դատողությունները և հետևությունները՝ թույլատրելիության և վերաբերելիության կանոնների հիման վրա ապացույցների գնահատման, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման, կողմերի փոխհարաբերությունների իրավաբանական որակման, հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի նորմերի կիրառման վերաբերյալ: Վճռի պատճառաբանական մասը պետք է արտացոլի վճռի ներածական և նկարագրական մասի բովանդակային շարունակությունը: Ընդ որում, արբիտրաժային դատարանը վճիռ կայացնելիս կիրառում է կողմերի ընտրած իրավունքի նորմերը: Կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային դատարանը կիրառում է այն իրավունքը, որը որոշված է իր կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերով:

Հարկ է նշել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով արբիտրաժային վճռի փաստական և իրավական հիմնավորումը պարտադիր պայման չի համարվում: Մասնավորապես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ արբիտրաժային տրիբունալի վճռում պետք է նշվեն դրա հիմքում ընկած հանգամանքները, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում: Իսկ 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անկախ ընտրված իրավունքից՝ կողմերը մինչև վճռի կայացումը կարող են արբիտրաժա-

յին դատարանին (տրիբունալին) ուղղակիորեն լիազորել վեճը լուծելու արդարության սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositeur): Հետևում է, որ ՀՀ օրենսդրությամբ արբիտրաժային վճռի պատճառաբանական մասում վճռի փաստական կամ իրավական հիմնավորման առկայությունն ուղղակիորեն կախված է կողմերի կամահայտնությունից: Ամեն դեպքում ցանկալի է, որպեսզի արբիտրաժային վճռում նշվի վեճն արդարության սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositeur) լուծելու վերաբերյալ՝ արբիտրաժային դատարանին տրված լիազորությունը:

Առաջնորդվելով «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» ՄԱԿՄԱԻ-3 տիպային օրենքի դրույթներով՝ որոշ պետություններ արբիտրաժը կարգավորող ազգային օրենքներով արբիտրաժային վճռի բովանդակության շրջանակներում պարտադիր են համարում իրավական և փաստական հիմնավորումների առկայությունը (օրինակ՝ Ֆրանսիայի ՔԴՕ 1471 հոդվածը): Ֆրանսիական օրենսդրությունը նման պահանջներ է սահմանում ներքին արբիտրաժում վճիռների կայացման համար, սակայն միջազգային առևտրային արբիտրաժի պարագայում հրամայական բնույթի այդպիսի կանոնները բացակայում են՝ կողմերին հնարավորություն ընձեռելով ինքնուրույն որոշել արբիտրաժի ընթացակարգը և վճռին առաջադրվող պահանջները: Նմանատիպ դրույթներ է պարունակում նաև «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» Շվեյցարիայի դաշնային օրենքի 189 հոդվածի 2-րդ կետը: Այլ ազգային օրենքներով իմպերատիվ է համարվում արբիտրաժային վճռի պատճառաբանական մասի առկայությունը (օրինակ՝ Բելգիայի Դատական օրենսգրքի 1701 հոդվածի 2-րդ կետը, Նիդեռլանդների քաղ. դատ. օրենսգրքի 1057 4) ե ենթակետը):

Մի շարք արբիտրաժային կանոնակարգերով սահմանվել է, որ արբիտրաժային դատարանի վճռի փաստական հիմնավորումն ու պատճառաբանությունը պարտադիր է, եթե կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ բան չեն սահմանել: Այստեղ որոշիչ նշանակություն ունի կողմերի կամահայտնությունը՝ արբիտրաժային կանոնակարգի համապատասխան դրույթների, ինչպես նաև վարույթի

ընթացակարգը սահմանող դատավարական նորմերի ընտրության հարցում:

Արբիտրաժային վճռի եզրափակիչ մասում նշվում են հայցվորի պահանջները բավարարելու կամ մերժելու մասին արբիտրաժային դատարանի եզրահանգումները, արբիտրաժային ծախսերը և դրանց բաշխումը կողմերի միջև, վճռի կատարման կարգը և ժամկետները: Հայցային պահանջները լրիվ կամ մասնակիորեն բավարարելու կամ մերժելու մասին արբիտրաժային դատարանի վերջնական և հրամայական եզրահանգումները պետք է սպառիչ պատասխաններ պարունակեն ինչպես սկզբնական, այնպես էլ հակըդդեն հայցերի մասով (թեև ՀՀ օրենքով չի սահմանվել արբիտրաժային վարույթում հակըդդեն հայց ներկայացնելու կարգը, գործնականում դա բացառված չէ: Պատասխանողը հայցային պահանջների վերաբերյալ 23-րդ հոդվածով սահմանված կարգով իր առարկությունները ներկայացնելով՝ կարող է նաև հակըդդեն հայց հարուցել, եթե իհարկե, հակըդդեն հայցը ևս բխում է արբիտրաժային համաձայնության առարկան կազմող վիճելի իրավահարաբերություններից կամ կողմերը դրա կապակցությամբ առանձին համաձայնություն են կնքել): Վճռի եզրափակիչ մասում արբիտրաժային ծախսերի բաշխումը թողնելով կողմերի հայեցողությանը՝ մեր կարծիքով, օրենսդիրը ճիշտ է վարվել: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պետք է հնարավորություն ունենան ինքնուրույն որոշել նաև արբիտրաժային ծախսերի լուծման հարցը: Նրանք կարող են սահմանել, որ ամեն դեպքում ծախսերն իրենց միջև բաշխվում են հավասար կամ բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, կամ սահմանել դրանց բաշխման այլ կարգ: Բոլոր դեպքերում ճիշտ կլիներ, որպեսզի արբիտրաժային դատարանի վճռի եզրափակիչ մասում արբիտրաժային ծախսերի մասին նշումն արտացոլեր դրանց բաշխման վերաբերյալ կողմերի համաձայնությունը, եթե նման համաձայնություն առկա է: Կարևոր է նաև վճռի կատարման կարգի և ժամկետի մասին նշումը, որը պետք է արտացոլի դրամական միջոցներ բռնագանձելու կամ գույք հատկացնելու մասին, մի քանի հայցվորների օգտին կամ մի քանի պատասխանողների դեմ կայացված, պայմանագիր կնքելու կամ փոխելու մասին,

ինչպես նաև պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող վճռի կատարման առանձնահատկությունները:

Առանձին դեպքերում ազգային օրենքներով և արբիտրաժային կանոնակարգերով արբիտրաժային դատարանի վճռի լեզվին վերաբերող պահանջներ են սահմանվում, որոնք ընդհանուր կանոնի համաձայն՝ կարգավորում են նաև արբիտրաժային վարույթի իրականացման լեզվի ընտրության հետ կապված հարցերը: Այսինքն, արբիտրաժային վճիռը շարադրվում է այն լեզվով, որը կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են կիրառել արբիտրաժային վարույթի նկատմամբ: Սակայն, կողմերը կարող են փոխել այս կանոնը և միջնորդել, որպեսզի արբիտրաժային վճռի տեքստը կազմվի այլ լեզվով<sup>1</sup>: Պետք է նշել նաև, որ բոլոր դեպքերում վճռի կատարման փուլում այն պետք է թարգմանվի այն երկրի պետական լեզվով, որի տարածքում ճանաչվելու և հարկադիր կատարման է ենթարկվելու արբիտրաժային վճիռը (Նյու Յորքի համաձայնագրի հոդված IV):

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը սահմանել է նաև արբիտրաժային վճռի կայացման կարգը, որի 23-րդ հոդվածի համաձայն՝ մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ վեճի քննության դեպքում արբիտրաժային դատարանը (տրիբունալը) վճիռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Այնուամենայնիվ, նախագահողը կարող է որոշում կայացնել վարույթին առնչվող հարցերի շուրջ, եթե դրա համար լիազորված է կողմերի կամ արբիտրաժային դատարանի անդամների կողմից:

Հետևում է, որ արբիտրաժային դատարանի՝ վեճն ըստ էության լուծող վերջնական ակտը՝ վճիռը, կայացվում է արբիտրաժային դատարանի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե իհարկե, վարույթն իրականացվում է կոլեգիալ կազմով: Վեճն ըստ էության չլուծող միջանկյալ ակտերը՝ վարույթին առնչվող հարցերի շուրջ արբիտրաժային որոշումները, կարող է կայացնել նախագահողը, եթե դրա համար նրան

<sup>1</sup> Տե՛ս Լոնդոնի Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանի կանոնակարգի 21-22-րդ հոդվածները:

- ուղղակիորեն լիազորել են կողմերը,

- արբիտրաժային դատարանի բոլոր անդամները: Ընդ որում, այստեղ մենք գործ ունենք արբիտրների կողմից իրենց իրավասությանը հանձնված հարցերով որոշում կայացնելու իրավունքը՝ վերալիազորման միջոցով նախագահողին փոխանցելու հետ, որը կարող է իրականացվել միայն արբիտրաժային դատարանի կազմի բոլոր անդամների ընդհանուր համաձայնությամբ: Վարույթին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավազորությունը նախագահողին փոխանցելու համար բավարար չէ արբիտրների ձայների մեծամասնությունը, այլ անհրաժեշտ է բոլորի համաձայնությունը: Նախագահողին չի կարելի փոխանցել վեճն ըստ էության լուծող վերջնական ակտ կայացնելու իրավազորությունը:

Պետք է նշել, որ ՀՀ օրենքն արբիտրաժային վճռի կայացման կարգը բավական մակերեսային է կարգավորել և չի սահմանել՝ արբիտրն իրավունք ունի ձեռնպահ մնալ քվեարկությունից, թե ոչ, կամ կարող է արդյոք հատուկ կարծիք հայտնել և այդ նկատառումներով չստորագրել արբիտրաժային վճիռը և այլն: Այս առումով 31-րդ հոդվածը սահմանում է, որ մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային դատարանի անդամների մեծամասնության ստորագրության առկայությունն այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները՝ չկարգավորելով արբիտրների հատուկ կարծիքին վերաբերող հարցերը: Ճիշտ կլիներ, որպեսզի օրենքում սահմանվեր, որ արբիտրն իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկելուց, սակայն կարող է չստորագրել արբիտրաժային վճիռը՝ արբիտրաժային դատարանի անդամների մեծամասնության հետ համաձայն չլինելու և հատուկ կարծիք ունենալու պարագայում:

Որպես կանոն, առևտրային արբիտրաժը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով արբիտրաժային վճռի կայացման կարգին վերաբերող պահանջները հասցված են նվազագույնի: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում այդպիսի պահանջներից է համարվում վճիռ կամ այլ որոշում կայացնելիս արբիտրների միջև խորհրդակցությունների իրականացման գաղտնիության ապահո-

վումը: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրներն իրենք են սահմանում միմյանց միջև խորհրդակցությունների իրականացման կարգը (Շվեյցարիայի «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» դաշնային օրենքի 182 հոդվածի 2-րդ մաս): Արբիտրաժային դատարանի կողմից ընթացակարգային նման հարցի լուծումը որոշման ձևով չի կայացվում, հետևաբար, արբիտրաժային քննության ցանկացած փուլում կարող է փոփոխվել վարույթն իրականացնող մարմնի կողմից և իրավասու դատարանում վիճարկման առարկա լինել չի կարող: Արբիտրների միջև խորհրդակցությունները կարող են իրականացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կարգով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրների միջև խորհրդակցություն կարող է իրականացվել միայն արբիտրաժային դատարանի նիստում: Մասնավորապես՝ օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային դատարանը կարող է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու նպատակով:

Միջազգային արբիտրաժային իրավունքի տեսությունում տարբեր է նաև արբիտրների հատուկ կարծիքի վերաբերյալ առկա մոտեցումները, որոնք հաճախ իրարամերժ են: Նման մոտեցումները հիմնականում արտացոլված են արբիտրաժային օրենքներում և կանոնակարգերում և արտահայտում են վճռի կայացման փուլում արբիտրի հատուկ կարծիքի (dissenting opinion, opinion dissidente, avis minoritaire) հնարավորության հարցը: Ընդ որում, ելնելով հատուկ կարծիքի թույլատրելիության, վիճարկման հնարավորության, իրավական ռեժիմի առանձնահատկություններից՝ իրավաբանական գրականությունում ընդունված է այս ինստիտուտը ենթարկել կոնկրետ իրավահամեմատական ուսումնասիրության: Վճիռ կայացնելիս արբիտրների հատուկ կարծիքի թույլատրելիությունը սովորական երևույթ է ընդհանուր իրավունքի երկրներում, իսկ մայր-

ցամաքային իրավական համակարգում դրա կիրառումը հնարավոր է միայն առանձին դեպքերում: Որոշ տեսաբաններ գտնում են (օր.՝ Պիեր Լալիվ), արբիտրաժային գործում հատուկ կարծիքի առկայությունը կարող է խախտել խորհրդակցությունների գաղտնիությունը, եթե մեծամասնության հետ անհամակարծիք արբիտրը շարադրի քննարկվող հարցերի վերաբերյալ արտահայտած այլ դիրքորոշումները, որոնք տեղ չեն գտել արբիտրաժային վճռում<sup>1</sup>: Հատուկ կարծիքի հնարավորությունը արբիտրի տեսակետի հրապարակային արտահայտման իրավունքի իրացման ձևերից է, որն իրականացվում է գրավոր ձևով և ունի իրավաբանական բնույթ: Հաճախ, հատուկ կարծիք արտահայտած արբիտրը նպատակ է հետապնդում ապացուցել, որ գործի քննության ընթացքում վերջինս մինչև վերջ հավատարիմ է մնացել իրեն նշանակող կողմի շահերին, ինչն ուղղակիորեն հակասում է արբիտրների անկողմնակալության և անաչառության սկզբունքին, ինչպես նաև իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի էությանն ու նպատակներին: Որոշ եվրոպական հետազոտողներ (օր.՝ Ֆ. Ֆուշար, Ե. Գոլդման) գտնում են, որ հատուկ կարծիքի առկայությունը նվազեցնում է արբիտրաժային վճռի հեղինակությունը, բայց ոչ իրավաբանական ուժը<sup>2</sup>:

Հատուկ կարծիքի թույլատրելիության հարցում տարբեր մոտեցումներ են ամրագրում նաև արբիտրաժային կանոնակարգերը: ՄԱԿՄԱԻՅ և Լոնդոնի Միջազգային արբիտրաժային դատարանի կանոնակարգերն ընդհանրապես արբիտրների հատուկ կարծիքի թույլատրելիության հարցին չեն անդրադարձել: Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) կանոնակարգի 17 հոդվածի 3-րդ կետով և 1965թ. Վաշինգտոնի Համաձայնագրի 48-րդ հոդվածով սահմանվել է, որ արբիտրաժային դատարանի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի վճռին կցել իր հատուկ կարծիքն անկախ այն հանգամանքից՝ կիսում է արբիտրաժային դատարանի անդամների մեծամասնության կարծիքը, թե ոչ, կամ էլ կարող է արբիտրաժային վճռում նշել հատուկ կարծիքի առկայութ-

յան մասին: Նմանատիպ դրույթ է պարունակում նաև Ստոկհոլմի Առևտրի Պալատի արբիտրաժային կանոնակարգի 28-րդ հոդվածի 2-րդ կետը:

Ֆրանկո-գերմանական Առևտրաարդյունաբերական Պալատի արբիտրաժային կանոնակարգն, ի տարբերություն վերը նշվածների, ուղղակիորեն արգելում է արբիտրի հատուկ կարծիքի արտահայտման հնարավորությունը (24.1 հոդվ.): Առևտրի Միջազգային Պալատի արբիտրաժային կանոնակարգի 17-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը վերահսկողություն է իրականացնում արբիտրաժի վայրի իմպերատիվ նորմերի պահպանման, այդ թվում՝ արբիտրների հատուկ կարծիքի արտահայտման հնարավորության նկատմամբ: ԱՄՊ արբիտրաժային դատարանը ստանում է հատուկ կարծիքը արբիտրների ձայների մեծամասնությամբ կայացված արբիտրաժային վճռի նախագծի հետ միասին և կիրառման ենթակա իրավունքի նորմերին համապատասխան որոշում է կայացնում այն կողմերին հաղորդելու հնարավորության մասին: Եթե կողմերի նկատմամբ կիրառելի իրավունքով հատուկ կարծիքի հնարավորությունը չի բացառվում, ապա արբիտրաժային դատարանը կողմերին սահմանված կարգով ծանոթացնում է հատուկ կարծիքի հետ: Հարկ է նշել նաև, որ արբիտրաժային դատարանը չի կարող խոչընդոտել արբիտրի կողմից հատուկ կարծիքն ուղղակիորեն կողմերին ուղարկելուն՝ շրջանցելով արբիտրաժային մարմնի հսկողությունն այս գործընթացի նկատմամբ:

Ինչ վերաբերում է հատուկ կարծիքի իրավաբանական բնույթին, ապա իրավաբանական գրականությունում գերակշռող է այն տեսակետը, որ վերջինս արբիտրաժային վճռի բաղկացուցիչ չի հանդիսանում: Այս մոտեցումն արդարացված է նաև ՀՀ գործող օրենսդրության պայմաններում: Արբիտրաժային վճիռն արբիտրների ձայների մեծամասնությամբ կայացվող վերջնական ակտ է, որը որոշակի իրավական հետևանքներ է առաջացնում վիճելի նյութական իրավահարաբերությունների սուբյեկտների համար: Հատուկ կարծիքի պարագայում ձայների մեծամասնության մասին խոսք լինել էլ կարող, այն իրավական հետևանքներ կողմերի համար չի առաջացնում, հակառակ պարագայում, այն՝ որպես արբիտրաժային

<sup>1</sup> St'eu P. Lalive, J.-F Poudret. C. Reymond. Указатель сочинений, N18, 1988, 416-417 էջերը:

<sup>2</sup> St'eu Fouchard Ph., Gaillard E., Goldman B., Указатель сочинений, N88, 778 էջ:

վճռի բաղկացուցիչ, պետք է ճանաչվեր իրավասու դատարանի կողմից և հարկադիր կատարման ենթարկվեր:

Շվեյցարիայի Դաշնային դատարանը հատուկ որոշմամբ սահմանել էր, որ արբիտրի հատուկ կարծիքն արբիտրաժային վճռի բաղկացուցիչ չէ: Միայն կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում կամ արբիտրաժային դատարանի անդամների մեծամասնության համաձայնությամբ արբիտրն իրավունք ունի իր հատուկ կարծիքը կցել արբիտրաժային վճռին, ընդ որում, միայն այս պարագայում է հնարավոր կողմերին ծանոթացնել հատուկ կարծիքի բովանդակությանը<sup>1</sup>: Արբիտրն իրավունք ունի պահանջել իր հատուկ կարծիքը կողմերին հրապարակել կամ տրամադրել, ինչպես նաև կցել արբիտրաժային գործին, եթե ուղղակիորեն այդ նախատեսված է կողմերի համաձայնությամբ:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ բացի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով արբիտրաժային վճռի ձևին և բովանդակությանը, ինչպես նաև կայացման կարգին վերաբերող պահանջներից, գոյություն ունեն նաև այլ չափանիշներ, որոնց պետք է բավարարի արբիտրաժային դատարանի՝ վեճն ըստ էության լուծող վերջնական ակտը: Ընդ որում, այդ պահանջները կամ ուղղակիորեն նախատեսված են օրենքով, կամ բխում են ՀՀ օրենսդրության ընդհանրական վերլուծությունից և տեսական հիմնավորումների արդյունք են:

Արբիտրաժային վճիռը նախևառաջ պետք է լինի օրինական: Միայն օրենքով սահմանված կարգով կայացված արբիտրաժային վճիռն է անհրաժեշտ իրավական հետևանքներ առաջացնում, ճանաչվում պետության կողմից, որի կատարումն ապահովված է պետական հարկադրանքի ուժով: Ընդհանուր առմամբ արբիտրաժային վճիռն օրինական է, եթե չի հակասում ՀՀ օրենսդրության դրույթներին: Սակայն, առևտրային արբիտրաժում վճռի օրինականությունն ունի մասնավոր դրսևորումներ, որոնք հատուկ ուշադրության են արժանի:

<sup>1</sup> St'u Tribunal Federal, 11.05.92, Bulletin ASA, 1992, 381, 386 էջերը: Revue Suisse droit international et droit europeenne, 1994:

Արբիտրաժային վճիռն օրինական է, եթե այն կայացվել է գործով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերին, ինչպես նաև գործի քննության ընթացակարգային կանոններին համապատասխան: Այստեղ որոշիչ նշանակություն ունի նաև կամքի ինքնավարության սկզբունքով պայմանավորված՝ կողմերի կամահայտնությունը, որի հիման վրա սահմանվում են ինչպես վեճի էության նկատմամբ կիրառելի իրավունքի նորմերը, այնպես էլ գործերի լուծման կարգը:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ - հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային դատարանը (տրիբունալը) վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Ընդ որում, ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում: Հետևում է, որ վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավունքը որոշում են արբիտրաժային համաձայնության կողմերը, սակայն կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմերը՝ արբիտրաժային դատարանը, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Այս պարագայում վեճեր լուծելիս արբիտրաժային դատարանը պետք է ղեկավարվի այն երկրի ազգային իրավունքի կամ իրավական համակարգի հիմնարար դրույթներով, որոնք ուղղակիորեն կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Այս պահանջին համապատասխան արբիտրաժային դատարանը պետք է ղեկավարվի առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող և ուղղակի գործող նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև դրանց համապատասխան ընդունված այլ օրենքների և ենթօրենսդրական ակտերի դրույթներով: Արբիտրաժային վճիռը պետք է համապատասխանի արբիտրաժային համաձայնության պայմաններին, որն էլ իր հերթին կողմերի ընտրած կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետք է լինի վավերական: Բոլոր դեպքերում արբիտրաժային դատարանը վճիռ է կայացնում պայմանագրի պայմանների համա-



ծայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի առևտրային սովորույթները<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենքն ուղղակիորեն սահմանել է վարույթի ընթացակարգային կանոնների պահպանմամբ վճռի կայացման անհրաժեշտությունը (34 հոդվածի 2-րդ կետի դ) ենթակետ): Արբիտրաժային դատարանի կողմից կայացված վճիռը պետք է համապատասխանի վարույթի ընթացակարգին, որը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում, չպետք է հակասի ՀՀ օրենսդրությանը: Հակառակ պարագայում արբիտրաժի վերջնական ակտը կարող է չեղյալ ճանաչվել:

Պետք է նշել նաև, որ արբիտրաժային վճռի օրինականությունն ու դատական ակտի օրինականության սահմանային դրսևորումները չեն համընկնում, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում դատարանի վճռին ներկայացվող պահանջները բովանդակային առումով հարցերի բավական լայն շրջանակ են ներառում: Դատարանի վճիռը պետք է կայացվի գործով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերին համապատասխան և ՀՀ դատավարական նորմերի պահանջների խստագույն պահպանմամբ: Դատարանի վերջնական ակտն անօրինական է, եթե խախտվել են նյութական իրավունքի նորմերը կամ սխալ են կիրառվել, իսկ արբիտրաժային վճռի պարագայում ՀՀ օրենքն իրավական նշանակություն է տալիս կիրառման ենթակա իրավունքին համապատաս-

<sup>1</sup> ՀՀ քաղաքացիական դատավարությունում վիճելի հարաբերությունները կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Դատարանն օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր: Իսկ ՀՀ ՔԴՕ 12-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանն իրավունք ունի կիրառել գործարար շրջանառության սովորույթներ: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օտարերկրյա իրավունքի, ինչպես նաև առևտրային սովորույթների կիրառումը ոչնչով սահմանափակված չէ, ավելին, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետով գործարքի համար կիրառելի առևտրային սովորույթները հաշվի առնելն արբիտրաժային դատարանի համար նույնիսկ իրանայական երանգ է ստացել:

խան վճռի կայացմանը՝ չմանրամասնելով վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական նորմերի կիրառման կամ մեկնաբանման դեպքերը: Իսկ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ մեկնաբանման հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման հնարավորություն չի ընձեռվել:

Վիճելի է արբիտրաժային վճռի հիմնավորվածության հարցը: Եթե ՀՀ քաղաքացիական դատավարությունում վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը հրամայական պահանջներ են, ապա առևտրային արբիտրաժում վճռի հիմնավորվածությունը կրում է դիսպոզիտիվ բնույթ<sup>1</sup>: Վճիռը հիմնավորված է, եթե՝

- արբիտրաժային դատարանը նախառաջ կողմերի հայցային պահանջների և առարկությունների հիման վրա ճիշտ է որոշել գործով ապացուցման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, որոնք մտել է ապացուցման առարկայի մեջ,

- իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ արբիտրաժային դատարանի դատողությունները հիմնված են կողմերի հաղորդումներին կից ներկայացված փաստաթղթերի, նյութերի և այլ ապացույցների վրա (23 հոդվածի 1-ին կետ),

- փաստերի ուսումնասիրման արդյունքում արված հետևություններն ու եզրակացությունները ճիշտ են և նշված են արբիտրաժային վճռի հիմքում ընկած հանգամանքները (31 հոդվածի 2-րդ - կետ):

Սակայն, արբիտրաժային դատարանի վճռի հիմքում ընկած հանգամանքները նշվում են այն դեպքում, եթե կողմերը փոխադարձ համաձայնությամբ չեն որոշել, որ այդպիսիք չպետք է նշվեն: Իսկ արբիտրաժային դատարանի կողմից վեճն արդարության սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositeur) լուծելու դեպքում՝ վճռի հիմնավորվածության հարցն ընդհանրապես մղվում է երկրորդ պլան:

<sup>1</sup> ՀՀ ՔԴՕ 130 հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական միտում հետազոտված ապացույցներով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

Հայերեն լեզվով

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով)
2. ՀՀ Դատական օրենսգիրք (2007թ. Ապրիլի 18), ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 20(544), ՀՕ-137-Ն
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (17 հունիսի 1998թ., 2007թ. փետրվարի 27-ի փոփոխություններով) ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2007, թիվ ՀՕ-204-Ն,
4. ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք (2007թ. Դեկտեմբերի 19), ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 64(588), ՀՕ-269-Ն,
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (5 մայիսի 1998թ.), ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1998, թիվ 17(50),
6. ՀՀ օրենքը «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2006 դեկտեմբերի 25-ին, թիվ ՀՕ-55-Ն,
7. ՀՀ օրենքը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (5 մայիսի 1998թ.) ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Ե., 1999, Գիրք Բ, 530-554 էջերը,
8. ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 1997թ., ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Ե., 1999, Գիրք Բ,
9. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը (17 հունիսի 1998թ., ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Ե., 1999, Գիրք Բ, 568-571 էջերը,
10. ՀՀ օրենքը «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» (18 հունիսի 1998թ.) ՀՀ գործող օրենքների ժողովածու

(1995-1999թթ.), Ե., 1999, Գիրք Բ (ուժը կորցրել է 2006թ. փետրվար ամսից),

11. ՀՀ դատաիրավական համակարգի բարեփոխումների ծրագիր (11 օգոստոսի 1997թ.) ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 1997, թիվ 4,  
12. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր (պաշտոնական թարգմանություն): Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Ա., Ե., 2001

13. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր (պաշտոնական թարգմանություն): Փաստաթղթերի ժողովածու Ե., 1997-1998:

### Ռուսերեն լեզվով

14. Гаагская конвенция о мирном урегулировании международных споров 1899г. (Сборник международных соглашений и договоров, М. РФ, 1(12) Брунц, Е.Б. Международныи Коммерческый Арбитраж. СПб. 2001. 42-44 стр.),

15. Протокол об арбитражных оговорках (Женевский протокол 1923 г.) (Международный Коммерческый Арбитраж. СПб. 2001. 45-47 стр.),

16. Гаагская конвенция о мирном урегулировании международных споров 1907г. (Международный Коммерческый Арбитраж. СПб. 2001. 41-42 стр.),

17. Конвенция об исполнении иностранных арбитражных решений (Женевская конвенция 1927г.),

18. Конвенция Организации Объединенных Наций о признании и приведении в исполнение иностранных арбитражных решений (Нью-Йорк 1958г.) Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 427-444 стр.,

19. Европейская конвенция о внешне торговом арбитраже 1961г. Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 444-456 стр.,

20. Гражданский процессуальный кодекс РСФСР 1964г. ТК Велби, Проспект, 2003. 688 с.,

21. Конвенция о разрешении инвестиционных споров между государствами и иностранными лицами 1965г. Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 468-501 стр.,
22. Европейская конвенция о единообразном законе об арбитраже 1966г. (Международный Коммерческий Арбитраж. СПб. 2001. 49-50 стр.),
23. Конвенция о разрешении арбитражным путем гражданско-правовых споров, вытекающих из отношений экономического и научно-технического сотрудничества Москва, 1972г. Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 456-461 стр.,
24. Межамериканская конвенция о международном коммерческом арбитраже, Панама, 1975г. 50-51 стр.,
25. Единообразный арбитражный закон США 1955г.
26. Гражданско-процессуальный кодекс Франции 1981г.
27. Типовой закон ЮНСИТРАЛ о международном коммерческом арбитраже 1985г.//Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 501-516 стр.
28. Федеральный закон Швейцарии о о международном частном праве 1989г.
29. Арбитражный процессуальный кодекс РФ 1992г.
30. Закон РФ о международном коммерческом арбитраже 1993г. Регламенты международных арбитражных судов, 2001, 495-518 стр.
31. Закон Украины о международном коммерческом арбитраже 1994г.// Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 322-330 стр.
32. Комментарии ЮНСИТРАЛ по организации арбитражного разбирательства 1996г. (Международный Коммерческий Арбитраж. СПб. 2001. 56-57 стр.),
33. Закон Англии о международном коммерческом арбитраже 1996г. Оф. Спр. М. Изд. 1999
34. Арбитражный закон Германии 1998г. (Регламенты международных арбитражных судов, 2001, 386-432 стр.)
35. Закон Белоруссии о международном арбитражном суде 1999г.// Бейкер и Макензи, Москва, БЕК, 2001, 50-59 стр.,

Ոչ նորմատիվ ակտեր

36. Регламент арбитражного суда Международной торговой палаты, 1-ое января, 1998г. Регламенты международных арбитражных судов, 2001, 58-168 стр.,
37. Регламент Лондонского международного арбитражного суда 1-ое января 1998г., Регламенты международных арбитражных судов, 2001, 287-338 стр.
38. Международный арбитражный регламент Американской арбитражной ассоциации 1-ое апреля, 1997г., Регламенты международных арбитражных судов, 2001, 174-247 стр.
39. Регламент арбитражного института Стокгольмского торговой палаты 1995г. Регламенты международных арбитражных судов, 2001, 250-268 стр.
40. Регламент международного коммерческого суда при ТПП Российской Федерации. 1994-95гг. Регламенты международных арбитражных судов, 2001, 174-247 стр.,
41. Правила арбитражного рассмотрения споров ICSID, 1994г. Регламенты международных коммерческих арбитражных центров, 2002, 342 стр.
42. Арбитражный регламент Центра арбитража и медиации ВОИС 1994г. Регламенты международных коммерческих арбитражных центров, 2002, 317-329 стр.,
43. Арбитражный регламент ЮНСИТРАЛ 1976г. Регламенты международных арбитражных судов, 2001, 456-476 стр.,

ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայերեն լեզվով

44. Ավագյան Ռ. Հայ իրավական մտքի հուշարձաններ, Գիրք 1, Եր., «ԱՅԻԻԵՄ-XXI ԴԱՐ», 2001, Հ.1, 672 էջ
45. Ավագյան Ռ. Հայ իրավական մտքի հուշարձաններ, Գիրք 2, Եր., «ԱՅԻԻԵՄ-XXI ԴԱՐ», 2001, Հ.2, 672 էջ

46. Բարսեղյան Տ.Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք մաս 1, դասագիրք., Երևան 2000, 528 էջ
47. Հայկյանց Ա.Ս. Միջազգային մասնավոր իրավունք: Եր: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003թ., 352էջ:
48. Պետրոսյան Ռ.Գ. Հ քաղաքացիական դատավարություն, դասագիրք. Երևան, ԼՈՒՅՍ, 1999թ. 351էջ,
49. Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ) երկրորդ հրատարակություն: Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2003, 704 էջ
50. Պետրոսյան Ռ.Գ. Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Երևան, 2001, 511էջ,
51. Սամուելյան Խ. Մխիթար Գոշի դատաստանագիրքը ու հին հայոց քաղաքացիական իրավունքը: Վիեննա, 1911, 318 էջ
52. Սամուելյան Խ. Հայ հին իրավունքի պատմությունը: ԱՐՄՖԱՆ-ի հրատ., Ե., 1939, հատոր 1, 363 էջ
53. Սաֆարյան Գ.Հ. Հայաստանի միջնադարյան իրավունքը Ժ-ԺԳ դդ: «Մխիթար Գոշ», Ե., 1996, 256 էջ

#### Ռուսերեն լեզվով

54. Аристотель. Афинская полития. Государственное устройство афинян. М. Соцэклиз, 1936, 198 стр.
55. Ануров В.Н. Юридическая природа международного коммерческого арбитража (вопросы теории и практики). Проспект . М. 2000г, 200 стр.
56. Белов А.П. Применение иностранного права международным коммерческим арбитражем "Право и экономика", ном. 7, М. Юстицинформ, 2001г., 65-71 стр.
57. Богуславский М.М. Международный коммерческий арбитраж. М., 1993, 304 стр.
58. Богуславский М.М. Практика применения принципа иммунитета государства и проблема законодательного

- регулирования "Международное частное право. Современная практика". ИГиПРАН, М., 2000, 16 стр,
59. Брун М.Н. Очерки по истории международного частного права. Конфликтное право пост. (13-14)1915, стр. 3-48
60. Брунцева Е.Б. Международный Коммерческий Арбитраж. СПб. 2001. 368 стр.
61. Венгеров А. Б. Политика и синергетика // Общественные науки и Современность, 1993, 25 стр.
62. Виноградова Е.А. Методы АРС (альтернативного разрешения споров) в разрешении правовых и коммерческих споров (О **третейском суде** как методе разрешения экономических споров. Законодательство. Практика. О перспективах развития) // Международная конференция "Альтернативные методы разрешения споров: посредничество и арбитраж", Москва, 29 - 30 мая 2000 г.,
63. Волков А.Ф. Торговые третейские суды. Историко-догматическое исследование, СПб. М.-ва Фин.1913. 302 с.,
64. Дмитриева Г.К. Международный коммерческий арбитраж. М. ПРОСПЕКТ, 1997-232 с.,
65. Джудитта К.М. МКА, Указ. сочинений N48 12-56 с.,
66. Елусейкин М.Р. Природа доюрисдикционного урегулирования разногласий, Калинин, 1975-368 с.,
67. Жильцов А.Н., Маковский А.Н. Национальные кодификации в современном международном частном праве. Тенденции и противоречия в его развитии на пороге третьего тысячелетия. Статья в сборнике Международное частное право" иностранное законодательство. М., "Статут", 2001-892с.,
68. Жуков В. А. Международный коммерческий арбитраж и иммунитет иностранного государства. // Юридический мир. 8, ВК 2001 19-28с.,
69. Звеков В.П. Новое российское гражданское законодательство и проблемы международного **частного** права

- // Московский журнал международного права. № 2 Междунар. Отношения 1998 250-257 с.,
70. **Звеков В.П.**, Лунц Л.А., Маковский А.Л., Марышева Н.И., Садиков О.Н. Курс международного **частного** права . В 3-х томах Спарк 2002- 1007 с.,
71. Зом. Р. Институции римского права, Сергиев-Посад, 1916-453 с.,
72. Зыкин И. С. МКАС при ТПП РФ и арбитражу ad hoc. "Экономика и жизнь-Юрист", 2000, 29с.,
73. Зыкин И.С. Договор во внешнеэкономической деятельности М. 1990. 45-165 стр.,
74. Иеринг Р. Дух римского права СПД 1875, 504с.,
75. Карабельников Б.Р. Исполнение решений международных коммерческих арбитражей, ФБК-ПРЕСС, 2003, 488 стр.,
76. Кейлин А.Д. Судостроительство и гражданский процесс капиталистических государств. Арбитраж 1961-296с.,
77. Комаров В.В. Международны́й коммерчески́й арбитраж. Харьков. Основа, 1995,304 с.,
78. Корецкий В.М. "Савиные в международном частном праве" Избранные труды. книга 1, 1989, 80-89с.,
79. Кузнецов М.М. Некоторые собенности развития международного частного права// Советский журнал частного права, 1991, 89с.,
80. Лебедев С.Н. Международны́й торговы́й арбитраж. М.: Международные отношения, 1965. 219 с.,
81. Лебедев С.Н. Международны́й коммерчески́й арбитраж: компетенция арбитров и соглашение сторон. М., 1988, 229 с.,
82. Лунц Л.А. Международны́й граждански́й процесс М., Юрид. Лит. 1966, 188с.,
83. Лунц Л.А. Международное частное право. Общая часть. Госюриздат, М., 1959, 280с.,
84. Международны́й коммерчески́й арбитраж в Швеции. Под ред. Позднякова В.С. М., 1984, 188 с.,

85. Минаков А.И. Арбитражные соглашения и практика рассмотрения внешнеэкономических споров. М. Юрид. лит., 1985, 144 с.,
86. Мюллерсон Р.А. О **соотношении** международного публичного, международного частного и национального права // Советское государство и право. № 2 Наука М. 1982, 80-89 с.,
87. Мюллерсон Р.А. **Соотношение** международного и национального права Междунар. отношения М. 1982, 136 с.,
88. Нерсисянц В.С. **Право:** многообразие определений и единство понятия // Советское государство и **право.** № 10. Наука, 1983, 26-35 с.,
89. **Нерсисянц В.С.**, Отв. ред.: Мамут Л.С. **Право** и закон . Из истории **правовых** учений .Наука, 1983, 366 с.,
90. **Нерсисянц В.С** Общая теория **права** и государства . Учебник Инфра-М, Норма М. 1999, 552 с.,
91. **Нерсисянц В.С** Проблемы общей теории **права** и государства . Учебник для юридических вузов Инфра-М, Норма М., 1999, 832 с.,
92. Поздняков В.С. международны́й коммерчески́й арбитраж в Росси́йской Федера́ции. Закон, регламент, комментарий. М. Изд-во Междунар. центра финансово-эконом. развития 1996, 80 с.,
93. Рамза́йцева Д.Ф Договор купли-продажи во внешней торговле СССР.М.,1963, 142с.,
94. Розенберг М. Г. Венская конвенция ООН (1980) М., 2002, 110с.,
95. Розенберг М. Г. Практика Международного коммерческого арбитражного суда. Научно-практический комментарий. М.: Международны́й центр финансово-экономического развития, 1997, 298 с.,
96. Розенберг М.Г. Международны́й договор и иностранное право в практике Международного коммерческого арбитражного суда. М., 2000, 304с.,

97. Розенберг М.Г. "Практика Международного Комерческого Арбитражного Суда", М., 2002, 334 с.,
98. Рубанов А.А. Автономия воли в международном частном праве как теоритическая проблема // Советский ежегодник международного права. М.,1985-117с.,
99. Рубанов А.А. "Теоретические основы международного взаимодействия национальных правовых систем" М. 1984, 483с,
100. Сергун А. К. "Проблемы соотношения материального и процессуального права" Под. ред. Шакаряна М., 1980, 356с.,
101. Сологубова Е.В. Римский гражданский процесс. М., 1997, 345 с.,
102. Хлестова Н.О. Арбитраж в стран -членов СЭВ. М. 1980, 195 с.

#### Օսար լեզուներով

103. Adam S. Jurisdiction Problems in International Commercial Arbitration, A Study of Belgian Dutch, Sweden, Swiss, US, West German Law. Zurich. 1989 Julian D.M. Applicable Law in Int. Com. Arb. New York. 1979., 106-145, 148-159, 253-258pp,
104. Arthur von Mehren, A General View of Contract, 7 International Encyclopedia of Comparative Law No.4 (1982), 228-246 p,
105. Alan Redfern, Martin Hunter, Law and Practic of International Commercial Arbitration 1999 149 p,
106. Alternative Dispute Resolutions, Bishop 1998, 189 p,
107. Battifol, H., Lagarde, P., Droit international prive, Paris 1983, 123p,
108. Blessing, Marc. The New International Arbitration Law in Switzerland- A significant step towards Liberalism, in: Journal of International Arbitration, 1988, vol. 5, n. 2,
109. Bloom, J. Choice of Law Methods in the Private International Law of Contract) The Canadian Yearbook of International Law, 1978, vol. XVI

110. Briner, Robert. Die Anfechtung und Vollstreckung des Schiedsentsscheids, in: Bockstiegel, Karl heinz (Ed.). Die Internationale Schiedsgerichtbarkeit in der Schweiz, vol. II, Cologne, 1989, 149p,
111. Bystricky, R. Remarques relatives a la competence devant le tribunal arbitral. Bulletin de l'association suisse de l'arbitrage, 2 (1984) 425p,
112. M. J. Mustill S. C. Boyd. Commercial Arbitration. London. 1982, 384p
113. Christian Buhring- Uhle, Arbitration And Mini- Processes in International Business, 1996, 98p,
114. Fouchard, Ph., Gaillard, E., Goldman, B. Traite de l'arbitrage commercial international, ed. Litec, Paris, 1996, 15-47p,
115. Fontaine, M. La redaction de la sentence du point de vue d'un juriste de droit international. Bulletin ICC, Vol. 5 '1. 30 p,
116. Gaillard, Emmanuel. A Foreign view of the New Swiss Law on International Arbitration, in: Arbitration International, vol. 4, N1 January 1988, 201p,
117. W. Michael Reisman, W. Laurence. Foundation Press 1997, p 45,
118. Jarosson, Charles. La notion d'arbitrage, Paris 1987, 324p,
119. Lord Justice Mustill, "The New Lex Mercatoria: The first 25 years, 4 Arbitration International", 1988, 265p,
120. Jolidon, Pierre. Commentaire du concordat Suisse sur l'arbitrage. Berne, 1984
121. Martin Hunter, International Commercial Arbitration, 1999, 458p
122. Martin Hunter, Jan Paulsson, Migel Rawding, Alan Redfern, The Freshfields Guide to Arbitration and ADR 7, 875p
123. Pillet A. Traite de troit in international prive. Paris 1924, 389p,
124. Stephan R. Bond, How to Draft an Arbitration Clause (1989 journal)
125. Tibor Varadi, The International Commercial Arbitration in Diferet Legal Systems, 1998, 245 p,
126. Yearbook of International Commercial Arbitration, 1999. 125p,

127. Rene David. Arbitration in international trade. Kluwer. 84, 1985, 58 p.

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՍԱԳՐԵՐ

##### Չայերեն լեզվով

128. Պետրոսյան Ռ.Գ. «Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Չայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն)»: Իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ԵՊՀ, 2002, 410 էջ:

129. Վաղարշյան Ա.Գ. «Չայաստանի Առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920թթ.)»: Իրավաբանական գիտությունների գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 1996, 163 էջ,

##### Ռուսերեն լեզվով

130. Виноградова Е.А. Правовые основы организации и деятельности третейского суда. Автореферат дисс. на соискание ученой степени канд. юр. наук, М., 1997, 28 стр.

131. Григоров А.А. “Правовая природа и процедура внешнеторгового арбитража в СССР.” Автореферат диссертации на соискание ученой степени к.юр.наук. Ростов на Дону 1971, 28 стр.

132. Дубровина М.А. “Международный коммерческий арбитраж в Швейцарии” диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, МГУ, 2001, 205 стр.

133. Жильцов А. Н., Применимое право в международном коммерческом арбитраже (императивные нормы), автореферат дисс. на соискание ученой степени канд. юр. наук М., 1998, 28 стр.

134. Карабельников Б.Р. “Нью-Йоркская конвенция 1958г. о признании и проведении в исполнение иностранных арбитражных решений: проблемы теории и практики применения” диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М. 2001, 197 стр.

135. Халед Дия “Государство и государственные предприятия и международный коммерческий арбитраж ” диссертация на соискание ученой степени кандидата юридических наук , М. 1996, 162 стр.

**Հովհաննիսյան Վահե Վաղինակի**  
*իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՁԵՎԸ**

Սրբազրիչ՝ Մ. Գրիգորյան

Հանձնվել է տպագրության 10.10.2008  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>:  
Ծավալը 21 տպ. մամուլ: